

Մ Ո Ւ Ր Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1891

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1891 № 12

ՆՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Երես

1 ԽՄԲ.	1429	«Մուրճ» ը 1889—1891 թվականն.
2 ԽՄԲ.	1446	«Մուրճ»-ը 1891 թվականին.
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՈՆ.	1451	Դիագորոս Միլոսացին (պօէմա).
4 Դ.-ՈՎ, Ի.	1470	Ֆրանսիակ. ժամանակ. երիտասարդ.
5 ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ ԲԺՇԿ.	1482	Հիպոնոտիսմ.
6 ԹՈՒՄԱՆՆԱՆՑ, ՅՈՎՀ.	1500	*** (բանաստեղծութիւն).
7 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	1501	Հեղինէ (չարունակ. և վերջ).
8 ՄԱԴԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	1557	Բանաստեղծ հրապարակախօս.
9 ՎԱԶԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԳ.	1578	Մուսացիա՞ծ խօսքեր Լ. և Տոլստոյ.
10 ԱՂԱՅՆԱՆ, Ղ.	1575	Մեր գրերի թիւը ինչու էր 36.
11 ՎԱԶԱՐԵԱՆ, Ե.	1580	Սիրոյ պատրանք Էւէլինա Գ. Արծր.
12 Բ.	1590	«Մուսցկուտ ոչխար».
13 »	1592	«Օրէանի կոյսը».
14 »	1593	«Շնիկ».
15 ԼՈՒՍԻՆԻ.	1596	«Իշխանուհի» Շիրանգադէր.
16 ԵՍԵՄԵԱՆ.	1605	Օրէ ցօր.
17 ԽՄԲ.	1614	Խմբագրութեան կողմից.
18 ԽՄԲ.	1617	«Մուրճ»-ի բովանդակութ. ցանկը.


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротинианца, на Гол. просп. соб. д. № 41.

1891



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1891

Դ Ե Կ Տ Ե Ս Բ Ե Ր

1891 № 12

ԵՐԻՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ
1891

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Декабря 1891 г.

Типографія М. Д. Ротпінанца, на Голос. просп. соб. д. № 41.

IV՝ ՏԱՐԻ **ՄՈՒՐՃ՝** IV՝ ՏԱՐԻ
”

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1892

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԻՍԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակէի 1892 թւականին նոյն ծրագրով, որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակէի ամէն ամիս 8—10 թերթ մեծութեամբ. աւելին կախած կը լինի բաժանորդների թւից:

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ 1892 թւականին կը բաղկանայ թէ ինքնուրոյն վէպերից ու վէպիկներից և թէ թարգմանականներից: Առաջին անգամ այդ տարւանից «Մուրճ»-ում տեղ կը գտնեն զրամաներ և թարգմանական մեծ վէպեր: Առաջին զրաման «Մուրճ»-ում ինկատի է առնւած պ. Լ. և ոն Մանուէլեանի «Տիգրանուհին», իսկ առաջին մեծ թարգմանական վէպը կը լինի Սենկեւիչի «Առանց դաւանանքի»: Այսպիսով, իւր վիպական բաժնում «Մուրճ»-ը զալ տարի կը տայ 1) Մի ինքնուրոյն մեծ վէպ կամ զրաման, 2) Մի քանի ինքնուրոյն փոքրիկ վէպեր կամ պատմածքներ, 3) Մի մեծ թարգմանական ռոման և 4) մի քանի մանր թարգմանական պատմածքներ նշանաւոր հեղինակների:

«ՄՈՒՐՃ»-ի ցայժմեայ մշտական բաժինները կը ֆինանսակազմէ տարի, այն է 1) Յօդաճներ կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ), 2) Յօդաճներ հասարակական ընթացիկ կարևոր խնդիրների մասին (ներքին Տեսութիւն, Ամսույ Քրօնիկ), 3) Յօդաճներ քաղաքական անցքերի և ընդհանուր դրութեան մասին (Քաղաքական տեսութիւն), 4) Գրական ընդարձակ քննադատութիւններ, 5) Յօդաճներ ընթացիկ գրականութեան վերաբերեալ (Գրախօսութիւն), 6) Յօդաճներ գիտութեան այլ և այլ ճիւղերից (Գիտական բաժին), 7) Ռոմաններ, վէպիկներ, պատմածքներ, 8) Բանաստեղծութիւններ 9) Ֆէյլտոն:

«ՄՈՒՐՃ»-ում ցայժմ ոչ մշտական եղած բաժինները, այն է ա) Գաւառական քրօնիկ, բ) Ռուսական քրօնիկ, և գ) Արտասահմանեան քրօնիկ կ'աշխատենք աւելի կանոնաւոր դարձնել:

Յայտնում ենք նաև, որ գալ տարի մենք մեծ ջանք պիտի դործ դնենք՝ «Մուրճ»-ը ամեն ամիս դուրս բերել ճիշդ միլիոնն օրը:

«ՄՈՒՐՃ»-ի տարեկան բաժանորդագիրն է 10 ռուբլի, որ կարելի է վճարել 5 ռ. ստորագրելիս և 5 ռ. մինչ 1-ն յուլիսի: Ուսուցիչները և ուսանողները վճարում են զիջումով, այն է տարեկան 8 ռուբլի, որ թոյլ է տրւում վճարել՝ ստորագրելիս 3 ռ., մարտին 3 ռ. և յունիսին 2 ռուբլի:

Սկզբնական հասցէների փոփոխութեան համար վճարում է 28 կոպէկ պոստի մարկաներով:

ԲԱԺԱՆՈՒՂ գրելու համար գիմել կամ խմբագրատունը (Тифлис. Въ редакцію журнала МУРЧЪ), կամ մեր գործակալներին, որոնց անւանացուցակը տպւած է «Մուրճ»-ի կազմի թղթի վերջին երեսին:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

1889—1891

ԵՌԱՄԵԱՅ ՇՐՋԱՆԻ

ՆԻԻԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ

1. Ընդհանուր (առաջնորդող) եւ հասարակական խնդիրներ:

- 1) Հասարակական օրգանները, I («Հիւսիսափայլ», «Մշակ», «Մուրճ», 1889 թ., № 1, Ա. Արասխանեանց):
- 2) Հասարակական օրգանները, II («Կառնէկ», «Մեղու Հայաստանի», «Նոր-Դար», 1889 № 4, Ա. Արասխանեանց):
- 3) Պանդխտութեան խնդիրը, I, II (1889 թ. № 11 եւ 1890 № 6, Ա. Արասխանեանց):
- 4) Հողային պայմանները եւ գիւղական վարկը (1889 թ., № 8 Գր. Վարդանեան):
- 5) Հողային խնդիրը Անդրկովկասում, I, II, III (1889 թ., № 9, 1890 թ., № 7 եւ 9, Ա. Արասխանեանց):
- 6) «Մուրճ»-ը 1889 թւականին (1889 թ., № 12. նոյնը):
- 7) Գործերի զրութիւնը (1890 թ. № 1. նոյնը):
- 8) Աղքատների խնամատարութիւնը, I, II (1890 թ. № 4 եւ 10. Գր. Վարդանեանց):
- 9) Թիւ եւ Ոյժ (1890 թ., № 5, Ա. Արասխանեանց):
- 10) Ժողովուրդը որպէս քաղաքակրթ. ոյժ (1890 № 11. նոյնը)
- 11) Յատաճղիմութեան պայմանները (1891 թ., № 6. նոյնը):
- 12) Կինը Հասարակութեան մէջ (1891 թ., № 6. նոյնը):

2. Հետազոտութիւններ տնտեսական, սոցիալական և իրաւաբանական:

- 1) Ռուսաց դատաստանական վերանորոգութիւնը (1889 թ. № 1, 2, 3. Կ. Նաղուբեան):
- 2) Ոճիրները Երևանեան նահանգում (1889 թ. № 11, 12. Գարր. Մնացականեան):
- 3) Համայնական հողատիրութիւնը Երևանեան նահանգում (1890 №№ 5 և 7 Յովհ. Սաղաթեղեան):
- 4) Պանդխտութիւնը մեզանում (1890 № № 11, 12. Անուշաւան Փալանթար):
- 5) Կարսի բանւորների դրութիւնը (1890 թ. № 1. Երևանդ Ղազարեան):
- 6) Բանւորները Անդլիայում (1890 թ. № 5. Ն*):
- 7) Հայ ընտանիքը (1890 թ. № 1, 2, 3 7. Լէօ):
- 8) Զւիցերիական պետութիւնը (1891 № № 9, 10, 11. Մ. Մանուշարեան):

3. Եկեղեցական-իրաւաբանական:

- 1) Կաթողիկոսական Տեղակալը (1891 № 6 և 7 — 8. Լուսինի):
- 2) Երդումը և ուսումնային օրէնսդրութ. (1891 թ. № 7. Լուսինի):

4. Տնտեսական:

- 1) Արդիւնահանուէսը (1889 թ. № 10. Ա. Արասխանեան):
- 2) Կովկասեան արդիւնահանուէս (1889 թ. 1, 2, 3, 4, 9. Լուսինի):
- 3) Զոր մրգերի գործը (1889 թ. № 11. Հմայեակ Սողոմոնեան):
- 4) Քիշլիսի ընկերութիւնը կրակից փոխադարձաբար ապահովացնելու համար (1889 թ. № 9. Լուսինի):
- 5) Անդրկովկասեան երկաթուղին և երկաթուղային քաղաքականութիւնը (1889 թ. № 9. Լուսինի):
- 6) Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում (1890 թ. Ա. 6. Տարսուխով):
- 7) Դինու բերքը Ֆրանսիայում (1890 № 1, Արտաս. թղթ.):
- 8) Անտառները Անդրկովկասում (1890 թ. № 11. Ա. Արասխ.):

- 9) Անասնապահութիւնը Անդրկովկասում (1891 թ. № 1. Յ. Սաղաթելեանց):
- 10) Արդիւնագործութիւնը Անդրկովկասում (1891 թ. № 4. Գր. Վարդանեանց):
- 11) Նաւթային գործը Բաքուում (1891 թ. № 7—8, 9, 10, 11. Գ. Կիւլպենկեան):
- 12) Տեղեկութիւններ նաւթային գործի մասին (1891 թ. № 11. Ա. Արասխանեանց):
- 13) Անդրկովկասեան երկաթուղին 1890 թւականին (1891 թ. № 10, 1, Լուսինի):

5. Գրական-քննադատական:

- 1) Պռօշեանց և նորա վէպերը (1889, № 1, 2. Ն. Քարամ):
- 2) Յ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնը (1889, № 7 Ալ. Քալանթար):
- 3) Ազգային վէպ. Դաւիթ և Մհեր (1889, №№ 10, 11, 1890 №№ 1, 2. Մ. Արեղեան):
- 4) «Ամուսիններ» Սունդուկեանցի (1890 թ. № 2. Լուսինի):
- 5) «Վարժուհի» Զմշկեանի (1890 № 5. Լուսինի):
- 6) Մանկական ընթերցանութիւն և Ղ. Աղայեանց (1890 թ. № 3. Երուանդ Ղազարեանց):
- 7) Յ. Թումանեանցի բանաստեղծութիւնը (1891 № 1. Լուսին Մանուէլեանց):
- 8) Վիպասան Օկտաւ Ֆէլէ (1891 № 2, Գ. Անակեան):
- 9) Իշխան Ճաւճաւաձէի Կացիա-Ազամիա՛նի վէպի առիթով (1891 № 4, Տ. Փիրումեանց):
- 10) Կոմս Լև Տոլստոյի սկզբունքները (1891 № 6. Յ. Սաղաթել):
- 11) Միխայիլ Իւրևիչ Լերմոնտով (1891 № 6. Լ. Մանուէլեան):
- 12) Մոռացած խօսքեր: Կոմս Տոլստոյ (1891 № 12, Ե. Ղազարեանց):
- 13) Պետալոցցին հայ գրականութեան մէջ (1891 № 7—8, Յ. Բարխուդարեանց):
- 14) Սիրոյ պատրանք, Էւէլինա՛ս Գրիգոր Արծրունու (1891 թ. № 12. Ե. Ղազարեանց):

- 15) Սմբատ Շահազիզեանի բանաստեղծութիւնը (1891 թ.
№ 3, 5, 7—8, 12. Նղիշէ Մաղաթեան):
- 16) «Իշխանուհի» զրամա Շիրւանզադէի (1891 № 12. Լուսինի):

6. Գրախօսութիւն:

1889—1891 թ. երեքամեայ շրջանում, գլխաւոր աշխատակցութեամբ Ա. Արասխանեանցի, Ալ. Քալանթարի, Լ. Սարգսեանի, Արշ. Բարխուդարեանի և մասնակցութեամբ Յ. Տէր-Միրաքեանի Յ. Բարխուդարեանի և այլն «Մուրճ»-ում քննել են 138 զրքեր ընթացիկ զրականութիւնից, որոնց հեղինակներն են հետևեալները.

1889.-Հանդէս Գրակ. և Պատմ., Տ. Փիրումեան, Քամալեան, Յ. Նազարեան, Շեքսպիրից Յ. Լալայեան, Սմայլսից Փ. Վարդանեան; Աբեղեան, Մեհրաբեան-Սրինդ, Փիլոյեան, Նոյնը, Յ. Նազարեան, Матеріалы по изуч. быта гос. крестьянъ въ Закавказ. краѣ; Յիւնամեակ Երևանի թեմ. դպրանոցի, Տ. Նաւասարդեան, Кавалевскій и Макаровъ, Зейдлицъ, Кучаевъ; Աղբիւր ամսագիր; Տ. Կամարական, Զուբար; Շեքսպիրից Ս. Արծրունի, Բազմալէս ամսագիր, Պ. Պռօշեան; Սահակ քահանայ Սահակեանց, Ղազարեան, Դաբրիէլից Շահբուդաղեան, Յ. Բարխուդարեան; Աբեղեան, Մ. Տէր-Սարգսեանց; Կ. Ռիտտէր, Վ. Նիւյման, Շազլէր, Տրոյբեր, Է. Շմիդտ, Յ. Մէրկէլ, Բրուսման, Ա. Անդրուլի, Գ. Կնապպ, Յ. Զիտտարդ, Գ. Մօնօ, Վ. Ռոշէր, Լետեպս, Ա. Դասպարի, Ի. Դո'լլցիհէր; Լէօ, Շիպպէր, Ս. Հախումեան, Յ. Մարաղեան:

1890 ու Մովսէս Խորենացուց — Վ. Ստեփանէ, Ե. Մաղաթեան, Յ. Նազարեանց, Գ. քահանայ Աղանեանց, Մ. Զմշկեան, Աղանեանց, Երիցեան; Ֆիրդուսիից Փ. Վարդանեան, Ագապեան, Շիլլերից Փ. Վարդանեան, Վ. Փափազեան, Ան. Քալանթար; Տէր-Գրիգորեանց բժշ. (Թիֆլիսեցի), Բողենշտեա; Ա. Երիցեան, Խ. Մալումեան, Տէր-Աւոնդեան, Նար-Դոս; Ս. Պետերք. հայ ուսանողն. 5 հրատարակութիւնները, С. Зелинский; Ս. Մելիք-Շահնազարեանց, Սականինի, Ռէյս, Տիկին Մարգարիտ, Ս. Կուսիկեան; Աւոնդ Ալիշան, Ս. Պալասանեան; «Արաքս» Գիւլամիրեանցի, Описание Кавк. выставк; Լուսկիւիչ, Վ. Փափազեանց, Ղազարեանց; Մելիք-Շահնազարեան, Gelber.

1891. - Դարդելի, Լեոնեց, Մէնէլիշեան, Ս. քահանայ Սահակեան, Կ. Պալապան, Ա. Պոյաձեան; Բուզգէ, Սմայլսից Փ. Վարդա-

նեան, Բիշոֆ և Կոչլեր, Հուբեր; Շեքսպիրից օր. Շ. Տեր-Նիկողոսեան, Լէօ, Կարմէն Սիլւա, Ռ. Գէօրգիւնա; Էլ. Ռէկլիւլից սարկ. Գ. Տեր-Մկրտչեան, Տոլստոյից Փ. Վարդանեան, Տոլստոյից նոյնը; Լուսկէլիչ, Կարամզինից Դ. Տէր-Դաւթեանց, Կարամզինից Մ. Բէզլարեան, Պ. Հէյզէից Փ. Վարդանեան, Ա. Մամիկոնեան; Լէօ, Շէկլրինից Խ. Մ., Մոպասանից օր. Մ. Մալուսեան, Աուէրբախից օր. Ն. Ս., Սպիրից Ի. Յ., Դր. Տէր-Գրիգորեանց բժշկ. (Թիֆլիսեցի) Ֆ. Շմիտից Փ. Վարդանեան, Թոմաս Բոցարիս, Վ. Լուսկէլիչ, Լեւոնտովից Սադաթեան; Լ. Մանուէլեանց, Պարոնեան, Վալդենբերից Փ. Վարդանեան, Վ. Հիւգօից Յ. Օ., Տուրգենևից Ե. Ղազարեան; Գոգոլ, Դ. Տանից Գ. Վ. Գալմբէրեան; Եղիշէից Հ. Ղուկասեան, Յ. Նազարեան; Շէկլրինից Մ. Ղազարեանց 3 պատմաժք, Օսթրոգորսկիից Յ. Խ., Կուլիկովայից Աննա Սահակեան:

7. Ժողովրդական-կրթական, մանկավարժական և դպրոցական խնդիրներ:

- 1) Հոգեբանական-մանկավարժ. խորհրդածութիւններ (1889 № 3. Տէր-Միրաքեան):
- 2) Դպրոցական գործեր (1889 № 4. Լուսինի):
- 3) Ուսումնարան. զիտելիքներ (1889 № 9, 10. Յ. Տէր-Միր.):
- 4) Դպրոցական զբոսանք (1889 № 11. Յ. Բարխուդարեան):
- 5) Պրոսխալի ժողովրդական ուսումնարանների ներկայ դրութիւնը (1889 № 10. Արտասահմ. Թղթակց.):
- 6) Ժողովրդ. բժշկ խնդր. մասին մեր մէջ (1889 № 12):
- 7) Պարիզի քաղաքային ուսումնարանները (1890 Թ. № 1, Արտասահմ. Թղթակց.):
- 8) Կարինի դպրոց. գործերը (1890 № 3, 5. Վ. Ապանազեան):
- 9) Գերմանական դպրոցների դրութիւնը (անցեալը և ներկան, 1890 Թ. № 4, 5, 6, 8. Արշակ Տէր-միքէլեանց)
- 10) Մանկավ. բուժական վարժարան (1890 № 5. Յ. Բարխուդ.):
- 11) Գերմանական համալսարանների ոգին (1890 № 5. նոյնը):
- 12) Դաստիարակչ. մոլորութիւններ (1890 № 9. Եր. Ղազար.):
- 13) Անգլ. ժողովրդ. դպրոցները (1890 № 3. Արտաս. Թղթ.):
- 14) Ուսուցչական ռոճիկները և կաթողիկոսական կոնդակը (1890 № 6. Լուսինի և Ներքին տեսութիւն):

- 15) Ժողովրդ. ընթերց. գործը (1890 № 5. Լուսինի):
- 16) Ժողովրդական զրադարանների փորձը մեզանում (1890 թ. № 12. Լևոն Սարգսեանց):
- 17) Թիֆլ. արհեստաւոր. ուսումնարանը (1891 № 2. Լուսինի):
- 18) Ընթերցանութ. մոզական լրատւերով (1891 № 4. Թարգմ. B.):

8. Ժողովրդագրական, տեղագրակ., ճանապարհորդական:

- 1) Այց Թիւրքաց-Հայաստանի (1889 № 4, 5, 7, 9, 11, 12
և 1890 №№ 1, 2. Լևոն Սարգսեանց):
- 2) Հինդ օր (Արցախում, 1889 № 1, 2. Լէօ):
- 3) Աբասթուման և կուրօրանների զրականութիւնը (1889 թ. № 8. Լուսինի):
- 4) Ախալցխայ (1889 № 8. Լուսինի):
- 5) Ճանապարհորդի յիշատակարանից (Վենետիկ և Հ. Ալիշան.
1889 № 8. Սիրունի):
- 6) Վանայ ծովակը (1890 № 4. Տ. Փիրումեան):
- 7) Ստեղծեց և Էմին փաշա (1890 № 8. Արտասահմ. Թղթ.):
- 8) Բոշաները, ըստ Կոլչիի (1890 № 10. Ա. Արասխանեանց):
- 9) Սև-Լեռնցիք (1890 № 12. Յ. Ղարաբեօղեան):
- 10) Զմիռնիայից—Ալեքսանդրապոլ (1889 № 12. Տէր-Միրաք.):
- 11) Ապշերոնեան թերակղզին (1891 № 7—8, Գ. Կիւլպենկ.):
- 12) Ճանապարհորդական յիշողութիւններ Պարսկաստանից (1891
№ 11. Պետո):

9. Գիտնական:

- 1) Տեմպերամենտ (1889 թ. № 4. Յ. Բարխուդարեանց):
- 2) Էրնեստ Ռլնանը գիտութիւն. մասին (1889 № 7, Լուսինի):
- 3) Բարակացաւ-Թոքախորը (1889 թ. № 6. բժշկ. Տէր-Գրի-
գորեանց, Ղլլարեցի):
- 4) Բարակացաւի ծագման պատճառները (1889, № 7. Իոյնը):
- 5) Մանուկների հիւանդութիւնները (1889, № 9, 10. Իոյնը):
- 6) Հոսանքներ բնագիտ. ֆիլոսոֆայութ. մէջ (1890, № 10
Բաբելեան):
- 7) Արևի ազդեցութիւնը բուսականութեան վերայ Անդրկով-
կասում (1890 թ. № 11. Ալ. Քալանթար):

- 8) Կոխի գիւտը առեւերկուլողի զէմ (1890, № 12. Տէր-Գրիգորեանց Ղլլարեցի):
- 9) Կոխի հրատարակու թիւնը (1890, № 12. Ա. Բարեկեան):
- 10) Ռոբերտ Կոխի գիւտի մասին (1891, № 1. Գոսլէրից, Բար.):
- 11) Միկրոբները (1891, № 5, 6. Ա. Բալաղեան):
- 12) Երկրադնդի սպազան (1891 № 7—8. Խ. Շ.-ից Թարգ. Մ. Տէր-Անդրէասեան):
- 13) Հիպնոտիսմը (1891 № 12. բժշկ. Վահան Արծրունի):

10. Հայոց լեզու եւ գրականութիւն:

- 1) Էիւն թէ վեյ (1889 № 5. Սարգիս Սարգսեանց):
- 2) Աշխարհաբառ լեզուի զարդացման մասին (1889 թ. № 4. Ա. Արասխանեանց):
- 3) Սուրբ լեզու (1890 № 11, 12. Ղազարոս Աղայեանց):
- 4) Երկբարբառները մեր լեզուում (1890 № 4. Նոյնը):
- 5) Հայոց ալբուքէնը եւ թւագրութիւնը (1891 № 12. Նոյնը):
- 6) Հայկաբանութիւնը Եւրոպայում (1891 №№ 1, 3, 7—8, 9. Գ. Շուռմպֆ, Թարգմ. Ա. Արասխանեանցի):

11. Կենսագրական:

- 1) Գաբր. Սունդուկեանց (1889 № 1. Գ. Չմշկեան):
- 2) Պերճ Պաօշեան (1889 № 1. Ն. Քարամեան):
- 3) Վիլիամ Գրադստոն (1890 № 1):
- 4) Լուենց Շտայն (1890 № 6. Ա. Արասխանեանց):
- 5) Ժերոմ Նապոլէօն (1891 № 4, Z):
- 6) Լուդւիգ Վինտհորստ (1891 № 4, Z):
- 7) Պետրոս Աղամեան (1891 №№ 9, 10, Վրոյր):

12. Քաղաքական: (Ստորագրութիւն Z):

- 1) Եւրոպական մեծ պետութիւնների միջազգային քաղաքականութիւնը (1889 № 9):
- 2) Քաղաքական անցքերը 1888 թւականին (1889 № 2):
- 3) Բուլանժէ (1889 № 3, Z.):
- 4) 1789 թ. Եւ համաշխարհ. հանդէսը Պարիզում (1889 № 5):
- 5) Իտալական-գերմանական դաշնակցութիւնը (1889 № 6):

- 6) Եռապետեան դաշնակցութիւնը և քաղաքական նոր հանդամանքները (1889 № 8):
- 7) Եռապետութիւնը և մանր ազգութիւն. դատը (1889 № 9):
- 8) Ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը (1889 № 10):
- 9) Համա-ամերիկական կոնգրես } (1889 № 11):
- 10) Յեղափոխութիւն Բրազիլիայում }
- 11) Եւրոպան 1890 թ.-ի շէմքում (1890 № 1):
- 12) Վիլհելմ II-ի նոր հրովարտակները բանւորական և դպրոցական խնդիրների առիթով (1890 № 2):
- 13) Բիսմարկի հրաժարականը (1890 № 3):
- 14) Համա-ամերիկական միութեան գործը (1890 № 4):
- 15) Բիսմարկը }
- 16) Գերմանական զինուոր. օրինագիծը } (1890 № 5):
- 17) Ֆրանսիայի ներքին գործերը }
- 18) Եւրոպան և Աֆրիկայի բաժանումը (1890 № 7):
- 19) Աֆրիկայի բաժանումը (1890 № 9):
- 20) Առևտրական դաշինքների խնդիրը (1890 № 11):
- 21) Ընտրութիւններ Իտալիայում և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում (1890 № 12):
- 22) Կարդինալ Լաւիժըրի }
- 23) Պարնէլ և Գլադստոն } (1890 № 12):
- 24) Եւրոպան 1890 թւականին (1891 № 2):
- 25) Վիլհելմ II և Բիսմարկ (1891 № 3):
- 26) Ժերոմ Նապոլէօն }
- 27) Լուզւիզ Վինդհորստ } (1891 № 4):
- 28) Եռապետութիւնը }
- 29) Իտալիան և Անգլիան } (1891 № 7—8):
- 30) Ֆրանսիան և Ռուսիան }
- 31) Մկրտիչ արքեպ. Խրիմեան՝ կաթողիկոսական թեկնածու (1891 № 9, 10):
- 32) Պետութիւնների համախմբումները (1791 № 10):

13. Ամուսայ քրոնիկ: Ներքին տեսութեան բաժնում, և 1889 թ. № 6-ից սկսած Ամուսայ քրոնիկ խորագրով Լուսինի ստորագրութեամբ ղեկավարած են եղել ամուսայ խնդիր-

ների մասին կամ ամենայն կարևորագոյն դէպքերի առիթով մանր և ընդարձակ յօդածներ, որոնցից կարևորագոյնները լիշատակւած են այս ցանկում այլ և այլ բաժիններում: Ահա լրակատարը:

- 1889 Ձ 1. Փոխառու-խնայողական գանձարան «Մուրճ» ամսագրի:
Գաբրիէլ Սունդուկեանցի յօբելեանը:
Կովկասեան արդիւնահանդէս 1889 թ.
Տիկին Թամար Ներսիսեան (Ասիլեան):
- Ձ 2. Կովկ. Հայոց Բարեգ. ընկ. ընդհանուր Ժողովը:
Կովկաս. զիւղատնտեսական և արդիւնադ. հանդէս:
Գաբր. Սունդուկեանցի յօբելեանը (նկարագրութիւն):
- Ձ 3. Պերճ Պաօշեանցի 30-ամեակը:
Ներսիսեան դպրոցի պատմութեան խնդրի առիթով:
Կովկասեան արդիւնահանդէս:
Սաեփաննոս Պալասանեան:
Պետրոս Շանշեան:
- Ձ 4. Դպրոցական գործեր:
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը:
Կովկասեան արդիւնահանդէս:
- Ձ 5. Թիֆլ. ընկեր. հայերէն գրքերի հրատարակութիւնը (մի ծրագիր նորա գործունէութեան համար):
Կանոնադրութիւն ուսուցչական փոխառու-խնայողական գանձարանի:
Ուղղագրութեան խնդիրը:
Կաթողիկոսական կանոնադրութիւն ուսուցիչների մասին:
- Ձ 6. Հրատարակչ. ընկերութեան առիթով:
Հոգաբարձ. ընտրութ. Յովն.-Մարիամ. դպրոցի համար:
Ժորժ Օհնէի Դարձնապետը:
Հայկական Թատրոնը սիրողների ձեռքում:
Բաքւի մարդաս. ընկերութեան 25-ամեակը:
Վրաց հասարակութ. և գրող իշխ. Ակակի Յերեմեյի:
Կովկասեան կառավարչապետի շրջաբերականը հայոց կրօնի
դասաւորութ. մասին ուսաց միջնակ. դպրոցներում:
Արձան Պետրոս Շանշեանին:

Պռօշեանի յօրելեանի մասնաժողովր:

№ 7. Միջնակարգ դպրոցների նորաւարտները:

Մահմեդականուհիք ուսաց դպրոցներում:

№ 8. Ամառային զրոյցներ. Աբասթուման, Բորժոմ, Ախալցխ.

Հայոց դպրոցների կանոնները:

Իզմիրեան կտակը:

№ 9. Կովկասեան արդիւնահանդէսը:

Անդրկովկասեան երկաթուղին:

Թիֆլիսի հիւրերը:

№ 10. Հայկական թատրոնը 1879-ից դէս:

№ 12. «Արձագանք»-ի մի յօդաւածի առիթով:

Հրատարակչական ընկերութեան առիթով:

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան:

ժողովրդական բժշկութեան խնդիրը:

1890 № 2. «Ամուսիններ»-ի ներկայացումը:

№ 3. Գր. Արծրունու գործունէութեան 25-ամեակը:

Պատկերազարդ թերթեր:

Ներսիսեան Գարանոցի ակտը:

Հայոց բնիկութիւնների ընդհանուր ժողովները:

№ 4. «Լարթուհի» կոմիդ. Գ. Չմշկեանի:

№ 5. Գր. Արծրունու յօրելեանը:

ժողովրդակ. ընթերցանութեան գործը:

№ 6. Ռոսսի Թիֆլիսում:

Ուսուցչական ուժիկներ:

Կոնդակ եկեղ.-ճխական ուսումնարան. վերաբերեալ:

№ 7. Ուսուցչական ուժիկներ:

Հայոց ուսումնարանների եկամուտները:

№ 10. Հայկական կեանքի կենտրոններ:

Խորէն-Նարբէյ Թիֆլիսում:

Պատրիարքական խնդիրը Կ. Պոլսում:

Թեմական վերատեսչութեան վերականգնումը:

№ 11. Պատրիարքական խնդիրը Կ. Պոլսում:

Թիֆլիսի տնտէրերը ըստ կարգերի:

Ռաուլ Կոչալսկիի կոնցերտները:

№ 12. Թիֆլիսի զուգարի ձայնաւորները:

Հայկական թատրոնի խնդիրը:

1891 № 1. 1890 թւականը հայերի համար:

Թատերասէրների զերը:

Մուրացանի «Ռուզան» դրաման:

Կարա-Մուրզան Թիֆլիսում:

№ 2. Հայերը ուսաց թերթերում:

Հայոց բարեգործ. ընկ. ընդհ. ժողովները:

Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանը:

Դերասան Պետրոսեան:

«Վարժուհու» երկրորդ ներկայացումը:

Աղամեանը — հիւանդ:

№ 3. Տիկին Ժեղիկ Թիֆլիսում:

№ 4. Թիֆլիսի քաղաքապետի ընտրութիւնը:

Պօղոս Իզմայլեան և իշխ. Արզումբեան:

Ներսիսեան դպր. հոգաբարձութեան ընտրութիւնները:

№ 5. Կաթողիկոս Մակար I-ի մահը:

Կուսակցութեան սեպհականութեան խնդիրը:

Հայոց հրատարակչ. ընկերութիւնը:

Շեղուկով:

№ 6. Պետրոս Աղամեան:

Յակոբ Պարոնեան:

Կաթողիկոսական տեղակալի խնդիրը:

№ 7—8. Կոնդակը տեղակալական խնդրում:

Երգման խնդիրը:

№ 9. Աւագ Գևորգի Թիֆլիսի դատաստանական պալատի

Փոն Վենդրիխ և դատաստանակ. պահանջն. Կովկասում:

Հայկական թատրոնի մշտական խումբը:

№ 10. Անդրկովկասեան երկաթուղին 1890 թւականին:

Սովը Ռուսաստանում:

Թիֆլիսի քաղաքացին վարչութիւնը:

Կառավարչական կարգադրութիւններ Էջմիածնի Սինոդի

նոր անդամների և երգման խնդրի մասին:

№ 11. Սովը Ռուսաստանում:

Մեր զիւղական խնդիրները (զիւղական արդիւնաբերութեան պահեստներ, զիւղ. բանկեր, շտեմարաններ):
Հայաստանիկների առևտուրը և արտահանման արգելքը:
№ 12. Շիրականգագէի «Իշխանուհին»:

14. Հաստատութիւնների մասին:

- 1) Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը 1888 և 1889 թվականներին (1889 № 2, նաև 1891 № 2):
- 2) Թիֆլիսի Ընկերութիւն Հայերէն դրքերի հրատարակութեան (1889 №№ 4, 5, 6, 12, 1891 № 5):
- 3) Բաքւի Մարդասիրակ. ընկերութ. (1889 № 6, 1890 № 2):
- 4) Կանոններ հայոց-եկեղեցական ծխական ուսումնարանների, Մակար կաթողիկոսից հաստատւած 1889 թ. (աշխարհ. թարգմ. (1890 № 8):
- 5) Տեղեկագիր Իզմիրեանց կտակի դործադիր մնայուն յանձնաժողովի ի հանդիսի Սահակ-Մեկ ուսկան մրցանակաբաշխութեան 1891 թ.
- 6) Ներսիսեան ազգային հոգևոր դպրանոցի նիւթական դրութիւնը (1890 № 3):
- 7) Մակար կաթող. կոնդակը ուսումնարան. մասին (1890 № 6):
- 8) Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների տարեկան եկամուտները 18⁸⁷/₈₈ թ. (1890 № 7):

15. Վեպեր, պոէմաներ, պատմ. ած. քներ, պատկերներ, կեանքի դժեր, ալեգորիաներ:

- 1) Յեցեր (1889 № 1—6. Պ. Պաօշեանց):
- 2) Խե. Կարապետ (1889 № 6—9. Ս. Արապետեան):
- 3) Կորածներ 1889 № 9, 10. Լէօ):
- 4) Բզդէ 1889 № 12, 1890 № 1—9. Պերճ Պաօշեանց):
- 5) Հեղինէ, մասն առաջին (1890 №№ 6—12 տիկին Մ. Մարիսեան):
- 6) Կացիա-Աղամեանի (1891 № 4, 5, 6. Իշխ. Իլիա Ճաւաճէի թարգմ. Տ. Փիրումեանի):
- 7) Հեղինէ, մասն երկրորդ (1891 № 1—12. տ. Մ. Մարիսեան):
- 8) Եղուարդ Էֆէնդու դաղանիքը (1889 № 1. Տ. Փիրումեան):

- 9) Բարի պոսւղ (1889 № 11. Յ. Գառնեցի):
- 10) Հայ գիւղացու սև օրը (1890 № 3—5. Ա. Մեղիք-Նահնապ.):
- 11) Խաթ-Սարա (1890 № 9, 10. Վ. Փափաղեան):
- 12) Նկարիչներ (1890 № 8. Վ. Գարշին, [Թարգմ. Տ. Յ.):
- 13) Բոսֆորի ափերում (1891 № 3, 5. Վ. Փափաղեան):
- 14) Չալարիների արշաւանքը (1891 № 6, 7—8. Լ. Մանուէլ):
- 15) Attalea-Princeps (1891 № 11. Վ. Գարշին):
- 16) Վիթխարի ընկուզենին (1891 № 11. Ա. Մեղիք-Նահնապ.):
Պատրիկեանի նամակները (Ա. Նամակեանի), այն է—
- 17) Օտարոտի այցելու (1889 № 2):
- 18) Երիտասարդ Հաթամեանը (1889 № 3):
- 19) Կեանքի սիւները (1889 № 5):
- 20) Օրիորդ Նւարդ (1890 № 2):
- 21) Արանեանի մօտ (1890 № 3):
- 22) Զրազաց (1890 № 4):
- 23) Իմ ուղեկիցները (1891 № 11):
Կեանքի գծեր (Ա. Նամակեանի), այն է—
- 24) Հարեաններ
- 25) Մինասի եզը (1891 № 1):
- 26) Եղիդ աղջիկը (1891 № 2):
- 27) Նւազաճ կեանքը (1891 № 3):
- 28) Ծանր քարը (1891 № 4):
- 29) Մեր ինչը կը պակսի (1891 № 9):
- 30) Ամուսինների վրդովմունքը:
- 31) Տիկին Ուիլեամս և կայծակը:
- 32) Իմ առաջին գրական փորձը (1891 № 1):
- 33) Իմ ժամացոյցի արկածները (1891 № 1):
- 34) Փրկարար ձայնը (1891 № 2):
- 35) Սափրիչների մասին (1891 № 3):
- 36) Նոր քրէական մի բառ (1891 № 4):
- 37) Միջնադարեան վէպ (1891 № 6):
- 38) Խրատակ. առակների մասին (1891 № 7):
- 10) Ժանտախտի դիմակը (1891 № 2. Էդգար Պօէ):
- 11) Կենդանի պատկեր (1891 № 3. Էդգար Պօէ):

Մարկ Տուէն:

16. Բանաստեղծութիւններ:

1889—1891 հռամեայ լինթացքում զետեղել են իրանց ոտանաւոր բանաստեղծութիւնները բացառապէս «Մուրճ»-ում պ. պ. 1. Մանուէլեանց, Արշ. Մխիթարեան և Յովհաննէս Թումանեանց: Աշխատակցել են, բացի զոցանից՝ պպ. Ալեքսանդր Մատուրեան, Զաւադ Բալուղեան, Լեւոնց և ուրիշներ:

17. Ֆէյրտոն:

1) Օրէ ցօր (1801 № 10, 11, 12):

18. Գեղարւեստ, երաժշտութիւն:

1) Երաժշտութիւն (1889 № 1. Կարա-Մուրզա):

2) Կարա-Մուրզա և քառաձայն երգեցողութիւնը մեր մէջ (1889 № 5. Ա. Զիլցեան):

3) Նկարչի նամակները (1889 թ. № 11 և 1890 № 11. Գ. Բաշինջաղեան):

4) Թիֆլիսի սալոն 1890 թ. (1890 № 2. Ա. Արասխան.):

5) Ռաուլ Կոչալսկի (1890 № 11, Լուսինի):

6) Նկարիչ Էրնեստ Մեսոնիէ (1881 № 2. Ա. Արասխան.):

19. Թատրոն:

1) Դարբնապետ Ժորժ Օհնէի (1889 № 6):

2) Ուղղութիւններ հայկ. թատ. դործում (1889 № 10):

3) Ամուսիններ Սունդուկեանցի (1890 № 2):

4) Վարժուհի Զմշկեանի (1890 № 4):

5) Ռոսսին Թիֆլիսում (1890 № 6):

6) Թատերասերների դերը (1890 № 12):

7) Ռուզան Մուրացանի (1891 № 1):

8) Դերասան Պետրոսեան (1891 № 2):

9) Տիկին Ժիւզիկ Թիֆլիսում (1891 № 3):

10) Հայկական թատրոն 1890/91 թ. (1891 № 9, 10, 11):

11) Իշխանուհի Շիրանդադէի (1891 № 12):

20. Ռուսաստանի կեանքից:

1) Նամակներ Ռուսաստանից (1890 № 11, 12, 1891 № 1. Տ. Յովհաննիսեան):

21. Արտասահմանի կեսանքից:

- 1) Գաղթը դէպի Անգլիա (1889 № 11, թղթակց.):
- 2) Ֆիզիոլոգն. կոնգրես Բադէլուժ (1889 № 11, թղթակ.):
- 3) Բրիտանական ընկեր. գիտութիւններ առաջացնելու համար (1889 № 11, թղթ.):
- 4) Պարիզի կոնգրես կիրականօրեայ հանգստութեան առիթով (1889 № 12, թղթ.):
- 5) Պարիզի համաշխարհ. հանդէս (1889 № 12, թղթ.):
- 6) Վիլհելմ կայսրը Կ. Պոլսում (1889 № 12, թղթ.):
- 7) Գլադստոնի 80-ամեակը (1890 № 1, թղթ.):
- 8) Ազգային կոնգրես Հնդկաստանում (1890 № 1, Արտասահ. թղթակցութիւն):
- 9) Համա-ամիրիկական կոնգրես:
- 10) Ֆրանսիայի պետական ծախքերը (1890 № 11, թղթ.):
- 11) Կոստի գիւտի առաջին արձագանքները (1890 № 12, թղ.):

22. Նկատողութիւններ, պատասխաններ:

Կարեօրագոյն նկատողութիւններ և պատասխաններ խմբագրութեան և ալ կողմերից:

- 1) «Մուրճ» ամս. ուղղադրութիւնը (1889 № 1, ներք. տես.):
- 2) «Մուրճ»-ի ուղղադրութեան մասին (1889 № 3, Խմբ.):
- 3) «Իւերիա» վրաց լրագրի խմբագրութեանը Սունդուկեանցի առիթով (1889 № 3, Խմբ.):
- 4) «Մուրճ»-ի զրախօսական բաժնի մասին (1889 № 4, Խմբ.):
- 5) Պատասխ. «Մշակ»-ին, «Յեցերի» առիթով (1889 № 7, Խմբ.):
- 6) Օտար գրականութիւնը «Մուրճ»-ի զրախօսութեան մէջ (1889 № 10, Խմբ.):
- 7) «Մուրճ»-ի բաժինների ընդարձակումը (1889 № 11, Խմբ.):
- 8) «Արձագանք»-ին (1889 № 12):
- 9) Մոսկւայի բուսանոյների համակը (1890 № 1):
- 10) Մի բացատրութիւն «Աղբիւր»-ի խմբագրութեան (1890 № 3, Խմբ.):
- 11) Խրիմեան Հայրիկի 70-ամեակը (1890 № 4, Խմբ.):
- 12) Ուսանաւորները «Մուրճ»-ում (1890 № 4, Խմբ.):

- 13) «Քննադատներին» (1890 № 4, Եղիշէ Մադաթեան):
- 14) Նամակ խմբագրին (Տ. Յովհաննիսեան, 1890 № 5):
- 15) Մելիք-Հայկազեանց (1890 №№ 5, 6. Խմբ.):
- 16) Ալիշան չ. Աւոնդին հեռագիր (1890 № 5, Խմբ., պատասխան № 6. Խմբ.):
- 17) Լուենց Ֆոն Նոայնին շնորհաւորութիւն (1890 թ., № 5. Նորա մահը 1890 № 10, Խմբ.):
- 18) «Հանդէս Ամսօրեայ» ամսաթերթին (1890 № 5. Խմբ.):
- 19) Գրականական աչքակապութիւն (1890 № 6. Եղիշէ Մադաթեանց):
- 20) «Մուրճ»-ի գրախօսութիւնը և պ. Սեդրակ Մանդինեան (1890 № 6. Խմբ.):
- 21) Հմայեակ Սողոմոնեանց (1890 № 6. Խմբ.):
- 22) Տալմուզական քննադատութիւն «Մուրճ»-ի մասին (1890 № 6. Խմբ.):
- 22) Թէ ինչպէս է սարգում «Արձագանք»-ը ճշմարտութիւնը (1890 № 8. Եղիշէ Մադաթեանց):
- 23) Համբարութիւնների ուսումնասիրութիւնը և պ. Եղիազարեանց (1890 № 9):
- 24) Ո և Օ-ի բաղադրութիւնը (1890 № 10. Խմբ.):
- 25) «Ծաղիկ» լրագիրը (1890 № 10. Խմբ.):
- 26) Գիւղական բանկերի առիթով (1890 № 11):
- 27) Պրոֆ. Զուբինովին շնորհաւորութիւն (1890 № 5 պատասխան № 11, Խմբ.):
- 28) Լազարեան ճեմարանի յօբելանը (1890 № 11. Խմբ.):
- 29) Ռուսաստանի կեանքը «Մուրճ»-ում (1890 № 12, Խմբ.):
- 30) Բանաստեղծութիւնը «Մուրճ»-ում (Նամակ խմբագրին, Ընթերցող: Նկատողութիւն խմբագրութեան 1890 № 12):
- 31) Մկրտիչ Էմին (1891 № 1. Խմբ.):
- 32) Ներսիս. զպր. հոգաբ. ընտր. մասին (1891 № 2. Խմբ.):
- 33) Մինաս Չերազ (1891 № 2. Խմբ.):
- 34) Հենրիխ Ելիման (1891 № 2. Խմբ.):
- 35) Երկպառակութեան ոգին զաւանդելում (1891 № 2. Խմբ.):
- 36) Աղքատների խնամատարութեան խնդիրը (1891 № 2. Խմբ.):

- 37) Հայոց Բարեկ. Բնկեր. ընտրութիւնները (1891 № 2. Խմբ.):
- 38) «Միաբան»-ի քննութիւնը Մովսէս Խորենացու (1891 № 2, Խմբ.):
- 39) Ներս. զպր. տարեկան աւտը (1891 № 2. Խմբ.):
- 40) Յանձնաժողով Հայկական և Թրքական զործերի Համար (1891 № 3. Խմբ.):
- 41) Կովկաս. գրաքննակ. կոմիտեի պերսոնալը (1891 № 3. Խմբ.):
- 42) Արձագանքի մոքերը (1891 № 3. Խմբ.):
- 43) «Տարազ»-ի մաներները (1891 № 4. Խմբ.):
- 44) Հատառտութիւնների յայտարարութիւնները «Մուրճ»-ում (1891 № 5. Խմբ.):
- 45) Դրացի օտարների ուսումնասիրութիւնը «Մուրճ»-ում (1891 № 6. Խմբ.):
- 46) Յ. Բարխուդարեանցի «Մանկավարժ. գրադարանը» (1891 № 7. Խմբ.):
- 47) Փարիսեցիութիւնը քննադատութեան մէջ (1891 № 9. Ա. Արասխանեանց):
- 48) Պահպանողականները լեզուի խնդրում (1891 № 9. Համբակ):
- 49) «Մուրճ»-ի հրատարակչութիւնը 1892 թվականից (1891 № 9. Խմբ.):
- 50) «Մշակ»-ի մոքերը ամուսնութեան և պսակի մասին (1891 № 9. Խմբ.):
- 51) «Մշակ»-ի հրապարակախօսական մոլորութիւնները: Հողագործութիւնը և պանդխտութիւնը (1891 № 10. Խմբ.):
- 52) Նամակ Խմբագրին (1891 № 10. Ստ. Մալխասեան):
- 53) Առաւելա-Պրինցեպի թարգմանութեան առիթով (1891 № 11. Ա. Ղուկեանց):
- 54) Թեմական պատգամաւորների ընտրութիւններ կաթողիկոսական ընտրութեան համար (1891 № 12, Խմբ.):

Ներկայ 1891 քաղականին

„ՄՈՒՐՃԸ“

ՏԻԵՑ ՀԵՏԵԻԵԱԼ ԳՐԻԱԾՔՆԵՐԸ

1. Հիմնական խնդիրներ և ժամանակակից
հասարակական խնդիրներ:

- 1) Յառաջադիմութեան պայմանները (№ 1, Ա. Արասխանեանց):
- 2) Կինը հասարակութեան մէջ (№ 6, Ա. Արասխանեանց):
- 3) Տեղակալական խնդիրը (№ 6, 7—8, Լուսինի):
- 4) Երգման խնդիրը (№ 7—8, Լուսինի):

2. Վիպական:

- 1) Հեղինէ, մեծ վէպ, 2-րդ մասը (№№ 1—12, Տ.-ին Մ. Մարխան):
- 2) Բոսֆորի ափերում (№№ 3, 5, Վ. Փափաղեանց):
- 3) Չալաբէների արշաւանքը (№ 6, 7—8, Լ. Մանուէլեանց):
- 4—8) Հինդ պատմածք Ալ. Նամալեանի (№№ 1, 2, 3, 4, 9):
- 9) Կացիա-Աղամեանի (№№ 4, 5, 6, իշխ. Ի. Ճաւճաւճէ, թարգմ.):
- 10—16) Եօթը պատմածք Մարկ Տուէնի (№№ 1, 2, 3, 4, 6, 10):
- 17) Ժանտախտի դիմակը (№ 2). { Եղգար Պօէ.
- 18) Կենդանի պատկեր (№ 3). {
- 19) Attalea-princeps (№ 11, Վ. Գարշին, թարգմ.):
- 20) Վիթխարի Բնկուղենին (№ 12, Մել.-Շահնազ.):
- 21) Դիագորոս Միլտացին (Պօէմա, № 12, Լ. Մանուէլեանց):

3. Բանաստեղծութիւն:

- 1) Մեր նոր բանաստեղծներին (№ 1, Լեոն Մանուէլեանց):
- 2) Երեք բանաստեղծութ. (№ 1, Հէյնէից՝ Բալուդեան):
- 3) *** (№ 1, Սուրէն Աթայեանց):
- 4) Երկու երգիչ (№ 2, Լեոն Մանուէլեանց):
- 5) Երգչին (№ 2, Յովհ. Թումանեանց):
- 6) *** (№ 3, Լեոն Մանուէլեանց):
- 7) Թիթեռ և Շուշան (№ 3, Լեոն Մանուէլեանց):
- 8) Ձեմ նախանձում (№ 3, Ա. Մատուրեան):
- 9) *** (№ 3, Յովհ. Թումանեանց):
- 10) *** (№ 4, Լեոն Մանուէլեանց):
- 11) Թռչնիկ (№ 4, Պէշէէից՝ Կ. Կրասիլնիկեան):
- 12) Գութանի երգ (№ 4, Յովհ. Թումանեանց):
- 13) Պանդուխտ հոգի (№ 5, Սմբատ Շահաղիզեան):
- 14) Համերգ (№ 5, Յովհ. Թումանեանց):
- 15) Փոթորկի ժամին (№ 6, Լեոն Մանուէլեանց):
- 16) Իդէալ (№ 6, Լեոն Մանուէլեանց):
- 17) Անհոգ մանկութեան (№ 6, Ալեքսանդր Մատուրեանց):
- 18) Երազ (Ալ. Մատուրեան):
- 19) Կուրծքս երբեմն (№ 6, Յովհ. Թումանեանց):
- 20) Հեղաղալի երգիչներ (№ 7—8, Լեոն Մանուէլեանց):
- 21) Եօթը ոտանաւոր (№ 7—8, Լեւոնտովից՝ Մատուրեան):
- 22) Խորհրդածութիւն (№ 7—8, Յովհ. Թումանեանց):
- 23) Միայնակ ախուր № 7—8, Գէորգ քաջ. Մկրտումեանց):
- 24) Գիշերային երգ (№ 9, Լեոն Մանուէլեանց):
- 25) Երևացիր, օ, մուսա. (№ 9, Լեոն Մանուէլեանց):
- 26) Ես լալիս էի.
- 27) Ամպերում վառւեց.
- 28) Առաօտեան աստղը.
- 29) Երկու տեսիլք.
- 30) Ծիծաղեցէք, իմ ընկերներ.
- 31) Մի ջանար զնեւ օպեղանի վերքիս.
- 32) Այս փողոց աշխարհի արգանդից վիժւած
- 33) Երգչի վրէժը (№ 10, Յովհ. Թումանեանց):

№ 9, Լեւոնց:

№ 10, Լեւոնց:

34) Էյ, ասողեր, ասողեր (№ 11, Յովհ. Թումանյան):

35) Որպէս երբեմն (№ 11, Բալընից՝ Լեւին):

36) *** (№ 12, Յ. Թումանյան):

4. Տեղագրական:

1) Մի քանի օր Խիզանում (№ 1, Տ. Փիրումյան):

2) Կախէթ և Նիրակ (№ 7—8, Երսւանդ Ղազարեան):

3) Ապշերոնեան թերակղզին (7—8, Գալ. Կիւլպենկեան):

4) Ճանապարհ. չիշողութիւններ (№ 11, Պետո):

5. Գրական-Քննադատական:

1) Հողի իշխանութիւնը, ըստ Գլէք Ուսպէնսկու (№ 3, Երսւանդ Ղազարեան):

2) Լերմոնով, Մ. Ի. (№ 6, Լ. Մանուկեան):

3) Լև Տոլստոյի սկզբունքները (№ 6, Յ. Սաղաթեկեան):

4) Պետալոցցին հոյ գրակ. մէջ (№ 7—8 Յ. Բարխուդ.):

5) Սմբատ Նահապիղեանի բանաստեղծութիւնը (№ № 3, 5, 7—8, 12, Ե. Սաղաթեկեան):

6) Մոռացւած խօսքեր: Կոմա Տոլստոյ (№ 12, Ե. Ղազարեան):

7) Սիրոյ պատրանք. Էւելինա (№ 12, Ե. Ղազարեան):

8) Իշխանուհի, գրամա Նիրանդապէի (№ 12, Լուսինի):

6. Գրախօսութիւն:

«Մուրճ»-ը գրախօսել և ներկայ 1891 թվականին 48 նոր լոյս տեսած գրքեր:

7. Տնտեսական:

1) Անասնապահութիւնը Կովկասում (№ 1, Յ. Սաղաթեկեան):

2) Արդիւնագործութիւնը Անդրկովկասում (№ 4, յօդ. Լ. Գր. Վարդանեան):

3) Բաքւի նաւթը (№ 7—8, 9, 10, 11, Գ. Կիւլպենկեան):

4) Անդրկովկասեան երկաթուղին 1890 թ. (№ 10, Լուսինի):

8. Գիտնական-Բանասիրական:

1) Բոյսերի մեծարանքը (№ 2, 3, Ալ. Քիչմիշեան):

2) Ռոբերտ Կոսի գիւտի մասին (№ 1, Բարեկեան):

3) Միկրոֆէները (№ 5, 6, Սամուէլ Բալազեան):

4) Երկրագնդի ապագան (№ 7—8, Խ. Օ. Թարգմ.):

- 5) Հիպնոտիսմը (№ 12, Բժշկ. Վահան Արծրունի):
- 6) Հայկաբանութիւնը Ներուպայում (№ 1, 3, 7 — 8, 9, պրոֆ. Գ. Ա. Շրումպ):
- 7) Երկրաբանները մեր լեզուում (№ 4, Ղ. Աղայեանց):
- 8) Հայոց այբուբենը և թւագրութիւնը (№ 12, Ղ. Աղայեանց):
- 9) Զւիցերիակ. պետութիւնը (№ 9, 10, 11, Մ. Մանուշարեան)

9. Կենսագրական:

- 1) Շարլ Մետնիէ, նկարիչ (№ 2, Ա. Արասխանեանց):
- 2) Օկտաւ. Ֆէլէ, զիպասան (№ 2, Գր. Անակեան):
- 3) Ժերոմ Նապոլէօն (№ 4, Շ.):
- 4) Լուգլիգ Վինգհորստ (№ 4, Շ.):
- 5) Պետրոս Աբամեան (№ 9, 10, Ա. Մ. Վրոյր):

10. Ժողովրդական Կրթութիւն:

- 1) Դպրոցական բեֆորմը Պրուսիայում (№ 1):
- 2) Ընթերցանութիւն մոզական լապտերով (№ 4, B.):
- 3) Ժողովրդական կրթութեան դաշնակցութիւնը Ֆրանսիայում (№ 9, 10, Լ. Դ. Թարգմ. Ղ. Հայրապետեանց):

11. Օտարների կեանքից:

- 1) Նամակներ Ռուսաստանից (№ 1, Տ. Յովհաննէսեան):
- 2) Շեղուհով (№ 5, Լուսինի):
- 3) Ֆրանսիական երիտասարդութիւնը (№ 11, 12, Դ. ու, Թար.):
- 4) Վրաց զրականութիւնը (№ 4, Տ. Փիրումեան):

12. Քաղաքական:

- 1) Քաղաքական անցքերից 1890 թ. (№ 2, Շ.):
- 2) Վիլհելմ II, իշխ. Բիսմարկ և Ֆրանսիան (№ 3, Շ.):
- 3) Նուապետութիւնը, Իտալիան և Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստան (№ 9, Շ.):
- 4) Պետութիւն. համախմբումները: Պարնելի մահը (№ 10, Շ.):

13. Հասարակական Քրոնիկ:

- 1) 1890 թւականի կերպարանքը
 - 2) Թատերասերների գերը
 - 3) Կարա-Մուրզա և հայկական երգեցիկ խումբը
- } № 1

- | | |
|--|--------|
| 4) Հայերը ուսաց թերթերում | } № 2 |
| 5) Հայոց բարեգործ. ընկեր. ընդհ. ժողովները . . | |
| 6) Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանը . . | |
| 7) Ղերասան—Պետրոսեան. | |
| 8) Վարժուհու երկրորդ ներկայացումը | } № 3 |
| 9) Աղա Լեանի հիւանդութիւնը | |
| 10) Տիկին Ժիւզիկ Թիֆլիսում | } № 4 |
| 11) Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը | |
| 12) Պօղոս Իզմայելեան և իշխ. Արղութեան | |
| 13) Ներսիսեան դպրանոցի հոգաբ. ընտրութիւնը . . | |
| 14) Մակար կաթող. կենսընթացքը (Արարատից) . . | } № 5 |
| 15) Մակար I կաթողիկոսի մահը | |
| 16) Հայոց հրատար. ընկերութեան ընդհ. ժողովը . . | |
| 17) Շելզանով | |
| 18) Պետրոս Աղամեան | } № 6 |
| 19) Յակոբ Պարոնեան | |
| 20) Թիֆլ. դատար. պալատի նոր աւագ-նախագահ
Ֆոն Վենդերիսի առիթով | } № 9 |
| 21) Հայկական թատրոն | |
| 22) Անդրկ. երկաթուղին 1890 թ. | } № 10 |
| 23) Սովբ. Ռուսաստանում. | |
| 24) Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը | |
| 25) Թատրոն | |
| 26) Կառավ. կարգադրութիւններ | } № 11 |
| 27) Սովբ. Ռուսաստանում. | |
| 28) Մեր դիւղական խնդիրները | |
| 29) Հացահատիկների առևտուրը և արտահանման
արգելքը | |
| 30) Ազնւականների բանկը | } № 12 |
| 31) Թատրոն | |
| 32) «Իշխանուհի» Շիրանզադէի | |

14. Ֆէյրտուն:

1) Օրէջօր (№ 10, 11, 12, Եսեմեան):

15. Նկատողութիւններ, պատասխաններ խմբագրութեան կողմից, Նամակներ Խմբագրին և այլն:

16. Յայտարարութիւններ:

ԴԻԱԳՈՐՈՍ ՄԻԼՈՍԱՑԻՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՈԷՄԱ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Տեսարան I

Աթենքի նաւահանգիստը. ծովի վերայ երևում են նաւեր:

ՆԱԻԱՊԵՏ (նաւաստիներին)

Վերջապէս ահա բարձրացաւ քամին.

Մենք կարող էինք հէնց այսօր և եթ

Ճանապարհ ընկնէլ, բայց մի օր դարձեալ

Մենք ղեռ կը սպասենք:

(Հեռւից երևում է Դիադորոսը՝ զգեստաւորւած)

Իսկ այժմ առէ՛ք

Մի զոյգ սև ոչխար և Պոսիդոնի

Տաճարը թաքէ՛ք մատաղ անելու:

(Նաւաստիները հեռանում են)

ՆԱԻԱՊԵՏ, ԴԻԱԳՈՐՈՍ

ԴԻԱԳՈՐՈՍ

Ողջո՛յն, Թերա՛կէն:

ՆԱԻԱՊԵՏ

Դո՞ւ ես, Դիագոր․

Ողջո՞յն, բարեկամ։ Ապուլոն վրկայ,
 ես քեզ հազիւ հազ ճանաչեցի։

ԴԻԱԳՈՐՈՍ

Դո՞ւ,

Ազնի՛ւ բարեկամ, միակ անձըն ես
 Այս երկրն քի տակ, որ ինձ կարող է
 Հովանաւորել։ Ամբոխի ձեռքից
 Հազիւ ազատւած՝ քեզ եմ ես դիմում,
 Մանկութեանս անգին իմ բարեկամին։
 Ապաստան տուր ինձ քո նաւի վերայ
 եւ թէ սիրում ես քո բարեկամին,
 Թո՛ղ զաղոնի մընայ Դիագորոսի
 Անունը։ Ընկե՛ր, ես աղաչում եմ․․

ՆԱԻԱՊԵՏ

Ի՛նչ դունատուել ես, ձայնըդ դողում է,
 Այդ ի՛նչ ես դատել, ի՛նչ է պատահել,
 Ասա՛ ինձ տեսնեմ։

ԴԻԱԳՈՐՈՍ

Դեռ. ասա՛ թէ ե՞րբ

Դու պիտի դուրս գաս։

ՆԱԻԱՊԵՏ

Իա՛, ի՞նչպէս, ինձնից

Ծածո՞ւկ ես պահում վըշտիդ պատճառը։
 Դու պատմի՛ր տեսնեմ թէ ինչո՞ւ այդպէս
 Դունատուել ես դու. ինչո՞ւ ես կախել
 Դու քո ծընօտից քըրմական մօրուք.
 Ինչո՞ւ զատամեալ ծերունու նըման.
 Կորացըրել ես քո ջահիլ մէջքը.

Ինչի՞ համար ես առել քո ձեռք
Հովեական երկայն այդ ցուպըն, ասա՛:
Թէ բարեկամը զըժարանում է
Իւր բարեկամին իւր ցաւըն յայտնել,
Նա բարեկամ չէ:

ԴԻԱԳՈՐՈՍ

Մի՞թէ իմ մասին
Ձեռ լըսել ոչինչ:

ՆԱԻԱՊԵՏ

Ոչի՞նչ: Այսինքըն
Ինչպէս թէ ոչինչ. քո մասին ես շատ
Բաներ եմ լըսել. բայց բոլոր լուրերն
Իրար հակասող և ծիծաղաշարժ
Մէկը միւսից: Խօսում են իբրև
Դու տապալել ես սուրբ արձանները.
Ոմանք պատմում են թէ Պոսիդոնի,
Իսկ միւսները — թէ Հերմէսինը:
Այդ ճի՞շդ է:

ԴԻԱԳՈՐՈՍ

Այո՛:

ՆԱԻԱՊԵՏ

Այո՛. Դիագո՛ր,
Անըզգո՛յշ դու մարդ: Ա՛խ, քանի՛ անգամ
Ես կըրկնել եմ քեզ. թո՛ղ քո անխորհուրդ,
Անմիտ քարոզները: Օ՛ ի՛նչ վայրենի
Մի ցանկութիւն է քո սըրտում վառւել —
Խըլել մարդկանցից նոցա հաւատը:
Է՞ր ես խորտակում դու սուրբ արձանները,
Որոնց պաշտում է մեր ժողովուրդը:
Ի՞նչ է քո միտքըդ, ի՞նչ է փափագըդ:

Գարձեալ պընդում եմ, որ առնըւազըն
Անմըտութիւն է, երբ ժողովրդի
Նըւիրական, սուրբ ըզգացումները
Վիրաւորում են:

ԴԻԱԳՈՐՈՍ

Հաւատա՛, ընկե՛ր,
Ես հաշիւ չ'ունիմ Ոլիմպեանների
Եւ ոչ մէկի հետ. Զեւը և Հերան
Եւ Պոսիդոնը և Ապոլլոնը,
Եւ անմահների ամբողջ ժողովը
Թո՛ղ Ոլիմպոսի պայծառ զագաթին
Քաղցրահամ նեկտար շարունակ ըմպեն
Եւ անվիշտ, անհոգ, բարձր ծիծաղով
Զայնակցեն մարդկանց հաւաքանքներին:
Բայց թըշառ մարդըն է ողորմելի,
Բարի՛ Թերամէն: Սարսափելի է
Մարդու վիճակը, միմիայն մարդու:
Անկարող եմ ես համբերել, լըռել,
Երբ որ սա իւր զոյգ աշքերը գոցած
Ըստըրկացած է բընութեան ձեռքին,
Իմ փափագըն էր, որ մարդկութիւնը
Տէր, իշխան դառնար բընութեան վերայ,
Որ սա բարձրանար բընութեան վերայ,
Ինչպէս արծիւը երկնականմարում:
Իմ քարոզըն էր—սընապաշտութեան դէմ,
Իմ քարոզըն էր—լուսաւորութիւն:

ՆԱԻԱՊԵՏ

Դու էլ քարոզի՛ր լուսաւորութիւն,
Բայց սուրբ արձաններն ինչո՞ւ տասլալել:

ԴԻԱԳՈՐՈՍ

Ե՛րբ ենք ճանապարհ ընկնում, Թերամէ՛ն:

ՆԱԻԱՊԵՏ

Ո՛չ, ո՛չ, դեռ ասա՛ թէ արձանները...

ԴԻԱԳՈՐՈՍ

Թո՛ղ այդ հարց ու փորձը, ի սէր պաշտելի
Քո ասուածներին: Գէթ առ ժամանակ
Այդ վէճը թողնենք: Դու ասա՛ տեսնեմ
Թէ երբ ենք արդեօք ճանապարհ ընկնում:

ՆԱԻԱՊԵՏ

Վա՛ղը:

ԴԻԱԳՈՐՈՍ

Վա՛ղը: Բայց ինչո՞ւ ոչ այսօր:

ՆԱԻԱՊԵՏ

Զը գիտե՞ս ինչու:

ԴԻԱԳՈՐՈՍ

Զը գիտեմ: Գուցէ
Բաւականաչափ ճանապարհորդներ
Գեռ էլս չունիս:

ՆԱԻԱՊԵՏ

Ո՛չ. իմ ուղածից

Գեռ աւելի են:

ԴԻԱԳՈՐՈՍ

Գուցէ խնդրել են,
Որ վաղը ելնես:

ՆԱԻԱՊԵՏ

Նոքա խընդրեցին,
Որ այսօր ելնեմ. բայց անկարող եմ:

ԴԻԱԳՈՐՈՍ

Դուցէ հողմ չը կայ:

ՆԱԽԱՊԵՏ

Ինքըդ լըսում ես
Հողմի շքնիւնը, կարծես սուլելով
Նա հրաւիրում է մեզ դէպի ծովը:

ՆԻԱԳՈՐՈՍ

Ջարմանալի է:

ՆԱԽԱՊԵՏ

Ո՛չ, մի՛ զարմանալ:
Եթէ մենք այսօր ճանապարհ ընկնենք,
Նուտով կը հասնենք աշնայիսի խաղաղ
Մի նաւահանգիստ, ուր ոչ խելօքը
Եւ ոչ լիմարը չեն ուզում հասնել—
Ծովի յատակը, իմ Գլադորո՛ս,
Ծովի յատակը:

ԴԻԱԳՈՐՈՍ

Այդ ե՛րբ Ապոլլոնն
Քեզ տըւեց շընորհ մարդարէութեան:
Ինչո՞ւ ես կարծում...

ՆԱԽԱՊԵՏ

Դառնազին փորձով
Ես համոզւեցի—այս օրւայ օրը
Ջարաքաստիկ է իմ նաւի համար.
Թէ Պարսկաստանի ոսկեայ զահըն էլ
Ինձ ընծայ բերես, այսօր իմ նաւը
Տեղից չեմ շարժիլ:
(Հեռւից երևում է մի սիկոֆանա)

ԴԻԱԳՈՐՈՍ

Այս մարդըն անշուշտ
Ինձ է որոնում:

ՍԻԿՈՖԱՆՏ (Շառապետին)

Ինձ պրիտանները
 Հըրամայել են, որ դամ քեզ յայտենմ,
 Որ թէ ընդունես քո նաւի վերայ
 Սըրբապիղծ, մոլի Ռիագորոսին,
 Դատապարտած ես չարաչար մահի: (Ռիագորոսին)
 Բարեպա՛շտ ծերուկ, չը գիտե՞ս արդեօք
 Թէ ո՛ւր է այժմ Ռիագորոսը,
 Թէ գիտես, ասա՛, ես քեզ շատ առատ
 Կը վարձատրեմ:

ԴԻԱԳՈՐՈՍ (խուլ և համր ձեանալով նշան-
 անբով հասկացնում է թէ նորա հետ խօսելը աւելորդ է):

ՆԱԽԱՊԵՏ

Սա խուլ է և համր:
 Լա՛ւ. կը կատարեմ ես քո ասածը.
 Ռիագորոսին ես չեմ ընդունիլ:
 (Սիկոֆանտը գնում է)

ԴԻԱԳՈՐՈՍ

Մի՞թէ այժմ էլ դու պիտի կրրկնես.
 «Չարաբատուիկ է այս օրւայ օրը»:
 Թէ ինձ սիրում ես, ճանապարհ ընկնենք:
 Հակառակ դէպքում իմ կեանքը արդէն
 Վըտանգի մէջ է: Դու ինքըդ տեսար
 Թէ ի՛նչ եռանդով ինձ որոնում են:
 Հրապարակներում և փողոցներում
 Իմ անունըս են միմիայն տալիս.
 Խելադարի պէս խուժանը զուռում
 Ազադակում է. «Ռիագորոսի
 Գըլուխը բերէ՛ք. մի տաղանդ ոսկի
 Ռիագորոսի պիղծ գըլխի համար»:
 Քաջ յայտնի է քեզ, որ մեր Աթենքը
 Լի է նենդ, մասնիչ սիկոֆանտներով,
 Որոնց զերազանց հոտառութեանը

Որսի շըներըն էլ կը նախանձեն:
Բիւր անգամ խընդրում և աղաչում եմ
Հէնց այսօր ելնենք. հաւատա՛ դու ինձ,
Զարաբաստիկ օր. չը կայ աշխարհում:

ՆԱԻԱՊԵՏ

Անկարելի է: Իսկ ինչ մընում է
Իմ բարեկամի թանկագին կեանքի
Ապահովութեան, դու միամիտ կա՛ց:
Երթանք, իմ տանը քեզ կը թաղցնեմ:
Անունըդ սըրտիցըս հանելու համար
Նախ սիրտըս պիտի կըրճեցըս հանեն:

ԴԻԱԳՈՐՈՍ

Շընորհակալ եմ, բարի՛ թերամէ՛ն: (Գնում են)

Տեսարան II

Նաւ ալեկոծ ծովի վերայ. գիշեր, մըրիկ և փոթորիկ.

(Նաւի վերայ:—ՆԱԻԱՊԵՏ, ՆԱԻԱՍՏԻՆԵՐ, ՈՒՂԵԻՈՐՆԵՐ և ԴԻԱԳՈՐՈՍԸ)

ՆԱԻԱՊԵՏ (Նաւաստիներին)

Դէ՛, ժողովեցէ՛ք առաքատները,
Քա՛ջ նաւաստիներ. քանի գնում է,
Աւելի ևըս սաստրկանում է
Խելագար քամին: Մեր բազդիցըն էլ
Գիշերըն այնքան մութ է և խաւար,
Որ թէկուզ մատներըդ մարդու աչք կոխիր:
Բայց դեռ փառք Զևսին, որ կայծակներով
Լուսաւորում է մեր ճանապարհը:
Դէ՛, դէ՛, շո՛ւտ արէք:

1-ին ՆԱԻԱՍՏԻ

Ի՛նչ անենք...

ՆԱԽԱՊԵՏ

Դըժո՛խք,
Դըժո՛խք գընացէք: Առաջատները
Շուտ ժողովեցէ՛ք. խըլացե՛լ էք շուք:

2-րդ ՆԱԽԱՍՏԻ

Ի՞նչ անես—ամպերն այնպէս գոռում են,
Այնպէս շառաչում խենդացած հողմերը,
Որ էլ ինչ զարմանք թէ մարդ խըլանայ:
Տղե՛րք, շո՛ւտ արէք. մեր նաւապետը
Հըրամայում է առաջատները
Շուտով հաւաքենք: Թէ ոչ մըրրիկը
Այս կոհակներից աւելի արագ
Մեզ կը թըռցընէ և ընդդիմակաց
Մի ժայռի կըրժքին մեզ մատաղ՝ կ'անէ:

ՆԱԽԱՊԵՏ

Եռանդո՛վ, այգւէ՛ս, ժի՛ր նաւապետներ:
Սակայն հողմերը կարծես միտք չ'ունին
Հանգըստանալու. ընդհակառակը,
Բոպէից բոպէ նոքա աւելի
Կըրկնապատկում են կատաղութիւնը:
Այս կայմերըն էլ այնպէս ճարճատում,
Այնպէս հեծում են, որ կարծես արդէն
Նոքա պատրաստում են խորտակելու:
Խոստովանանք լինի, մեր դըրութիւնը
Վըրտանգաւոր է... բայց ըզգոյշ կացէ՛ք,
Ուղեւորներին չը վըհատեցնէք.
Տազնապի ժամին մահացու մեղք է
Հանգցընել մարդու վերջին յոյսերը:

3-րդ ՆԱԽԱՍՏԻ

Նաւապե՛տ, այնտեղ, ուղեւորների
Խըմբի մէջ արդէն յուսահատութեան
Ձայներ են լըսում: Երեխաները

Աղաղակում են, կանաչք կոծում են,
 Եւ տըղամարդիկ ահաբեկ՝ հազիւ
 Կարողանում են ըսփոփել նոցա:
 Նոցա մէջ մի ծեր, որի մազերը
 Եւ ձիւնի նըման ճերմակ մօրուքը
 Անսանձ հողմերն փռփռուացնելով
 Ուզում են փետել և ցըրել օդում,
 Այն ծերը կանգնած և խըրոխտ ձայնով
 Յամառ պահանջում է վիճակ ձըգենք...
 Բայց ահա խըմքով նոքա գալիս են:

ԾԵՐՈՒԿ

Լըսի՛ր, նաւապե՛տ: Տեսնում ես ինքըդ
 Մեզ թըշնամացել են աստուածները.
 Կարող Զևս, Էօլ և Պոսիդոնը
 Այնպէս խառնակել են բընութիւնը,
 Որ կարծես ուզում են ամբողջ աշխարհ
 Դարձնել խառս: Անշուշտ կայ մեր մէջ
 Մի ամբարիշտը, որ աստուածներին
 Զայրացըրել է գործով կամ խօսքով:
 Մենք պէտք է սըրբենք մեր նաւը մեղքից:
 Վիճակ ենք ձըգում: ով վիճակ հանեց,
 Նորան կը զոհենք երկնայիններին
 Նոցա ցասումը շիջեցընելու:

ՆԱԻԱՊԵՏ

Ես ընդդէմ ոչինչ չ'ունիմ:

ԾԵՐՈՒԿ

Դուք Լը՞ս:

1 ՈՒՂԵՒՈՐ

Ոչի՛նչ. ձըգեցէ՛ք:

ԶԱՅՆԵՐ

Վիճակ ձըգեցէ՛ք:

ԾԵՐՈՒԿ

Այո՛, կը ձըգենք...

ՆԱԽԱՊԵՏ

Սակայն թոյլ տըւէ՛ք
 Երկու խօսք ոսեմ, ճանապարհորդներ՝...
 Բայց պոսս... լըսո՞ւմ էք, ի՞նչպէս մըռննչում
 է այնտեղ ծովը: Մենք մօտենում ենք
 Այն վըտանգաւոր ահեղ վիմուտքին,
 Ուր ալիքները զարնում են ջըրից
 Յըցւած ժայռերին և կառաղարար
 Գոռում ու հեծում, ինչպէս խոցոտւած
 Վիրաւոր հըսկայ: Քանի՛ցըս անգամ
 Նաւերըն այնտեղ մըղւել են, զարնւել
 Սուր սուր վիմերին, և ապա կըտոր
 Վըտոր են եղել կայմ, թիակ և նաւ:
 Է՛յ, նաւաստիներ, այժմ՝ դէպի ձախ
 Թիւփարեցէ՛ք, դէպի ձա՛խ, այդպէ՛ս:
 Փոքըր ինչ շիղւել ենք ճանապարհից.
 Դեռ շատ հեռու է նաւահանգիստը,
 Դեռ շատ վիմուտքներ մենք պիտի անցնենք...
 Արդէն տապը և երեք տարի է,
 Ճանապարհորդներ, որ ես անդադար
 Երթեկեկում եմ այս ծովի վերայ.
 Ձեզ պէս յարգելի ես շատ շատերին
 Իմ հաւատարիմ այս տոկուն նաւով
 Տարել հասցրել եմ մինչև ցամաք,
 Եւ քանի՛ անգամ պատահել է ինձ
 Մարտնչել անաստ մըրրիկների հետ.
 Բայց դեռ չեմ ջիշում, որ փոթորիկը
 Այնքան ահուկի դառնար ինձ համար,
 Որպէս այս գիշեր:
 Համաձայն եմ ես այս պատկառելի
 Ալեորի հետ, որ Պոսիդոնը

Ներհակած է խիտ մեղինց մէկի դէմ:
Բայց եկէ՛ք խըմբով ջերմաջերմ աղօթք
Մատուցանենք մեծ Ալիմպեաններին:
Գուցէ աղօթքով մեզ հնար լինի
Հաշտեցնել բարի երկնայիններին:
Յաճախ աղօթքը շիջեցըրել է
Նոցա զայրոյթը, և արեկոծումն
Անվնաս անցել և հանդարտել է:

ԾԵՐՈՒԿ

Մենք բոլորըս էլ ջերմ, արտասագին
Արդէն շատ երկար աղօթում էինք.
Բայց սակայն ունայն. մեր արտասուքից
Այս ալիքները կարծես աւելի
Բարձրացնում էին... Ո՛հ, Պոսիդոնը
Մեղինց պահանջում է մեղանշողին.
Վիճակ ենք ձրգում:

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ

Վիճակ ձրգեցէ՛ք:
(Վիճակ են ձգում. վիճակը ընկնում է նաւապետին):

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ

Բա՛, նաւապետի՞ն...

ՆԱԻԱՊԵՏ

Այո՛, արդարեւ
Զեր նաւապետին ընկաւ վիճակը:
Դո՛ւ, երկրասասան և կարո՛ղ մեր Զեւ,
Որ այդ բարձունքից ահեղ գոռում ես
Իմ մեղսոտ գրլխին, և դո՛ւ, Նո՛ւս, Էօ՛լ.
Որ շառաչում էք իմ լրսելիքին
Կատաղի ձայնով, և դո՛ւ, Պոսիդոն,
Որ մրուրնչիւնով գոռ ալիքները
Դրլորում ես իմ այս նաւի վերայ,

Նիջեցրէ՛ք ահեղ ձեր բարկութիւնը.
 Եթէ պիղծ լեզուով կամ թէ չար գործով,
 Աստածներ՝, ձեր դէմ մեղանչել եմ ես,
 Ես իսկոյն և եթ կը քաւեմ ահա
 Մանրը իմ մեղքերն. բայց միայն շուտով
 Թո՛ղ խաղաղանան այս կոհակները,
 Թո՛ղ լլուեն հողմերն, և երկընքիցը
 Թո՛ղ շուտով ցըրեն սեւացած թիւակերն:
 Դո՛ւք իմ պատուարժան ճանապարհորդներ,
 Գընացէ՛ք բարով: Աստածները տա՛ն,
 Որ դուք յաջողակ անվընաս հասնէք
 Նաւահանգիստը: Իսկ ես... կը մեռնեմ.
 Ձեր փրկութիւնը իմ մահւանից է
 Միմիայն կախած: Այսպէս է կամքը
 Երկնայինների:

1-ին ձԱՆԱՊԱՐԶՈՐԴ

Իսկ մեղանից ո՞վ
 Կը կառավարէ այս մեր նաւակը:

ՆԱԽԱՊԵՏՆԵՐ

Մե՛նք, մե՛նք կը վարենք:

ՆԱԽԱՊԵՏ

Բարի աստածներն
 Կը կառավարեն. ծով նետւեմ թէ չէ,
 Ապրտամբ տարրերն կը հանգստանան,
 Կը պարզւի երկինքն, և ցոլուն աստղերն
 Յոյց կը տան ձեզ հարթ, անվընաս ուղին: (Դիագորոսին)
 Իմ մօր, իմ կընոջ, իմ զաւակներին
 Իմ վերջին բարոյն կը տանես ինձնից:
 Դէ՛, մընա՛ք բարով:

(Կամենում է իրան նետել ծովը, Դիագորոսը առաջն է
 ընկնում և պահում):

ԴԻԱԳՈՐՈՍ

Ո՛չ, դու չե՛ս մեռնիլ:
 Խելացա՛ծ, թըշւա՛ռ ճանապարհորդներ,
 Ինչո՞ւ կուրօրէն կամենում էք դուք
 Այն մարդուն խնդրել, որ մեր բոլորից
 Ամենաշատըն է մեզ պիտանի
 Այս զըժար ժամին: Եթէ սա ինքը
 Իւր յօժար կամքով այս ծովը նետել
 Իրան ցանկանար, դուք սորան ուժով
 Պիտի պահէիք և թախանձանքով
 Խընդրէիք սորան, որ ձեզ չը թողնէր
 Անտէրունչ, լըքեալ այս ծովի վերայ
 Այսքան ահաւելի փոթորիկ ժամին.
 Դուք սորան փըրկիչ պիտի համարէք
 Եւ ամուր բըռնէք սորա թևերից,
 Բայց ոչ թէ խնդճին խնդդամահ անէք:
 Ասացէ՛ք, ձեր մէջ ո՞վ է սորանից
 Առաւել հըմուտ նաւավարութեան
 Արհեստում կամ ո՞վ աւելի ճարպիկ.
 Ո՞ւմ են աւելի քաջապէս յայտնի
 Մեր առաջ ընկած խոչընդոտները—
 Զըրապըտոյտներ, սոսկալի յորձանք,
 Մըռնչող վիմուտք և կամ ձանձաղուտ
 Խաբուսիկ վայրեր:
 Դուք հաւատացիք ձրգած վիճակին,
 Բայց այդ վիճակը անխորհուրդ, անմիտ,
 Պատահական է: Զըգեցէ՛ք նորից,—
 Այլ մարդու կ'ընկնէ: Մեր նաւապետին
 Արդէն մանկութեան հասակից գիտեմ.
 Սորա սըրտումը վառ է միշտ եղել
 Պատկառանք, երկիւղ դէպի աստուածներ.
 Հաղիւ թէ նաւը գալիս մըտնում է
 Նաւահանգիստը, առաջին խօսքը,
 Որ դուրս է ելնում սորա բերանից,

Շնորհակալական ջերմ աղօթքն է
Մեծ Պոսիդոնին. և ապա իսկոյն
Ըշտապ զընում է նորա տաճարը
Եւ մասուցանում գերընտիր զոհեր
Ովկիանոսների հրամանատարին:
Ո՛չ, Պոսիդոնը չէ՛ր կարող երբէք
Զայրանալ բարի նաւապետի դէմ:
Զեզ պէտք է մի մարդ, որ՝ կըռիւ մըտած
Բընութեան ըմբոստ այս տարերքի հետ,
Յաղթանակ տանէր, որպէս քաջ, արի
Զինւորը մարտից: Ահա այդ մարդը:
Զեր փըրկութիւնը սորա կեանքի մէջ
Դուք որոնեցէ՛ք, իսկ սորա մահից
Կամ Պոսիդոնից փըրկութիւն չը կայ:

1-ին ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Ի՜նչպէս...

2-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Ի՜նչ ասաց. թէ Պոսիդոնից
Փըրկութիւն չը կայ: Սա անասուած է:
Սա այն սըրբապիղծ Դիագորոսի
Աշակերտն է: Ճանապարհորդներ,
Այլ ելս ո՞ւր ենք մենք հեռու զընում.
Ահա՛ թէ ում գէմ է Պոսիդոնը
Զայրացած. ահա՛ այն ամբարիշտը:
Ծովը նետեցէ՛ք այս անիրաւին:

3-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Բայց մեր վիճակը...

4-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Այո՛, ում ընկաւ
Վիճակը, թո՛ղ նա իրան ջուր նետէ:

1-ին ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Թո՛ղ երկուսըն էլ զո՛հ գընան ծովին:

2-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Այո՛, երկուսին էլ ծովը ձգենք:

ՆՆՐՈՒԿ

Բայց ըսպասեցէ՛ք: Դու ի՞նչ ասացիր.
Թէ Պոսիդոնից փրկութի՛ւն չը կայ:
Ինչպէս տեսնում եմ, զու նոցանից ես,
Որ իրանց կոչում են իմաստասէր,
Որոնք պիղծ սըրտում սընուցանում են
Մոլի խորհուրդներ և մեր միամիտ
Պատանիներին ջանում են շեղել
Ճըշմարտութեան հարթ ճանապարհիցը:
Հասարակութեան դաշթակղեցուցիչ
Նենգամի՛տ մարդիկ, թոյնի կաթիլներ,
Վարակիչ ժանտախտ Սթենքի համար:
Անունըդ ասա՛. ես ահա արդէն
Նախաըզգում եմ թէ ի՞նչ գարշ հընչիւն
Մենք պիտի լըսենք:

1-ին ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Անո՛ւնըդ ասա՛:

ԴԻԱԳՈՐՈՍ

Ուղեկիցներ՛ըս...

2-րդ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Անունըդ ասա՛:

ԴԻԱԳՈՐՈՍ

Ճանապարհորդներ՛ր, դուք ի՞նչ էք անում
Արդեօք անունըս. դիցուք կոչում են
Ինձ Կալլիմախոս կամ թէ Գորգիաս...

ԾԵՐՈՒԿ

Ապա դո՛ւ ուրեմն, նաւապետ, առա՛
Սորա անունը, որովհետեւ դուք
Դեռ երս մանուկ հասակից իրար
Լաւ ճանաչում էք: Աւելի երս
Կասկածելի է թըւում այս մարդը,
Երբ ծածկում է սա իսկական ահունը:

ՆԱԻԱՊԵՏ

Կեֆիսոֆոն է սորա անունը.
Այժմ զո՞հ էք դուք իմ պատասխանից:

ԾԵՐՈՒԿ

Ճանապարհորդնե՛ր, սոքա սըտում են.
Այս երկուսին էլ ծովը ձըգեցէ՛ք.
Մեր նաւապետին—վիճակի համար,
Սորան—սըրբապիղծ չար լեզուի համար:
Բըռնեցէ՛ք դոցա և ծովը...

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Ձըգե՛նք: (չարձակում են)

ԴԻԱԳՈՐՈՍ

Բայց ըստանեցէ՛ք, աղաչում եմ ես.
Ինձ միջոց տըւէ՛ք երկու խօսք ասեմ:
Ես խոստանում եմ յայտնել բոլորը
Ինչ կամենում էք, դեռ աւելի շատ:
Բայց դարձեալ կըրկնում եմ—նաւապետին
Դուք հանգիստ թողէ՛ք: Մի՞թէ այս կանանց
Ողբն ու կոծը և մանուկների
Այս աղէկըտուր հառաչանքները
Ձեր բիրտ սըրտերը չե՛ն շարժում բընաւ:
Քէ խըղճում էք դուք ձեր կանանց և հէգ
Ձեր զաւակներին: Եթէ ձեր կեանքը
Խանկ է ձեզ համար, ձեր նաւապետին

Կենդանի թողէք, որ միակ, միակ
 Ձեր ազատիչը կարող է լինել:
 Իսկ ես... կը խեղդւեմ, եթէ անպատճառ
 Ձո՛հ էք պահանջում:

Իմացէ՛ք ուրեմն,
 ձանապարհորդներ. ձեր առջև կանգնած՝
 Այծը՛ խօսում է նա, որի կեանքը
 Մեր Աթենքումը գընահատւած է
 Մի տաղանդ ոսկով: Նա եմ ես, որ նախ
 Մատաղ հասակում հաւատում էր ջերմ,
 Ինչպէս այժմը դուք, դիցաբանական
 Առասպելներին. բայց երբ զօրացայ
 Ես հոգով մըտքով, մարդկային կեանքի
 ձակատամարտում տեսայ հրէշաւոր
 Անարդարութիւն, ճընշւած և հեծող
 Առաքինութիւն, անպատիժ չարիք
 Եւ լրկաի գործեր, — բայց Պոսիդոնի
 Կամ թէ «մեծ Զեւսի» ներկայութիւնը
 Չը տեսայ կեանքում: Եւ այնուհետեւ
 Հրապարակներում և փողոցներում
 Ես ըսկըսեցի քարոզել մարդկանց
 Սընապաշտութեան, տըգիտութեան դէմ,
 Միակ ցանկութիւն փարելով իմ մէջ,
 Որ այսուհետեւ մարդք բարձրանար
 Անցեալի վերայ և, ինչպէս արծիւ
 Երկնակամարում, անփոխ, աչքաբաց
 Նայէր աշխարհի, բընութեան վերայ:
 Բայց ուղիղ այնպէս, որպէս այս մըրրիկ
 Եւ փոթորիկը, վերկացաւ իմ դէմ
 Յունական ազգը և՛ իմ քարոզը
 Կռնելով մոլի սըրբապղծութիւն,
 Իմ գըլխի համար մի տաղանդ ոսկի
 Գին նըշանակեց: Ես որոշեցի
 Խոյս տալ անարդար հալածանքներէդ:

Բայց ազատւելով խուժանի ձեռքից
 Յամաքի վերայ, այս ծովի վերայ
 Ես հանդիպեցի աւելի ևւս
 Անողորքիլի, կոպիտ զօրութեանս
 • Եւ այդ բիրտ ոյժը—ձեր պահանջըն է,
 Որ այս խաւարից հազարապատիկ
 Աւելի մութ է և կրկնապատիկ
 Աւելի վայրագ, քան այս հողմերը
 Եւ ալիքները: Ես Դիագորոսն
 Եմ Միլոսացին. թո՛ղ Յունաստանը
 Իմ մասին խօսէ թէ այն ամբարիշտ
 Դիագորոսը չը գըտաւ հանգիստ
 Երկընքի տակը,
 Մըշտընջենաւոր նա հանգիստ ընտրեց —
 Մովի յատակը:

(Իրան նետում է ծովը):

Էջմիածին, 1891 թ. նոյեմբեր:

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ի. Գ. ՈՎԻ

(Նաբունակութիւն և վերջ¹⁾)

III

Եթէ, ծանօթանալով այն թշուառ դեռահաս սերնդի ներկայացուցիչների հետ, որոնցից են Բուրժէն և Նորա վէպերի հերոսները, մենք զգացւեցինք ծանր, տանջող զգացումով, խառն կարեկցութեան և համակրութեան հետ, մտնելով ութսունական թւականների երիտասարդութեան ներկայացուցիչների շրջանի մէջ՝ մենք, կարծես, հէնց ուղղակի խեղդում ենք, շարում ենք, ցանկանում ենք աչքերս փակել, քթերս բռնել, ականջներս խցել, յետ դառնալ ու փախչել առանց յետ նայելու։ Այս մարդիկը, — այն տեսքով, ինչպէս նկարագրում է Բերանժէն, — ամենևին նման չեն իրական կեանքից ճնշւած և տանջանքների մէջ հեծող երիտասարդներին, որոնց մասին արդէն խօսւեց։ Սոքա ամբողջապէս նեխւած են և նման են զարդարուն գերեզմանների, որոնց ներքինը մեզ զգուցնում է և ականաջ սարսուռ է ազդում։ Այդ մարդիկն այժմ 20—25 տարեկան են և իբրև գործիչ մտնում են հասարակական-քաղաքական գործունէութեան ասպարէզ։ Նոցա գաղափարական ներկայացուցիչն է հանդիսանում նրանց ընկերակիցը, երիտասարդ, ո՛չ այնքան տաղանդաւոր, բայց շատ անկեղծ վիպագիր Մօրիս Բարրէսը, որ ուշա-

¹⁾ Տե՛ս «Մուրճ» № 11։

դրութեան է արժանացել երկու, իրանց ներքին բովանդակութեամբ
և մաքով բնորոշ գրաւածքներով—*Sous l'oeil des Barbares* (բար-
բարոսների աչքի առաջ) և *Un homme libre* (Ազատ մարդ):

Հարեանցի նկատմամբ, որ Բարրէսը, բացի սրանից և քաղաքա-
կան գործիչ է. նա եռանդուն մասնակցութիւն է ցոյց տւել «ան-
ւանի գեներալի» դաւադրութեան գործում հասարակապետութեան
դէմ, և մինչև կոկորդը խրաւժ է Բուլանժիզմի մէջ: Իւր վե-
րոյիշեալ վէպերում, որոնք ինքնակենսագրութեան բնաւորութիւն
ունին, նա զարմանալի պարզութեամբ բաց է անում ընթերցողներին
առաջ իւր և ընկերակիցների մեռած հոգիների գաղտնիքը: Զսպենք
առժամանակ մեր բնագրական զգւանքը այդ մեռելութիւնից և տես-
նենք թէ ի՞նչ են ներկայացնում այդ հոգիները: Իւր գրաւածքների
տողերում Բարրէսն աշխատել է պատկերացնել իրան հետ հոգով
սերտ կապւած ժամանակակից «ազատ մարդու», «ինտելլիգենտի»
տիպը, որի վերայ չորս կողմից աչքերը յառել են «բարբարոսները»:
Բաց նախասեսնենք թէ ովքեր են այդ բարբարոսները: Դոքա,
լա՛ւ իմացէք, ժողովրդի, դիմօկրատիայի ներկայացուցիչներն են. այն
մարդիկն են, որոնք լուրջ հայեացք ունին կեանքի վրայ և աշխա-
տանքի ամեն ճիւղերում՝ թէ՛ մուսուր և թէ՛ խիզիքական, եռան-
դուն կերպով աշխատում են: Դա ամբողջ ժողովուրդն է, ամբողջ
աշխատող մասսան, բացի մի քանի ընտրեալներից՝ «ինտելլիգենտ-
ներից»: Ասենք, այս որոշումն էլ բոլորովին ճիշտ չէ՝. «բարբարոս»,
բառի բուն նշանակութեամբ, ամբողջ հասարակութիւնն է, ամբոխը,
բոլոր մարդիկ, ամբողջ մարդկութիւնը, բացի իրանից՝ «ինտելլիգեն-
տից» (Բարրէսը, ի հարկէ, ինտելլիգենտ է): Իսկ ի՞նչ է «ինտելլիգեն-
տը». թ'հ, նա մարդկային ցեղի ամենահրաշալի տիպարն է. նա
ընտրեալ, վեհ արարած է, նա երկրի ազն է. նա ստեղծագոր-
ծութեան թանկագին ալն է. նա հրափայլ, արեգակի բոլոր դոյները
իւր մէջ ցոլացնող ադամանդ է, աղբի մէջ ընկած (այսինքն մարդ-
կութեան մէջ) նա ամեն տեսակ գեղեցկութեան ուղղութեամբ է, նա
Ոչիմպիական է, որ հրճում է իւր մեծութիւնը և հոգեկան կա-
տարելութիւնները դիտելով, և սաղն արհամարհանքով է նայում
իւր շուրջը խռնւած մարդկային ամբոխին՝ այս ողորմելի ճճիների
վրայ... խոնարհեցէ՛ք այս փառաւոր, լուսաճաճանչ պատկերի առաջ:

Բայց... բայց այդ ո՞վ էր, որ մեր «ինտելիգենտին» Ալիմսլիականների կարգը դասեց, ո՞վ նրան այս աշխարհից հասցրեց այդ շլացնող բարձրութեանը: Ի՞նչ իրաւունքով, այդ իրաւունքը նորան տրւած է աւելի քան հարկաւոր է: Ո՞րն է արդեօք մարդկային, բնութեան ամենաբարձր յատկութիւնը. ի՞նչ ասել կուզի, հոգու ազատութիւնն է, իսկ նա՝ «ինտելիգենտը» հոգով կատարելապէս ազատ է: Մինչ մարդկային ողորմելի ամբօխը՝ ողորմելի մարդկութիւնը քաշ է գալիս երկրի վրայ ձեռքն ու ոտը կաշկանդւած ամեն կերպով, ամեն տեսակ պարտականութիւններով և այլն և այլն, նա, «ինտելիգենտը», միանգամայն ազատ է, կատարեալ ազատ ամեն կողմից. ազատ է ինչպէս երկնքի թռչունը, ուստի և հանդարտ ու թեթեւ, առանց նեղւելու ո՞ր և է անօդուտ, թռիչքը զգաւորացնող բեռից, կարողանում է բարձրանալ մինչև ամպերը և սաւառնել «բարբարոսների չնչին ամբօխի» վրայով: Այդ ամբօխը, որ ամբողջապէս բաղկացած է չիմար ու ապուշներից, հնարել է իրան համար մի ինչ որ բարոյականութիւն, որ շղթայի դեր է կատարում. դուրս է տալ ինչ որ անհեթեթ հասկացողութիւնների բարոյական պարտքի, բարոյական պարտականութեան մասին, երբեմն երբեմն երազում է ինչ որ «սուրբ» իղէալներ, նրանց համար գլուխը քարին ու պատին է խփում, գլուխ է տրաքեցնում ինչ որ «հարցերի» վրայ, անգոր կերպով որոնում է ինչ որ գոյութեան վեհ նպատակներ, կեանքի վեհ խորհուրդներ: Ի՞նչ չիմարութիւն... Այս ամենը տեսնելիս «ինտելիգենտը» ի՞նչպէս չը զգայ իւր անհուն գերազանցութիւնը այդ բոլոր կոյտերից, այդ դաշտամկներից. ինչպէս նա չարհամարէ նրանց, նա, որ արժէիման կտրել է բոլոր կապանքները, որ ոչ մի ճնշում չի ձանաչում, որ ազատ է ամեն տեսակ բարոյական «պարտքերից» և «պարտաւորութիւններից», որ վանդակից դուրս է սլացել ազատ օդի մէջ, և արժէի նման սաւառնում է կեանքի ճահճից բարձր: Նա ոչնչով չի վրդովւում, ոչնչի վերայ չի տխրում, ոչնչի չի ձգտում: Նա գտել է ճշմարտութիւնը, նա ըմբռնել է գոյութեան խորհուրդը, նրան յայտնի է կեանքի նպատակը: Նա, այո՛, գիտէ, իսկ նոքա, ողորմելի «բարբարոսները» չը գիտեն, — և ահա՛, հէնց այդ գիտութեամբ նա յանհուն բարձր է ամբօխից և իրաւունք ունի նորան արհամարհելու: Ինչպէս «ինտելիգենտին» մտածած ամեն մի հանձարեղ բան,

այնպէս էլ կեանքի բոլոր հարցերի վճիռը շատ պարզ է երևում: Այդ վճիռն ամբողջապէս կայանում է շատ կարճ, բայց չափազանց արտայայտիչ «ես» բառի մէջ: «Ես»-ը միմիայն իրական է, նորանից զուրս ունի չը կայ մարդու համար. նա անհատական կեանքի միակ նպատակն է: Բոլոր շրջապատող աշխարհը մարդուն հետաքրքրում է, մարդու համար խորհուրդ և արժէք ունի ճիշդ այն չափով, ինչ չափով նա ծառայում է «ես»-ին, այդ Աստծուն, բացի որից ուրիշ Աստուած չկայ: «Ես»-ի շահերն ու ցանկութիւնները միակ օրէնքն են, որից բարձր չը կայ և չի կարող լինել ո՛չ մի օրէնք: Անպաղար զարգացնել «ես»-ը, ո՛րքան կարելի է, նրա ակտորժականներին լիուլի բաւականութիւն տալ, ընդունակ դարձնել նորան ամեն տեսակ վաշկէքների համար, հաճելի զգացողութիւններով նորան պարարել, ահա՛ թէ ինչպէս պէտք է առաջնորդի «ինտելիգենտի» ամբողջ գործնական կեանքը: Նթէ այս ճանապարհի վերայ «Ես»-ի ցանկութիւնները հակառակ լինեն միւս մարդկանց, նոյն իսկ ամբողջ հասարակութեան շահերին, այն ժամանակ վա՛յ այդ շահերին, որովհետեւ «ինտելիգենտը» առանց երկար մտածելու, առանց տատանւելու զո՛հ կը բերի նրանց իւր Աստուծու տաճարը, եթէ միայն հնարաւոր լինի: Զարմանալի էլ կը լինէր երկար մտածել, տատանւել, նպատակին հասնելու համար միջոցների մէջ խորութիւն դնել: Զե՛ որ Աստծուն պաշտօն մատուցանելով նա ամենակարող է և ամեն ինչ իրան թոյլատրւած է համարում, չէ որ շրջապատող աշխարհը հէնց միմիայն նորա համար է պէտքական, որ մարդ նրանից օգուտի, որ նրան գործ ածի յօգուտ իւր «Ես»-ի: Մենք մեր կարիքներին զոհացում տալու համար օգուտում ենք Աստծու կենդանի արարածներով. նրանց մի քանիսին լծում և բեռնում ենք, մի քանիսին խուզում ենք բուրդ ստանալու համար, ուրիշների կաշին ենք քերթում հագուստ և կոշիկ պատրաստելու համար, շատերին մորթում ենք և մսից կերակուր պատրաստում... ճիշտ այդ եղանակով և հանգիստ սրտով իրաւունք է համարում իրան վերաբերել դէպի մարդկային ամբոխը այն գերագոյն արարածը, որ հպարտութեամբ իրան անւանում է «ինտելիգենտ»: Արդարեւ, ամբոխի ներկայացուցիչները՝ արհամարուած «բարբարոսները», որոնք իրանց սահմանափակ մտքով չեն ըմբռնել կեանքի մեծ խորհուրդը, նոյնպէս

շատ ազատութեամբ են վերաբերում դէպի շրջապատողները, բայց, չը ծանախելով այն «ճշմարտութիւնը», որ յայտնի է «ինտելլիգենտին», չը կարողանալով այդ ճշմարտութեան լուսով տեսականապէս արդարացնել իրանց «ազատ» գործողութիւնները, նոքա սովորաբար շփոթւում են, երբեմն խղճահարւում են, յաճախ մինչև իսկ զղջում են, և ընդհանրապէս իրանց արածը չը գիտեն: Միանգամայն ուրիշ բան է «ինտելլիգենտը»։ Ի՛նչ էլ որ անէ, նա միշտ իրան կը համարէ անպայման արդար, և այդ գիտակցութիւնը նրան տալիս է զարմանալի ինքնավստահութիւն, հոգեկան հանգստութիւն, նորան հոգեպէս զօրացնում է, նա ինքը իւր աչքում բարձրանում է այնպիսի բարձրութեան, որին հասարակ մահկանացուները անկարող են հասնել: Նա՛ է իւր վարմունքի միակ բարձրագոյն դատաւորը, դատաւոր, որ միշտ արդարացնում է իրան և որի պէտքը չէ՛, թէ շրջապատողներն ի՛նչ դատաստան կանեն, ի՛նչ վճիռ կը կայացնեն: Իսկապէս նորա համար այն աստիճանի ակներև են իւր առաւելութիւնները շրջապատողներից, ա՛յնքան զոհ է իրանից, ա՛յնքան զբաղւած է իւր «ես»-ի հոգսերով, որ միանգամայն անտարբեր է դէպի շրջապատող կեանքը: Այդ դեռ ոչինչ. նա, եթէ կուզէք՝ պատրաստ է բոլոր շրջապատողներին կրակ տալ աչքել. այդ նորա «ես»-ին մի նոր, անծանօթ ուրախութեան զգացում՝ կը պատճառէ: Բայց ախոս, նա այդ չի կարող անել. արտաքին աշխարհը նրան հարկաւոր է նոյն թանկագին «ես»-ին սննդելու և պահպանելու համար. առանց արտաքին աշխարհի նա ո՛չ մի կերպ չի կարող ապրել: Այդ պատճառով էլ, թէև նա կատարելապէս արհամարհում է հասարակութիւնը, որի մէջ բաղդը ձգել է նորան, բայց խոյս չի տալիս այդ հասարակութիւնից, չի առանձնանում, խցային կեանք չի վարում...

Այս է, ահա՛, «ինտելլիգենտը»:

Մենք կը բերենք մի քանի բնաւորիչ օրինակներ Բարրէսի շարադրութիւններից, որոնցով ընթերցողը գաղափար կը կազմէ, թէ ո՛րքան ճիշդ է մեր արած բնաւորագիծը:

«Ես սիրում եմ, որովհետև սիրելն ինձ հաճելի է, — ասում է Բարրէսի հերոսներից մէկը, — բայց իսկապէս, ես միայն ինձ եմ սիրում...» «Սիրել, գրկել աշխարհը ես ուրիշ կերպ չեմ կարող, բայց եթէ ինձ գրկելով, ինձ անվերջ սիրելով...» «Ո՛չ թէ ես զարմանում

եմ ինձ վերայ, հիանում եմ ինձանով, այլ... ես ինձ անսահման դուր եմ գալիս...» Անվրդով հոգով սեպհական «ես»-ին բաւականութիւն տալու համար պէտք է ստեղծել մի «աշխարհ», որից դուրս վռնուի ամենայն մեծ գաղափար պարտականութեան մասին...» «Բանը նրանումն է, որ պէտք է համոզուել, թէ ո՛չ մի ճշմարտութիւն չը կայ, այլ կան զանազան տեսակէտեր, որոնցից իւրաքանչիւրը միւսին հակառակ է, և թէ մենք, եթէ յաջողակ լինենք, նորանցից ո՛րն ուզենանք, կարող ենք ընդունել, նայելով հանգամանքներին...» և այլն: Պարզ է, որ այս այսպէս լինելուց յետոյ, մի անգամ այս համոզմանը գալուց յետոյ այլ ևս մարդու համար կարեւորութիւն չը կայ ուրիշ համոզմունք ունենալու: Եթէ նա քաղաքական գործիչ է, ամենեւին չը պէտք է իրան սահմանափակէ որ և է մի վարդապետութեան շրջանակում և զրան հաւատարիմ մնայ. ո՛չ, նա կարող է ուզած կողմը դառնալ, նայելով հանգամանքների ընթացքին, և, եթէ «ես»-ի շահը պահանջում է, ընտրել նաեւ ծուռ ու մուռ ծանապարհներ: Ամեն բանի մէջ ճարպիկ ու յաջողակ դուրս գալու համար մարդ պէտք է պատրաստ լինի բոլոր ունեցած միջոցները, բոլոր ոյժերը գործ դնելու: «Ի հարկէ, ես շատ լաւ եմ հասկանում բարձրագոյն շիօլայի այս խեղկատակութիւնը, ես այդ արհամարհում եմ, ինչպէս արհամարհում եմ ամեն ինչ աշխարհիս վերայ, բայց ասուածացնում եմ նրան...» և այսպէս շարունակ:

Revue des deux Mondes-ի անցեալ տարւայ փետրւար 1-ի համարում տպւած է մի ոտանաւոր, չափազանց բնորոշ—La Citadelle, որ Էդմոնդ Պոնկուրի գրչի տակից է դուրս եկել. նորանից պարզ երևում է, թէ ի՞նչ ոգով էին երգում այն երիտասարդ սերնդի բանաստեղծները, որին պատկանում է Բարրէսը և նորա վէպերի հերոսները, այսինքն 80-ական թւականների բանաստեղծները: Բերում ենք այդ ոտանաւորն ամբողջութեամբ:

«Si tu veux être grand, bâtis la Citadelle,
Loin de tout et trop haut, bâtis la pour toi seul,
Qu, elle soit imprenable et vierge, et qu'autour d'elle
Le mont fasse un rempart et la neige un tinsoul

C'est là qu'il faut bâtir l'asil de ton âme,
Et pour que ton désir y soit la seule loi
Que rien n'accède à lui, de l'éloge ou de blâme,
Grave sur ton seuile blanc le mot magique: Moi.

Tu n'as qu'une patrie au monde c'est toi même,
Chante pour elle et sois ton but, et sais ton voeu;
Chante, et quand tu mourras, meurs dans orgueil suprême
D'avoir vécu ton âme et fait vivre ton dieu!

Ինչ փառաւոր արհամարհանք դէպի շրջապատող կեանքը,
Ինչպիսի յափշտակութիւն սեպհական ասուածային «եսա-ով, ինչ
անսահման եսականութիւն է հնչում այս տողերի մէջ: Այսպէս է,
ահա՛ 80-ական թւականների երիտասարդ սերնդի հոգեկան ներկա-
յացուցիչը: Սա ծայրահեղ, ինքնագոհ, ոչնչով չը վրդովւող սկեպ-
տիկ է, չ'ունի ni foi ni loi (ո՛չ հաւատ, ո՛չ օրէնք), նրբացած,
անգութ, ինքն իրան ասուածացնող էգոիստ է: Բայց ո՞րտեղից
առաջ եկաւ նա: Այս հարցը տալով, Բերանժէն նկատեց, որ Բուր-
բէսեան «ինտելլիգենցիան»՝ 1880 թւականի երիտասարդութիւնը
ցեղական նմանութիւն ունի 1872 թւականի իրանց նախորդ սերն-
դին: Վերջիններիս նման նրանք էլ սկեպտիկ են, սորանց նման գիլ-
լետանաւ և իրանց սեպհական «եսա-ին խնկարկող, «եսա-ին», որ նրանց
աչքում միակ զրական բանն է աշխարհում: Նոքա կարդացել են
նոյն գրքերը, ենթարկել նոյն, սոցիալական ազդեցութիւններին,
բայց շնորհիւ այն հանգամանքների, որ նրանք աւելի ուշ են ծնւել,
նոցա վիճակւել է աւելի քիչ տանջւել: Ազատ լինելով այն ճնշող, մուսլ
պետսիմիստական արամադրութիւններից և դառն, տանջող հիասթա-
փումներից, որ նրանց նախորդներին էր վիճակւած, «նոքա ընդունեցին և
չափազանցութեան հասցրին նոյն գաղափարները, ինչ որ նոցա նախորդ-
ները ընդունել էին ծանր ներքին կռից յետոյ, ընդունել էին ամա-
չելով...» «Սոքա՛ յետնորդները իրանց առողջութիւնն էին գտնում
այն բարոյական հիւանդութեան մէջ, որին զոհ էին զնացել նա-
խորդները, և որից բաժանւելու հնար չունէին. խաբուսիկ առողջու-
թիւնն, որ աւելի վատ էր քան նոյն իսկ մահը...» Այդ երկու սե-

րունդները միմեանցից տարբերում են որոշ զծով. մինչ Բուրժէն և Նորա ընկերները զաղափարների աշխարհն էին ընկած, Բարբէսը և այն երիտասարդները, որոնց տխարն է նա, զուրս եկան դործնական կեանքի աստարէզ և զբաղեցին առաջինների զաղափարը կեանքի մէջ իրագործելով:

Այսպէս է, ըստ Բերանժէի, 80-ական թւականներում երեան եկած երիտասարդ «ինտելլիգենտների» և «ազատ մարդկանց» ցեղագրութիւնը. դժբա մեր օրերի իսկական հերոսներն եղան: Այս ցեղագրութիւնը կարելի էր աւելի պարզաբանել, լրացնել ուրիշ տարրերով, բայց տեղի պակասութիւնը մեզ թոյլ չի տալիս այժմ դորանով զբաղւելու:

IV

Արդեօք նախորդ սերնդի ոգով է մտնում կեանքի մէջ և նոր սերունդը, որի ներկայացուցիչներն այժմ 18—25 տարեկան են: Արդեօք այս սերունդն էլ չի՞ դառնալ գիլլետանների սերունդ և չի՞ տեսնիլ արդեօք դոյութեան նպատակը նոյն անհատական պեսսիմեզմի մէջ». հարցնում է Բերանժէն գալով իւր ժամանակակից, 90-ական թւականների սերնդի զնահատութեանը, նորա բարոյական կեանքի նկարագրութեանը: Ընթերցողին, ո՛րքան կարելի է, ճիշդ զաղափար տալու համար այժմեան Ֆրանսիական ինտելլիգենտ երիտասարդութեան հոգեկան վարդաքման մասին, և նորա մասին, թէ ի՞նչպէս է ցոյց տալիս այդ զարգացումն ինքը՝ երիտասարդութիւնը, մենք կ'աշխատենք խօսել, որքան հնարաւոր է, մեր հօետորի իսկական խօսքերով: «1890 թւականի ինտելլիգենտ երիտասարդութիւնը, — նկատեց ի միջի ալլոց Բերանժէն, — միանգամայն խզեց, այն էլ զլիաւոր կէտերում, իւր կապերը անմիջական նախորդներից: Նորա մէջ այժմ կատարւում է մի փոփոխութիւն, որը դեռ որոշաւ չէ, ուրեմն և պարզ չէ, բայց, հաւանօրէն հսկայական է: Սրէջօր հասարակական ոգին զարթնում է նոր եռանդով, և մտքերի այս նոր ուղղութեան վերջնական յաղթութիւնը ժամանակի խնդիր է: Այժմ ըմբռնում են, որ ո՛չ մի միաք կեանքի մէջ ասանձնացած երեան չի դալիս, թէ կայ հաւաքական հոգի, որ կազմւում է բոլոր անհա-

տական հոգիներին, և այդ ըմբռնումը նոր ուղղութիւն է տալիս նորագոյն սերնդի բոլոր ձգտումներին, բոլոր գործողութիւններին: Հոգիները եռանդուն կերպով բարձրանում են, արտայայտւում է զօրեղ, յուսալի վերածնութիւն: Իսկապէս ասած վերածնութիւնն այսօրւանից չի սկսում, նա խուլ կերպով պատրաստւում էր սակաւաթիւ ընտրեալների և մտածողների մոքում, որոնք նոր մտաւոր շարժման առաջնորդներ հանդիսացան: Այդ մտածողները հեռացրին այն խոչընդոտները, որոնց մի ժամանակ հանդիպում էր և որոնց վերայ խորտակւում էր երիտասարդութեան միտքը, որ անյազաբար որոնում էր ճշմարտութիւնը և դէպի լոյսն էր ձգտում: Նոքա քանդեցին այն պատերը, որոնց խփում էր երիտասարդութիւնը իւր զլուխը, երբ «անիծւած» հարցերին պատասխան էր ուզում գտնել. նոքա այլախօսով նոր ինտելլիգենցիայի համար ճանապարհ հարթեցին, նորա աչքի առաջ բաց արին լայն, մտաւոր հորիզոն: Այսպէս է կարծում, գտնէ, Բերանժէն:

Նախկին, յուսահատ յուեռեռութեան հասցնող փիլիսոփայական վարդապետութիւններին ծանր լծից ազատւելուն նպաստեցին մի քանի հեղինակներ, որոնց մէջ Բերանժէն ամենից առաջ մատնանիշ է անում: Բուտրուի վերայ, որը իւր Contingence et lois de la nature (բնութեան պատահականութիւնը և օրէնքները) շարադրութեամբ ուժգին հարւած տւեց պատճառականութեան վարդապետութեանը, պարզ ցոյց տալով, որ ամեն մի երևոյթի մէջ կայ չը վերջացած ոչ լրացած մի մաս, որն ստիպում է ենթադրել, թէ բնութեան մէջ կայ ինքնակամ դործողութեան տարր...:

Բուտրուից յետոյ ասպարէզ եկան Ֆուլդի ¹⁾ և Գիւլյո ²⁾ որոնք հիմնաւորապէս հաստատեցին գաղափար-ոյժերի (idées-forces) վարդապետութիւնը, և բացատրեցին այն մեծ ճշմարտութիւնը, թէ մարդը մեքենայ չէ', կոյր գործիք չէ', չի' ենթարկւում միմիայն կրաւորապէս արտաքին բնութեան ոյժերին և ազդեցութիւններին և գնում այն կողմը, ուր նրան մղում են այդ ոյժերը. այլ նա մի ինք-

¹⁾ Liberté et déterminisme, — L'idée du droit. L'avenir de la morale, de l'art et de la religion, — L'évolutionisme des idées-forces.

²⁾ Esquisse d'une morale sans obligation ni sanction. L'irréligion de l'avenir. Les problèmes de l'esthétique contemporaine. L'art au point de vue sociologique. Education et hérédité.

նուրոյն գործնական արարած է, որ կարող է իւր մտքով ազդել աշխարհի վրայ, նրան ձեւափոխել իւր ցանկութիւնների համաձայն, բարեկարգել նրան իւր կամքով և ծրագրով:

Նոյն ուղղութեամբ գործեցին և գեղարւեստական և փիլիսոփայական քննադատութեան մի քանի ներկայացուցիչներ, ինչպէս օրինակ, Բրիւնոտիէր, որ զօրեղ հարւած տւեց նատուրալիստական գրական շփոթին, — Մելիօր-դը-Վօզիւէ, որ Ֆրանսիական հասարակութիւնը ծանօթացրեց «ուսական ոգու» հետ, ինչ չափով որ սա արտայայտուում է ուսական վէպի մէջ, — Գարրիէլ Սարրազէն, որ ցոյց տւեց Շելլիի, Տեննիսոնի և ուրիշ անգլիական մեծ հեղինակների գրած քների սոցիալական մեծ նշանակութիւնը, — Էմիլ Լենիկէն, որ տապալեց Տէնի անվերջ պատճառականութեան տէօրիան և նորա տեղը զրեց արդէն Կարլէյլի դրած ճշմարտութիւնը, թէ սոցիալական կամ գրական շարժումներն առաջ են գալիս մարդկային հոգու, մեծ մարդկանց հերոսական ոգու շնորհիւ:

Սոքա են, Բերանժէի ասելով, այժմեան Ֆրանսիական ինտելիգենցիայի ամենագլխաւոր ուսուցիչները: Մտքի այս մշակներն իրանց երկիրով. մեծապէս ազդեցին երիտասարդութեան վրայ, զարթնեցրին նորա միտքը, նորա առաջ բացին լայն, լուսաւոր, գաղափարական հորիզոն, ներշնչեցին հաւատ դէպի անհատի կարողութիւնը, ցոյց տւին, որ հնարաւոր է ներգործել շրջապատող կեանքի վրայ, մղեցին նրան ընդարձակ, կենդանի գործունէութեան ճանապարհը, խրախուսեցին, բարձրացրին նորա ոգին, մի խօսքով մատաղ հոգիներին զարկ տւին, վերակենդանացրին:

Ի՞նչ եղաւ այդ գաղափարական ազդեցութիւնների արդիւնքը: Դրանք աղատեցին երիտասարդութիւնը նեղ, սառն, թմրեցնող պոզիտիվիզմից (դրական փիլիսոփայութիւն), չոր, մեռցնող նիւթապաշտութիւնից և այսպիսով զրաւեցին նոր զարթած, մատաղ հոգիները դէպի բարձր, իդէալական աշխարհը, որտեղ նրանք ներշնչեցին համաշխարային ոգով, որտեղ սեփական «ես»-ն սկսեց շատ փոքր ու շնչին երեւալ, նա այլ ևս չէր կարող մտածողութիւնների և ձգտումների միակ կենտրոնը լինել: Վերասլանալով այդ մաքուր աշխարհը, երիտասարդութիւնը շուտով տեսաւ և հասկացաւ, որ բացի փոքրիկ անձնական «ես»-ից, մի անսահման աւելի մեծ, աւելի

ժեհ, աւելի կարեւոր և օգտաւէտ բան կայ, մի բան, որից զուրա
 ձեռք-ը ո՛չ խորհուրդ ունի, ո՛չ նպատակ, որից նա ոչ թէ ստանում
 որի շնորհիւ միայն կեանք ունի, զարգանում է, կատարելագործւում
 է և վաղելքնիր է ստանում. այդ է կենդանի մարդկանց մեծ շրջանը,
 հասարակութիւնը, մարդկութիւնը. Անհատը կարող է հասնել
 ամենաբարձր զարգացման և կատարելութեան, կարող է ամենամեծ
 չափով զարճութիւն վաղելի միտքայն ալն ժամանակ, երբ կը միա-
 նայ այդ մեծ ամբողջութեան հետ, որի ամենամիտքը մասն է նա,
 միմիայն ձուլելով նորա մէջ, նւիրելով նրան իւր բոլոր ոյժերը, իւր
 ամբողջ հոգին, միանգամայն մտանալով իրան: Անչքան շատ նւիրելի
 նա հասարակութեանը, ա՛նչքան շատ աշխատած կը լինի իւր
 ձեռքի համար, ա՛նչքան կապահովէ իւր երջանկութիւնը: Բայց
 այդ մեծ ամբողջութեան ամենամեծ մասը կազմում է աշխատող
 մասան՝ ժողովուրդը, բառի լայն և ճիշտ նշանակութեամբ: Աւերմն
 այդ ժողովրդի շահերը պէտք է լինեն կենդանի, խորհող մարդու
 բոլոր մտածողութեանց միակ առարկան, և ո՛չ թէ այն նեղ շրջանինը,
 որոնց մէջ պոռոյտ է զալիս ժամանակակից ինտելլիգենցիայի ներկա-
 յացուցիչը: Այդ շահերին չի՛ կարելի ծառայել ուրիշ կերպ, բայց
 եթէ լոյս և ջերմութիւն սփռելով նորա մէջ գիտութեան կենսատու
 աղբիւրից, տարածելով նորա մէջ գիտութիւն, այդ զօրեղ, ազատա-
 րար ոյժը... Այսպէս, ուրեմն, գիտութիւն և ժողովուրդ.
 ահա՛ այն երկու կախարդիչ խօսքերը, որոնց մէջ անփոփոխ է
 անհատական կեանքի խորհուրդն ու նպատակը, որոնք պարզ ար-
 տայայտում են ցանկալի ճշմարտութիւնը, հասկանալի են դարձնում
 կեանքի գաղտնիքը, առաջնորդում են դէպի կենդանի, զովացնող
 ջրի աղբիւրը: Սոցա, այս բազմաբովանդակ խօսքերի մէջ են պարու-
 նակում ամենայն օրէնք և ճարգարէք:

Թերևս մենք աւելի լրիւ, կանոնաւոր և որոշ արտայայտեցինք
 Ֆրանսիական ինտելլիգենտ երիտասարդութեան դեռ նոր կազմող
 profession de foi-ն, քան մեր երիտասարդ ճառախօսը իւր ճառի
 մէջ: Իսկ թէ մենք ամենեւին չենք մեղանչել այդ ճառի հիմնական
 մտքերի դէմ և չենք մոցրել նորա մէջ մեր սեփական մտքերն ու
 հայեացքները, լնթեցողը բանին կարող է համոզւել հետեւեալ կտոր-
 ներից. Վնոր սերունդը կը լինի, նախ և առաջ, սոցիալական, ասում

է մեզ Բերանժէն,—ուրիշ խօսքով, նա, թէ՛ արւեստի, թէ՛ գիտութեան, թէ՛ քաղաքականութեան մէջ, թէ՛ մտքով և թէ՛ գործով կը հակի զէպի նոր հասարակութիւնը, ցոյց կը տայ որ յոյս և հաւատ ունի գիտութեան և դիմօկրատիայի վերայ, կարոտայալտէ իւր սէրը զէպի ժողովուրդը և հայրենիքը: Գիտութիւն և դիմօկրատիա, սոքա ապագայ հասարակական զարգացման երկու ամենազլխաւոր, ամենագորեղ գործօններն են:

Նախորդ դիլետանտ սերունդները չէին ցանկանում, գուցէ և չէին կարող այդ հասկանալ. ընդա վճռեցին, թէ գիտութիւնը և դիմօկրատիան արդէն սնանկացել են, նոցա ոյժն արդէն սպառւել է: Այդ ճիշտ կը լինէր, եթէ գիտութեան վերջին խօսքը լինէին միայն պողիտիվիզմը և ինդուստրիալիզմը, եթէ դիմօկրատիան միայն տիրապետող պոլուսօկրատիային ծառայելու ընդունակութիւն ունենար: Բայց չէ որ դոքա անցողական երևոյթներ են, դոքա բժշկող չարիք են, չարիք, որի պատճառով մենք չը պէտք է աչքից թողնենք այն մեծ շարժումը, որ նոր կեանքի հորիզոն է բացանում մեր առաջ: Պողիտիվիզմն այլ ևս գոյութիւն չունի, և կը դայ, յուսով ենք, մի օր, երբ գործարանական աշխատութեան կենտրոն հարցնէ կը վճռւի, դորա հետ կը վճռւի նաև պոլուսօկրատիայի հարցը: Ի վերջոյ «նոր կեանքի զարգացումը պէտք է լինի հոգու միջոցով, իսկ հոգու ամենաբարձր, ամենագործնական, ամենարդիւնաւոր սկզբունքն է սէրը... Ահա՛ սոքա են այն գաղափարներն ու հաւատալիքները, որոնցով յառաջ է դիմում ինտելիգենտ երիտասարդութեան նոր սերունդը: Այդ գաղափարների շնորհիւ կարող է վերածնել մի հասարակութիւն, որի մէջ իւրաքանչիւրի «եսը» ընդհանրութեանը հակառակ չի լինիլ և որի մէջ գաղափարը և գործը ձեռք ձեռքի տւած յառաջ կընթանան... «փոխանակ խեղաթիւրւած, մանրացած, ալլակերպւած «ես»-ի, որ դիլետանտների և պեսսիմիստների ամբողջ սեփականութիւնն է, առաջ կը գան լուրջ և զօրեղ հոգիներ, որոնք կատարելապէս ընդունակ կը լինեն նոր ոգով ներշնչելու, նորանով տոգորւելու... Մենք չենք կարող ուրիշ կերպ ձեռք բերել և եռանդ. և հաւատ, որոնցից են ծագում մեծ գործերն ու արտադրութիւնները, բայց եթէ ներշնչւելով գիտութեան և ժողովրդականութեան ոգով, ոգևորւելով բարոյական գաղափարով, և միանալով մեծ, հանրային հոգու հետ:

ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿԱՊԵՏ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Հիպնոտիսմը ալսօր մի անհրաժեշտ գիտելիք է դառել ոչ միայն բժշկի և իրաւաբանի, պատմաբանի և մանկավարժի, այլ և ամեն մի զարգացած մարդու համար, որը կամենում է գիտակցօրէն վերաբերել զէպի իրան շրջապատող հազարաւոր օտարոտի երևոյթները

Բժշկի համար հիպնոտիսմի ուսումնասիրութիւնը միանգամայն անհրաժեշտ է, որովհետեւ նա մի նոր լսւ է գցում բազմաթիւ հոգեբանական երևոյթների վրայ, մեկնում է նեարդալին (սխալ կերպով ջղալին անւանւած) հիւանդութիւնների մի մասը և մի նոր բուժական միջոց է դառնում:

Իրաւաբանի համար նա նույնպէս մի շատ կարևոր գիտելիք է, որովհետեւ հիպնոտական քնի մէջ մարդ ընդունակ է (ինչպէս կը տեսնենք լետույ) լանցանքների գործել մի ուրիշի ներչնչումով, մի ուրիշի թելադրութիւնով, ինչպէս պնդում են մի շարք գիտնականներ:

Պատմաբանը հիպնոտի օրէնքներին տեղեակ լինելով, կարողանում է ալսօր բացատրել մի շարք պատմական խոշոր երևոյթներ, ինչպէս օրինակ, հնադարեան դաւանութիւնների և նորագոյն աղանդների ծագումը, մեծ մարդկանց հերոսութիւնների, մեծ հաւաքական շարժումների պատճառները:

Մանկավարժը ալս գիտութեան օրէնքներով է կրթում մանուկներին, և հիպնոտիսմը ալսօր մի լաջն և փառաւոր տեղ է բռնում մանկավարժական մեթոդների շարքում:

Վերջապէս, իւրաքանչիւր զարգացած անհատ, կը հետաքրքրւի հիպնոտիսմով, երբ կ'իմանայ, որ ալս գիտութեան տաժտեղեկութիւնները կը մեկնեն նրան աջն հազարաւոր խորհրդաւոր երևոյթները, որոնք մօտենում են գերբնականին ու որոնք չափանի ևն ժողովրդի մէջ, կախարդութիւն, հմալութիւն, գիւթութիւն, աչքակալութիւն, տեսիլք (կամ տեղեւք) քաջքոտութիւն, սպիրիտիզմ, գուշակութիւն, հրաշք և շատ ուրիշ անուններով:

Այսպէս հիպոստական գիտութիւնը ընդգրկում է աջակիսի մի քանակութիւն օտարոտի, անհասկանալի և գերբնական անւանւած երևութիւնների, որ առօրեայ կեանքի մէջ մենք ամեն քաղաքիտիւմ զգում ենք նորա ուսումնասիրելու կարիքը: Եւ հաւանական է, որ, գնալով, այս գիտութեան չըջանակը կը լաւանալ, ամփոփելով աւելի և աւելի մեծ քանակութիւնով, միմեանցից առերես տարբեր, երևութիւններ:

Հիպոստիսմը այսօր մի ընդարձակ գիտութիւն է դառնել, նորա մասին այսօր մի ամբողջ գրականութիւն է կազմւել, և մենք մի պատասխանատու վստահութիւն ենք ստանձնում, մտադրւելով մի կարճ-հաւաք և, միևնոյն ժամանակ, մատչելի և ամփոփ հասկացողութիւն տալ ոչ-մասնագէտ ընթերցողներին այն բազմաթիւ երևութիւնների մասին, որոնք չալտնի են հիպոստական անունով:

Սակայն, համոզւած լինելով, որ այս տեղեկութիւնների ժողովրդացնումն չափազանց օգտաւէտ կը լինէր հազարաւոր, անբացատրելի կարծւած, երևութիւններ մեկնելու և այսով հաղարաւոր ոնապաշտութիւններ և նախապաշարմունքներ վերացնելու ամբոխի միջից, մենք ձեռնարկում ենք այս աշխատութեանը և մեծալոյս ենք, որ աւելի հմուտ հայ գիտնականներ կը լրացնեն տւած թերի տեղեկութիւնները և այսպիսով կ'արծարծեն հայ հասարակութեան մէջ մի շարք վրկարար գաղափարներ:

Այս ուսումնասիրութիւնը ընթերցողիս մատչելի անելու համար, մենք կ'աշխատենք, որքան կարելի է, օրինակներով խօսել:

Մեր նպատակն է կանգ առնել զլիսաւորապէս, այսպէս ասած, հիպոստիսմի փիլիսոփայութեան վրայ, այսինքն ակոսել այն շաւիղը, որով պիտի ընթանաք մենք, զանազան հոգեբանական, հասարակական և ալ երևութիւնների մեկնութեան հասնելու համար:

ԳԼՈՒԽ Ա.

Ինչ է հիպոստիսմը:—Պատմական տեսութիւն.—Մեամբրիոս, Բրայդիոս և Ժամանակակից Ուսմունք:—Քննչներու միջոցները:

ԻՆՉ Է ՀԻՊՆՈՏԻՍՄԸ?

Գիտութիւնը Հիպոստիսմ ասելով—հասկանում է մի արւեստական (չարուցած) նեարգաչին դրութիւն, որի մէջ են թաղան ներկայացնում է զանազան փոփոխութիւններ թէ իւր զգացողական և թէ մտաւոր կեանքում: Իսկ բառացի թարգմանութիւնով նա նշանակում է քնանման դրութիւն, կամ քնածութիւն (բժշկապետ Բաբայան):

Հիպնոսած էակը քնած է, բայց քնած է մի առանձին քնով, որը տարբերում է բազմաթիւ չափութիւններով հասարակ քնից:

Հիպնոսական նիւնջը, գիտնականներին մի մասին կարծիքով, Ֆիզիոլոգիական (ալսինքն առողջ) դրութիւնն է և կարող է չարուցել արեւստական կերպով առողջ անձերի մէջ (Նանսիի դպրոց): Մի ուրիշ կարգ գիտնականներ հիպնոսիսմը ընդունում են իբրեւ հիւանդական, բայց անցողական երևոյթ, ուղեղի ժամանակաւոր անառողջ դրութիւն, որը նկատուում է նեարդալին հիւանդոտ անձերի մէջ (Պարիզի դպրոց) և որի արտաշնչութիւնները իրանց վրա խելագարութեան կնիք են կրում: (պր. Լիւլիս):

Հիպնոսիսմի ուսմունքը լաւ հասկանալու համար միշտ պէտք է ի նկատի ունենալ հետևեալ սկզբունքները.

1) Հիպնոսական երևոյթները, որքան էլ անհաւատալի և հրաշքալին լինեն նրանք—բոլորը կարող են նկատուել և հիպնոսից դուրս, արթուն կեանքի մէջ:

2) Թմբկները և հոգեբանները վաղուց արդէն նկատել, ուսումնասիրել և նկարագրել են ալն բազմաթիւ երևոյթները, որոնց հաւաքումն, դասաւորութիւնը, որոնց ամբողջութիւնը կազմում է մեզ հետաքրքրող հիպնոսիսմը:

3) Հիպնոսի արտաշնչութիւնները գերբնական և սատանական բաներ չեն, նրանք էլ, ինչպէս և մեր բոլոր թէ Ֆիզիքական և թէ բարոյական աշխարհի երևոյթները, ենթարկած են որոշեալ բնական օրէնքների:

Այս սկզբունքները զննուց լետու, մի ակնարկ գցենք հիպնոսիսմի զարգացման պատմութեան վրայ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս կը տեսնենք լետու, հիպնոսի երևոյթները չափնի էին պատմական ամենահին ժամանակներում:

Ասենք իսկոյն, որ նրանք ահագին դեր են խաղացել հնումն ազգերի դաւանութիւնների մէջ և միշտ միջոց են տուել քուրմերին և սուհասարակ եկեղեցական պաշտօնեաներին կոչութեան և ահի մէջ սլահել տպէտ ամբողջը, որը, չը կարողանալով մեկնել հիպնոսական օտարտի երևոյթները, նրանց մի գերբնական էակի էր վերագրում:

Քառասուն դար մեզնից առաջ Եգիպտոսում չափնի էր հիպնոսիսմը: Արդէն 2400 տարի է անցել, երբ Հնդկաստանում Փակիրները և Զօդիները ծանօթ էին նորա արտաշնչութիւնների հետ: Յունական և հռոմէական հոգեկան աշխարհ լի էր մնացածութիւններով և նախապաշարմունքներով, որոնք պահպանում էին հիպնոսական երևոյթների ազդեցութեան

Ներքոյ, Գրիստոնէութիւնը չը վերացրեց աշխարհից հիպնոսի ազդեցութիւնը, ընդհակառակը ինքը դառաւ հիպնոսեցնող մի նոր միջոց, ինչպէս ապացուցանում է խաչակրողների արշաւանքները և ինկւիզիցիայի կատաղութիւնը:

Թողնելով մեր աշխատանքի երկրորդ մասին հիպնոսիամի զարգացման այս առաջին աստիճանները, դիմենք ուղղակի աչն չրջանին, երբ հիպնոսական շնչի արտաբերութիւնները չարուցւում են արեւստական կերպով: Այս գիտնական չրջանը սկսւում է 1778-ին և շարունակւում է մինչև մեր օրերը: Հիպնոսիամի այս մի դարի կնճառ պատմութիւնը ընթերցողին հասկանալի դարձնելու համար, մենք, պրոֆ. Գրատէյն հետեւելով, կը բաժանենք նրան երեք ժամանակամիջոցների,

I) Մեամբրիսմ, II) Բրադիսմ և III) Ժամանակակից չրջան:

I ՄԵՍՄԵՐԻՍՄ ԿԱՄ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՄԱԳՆԵՒԻՍՄԻԹԻԿՆ (Magnétisme animal. — животный магнетизмъ) (1778—1841).

Մեամբր և նորա ուսմունքը. — Կենդանական Մագնիսութիւն. — Քսուսներ. — Մագնիսական ծառ. — Ցնցումների Դժուգը. — Գիտնական Ժողովները Բողոքը. — Պէյլեզիեր, Աբեղայ, Փարիս:

1778 թ. գալիս է Պարիզ մի մարդ, որը դարձանալի հանդգնութիւնով խոստանում է իրագործել մի աստուածային հրաշք, աչն է՝ բժշկել անբուժելի հիւանդներին: Այդ հրաշքի համար ղեղեր հարկաւոր չէին. բրժշկութիւնը կատարւում էր «կենդանական մագնիսութեան» անլաղթելի զօրութիւնով: Վերականգնեցնելով հին ցնորական ուսմունքները, նա քարոզում էր, որ մի հեղուկ կալ, մագնիսական հեղուկ, որը լցնում է տիեզերական անհուն տարածութիւնը, մտնում է տիեզերքի մարմինների, մեր հոգազնտի, և երկրի վրայի շնչաւոր էակների և անշունչ աւարկանների մէջ: Այս մագնիսութիւնն է աչն ազդեցութեան պատճառը, որը, Պարացելսի վարդապետութեան համաձայն, իրբ թէ ունեն երկնային զնդերը միմեանց, վրայ, իսկ սրանք երկրիս երեսի բոլորի և կենդանիների վրայ: Մեամբրը Պարացելսի ուսմունքը աւելի ընդարձակելով և աւելի ցնորական—անմիտ դարձնելով, աւելացրեց, որ աչն հեղուկը մի անձն կարող է մի ուրիշ անձի նեարդերի մէջ ներլցնել և այսպիսով բժշկել ամեն տեսակ հիւանդութիւններ: Կենդանական մագնիսութիւնն աւանդեց նա տիեզերական հեղուկի աչն մասը, որ իբր թէ չրջում էր և կենդանիների երակների մէջ:

Այս փրկարար հեղուկը կարող է մարդուց անցնել անշունչ առարկաներին և փոխադարձաբար: Նորա քանակութիւնը մի անձի մէջ աւելի մեծ է, քան թէ մի ուրիշի, աչնպէս որ առաջինը կարող է իր մանգիսութեան

մի մասը ներկայեւ քիչ ունեցողի, կամ բոլորովին մազնիսութիւն չունեցողի նեարդերի մէջ: Այս հեղուկի ներկցումն ուրիշի նեարդերի մէջ կատարուում է կամ երկու անձերի անմիջական կցորդութիւնով, կամ մի որ և է միջանկեալ առարկայի, օրինակ երկաթէ կամ ապակիի փափուր միջնորդութիւնով, կամ մինչև անգամ առանց կցորդող առարկայի, ուղղակի օդի միջոցով...

Ահա Մեամերի անհեթեթ բաւց թող ուղեղներ ցափշտակող վարդապետութիւնը, որը նա մեծ լաջողութիւնով ծառայել տւեց իւր շահերին:

Համաձայն այս ուսմունքին Մեամերը աշխատում էր ներկցել իւր մագնիսական հեղուկը հիւանդների ջղերի մէջ և այդ նպատակով գործ էր դնում, ինչպէս ասում են, պասսեր (passes), որը թող ներսի մեղքսում: Ներքաւով թարգմանել: Ահա ինչպէս էին անում այս քսումները:

«Գուք նստում էք հիւանդի հանդէպ, ծնկները ձեր ծնկների մէջ սեղմելով և ձեռքերը քսելով իջեցնում էք ուսերից մինչև բութ մատները: Մի քանի անգամ այս քսումը կրկնելով, դուք լցնում էք ձեր մազնիսութիւնը հիւանդի ջղերի մէջ և ալն»...

Ահա Մեամերի բժշկութեան մեթոդը, կարճ միջոցում Վիեննացի մեծ հրաշագործը աջակցի մի հուշակ ու ժողովրդականութիւն ձեռք բերեց, որ ոչ միայն Ֆրանսիայից, այլ և Եւրոպայի բոլոր անկիւններից հիւանդներ խափեցան Պարիզ: Այս մի արտասովոր ողևորութիւն էր, մի ցափշտակում էր, որը հազարաւոր անձեր էր մղում դէպի Մեամերը և ոսկիներով լցնում էր նորա արկղը:

Շուտով հիւանդների թիւը աճեցան բազմապաւ, որ Մեամերը ալ ևս ժամանակ չէր գտնում ամեն մէկին առանձնապէս մագնիսել, վառնորոյ նա հնարեց իւր հուշակաւոր Տաշտը (baguet magnétique): Այս մի մեծ արկղէր, որի մէջ դարսած էին «մագնիսած ջրով լի չէր» և որի խուփի բազմաթիւ ծակերից դուրս էին ցցւում հորիզոնական ուղղութիւնով կռած ձողեր: Հիւանդները շարում էին այդ տաշտի շուրջը, և այդ ձողերի ծալքերը իրանց մարմնի հիւանդ մասին զիպցնում ու ալուրիտով իւր թէ մագնիսանում, ալսինքն ընկնում էին սարսափելի ցնցումների և ընդոստման մէջ: Որը ժամեր էր տևում: Յետոյ այս ցնցողներին վերցնում—տանում էին մի առանձին սենեակ, որը կնքել էին ցնցումների գժողք անուելի անունով: Այս ցնցումները մեամերեանների ուսմունքով փրկարար ազդեցութիւն ունեն հիւանդների վրա և ապացոյց են նրանց առողջանալուն!! Մեամերը, ահապին հարստութիւն գիլելուց և չլուած հուշակ ձեռք բերելուց փառ, հանդգնեցաւ դիմել գիտնական ժողովներին նրանց հաւանութիւնն էլ ստանալու համար: Բայց Պարիզի ֆակուլտետը մերժեց քննել անգամ այս անհիմն ուսմունքը և մինչև անգամ առաջարկեց իւր անդամներից մէկին, բժիշկ Գելտին, որը Մեամերի հետևողներից մէկն էր, հրաժարել մագնիսութեան վրա իւր ունեցած վնասակար դադափարներից:

Սակայն այս աղմուկին վերջ տալու համար Լիզովիկոս XVI-ի հրամանով գիտնականներից մի մասնաժողով կազմեց կենդանական մագնետիզմը քննելու համար: Այս մասնաժողովը, ինչպէս և գիտութեան ակադեմիան, վերջնականապէս դատապարտեց Մեսմերի ուսմունքը և բժշկութեան մեթոդը, նրան ֆլետտակար և անբարոյական չափաբարեկրով:

Այսպէս Մեսմերի ցնորական վարդապետութիւնը տապալւեց, բայց նրա նկատած երևոյթները մնում են մինչև այսօր ևս իբրև չիպնոսական երևոյթներ:

1784 թ. «Մեծ շարլատանը» մեկնեց Պարիզից, թողնելով մի շարք աշակերտներ: Սրանց մէջ ամենահռչակաւորն էր մարքիզ Պյուսէգիւր (Puységur), որը ալիպիսի կատարելագործութեան հասաւ, որ մագնիսեց մի ծառ, որի սուերի տակ կարող էին ժողովել 130 հոգի: Բայց Պյուսէգիւրի անունը պիտի մնայ հիպնոսիսմի պատմութեան մէջ ալն պատճառով, որ նա առաջին անգամ նկարագրեց արւեստական քնաչածութիւն կամ քնաշէջութիւնը (լուսնոտութիւն—Somnambulisme expérimental):

Այս շրջանին պատկանող երրորդ անձնաւորութիւնն էր պորտուգալացի արեղալ Ֆարիան: Սա ճանապարհորդել էր Հնդկատաճում և մի վտան ու նոր հաջեացք էր կազմել մագնիսական երևոյթների վրայ: Բուրովին լերքելով մագնիսական հեղուկի գոլութիւնը, միսմերեանների նկատած երևոյթները բացաղրելու համար, նա առաջ բերեց մի նոր գործիչ, ալն է ներշնչում (suggestion—внушение): «Վարժեմ պարզ է արդէն, ասում է նա, որ անմտութիւն է մի որ և է մագնիսական հոսանքի գոլութիւն երթաղրել»: Ֆարիան մագնիսական քունը նմանեցնում է հասարակ քնին: Մենք կը տեսնենք, որ ալս հաւեացքը մեր օրերում պաշտպանում է Նանսիի համալսարանի պրոֆեսորներից, որոնց ուսմունքի հիմնաքարն է դառել նա:

Մենք երկար կանգ առանք հիպնոսիսմի պատմութեան ալս շրջանի վերայ, որովհետև շատ գրւածքների մէջ դեռ գործ է ածւում մագնիսիսմ, մագնետիսոր (մագնիսող), մագնիսւող, կամ միսմերիզմ, միսմերեաններ, փոխանակ հիպնոսիսմ, հիպնոսական նինջ, հիպնոսող բառերը: Բացի ալդ, միսմերեան շրջանի ուսմունքների մէջ մենք գտնում ենք արդի հիպնոսական գիտութեան սերմերը:

II ԲՐԱՅԻՍՄ ԿԱՍ ՀԻՊՆՈՏԻՍՄ (1841—1874)

Ժէմս Բրայդը (James Braid) և աչքերի յագնածութեան լծկործան Բրայդը հիպնոսիսմի հիմքն է դնում: Բարդոյի բժիշկ Ազան: Պրոֆ. Լիերոն:

Մեսմերի և Ֆարիալի զանափարհները և ուսմունքը մոռացւեցան: Ֆրանսիական լեղափոխութիւնը, Նապոլէոն I ի ահուելի և աղետալի կռիւ:

ները հեռացրեցին հիւնդոտի մի գիտնական ուսումնասիրութիւնը: Սակաչն երկրի ամեն կողմերում և արտասահման շրջում էին մագնետիզորներ (մագնիսողներ), որոնք հրապարակական ներկայացումներ էին տալիս և բեմի վրայից մագնիսական երևոյթներ էին ցոյց տալիս հանդիսականներին: 1841 թ. գալիս է Մանչեստեր այս մագնետիզորներից մէկը, Լաֆոնտէն, անունով: Բժիշկ Ջեմս Բրադըր, դիտելով այն՝ ենթակասներին, որոնց Լաֆոնտէնը մագնիսում էր, նկատեց, որ քստմաների ազդեցութեան ներքոյ ամենից առաջ մագնիսադրի աչքերը փակուում են: Այս առերես աննշան հանգամանքը բաւական եղաւ Բրադըրին հիմնել իւր հռչակաւոր թէօրիան, որը չափանի է աչքերի լուսնածութեան թէօրիա անունով:

Եթէ ենթակալի աչքերը խփուում են, ալ կը նշանակէ, որ նրանք լողնում են և լողնում են նրանից, որ ուշիուշով նալում են մագնիսողին ու բեւեռում են նրա ձեռների վրա քստմաների ժամանակ: Երևի, աչքերի լողնածութիւնը անցնում է ուղեղին, որը նույնպէս լողնում է և հէնց ուղեղի ընկճման զրուծիւնից առաջանում են մագնիսական օտարոտի երևոյթները: Այս է աչքերի լողնածութեան թէօրիան:

Բրադըր, իբրեւ լաւ և բարեխիղճ գիտնական, չէր կարող ի հարկէ հենթադրութիւններով բաւականանալ և նա լողիկարար զետեցրեց, որ եթէ բոլոր զաղանիքը աչքերի մկանների թուլանալու մէջն է, ուրեմն հարկ չը կալ քստման անել, տաշտեր ստեղծել և ալն, ալ բաւական պիտի լինի, որ ենթական սեւռի իւր հալեացքը մի որ և է առարկայի վրայ և նա պիտի ընկնի մագնիսական քնի մէջ:

Փորձը արդարացրեց Բրադըրի լուսերը և նա քնեցրեց իւր ընկերին, իւր կնոջ և ուրիշներին, ստիպելով նրանց նալել մի քանի րոպէ մի պըսպըղուն առարկայի վրա (չչի վզին), որը նա պահում էր որոշեալ հեռաւորութիւնով:

Այս դիւտը հիպնոտիսմի հիմունքը զրեց և այս ուսմունքը չափանի է Բրադըրիսմ անունով:

1861 թ. Բորդօցի բժիշկ Ազանը (Azam) հրատարակեց մի վերին աստիճանի հետաքրքիր ուսումնասիրութիւն տիկին Ֆելիդա X-ի (Félida X) օտարոտի հիւանդութեան մասին և առաջ բերեց մի շարք նոր հիպնոտիկան երևոյթներ:

Հինգ տարուց շուտ Նանսիի համալսարանի պրոֆեսոր բժիշկ Լիեբօն (Liébeault) սպաղրում է մի նշանաւոր գրաւծք այս վերնագրով. «Արեւոտական քուն և համաճման գրութիւններ», որի մէջ հեղինակը մշակում է հիպնոտիսմի փիլիսոփայական մասը, աշխատելով մօտեցնել հիպնոտիկան նինջը հասարակ քնին:

III ԺԱՄԱՆԿԱԿԻՅ ՈՒՍՄՈՒՆՔ ԿԱՄ ՅԱՐՈՒՅԱԾ (ԱՐԻԵՍՏԱԿԱՆ) ՔՆԱ- ՅԱԾՈՒԹԻՒՆ (sommambulisme provoqué)

Շարլ Ռիշէ. — Պրոֆեսոր Շարկօ և մեծ Հիպնոսիստ. — Կանտի հիպնոսագէտները:

Լիերուզի գիրքը արձագանք չը գտաւ գիտնական գրականութեան մէջ և Հիպնոսիստի հարցը կրկին քնեց մինչև 1875, երբ բոֆիշէ Շարլ Րիշէ (Charles Richet) հրատարակեց իւր պատական հետազոտութիւնները մեզ հետաքրքրող հարցի մասին: Մի քանի տարուց յետոյ, 1878 թ., Պարիզի պրոֆեսոր Շարկօն իւր հանձարեղ, աշուպէս ասած, դիտողական ընդունակութիւնով մաքրեց հիպնոսիստի գիտութիւնը ենթագրութիւններէրց և դժեց ալն շաւիղը, որով պէտք է ընթանալ գիտնական հետազոտողը, եթէ կամենում է հաւատարիմ մնալ գիտնական հետազոտութիւններէ կանոններին:

Շարկօն լալտնեց գիտնական աշխարհին իւր երկարամեայ աշխատանքի պտուղը, իսկ 1882 թ. նա ներկայացրեց Պարիզի Ակադեմիային իւր նոր ուսմունքը փորձնական հիպնոսիստի մասին: Ալն զիկուցման մէջ մեծ գիտնականը նկարագրում է ալն հիպնոսական դրութիւնը, որը ուսումնաւ սիրել էր նետրդալին հիւանդների վրա և որը լալտնի է ալժամ Մ և ծ Հիպնոսիստիստ անունով:

Համարեալ միևնույն ժամանակ բոֆիշէ Դյումոնպալիէ (Dumontpal-lier) մի շարք զարմանալի փորձեր է անում հիպնոսածների ղգանութեան վրա, ալն ինչ Գերմանիայում Հալցենհալն, Գրիցներ, Բերգեր և գուրիշները նոյնպէս զբաղում էին նոր գիտութիւնով:

Շարկօն հիմնեց մի դպրոց (շկոլա), որից դուրս եկան մի շարք լուրջ հիպնոսագէտներ և աւսօր հիպնոսիզմի զարգացման պատմութեան մէջ ամեն քաջափախում պատահում ենք մի մեծ քանակութիւն լալտնի անունների, ինչպէս. Րիշէ, Ֆերէ, Բենյար, Պրոֆ. Լիւլիս, Դյումոնպալիէ Մանյան, Ժիլ զը լա Տուրետ, Պրոֆ. Բրուսարդել, Պօլ Ժանէ, Լադամ, Իւնգ Պիտր և ալն: Մինչդեռ Պարիզում հիմնում էր Շարկօյի դպրոցը, Նանսի քաղաքում զարգանում էր մի ուրիշ շկոլա, որի հեղինակաւոր ներկայացուցիչներն են՝ Լիերօ, Բոնիս, Բերնալ և իրաւագէտ Լիեթուա, որը ուսումնասիրում է հիպնոսիստը իրաւաբանական տեսակէտից:

ՀԻՊՆՈՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մեղմ և յունկարծակի միջոցները: — Ֆիզիկական և հոգեկան ձևեր: — Հիպնոսութիւն ներշնչումով: — Բերնարս: — Որնականներ: — Հիպնոսութիւն հեւից, նամակի միջոցով (Լիեթուաի փորձերը): — Զարթեցնելու միջոցները: — Հասակի, սեռի ազդեցութիւնները: — Հիպնոսիստ կենդանիներէ մէջ:

Հիպնոսական քուն լարուցանելու (կամ կարճ ասենք. քնեցնելու) միջոցները ալնքան բազմաթիւ են, որ դժւար է մի առ մի նկարագրել:

Նրանց: Որքան էլ լրացած լինեն նրանք, բոլորը միևնույն կերպով են ազդում, այն է՝ չարածելով մեր զգայարանքները և նրանց միջնորդութիւնով մեր ուղեղը: Ուրեմն գրգռելով մէկի տեսողութիւնը, լսողութիւնը, շոշափումն, մենք կարող ենք նրան քնեցնել: Եւ որովհետեւ չարածել մեր զգայարանքները կարելի է կամ չանկարծակի կամ կամացիկ կերպով, ուրեմն և հիպնոսելու միջոցները կը լինեն չանկարծակի և մեղմ միջոցներ:

1) Մեղմ միջոցները մի որոշեալ ժամանակամիջոց (մի քանի րոպէ) չարունակ գրգռելով մեր զգայարանքները լողեցնում են նրանց: Սրանց չորհածութիւնը անցնում է ուղեղին, և ենթական քնում է:

Մեղմ ձևերը դորձ են դրում մեր երեք զգայարանքների վրայ միայն. ա) տեսողութեան. քսումներ (Մեսմեր, Րիչէ), հալեացքի բևեռումն մի որ և է առարկայի վրայ (Ֆարիա, Շարկօ), ենթական անշարժ նալում է փորձողի աչքերի մէջ, և այլն:

բ) Լսողութեան. միակերպ ձայները, երաժշտութիւնը, միակերպ ընթերցումներ լսելը: Կառքով կամ սալով երկար զնալը, ժամացույցի չղկչղկոցը և այլն: Այս վերջին միջոցով Հալենհանը երկու րոպէում քնեցրեց երեք ուսանողներ:

գ) Շոշափման. Մի քանի անձերի մարմնի վրայ կան կէտեր, որոնց չփումն առաջացնում է հիպնոսական նինջ: Երբեմն բաւական է կմճել կանջի բլթակը, կամ ծծի պտուկը, կամ մատերի ծայրերը, որ հիւանդը քնի մէջ ընկնի: Այս կէտերը չափնի են հիպնոսածին կէտեր անունով (points hypnogenes):

2) Յանկարծակի ձևերը ներգործում են միևնույն կերպով, բայց քունը աւելի արագ է չարուցում:

Այսպէս. տեսողութեան միջոցով քնեցնելու համար պէտք է մի չանկարծակի, անսպասելի լուս արձակել ենթակայի աչքերին (օրինակ. ելեքարական լուս), Պրօֆ. Լիւլիսը ալգ նպատակով է հնարել իւր պատուոյ հալելին:

Իսկ լսողութեան վրայ ներգործելու համար կարելի է հրացան արձակել, բարաբան զարկել և այլն: Մութի չարածը, ամպի որումն, կալծակը և այլն կարող են տրամադրած ենթականերին մի վայրկենում քնեցնել: Պարլիլի Սալպետրիէր հիւանդանոցում, որի մէջ զատախօսում է պրօֆ. Շարկօն և որտեղ խնամում է մի անազին քանակութիւն նեարդալին (Չղալին) հիւանդ կանանց, չաճախ գործէ ածւում այս չանկարծակի միջոցները: Պրօֆ. Րիչէն իւր գրքի մէջ գետեղել է մի քանի լուսանկարներ, որոնք ներկայացնում են զանազան գրութիւններին մէջ մի խումբ կանաչ, որոնց արձանացրել է բարաբանի, ցիմբալի մի ուժգին չարած:

Հիպնոսելու այս երկու տեսակ միջոցները (մեղմ և չանկարծակի) պէտք է լաւ զանազանել միմեանցից, որովհետեւ մեղմ միջոցներով

մենք ընդհանրապէս չարուցանում ենք լեթարգիա (անգլ. պաշկան բուռն), իսկ չանկարծակի ձեռք ենթակալին ուղղակի քարացման մէջ է քցում: Այս է պատճառը, որ պատերազմի դաշտերում չաճախ գտնում են զինւորներ, որոնց, օրինակ, ումբի պալթիւնը արձանագրել էր այն զիրքի մէջ, ինչ զիրքում որ գտնւում էին նրանք պալթիւնի վալրկենին:

Յիշածս միջոցները, կրկնում ենք, հիպնոսական քուն են չարուցանում, ներդրածելով ուղեղի վրայ մեր զգալարանքների (լսողութեան, տեսողութեան և շոշափման) միջնորդութիւնով:

Սոքա հիպնոսելու ֆիզիկական միջոցներն են:

Կալ մի ուրիշ կարգի միջոց.—այդ՝ ներշնչումն է: Դեռ Ֆարիան, որը փրքել էր քսոմենների կարևորութիւնը, դուրս էր ածում այդ միջոցը՝ Նա մօտենում էր ենթակալին և հրամայական ձայնով գոգում էր՝ «քնիր» ու ենթական քնում էր: Նանսիի զխոնականները վերանորոգեցին Ֆարիալի մեթոդը և այսօր նրանց հիպնոսելու միակ միջոցն է այդ: Այս երկրորդ կարգի միջոցը անւանւում է «հիպնոսութիւն ներշնչումով»:

Ահա ինչպէս է քուն ներշնչում Բերնալը:

Հիպնոսողը հաւատացնում է հիւանդին, որ երկիւղալի ոչինչ չկայ և մօտաւորապէս այսպէս է խօսում: «Մտածեցէք միայն, որ դուք պէտք է քնէք: Դուք արդէն ծանրութիւն էք զգում ձեր արտանանքի մէջ, ահաւասիկ ձեր աչքերը փակւում են, ձեր գլուխը թուլացած կ'որ է ընկնում, դուք սկսում էք քնել, դուք քնած էք» և հիւանդը քնում է:

Այս և հետևեալ ձևերը Հիւլքերը անւանում է հոգեկան ձևեր: Ահա մի քանի օրինակներ:

Պրօֆ. Հալլենհան մի ուսանողի ասում է, որ միևնույն օրը ժամը 4-ին նա կը քնի և գուշակութիւնը կատարւում է: Մի հիւանդ կին համոզւած էր, որ բժիշկը միշտ կարող է նրան քնեցնել և ամեն նորա երևալուն, հիւանդը խկոյն ընկնում էր հիպնոսական ճնջի մէջ: Մի բաժակ ջուր են տալիս հիւանդին, իբրև մնզնիւսած ջուր, և նա, խմելուց չտող, խկոյն քնում է: Կամ հաւատացնում են, թէ, դռների փեղկերը կարող են նորան քնեցնել և հէնց որ ձեռք տալիս այդ փեղկին, խկոյն հիպնոսանում է:

Այս հոգեկան միջոցը կարող է ազդել և հեռուից: Այսպէս, Լիեթուան մի արկղիկ կոնֆէտ է ուղարկում մի օրիորդի և կցորդում է այս տոմսը. «Եթէ օրիորդ Ա. այս չաքարեղէնը մէկ մէկ կ'ուտի, նա ոչինչ չի զգալ, իսկ եթէ նա միանգամից երկուսը բերանը դնի, նա անշուշտ կ'քնի: հինգ կամ վեց րոպէ: Զարթնելիս օրիորդ Ա. շատ տխուր կը լինի և մինչև անգամ կ'արտասուի: Բայց ներս կը մտնի պ. Բոնիսը, որը նրա ձեռք կը սեղմի և կը մխրթարի:—21 փետրուարի 1885 ամի»: Գրածը բոլորը կատարւում է, մինչև անգամ օրիորդը երկակայութիւնով տեսնում է պ. Բոնիսին: Լիեթուան

կարողացել է նամակով նանսի քաղաքից մի հեռաւոր գիւղում քնեցներ օրիորդ Հ. ին և նրան բաղմաթիւ հրամաններ կատարել տալ։

Հեռախօսի միջոցով էլ կարելի է հիպնոսել։ Հիպնոսելու միջոցները և ձևերը կարող են չափազանց բաղմաթիւ լինել, սակայն երբ ուշով քննելու լինենք նրանց ազդեցութիւնը, կը տեսնենք, որ բոլորը միևնոյն կերպով են ազդում,—դղրդում են մեր նեարդալին սխառնը։

Նկատենք, որ ամեն ենթակալի հեշտ չէ հիպնոսել։ Կան անպիտիներ, որոնք երկար ժամանակ ընդդիմանում են, և անց տոկոսութիւնը երբեմն ծիծաղաշարժ պատահում քներ է առաջացնում։ Այսպէս Ֆարիալի աշակերտ և ընկերը ցանկանում էր քնեցնել մէկին հալեացքի սենեումով, աւսինքն իւր հալեացքը ենթակալի աչքերի մէջ դրելով։ Մի քանի րոպէից, լետոյ Ֆարիան ներս է մտնում և զարմացած տեսնում է, որ իւր աշակերտը քնած է, այն ինչ ենթական սպասում է, որ պէտք է քնի։ Սակայն այն տնձերը, որոնք մի քանի անգամ ենթարկւել են հիպնոսի, զարմանալի հեշտութիւնով են քնում։ Շարիօլի մի քանի հիւանդների աչքերին բաւական էր մի փալտն բան մօտեցնել, ու մի վարկեանից լետոյ նրանք ընկնում էին քնի մէջ։ Մի քանի կանաչք անքան թուլ են լինում, որ հէնց որ նստում են հալելուն, իսկոյն քնում են։ Մի աղջիկ չէր կարողանում օղակներ կարել, որովհետև իսկոյն հիպնոսանում էր։

Ամենահեշտ և ամենաընդունաժ. ձևն է մի փալտն առարկալի նայելը։ Ղուք նստեցնում էք ցանկացողին մի աթոռի վրայ և ըռնում էք նրա աչքերի առաջ, բայց նրանց առանցքից (օճ) մի քիչ բարձր, մի ող և է փալտն առարկալ և ստիպում էք ենթակալին սենեկ իւր հալեացքը անց առարկալի վրայ։ Հարկաւոր է, որ սենեակում ըռութիւն տիրէ և մթնաշաղ լինի։

Զարթեցնելու համար բաւական է լինում փչել աչքերի մէջ։ Սակայն երբեմն անց միջոցը չի չաջողում և ստիպւած ենք աւելի ազդու միջոցների դիմել։

Արդեօք ամեն մարդ ընդունակ է հիպնոսելու?

Նանսիի դպրոցը պնդում է, որ 10 հազուց 9-ը կարող են ենթարկւել հիպնոսական քնի, իսկ Պարիզի դպրոցի կարծիքով, միայն 30%-ը, որոնցից միայն 15%-է հասնում քնաչըջութեան պատիճանին։ Այս ահագին տարբերութեան պատճառը կը տեսնենք լետոյ։

Հասակը. Հեշտ հիպնոսում են երեխաները և պատանիները մինչև 21 տարին։ Անուհետև հիպնոսողների թիւը քչանում է մինչև 80 տարին, որից լետոյ կրկին բարձրանում է։

Սեռը. Կանանց սեռը, ինչպէս աւելի դիւրագրգիռը, աւելի հեշտութիւնով է ենթարկւում հիպնոսի, մանաւանդ նեարդալին կանաչք։

Փորձեր եղան կենդանիներին էլ հիպնոսելու (ղորտեր, հաւեր, ձիեր)։

ԳԼՈՒԽ Բ.**ՀԻՊՆՈՍԱԿԱՆ ՔՆԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Շարկօյի ուսմունքը—Մեն Հիպնոտիսմ¹ և նորա աստիճանները:—1. Եթարգիա, (անզգայական քուն), Կատալեպսիա (քարացում) և Սոնամբուլիսմ (քնայածութիւն կամ քնաշրջութիւն):

Մ Ե Մ Հ Ի Պ Ն Ո Տ Ի Ս Մ

Մենք տեսանք, որ 1878 թ. պրոֆ. Շարկօն Պարիզում իւր Սալպետրիէի կոչւած հիւանդանոցի մէջ ուսուցեց մեզ հիպնոտիսմը իբրեւ նեարդալին հիւանդութիւնների մի ճիւղ: Այս ուսմունքը, որը չալտնի է գիտութեան մէջ Շարկօյի, Սալպետրիէի կամ Պարիզի ուսմունք անունով, այսօր համարւում է դասական վարդապետութիւն: Մի շարք գիտնականներ, պրոֆ. Շարկօյի հետեողները, կամ ուղղակի նրա աշակերտները պահպանում են այսօր մեծ գիտնականի 1878-ի խորը գիտնական գաղափարները,—ալնքան խորիմաց էին նրանք և ալնքան զգուշաբար չալտնած:

Տեսանք նոյնպէս, որ Նանսի քաղաքում ծաղկել է մի ուրիշ դպրոց, որը այդ պատճառով չալտնի է Նանսիի դպրոց անունով:

Երկու դպրոցների ուսմունքների մէջ մեծ տարբերութիւններ կան: Այս ուսումնասիրութեան մէջ մենք կը ղեկաւարւենք զլիսաւորապէս պր. Շարկօյի ուսմունքով, որովհետեւ նա մեզ աւելի գիտնական է թուում և աւելի մօտ է, մինչդեռ մենք երկար տարիներ ներկայ ենք եղել Պարիզում այդ գիտութեան վարդապետ և մշակութեան ու սնուցւած ենք Պարիզի դպրոցի գաղափարներով:

Հիպնոսական քնի արտալուստութիւնները ալնքան բազմաթիւ և միմեանցից տարբեր են, որ հարկ էր դասաւորել նրանց և մի գիտնական կլասիֆիկացիր ստեղծել: Պրոֆ. Շարկօն, ուսումնասիրելով հիպնոսը հիստերիկ անւանւած կանանց վերաջ¹), կարողացաւ հիպնոսական արտալուստութիւնները երեք դասակարգի բաժանել, որոնց կնքեց 1) 1. Եթարգիա (անզգայական քուն), 2) Կատալեպսիա (քարացում) կամ արձանացում² և 3) Սոնամբուլիսմ (քնայածութիւն կամ քնաշրջութիւն), անւաններով:

1) Հիստերիկան մի նեարդալին հիւանդութիւն է, (первая болезнь), որին ենթարկւած են ոչ միայն կանայք, այլ և տղամարդիկ: Մի ուրիշ անգամ էլ խոսենք այս հիւանդութեան վրայ, առ այժմ կատենք, որ այն անձինք, որոնց ընդունւած է ջղային կոչել, մեծ մասամբ հիստերիկներ են:

Սրանք են հիպնոսական ճնշի շրջանները, որոնց ամբողջութիւնը կազմում է Շարկույի Մեծ Հիպնոտիսմը: Այս երեք շրջաններից ամեն մէկը իւր չափանիշներն ունի: Այս չափանիշները զանազանում են մի շրջանը միւսից, այնպէս որ կատարելապէս բնորոշում են նրանց: Հիպնոսական քնի այս երեք մասերը կարելի է փորձնական (արեւատական) կերպով չարուցանել միևնույն անձի մէջ, նրանք առաջ են գալիս չաջորդաբար, մէկը միւսի ետեից, նախելով թէ ենթական շատ թէ քիչ խոր քնի մէջ է: Այսպէս լեթարգիան կամ ինչպէս մենք, թարգմանում ենք անզգացութիւնը կամ անզգացական քուռը հիպնոսական ճնշի առաջին աստիճանն է և ամենախոր քուռն է. քարացումն երկրորդ աստիճանն է—միջակ քուռը, այն ինչ քնացածութիւնը կամ սոնամբուլիսմը—երրորդ աստիճանն է և ամենաթեթեւ քուռը, որից մարդ անմիջապէս արթնանում է:

Այս շրջանների չաջորդութիւնը լաւ բնորոշեալ համար մենք առաջ կը բերենք պրոֆ. Նիւլիսի տաած համեմատութիւնը: Երեւակայեցէք ձեզ մի հոր, որի մէջ երկու աստիճաններ կան: Երբ մենք քնեցնում ենք մէկին, զգու՛ս ենք նրան աչք հորի մէջ և նա ընկնում է ուղղակի հորի չափակը,—այս լեթարգիան է: Յետոյ մենք չալտնի միջոցներով բարձրացնում ենք նրան մինչև ճերքնի աստիճանը,—այս կատալեպսիան է: Եթէ մենք աչք կատալեպտիկին բարձրացնենք մինչև առաջին, այսինքն վերին աստիճանը, նա կը զառնալ սոնամբուլ կամ լուսնոտի (քնաշրջիկ), որտեղից մենք հետադարձութիւնով լույս աշխարհ կը հանենք և նա կ'արթնանալ:

Մենք կ'ուսումնասիրենք առանձնապէս այս երեք շրջանները:

ԼԵԹԱՐԳԻԱ, ԿԱՄ ԱՆՁԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Անզգայական քնի յատկութիւնը:—Ձգաբարանքների ընդհանուր մաշագումն:—Փայլուն գնդերի երևոյթները:—Շարժողութեան մաշագումն:—Նկարագրական կոնայէն երևոյթ:

Որ՞ ձևով էլ հիպնոսեալ լինենք մենք, (օրինակ. եթէ ստիպենք ենթակային սենեւելիւր հալեացքը մի առարկայի վրայ, որը մենք բռնում ենք աչքերի մօտ առանցքից բարձր), մենք կը նկատենք համարեա միևնույն բանը: Կամաց կամաց աչքի կոպերը ծանրանում են և սկսում են դողդողալ, մի քանի րոպէից ճետոյ աչքերը խփւում են, անդամները անշարժ վալը են ընկնում, գլուխը թեքւում է մի կողմը և ամբողջ մարմինը ընկնում է դիակի անշարժութեան մէջ: Ենթական դառնում է մի անկենդան առարկայ, որը բոլորովին անկարող է մի ամենափոքր շարժում անգամ պնել. նորա անդամները, ամբողջ մարմինը կարծես կաթածալաբած է, դուք կարող էք նրան ալրել, կտրատել և անել ինչ որ կը կամենաք: և այս դիակը անկարող կը լինի ձեզ մի՞ որ և է ընդդիմադրութիւն ցոյց տալ:

որովհետև նա ոչ տեսնում է, ոչ լսում, ոչ հոտոտում, ոչ ճաշակում.—նա իւր հինգ զգալարանքներից զրկւել է:

Հիպնոսի աչս շրջանը հետաքրքիր է նրանով, որ միևնույն րոպէում, միևնույն անձի վրայ մենք նկատում ենք բոլորովին հակառակ երևութներ: Մի կողմից կատարեալ անզգայութիւն,—միւս կողմից չափազանց սուր զգայութիւն, մի կողմից կատարեալ անշարժութիւն, կատարեալ մահ մկաններէ, միւս կողմից անհաստալի ուժ անդամների մէջ, մի կողմից համարեա կատարեալ անհետանումն ինքի, բանականութեան և հոգեկան ընդունակութիւնների,—միւս կողմից հոգեկան արտաշարութիւնների անսովոր չափազանցումն:

Զգացողութիւնը բոլորովին կորած է. նրան կարելի է ծակծկել ասեղով, կարելի է մեծ մախաթով ամբողջ թեր թափանցել, լեթարգիկը (լեթարգիկը—լեթարգիալի մէջ գտնւողն է) ոչինչ չի զգում: Նրա հոտոտելիքը բոլորովին խանգարւած է. դուք կարող էք քթին մօտեցնել ամենաանախորժ և ամենասաստիկ հոտեր,—նա ոչինչ չի հոտոտում: Գրէք նորա բերանը աղի, կծու, թթու և այլն ուտելիքներ.—լեթարգիկը համ չի զգում: Սակայն պրոֆ. Լիւլիսի փորձերը ցոյց տւին, որ այն կաշին, որը ոչ մի զրգում է չի զգում, սաստիկ դիւրագրգիւ է դառնում մետաղների ազդեցութեան ներքոյ: Այսպէս, եթէ մօտեցնենք կաշուն մի արծաթէ կամ ոսկէ դրամ, կը տեսնենք որ այդ մարմնամասի մկանները ձգձգւում են: Բացի այդ, մի ոսկէ ստակ կաշուն կպցրած կարմրեցնում ու միանգամայն ալրում է նրան:

Այս ընդհանուր մահացման մէջ միայն տեսողութիւնը դեռ կենդանի է և մինչև անգամ չափազանցրած է, այնպէս որ գոյնաւոր առարկաները փոփոխում են լեթարգիկի դէմքի արտաշարութիւնը: Պրոֆ. Լիւլիսը նկատել է, որ մօտեցնելով ենթակալի աչքերին կապոտ գնդակներ, մենք չարուցանում ենք նրանց մէջ զլւանք, այն ինչ զեղին գնդակների տեսքը նրանց դէմքը մեղմացնում է, և նրանք բացում են իրանց աչքերը ու ամբողջ մարմնով ձգւում են դէպի փայլուն առարկան: Պրոֆ. Լիւլիսի կշիռնիկալում կար մի աղջիկ, Էսթեր անունով, որի աչքի առաջ բռնում էին մի բարակ, 5 միլիմետր հաստութիւնով սև տախտակ, իսկ այդ տախտակի քամակին մի ապակեալ գունդ: Էսթերը աչքերն իսկույն լալն բանում էր, նորա հալեացքը օտարոտի էր, նորա դէմքը անսահման սարսափ էր արտաշարում:

Շարժողութիւնը նույնպէս բոլորովին մեռած է: Հիպնոսածի զլուսը և անդամները անկեանք վալր են ընկնում, երբ նրանց բարձրացնում ենք վեր և ամբողջ մարմինը մեռածի նման է ու, ինչպէս ասում են, փալաս է դառնել: Բաց զարմանալի է, որ եթէ կամացիկ շփենք արմուկի երեսը, կը չարուցանենք ձեռի անսովոր ուժեղ կարկամումն: Պր. Լիւլիսը, չափելով այս կարկամման ուժը, գտել է, որ նա երկու անգամ աւելի մեծ է, քան թէ միևնույն անձի և միևնույն ձեռի դիտակցական կար:

կամումն։ Այս երևութը պր. Շարկոն անուանում է նեւրոգամական երևութ (phénomène neuro-musculaire) և միանգամայն բնորոշ է անդդալական քնին։

ԿԱՏԱԼԵՊՈՒՄ ԿԱՄ ՔԱՐԱՅՈՒՄՆ ԿԱՄ ԱՐՁԱՆԱՅՈՒՄՆ

Քարացումն առաջացնելու միջոցները.— Անդամների քարացումն.— Մկանների ոյժը.— Աւտոմատիսմ.— Տեոդական և լսողական յուզմունքներ.— Ցուզմունքներ անգամների վերքից առաջացած։

Լեթարգիայի մէջ ենթական հորի խորքումն էր. Գրաի լուսը չէր հասնում նրան, նա թանձր խառարի մէջ էր և զրկուած էր (եթէ կարելի է ասել) իւր զղարարանքներից, իւր ուղեղից, բայց բաւական է միայն բանալ լեթարգիայի մէջ ընկնում ծիւղքի բնական կը բարձրանալ մի աստիճան։ Այսպիսով նա մօտենում է հորի ելքին, զրոյ լուսը սկսում է թափանձել խառարի թանձրութիւնը,—նա քարացման շրջանումն է։

Մենք տեսնք, որ լանկարծակի միջոցները (հրացանաձուլութիւն, ցիմբալի, բարձրանի լարած, մի խօսքով մի ուժգին և անսպասելի ձայն, կամ ելեքտրական լուս, և այլն) քցում են ենթակալին ուղղակի կատալեպսիայի քնի մէջ։ Ուրեմն, եթէ կամենում ենք արթնուն մարդուն ուղղակի կատալեպսիայի ալիքնքն հիպնոսի երկրորդ աստիճանի վրայ դնել— դորժ ենք ածում լանկարծակի միջոցները, իսկ եթէ ենթական արդէն լեթարգիայի մէջ է, մենք բացում ենք միայն նորա աչքերը։

Թէ ալ և թէ ալն ձեռով մենք մի մեծ փոփոխութիւն ենք կրնում ենթակալի թէ զղարական և թէ հոգեկան աշխարի մէջ։ Սակայն առ երես ոչինչ տարբերութիւն չկայ հիպնոսի ալ երկրորդ և առաջին աստիճանների մէջ։ Կատալեպսիկը միևնոյն անտարբեր և անշարժ կերպարանքն ունի, ինչ որ լեթարգիկը, ալն բացառութիւնով միայն, որ առաջինի աչքերը բաց են։ Բայց փորձեցէք նրա զղացողութիւնը և նրա ֆիզիկական ոյժը և կը տեսնէք, որ ալ քարացումն մի բոլորովին տարբեր դրութիւն է։

Քարացման մէջ ամբողջ մարմինը ճշմարիտ որ արձանացած, քարացած է։ Եթէ բարձրացնէք նրա ձեռքերը կամ ոտները, նրա գլուխը, կանաղան կերպով ծալէք, ծռումէք և, ինչ գրութեան և ուղղութեան մէջ կամենաք էլ, զրէք նրանց—կը տեսնէք, որ արձանացածի անդամները կը պահպանեն ալ զրութիւնները։ Գուր կարող էք կանգնացնել ենթակալին մի ոտի վրայ, կռացնել նրա գլուխը, բարձրացնել թիկը, կամ ծռել մէջքը և երկու տակ անել նրան,—որքան էլ անբնական և անտանելի լինէին ալ զրութիւնները, կատալեպսիկը, մեղրամոմից չինած արձանի պէս, կը պահպանի ալ զիրքը տալը—քսան—քսան հինգ րոպէ։

Այդ դեռ ոչինչ, եթէ արձանացածը պարկած է, դուք կարող էք բռնել նորա գլխից և ամբողջ մարմինը մի փափի նման բարձրացնել և լոռի կանգնեցնել ու նորա վիզը, մէջքը ու ոտները չեն ծալի: Մի դարմանալի փորձ կալ, որին մենք շատ անգամ ականատես ենք եղել: Այդ հորիզոնական զրույթեան մէջ արձանացածին՝ մենք բարձրացնում ենք գետնից ու պարկեցնում՝ երկու աթոռների վրայ աչնպէս, որ զապաթը մի աթոռի ծալրին, լինի իսկ կրունկները միսի: Այս զրույթեան մէջ կատարելապէս տախտակի նման ուղիղ պարկած է օդի մէջ: Այս անբնական երևոյթը նա մանաւանդ զարմանալի է, որ դուք կարող էք ալք ենթակալի կուրծքին ու փորին դանազան ծանրութիւններ դնել (և մինչև անգամ մի մարդ կարող է նստել) ու նորա մէջքը չէք ծալի:

Այս և սորա նման բազմաթիւ փորձերը ցույց են տալիս մեզ, որ կատարելապէսի միանների մէջ մի աներեւակալի ուժ է զարգանում: Այդ ուժն է, որ պահպանում է նկարագրածս գիրքերը տասնեակ ընդհանր, մինչդեռ արթնութեան մէջ մենք անկարող ենք մի ընդհանր անգամ զլմանալ: Պր. Շարկուի փորձերը ցույց տւին, որ ամենատեղի աղամարդը արթնութեան մէջ անկարող է պնդան երկար պահպանել իւր անդամներին տւած զրույթները, որքան ամենաթուղ կինը քարացման քնի մէջ:

Հիպնոսական քնի այս շրջանում նկատում է մի չափազանց հետաքրքիր երևոյթ, որը լատին է աւտոմատիսմ (automatisme) անունով: Ենթական քարացման քնի մէջ դառնում է մի մեքենա, որը առանց դադարելու գործում է աչն ուղղութիւնով, որը դուք տալիս էք նրան: Մի առարկայի շոշափումը, նորա տեսքը յարուցանում են նորա ուղեղում ալդ առարկայի զործածութեան միտքը: Այսպէս, եթէ մի կնոջ ձեռքի մէջ մի հլուն ու թիւ դնէք, նա կ'սկսի գուլպա գործել և կը գործի ժամերով անդադար, մի լոնսանձ մեքենայի նման, կը գործի, մինչև որ ուժերն սպառւեն կամ մինչև որ դուք կանգնեցնէք նորա ձեռները: Այդ բաւական չէ, եթէ դուք թելը կտրէք, նա կանգ կ'առնի, թելը կը կապի և նոյն անվրդով և անզգալ կերպով կը շարունակի գործել: Տւէք նորա ձեռք մի սանր, նա ժամերով կը սանրի իւր մաղերը: Տւէք մի տղամարդուն մի սիգար և լուցկիներ, նա կը վառի լուցկին, կը կպցնի իւր սիգարը ու կ'սկսի ծխել: Դրէք նրա ձեռի մէջ սապոն և ջրով լի մի սաման, կամ տւէք նրան մի գրիչ, կամ մի սանդուխտ, — նա կ'սկսի լացել, գրել կամ սանդուխտը պատին դէմ արած կ'սկսի բարձրանալ նորա վրայ:

Այսպիսով իւր Քարացման քնի մէջ ենթական կատարեալ կապիկ է դառնում: Նա մեքենայաբար կը կրկնի ձեր բոլոր շարժումները, որքան էլ անմիա լինեն նրանք: Եթէ դուք կանգնէք նրա առաջ, բարձրացնէք ձեր ձեռքերն ու ոտները, շարժէք նրանց դանազան ուղղութիւնով, կամ մի որ և է շարժում արէք գլխով ու ամբողջ մարմնով, կատարելապէս կը վեպի, ձեզ, կ'սկսի ֆենտէն կերպով շարժել իւր անդամ:

ները և, ինչպէս վերեր տեսանք, կը շարունակի այդ գործողութիւնը ժամերով, առանց դադարելու, բոլորովին մեքենաւարաւ:

Այս երևոյթը, որը մենք կ'ապրիկուծիւն կ'անւանենք, կարելի է նկատել և խօսակցութեան մէջ: Եթէ դուք նորա ականջին հարցնէք «Ինչպէս էք?»», նա, փոխանակ պատասխանելու, կը կրկնի, «Ինչպէս էք?»:

Արձանացման մէջ ենթական կորցրել է ինքնաշարժութեան ընդունակութիւնը, նորա ուղեղը քնած է, ինչպէս էր լեթարգիայի մէջ, բայց այդ նինջը աւելի թեթև է. նորա ուղեղը, եթէ կարելի է այսպէս ասել, աւելի դիւրագրգիռ է, քան թէ առաջիկայ դրութեան մէջ:

Լսողութիւնը, տեսողութիւնը նոյնպէս մասամբ պահպանւած են քարացման մէջ, ալն ինչ լեթարգիկը զուրկ է նրանցից:

Այս զգայարանքների գրգռումն անցնում է ուղեղը և տեղ է տալիս զանազան չուզմունքների:

Տեսողական չուզմունքներ. Զանազան պատկերների տեսքը չարուցանում են տարբեր չուզմունքների. Այսպէս եթէ դուք անցկացնէք կատալեպտիկի աչքի առաջով զարճալի տեսարաններ, օրինակ մի ծիծաղող երեսալի պատկեր, արձանացածի. դէմքի վրա կը նկատէք ցնծութեան նշույլներ, որոնք զնալով կամաց կամաց փոխւում են անսահման երջանկութեան, որը կ'արտայայտուի զարթ ծիծաղով:

Ընդհակառակը, եթէ պատկերի պարունակութիւնը տխուր է, նա կատալեպտիկի դէմքի վրայ կը չարուցանի սաստիկ տխրութիւն և վիշտ, որոնք կը պսակեն դառն հեկեկանքով:

Երբեմն չարժումները կարողանում են չարուցանել քարացածի ուղեղում համապատասխան չուզմունքների, որոնք կ'արտայայտուեն նրա դէմքի վրա: Օրինակ. եթէ ձեռի պտտներով դուք կը նմանեցնէք օձի սողալը, ենթակալի դէմքի վրայ սարսափ կը չարուցանէք, իսկ եթէ ձեր շարժումները թուշունի թուիչք են ձևացնում, նրա սարսափը ուրախութեան կը փոխուի: Այս շրջանումն էլ նկատւում է զոյնաւոր գնդերի երևույթը: Միևնոյն տեսակ չուզմունքների չարուցում են և լսողութեան միջոցով: Երաժշտական տխուր եղանակը կը տխրեցնի և կը լացացնի կատալեպտիկին, իսկ ուրախը—կը զարթացնի և առաջ կը մղի նրան (Մարսելիէզը):

Անդամների դրութիւնից առաջացած չուզմունքները: Ֆիզիոլոգիական մի օրէնք կալ, որի զօրութիւնով ուղեղի մէջ ծնած չուզմունքները համապատասխան արտայայտութիւններ են տալիս դէմքին և նպատակաւարմար շարժումներ անդամներին: Օրինակ, բարկացած մարդը սեղմում է բռունցքները և բարձրացնում է ձեռքերը, մինչդեռ. դէմքը բարկութեան արտայայտութիւն է ընդունում:

Այսպէս, ուրեմն, ուղեղի գործունէութեան, գծագրութիւնների խաղի և անդամների դիրքի ու շարժումների մէջ մի որոշեալ կապ կալ:

Բնականաբար կիրքը (ուրախութիւն, բարկութիւն, աղօթք) ծնում է նախ ուղեղի մէջ, իսկ գէմքի և անդամների վրայ նկատած փոփոխութիւնները միայն երկրորդական երևութներ են և չարում են չնայ: Այս մի կենտրոն ախոջս երևութ է:

Պրոֆ. Շարկօն ցոյց տւեց, որ քարացման մէջ մենք կարող ենք հակառակն անել: Այսպէս, եթէ արձանացածի ձեռքերը բարձրացնենք և բռնեցքները սեղմենք, նրա աչքերը և ամբողջ գէմքը բարկութիւն կ'արտալուծեն: Եթէ նրա մատները չրթունքներին դնենք համբուրի ձեով, նրա գէմքը քնքշութիւն ու սէր ցոյց կը տալ և կամաց կամաց ձեռը կը հեռանայ չրթունքներից ու կը սկսի օղակն անվերջանալի համբուրների ուղարկել անչափ սիրահարին: Այս օրինակներից երևում է, որ ձեռքերի նպատակադրմամբ շարժումները չարուցում են ուղեղում համապատասխան չուղմունքներ, որոնք և պատշաճաւոր կերպով փոփոխում են գէմքի գծագրութիւնները:

Այս մի կենտրոն աճիգ երևութ է, որը կարելի է նկատել միայն հիպնոսի մէջ:

Եզրափակելով քարացման մէջ նկատւած երևութների տեսութիւնը, պէտք է ասենք, Պօլ ժանէի խօսքերով.

«Եթարդիկը կատարեալ դիակ է. նրա բանականութիւնը, ինչպէս և նրա զգացողութիւնը և զգալարանքների գործունէութիւնը ոչնչացած են: Կատալեպտիկը մի աւտոմատ է: Նրա բանականութիւնը խաւարած է, բայց զգացողութիւնները գեռ ալնքան կենդանի են, անդամները ալնքան ազատ, որ նա կարող է տեսնել, լսել և մեքենայաբար մի որոշեալ թւով բնածին, չը խորհած շարժումներ անել, նմանելով մի մեքենայի, որը կը դադարի բանելուց միայն ալն ժամանակ, երբ նրա զսպանակները կը փչանան»:

(Կը շարունակւի)

*
* *

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈԻՄԱՆԵԱՆՅԻ

Անհնազանդ արտասուքս,
Կամ հառաչանք մի թեթև,
Եթէ յանկարծ յայտնեն վիշտս
Ակամայից քո առջև,

Դու մի կարծիր թէ քեզանից
Կարեկցու թիւն եմ խնդրում,
Ոչ և իզուր մի հարցնիր ինձ
Թէ ինչ ցաւ կայ իմ սրտում:

Քո խօսքերն իմ տխրութեանը
Չեն լինելու մխիթար,
Եւ իմ սրտի գաղտնարանը
Միշտ փակւած է քեզ համար:

Հ Ե Ղ Ի Ն Է

Վ Է Պ

Տ.ԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Մարունակութիւն և վերջ ¹⁾)

XXVI

Ասունին շտապեց հաղորդել Հեղինէին Ամիրանովի Թ-ն գնալը և նորա խոստումը՝ այլ ևս չ'անհանգստացնել Հեղինէին սպառնալիքներով: Հեղինէն սկզբում կասկածով վերաբերեց այդ խոստմունքին, բայց յետոյ կարծես հանգստացաւ ու առաջւան եռանդով սկսեց պարապել իւր դասերով:

Մի օր դասից նա վերադարձաւ սաստիկ գլխացաւով ու գնաց զբոսնելու մաքուր օդ ծծելու համար: Հով օր էր, նա բարձրացաւ սարը և այնտեղից երկար ժամանակ դիտում էր Գ-կի շրջակայքը:

—Ախ, Գէորգ, մոռածեց նա, ուր որ գնում եմ, ինչ որ անում եմ, դու մոքիցս սկի չես հեռանում: Դու էլ ինձ սիրի՛ր այդպիսի սիրով և ամբողջ աշխարհը աւելի դուրեկան կը թւի ինձ:

Հեղինէի ուշ ու միտքը զբաղւեց Սահառունով, նա վերացաւ

¹⁾ Տե՛ս «Մուրճ»- 1891 № 1, 2, 4, 5, 7—8, 9, 10, և 11:

երևակայութեամբ և զգաց, որ մի պայծառ ճառագայթ լուսաւորեց իւր հոգին:

Մտքամուր առաջ զնստով նա չը նկատեց, որ մութն ընկնում է: Վերջապէս շատ ման գալուց յոգնելով նա նստեց հանգստանալու ու քաղցր քնեց կէս ժամի շափ: Զարթնելով նա սկզբում չէր կարողանում հասկանալ թէ ինչ է պատահել իրան և ուր է ընկել ինքը, իսկ երբ որ բոլորովին սթափւեց, տեսաւ որ շատ է հեռացել տանից և վախենալով, որ գիշերը վրայ հասնի, համարեա վազէվազ իջաւ սարից:

Մտնելով տանը նա նկատեց, որ ինչ որ մի մարդ իւր յեռեկիցը ընկած գալիս է: Նա մտածեց, որ այդ սովորական լիրբ կաւալերներից մէկը կը լինի, և առանց յետ նայելու արագացրեց քայլերը: Բայց որքան պէտք է զարմանար նա, երբ որ իւր բնակարանի զանգը խփելիս երես առ երես պատահեց Տրունիցիուն:

Տրունիցիին նոր, մի քանի ժամ առաջ էր եկել Պետտիգորսկից, ուր նա ուզում էր անց կացնել ամառւայ վերջը մասամբ բժշկւելու, մասամբ էլ քէֆ անելու համար: Մի շաբաթ աջնտեղ մնալուց ու աջնտեղի կեանքից ձանձրանալուց յետոյ, նա իւր մի Թ-սեցի բարեկամից իմանալով, որ Հեղինէն Գ-կումն է, առանց երկար ու բարակ մտածելու վճռել էր զնալ այդ քաղաքը և փորձել բախտը, աշխատելով դիտահան անել այդ անօգնական կնոջը, որ վաղուց գրաւել էր նորա ուշադրութիւնը:

—Նլինա Պաւլովնա, դ՞ուք էք, աչքերիս չեմ հաւատում, ի՞նչ բախտաւորութիւն, ասաց Տրունիցիին ժպտալով իւր սովորական լիրբ ու խորամանկ ժպտով: Յոյս ունիմ, թոյլ կը տաք ինձ զւարճանալ ձեզ հետ մի բաժակ թէյ խմելով:

Հեղինէի ուշքը դեռ գլուխը չէր եկել, որ նա, առանց հրաւերի սպասելու, նորա յետեկցը չմտաւ սենեակը:

—Համեցէք, մեքենայաբար արտասանեց Հեղինէն աթոռ առաջարկելով նրան:

Նա դուրս չ'արեց Տրունիցիուն ոչ այնքան քաղաքավարութիւնից, որքան վախենալով նորա բամբասանքներից:

—Խաչը, չեմ հասկանում, Ազովի Անդրէիչ, նկատելի ահաճութեամբ ասաց նա, եթէ դուք ուզում էիք տեսնել ինձ, իբրեւ ձեր

Հին ծանօթի, ինչն էր ստիպում ձեզ ծածուկ գալ իմ յետևից։

—Վախենում էի չ'ընդունէք, սիրելի Ելենա Պաւլովնա։ Ներեցէք, ի սէր Աստուծոյ, եթէ ես իմ վարմունքով վախեցրի ձեզ։ Ինչ զւարճութիւն կարող է համեմատել այն երջանկութեան հետ, որ պատճառում է ձեր ներկայութիւնը։

Հեղինէն ծաղրական հայեացքով նայեց նորա վրայ։

—Ես ձեզ, Ալուիս Անդրէիչ, շատ լաւ ու շատ վազուց եմ ճանաչում, այնպէս որ չեմ կարող նշանակութիւն տալ ձեր այդ խօսքերին։

—Ինչու էք ինձ այդպէս պատժում, յափշտակած ընդհատեց նորա խօսքը Տրուսիցիին ու աթոռը մօտեցնելով համարեա կպցրեց Հեղինէի ծնկին։

Նա խեղճն յետ քաշեց։

—Ախ, դուք չը գիտէք, Ելենա Պաւլովնա, թէ որքան ժամանակ է ձեզ սիրում եմ և որքան ջերմ սիրով։

—Լռեցէք, խնդրեմ, ապա թէ ոչ ինձ կը ստիպէք մենակ թողնել ձեզ այստեղ, անհամբերութեամբ կորեց նորա խօսքը Հեղինէն ու վերկացաւ տեղիցը։

Տրուսիցիու աչքերը աւելի ու աւելի կրքոտ արտայայտութիւն էին ատանում։ Հեղինէն այդ նկատում էր, տանջւում էր շարագուշակ նախազգացմունքից, վախիցը քիչ էր մնում իրան կորցնէր ու ոչինչ չէր կարողանում ասել, —լեզուն կարծես պապանձւել էր։

Բարեբախտաբար այդ ժամանակ ներս մտաւ զայեակը սամովարը ձեռքին, և նորա յետևից ամենօրուհին՝ քաղաքի մէջ պտտող ասէկօսէների անսպառ պաշարով։

Տրուսիցիու դէմքը մի քիչ խոժոռւեց։ Նա մի քանի հաճոյախօսութիւններ ասաց ու գնաց։

Կրանից յետոյ մի քանի օր նա շարունակ զալիս էր, բայց Հեղինէն չէր ընդունում նորան։

Տրուսիցիին տեսաւ, որ Հեղինէն յօժարակամ իւր ճանկը չի ընկնիլ, բայց, յոյսը դնելով նորա անօգնական դրութեան վրայ, վճռեց համարձակ դիմել իւր նպատակին ուրիշ միջոցներով։ Նախապէս քաղցր խօսքերով ու հազար ու մի ընծաներով տանտիրուհու ու դայեակի սիրտը շահելուց յետոյ, նա մի օր սրան ուղարկեց խանութ իւր համար ծխախոտ առնելու, իսկ ինքը սկսեց քաշ գալ

նրանց տան շորս կողմը: Յարմար ըռպէ գտնելով, նա ծածուկ ներս մտաւ խոշանոցի դռնից ու գնաց Հեղինէի մօտ:

Հեղինէն այդ ժամանակ հերարձակ ու կիսամերկ նստած էր իւր սենեակում: Զարմանքից դեռ նորա ուշքը գլուխը չէր եկել, որ Տրունիցկին ընկաւ նորա ոտները ու տարփանքով արտասանեց.

— Որքան զեղեցիկ էք, ասուածանման Ելենա Պաւլովնա:

Հեղինէն սաստիկ զայրացած վեր թռաւ տեղիցը ու շտապով մի շալ գցեց վրան:

— Դուրս գնացէք այս ըռպէին: Ինչո՞ւ էք եկել այստեղ:

— Ձեր սէրն է ինձ այստեղ բերել: Ինչ ուզում էք հրամայեցէք՝ ես կը կատարեմ, ամեն բան կը զոհեմ ձեզ համար, բայց մի մերժէք ինձ:

— Դո՛ւրս, դո՛ւրս այստեղից, լսո՞ւմ էք, պարոն, բարկութիւնից կատաղած ընդհատեց նորան Հեղինէն ու ձեռքով ցոյց տւեց դուռը:

— Նանի, ուր ես, որտեղ ես, շուտ արա արիւ: Պելագէյա Աֆանասիւնա, Պելագէյա Աֆանասիւնա: Բայց ոչ ոք պատասխան չը տւեց նրան: Պարզ էր, որ դայեակը տանը չէր:

Հեղինէն ձայնը հետզհետէ բարձրացնում էր, նորա աչքերից կրակ էր թափում, երեսը կարմրատակել էր, իսկ սև մետաքսանման մազերը գոգտրիկ կերպով փաթաթւել պատել էին նորա սպիտակ վիզը: Այդ դրութեամբ նա այնքան զրաւիչ էր երևում Տրունիցկուն, որին նա այդ ըռպէին մարմնացած կրակ ու զեղեցկութիւն էր թւում, որ նա երգեց իւր մտքում անպատճառ հրապուրել նրան և, որ զլխաւորն է, իրաւունք ձեռք բերել պարծենալու ընկերների առաջ իւր յաղթութեամբ:

Նա մեկնեց ձեռները դէպի Հեղինէն և աղերսալից ձայնով ասաց.

— Դուք երևի չէք մոռացել իմ ու Կատեա Սահաւունուսիւհրահարութիւնը. բայց այն ինչ էր որ, — ես միայն խաղում էի նորա հետ, իսկ ձեզ ես սիրում էի, երբ որ դուք դեռ օրիորդ էիք, այն ժամանակն էլ դուք իմ իգէալն էիք...

— Հէրիք է, ասում են ձեզ, կորէք այստեղից, զուր է ձեր ճարտարախօսութիւնը, անհամբերութեամբ ու սաստիկ արհամարհանք արտայայտող դէմքով ընդհատեց նրան Հեղինէն:

Տեսնելով, որ իւր խօսքերը զուր են անցնում, նա վազեց դէպի

գուռը և ուզում էր դուրս փախչել, բայց Տրուհիցկին մի ականթարթում հասաւ նորա յետևից ու դրկելով նորա մէջքը, վաժաշոտութեամբ սեղմեց նրան իւր կրծքին:

Հեղինէն, ինչքան ոյժումը կար, աշխատում էր ազատուել նորա ձեռքից, բայց անօգուտ: Այդ տեսնելով, նա սկսեց օգնութեան կանչել, գոռալով որքան ոյժը զօրում էր:

Տանտիրուհին լսելով այդ գոռոցը, վախուորած վազեց դէպի Հեղինէի բնակարանը: Տրուհիցկին ոտնաձայն լսելով մի ականթարթում դուրս փախաւ սենեակից:

—Տէր Ասուած, որքան վախեցայ, ասաց սպրտնած տանտիրուհին ու երեսն խաչ հանեց: Ես կարծեցի թէ տունը կրակ է ընկել կամ մարդ են սպանում այստեղ, բանից դուրս է գալիս, որ մի սիրուն տղամարդ է հիւր եկել: Միթէ կարելի է այդպէս գոռալ: Այդպիսի մի գեղեցիկ ու օրինաւոր պարոն միթէ կարող է այդքան սաստիկ վախեցնել մարդու:

Թողէք, թէ Ասուած կը սիրէք, ասաց մեռելի գոյն ստացած Հեղինէն և ձեռքերը խաչելով աչքերը յառեց տանտիրուհու վրայ: Նա մտքումը մահ էր խնդրում Աստծուց, որ գոնէ մահը ազատէր իրան այդպիսի վիրաւորանքներից:

Տանտիրուհին, տեսնելով որ ոչինչով չի կարողանում հանգրստացնել իւր տնւորի սիրտը, շտարած ձեռքերն իրար խփեց ու գնաց փնտռելու դայեակին:

Հեղինէն ծանր շունչ քաշելով ու ամբողջ մարմնի մէջ սարսուռ զգալով՝ ուժասպառ ընկաւ մահճակալի վրայ:

Մի քանի րոպէից յետոյ լսեցին աղէկտուր հեծեծանք ու հառաչանք: Այդ ժամանակ հեքուսպառաւ վաղէվազ ներս մտաւ դայեակը, որ նոր էր վերադարձել խանութից մի արկղ ծխախոտ ձեռքին:

Պառաւը վախուորած մօտեցաւ մահճակալին ու սկսեց օգնել Հեղինէին:

Նուտով հիստերիկան անցաւ և Հեղինէն մի քիչ թեթեւութիւն զգաց ու մինչև անգամ քնեց, թէև շատ անհանգիստ քնով: Գիշերը նրա վրայ ջղալին տեսդ եկաւ:

Դայեակը ամբողջ գիշերը աչքերը չը խփեց: Խեղճը քնացել էր

շարած ու չէր հասկանում, թէ ինչ կարող էր պատահած լինել իւր բացակայութեան ժամանակ:

Ամեն անգամ երբ Հեղինէն ցնցւում էր քնած տեղը ու շուռէշուռ գալիս, նա խաշակնքում էր երեսը:

Հետեւեալ առաւօտը Հեղինէն, թէև հանգիստ էր երևում, բայց սաստիկ թուլութիւն էր զգում ամբողջ կազմածքում:

Չը նայելով դրան նա զնաց դասերին: Բայց այդ օրը նա չէր կարողանում կարգին պարապել և այդ պատճառով ժամանակից շուտ վերադարձաւ տուն տխուր մտածմունքների մէջ ընկած ու հազիւ հազ քաշ տալով ոտները: Կիսաճանապարհին յանկարծ նրա ականջովը դիպաւ Տրունիցիու առելի ձայնը. — նա ցնցեց ու զողաց:

— Ելե՛նա Պաւլովնա, ներեցէք. հաւատացէք, որ ես սրտանց զղջում եմ իմ արածիս վրայ: Աղաչում եմ մի զրկէք ինձ ձեզ ժամանակ առ ժամանակ այցելելու բախտաւորութիւնից. տեսէք թէ այն ժամանակ ինչպէս խոնարհ ծառայ կը լինեմ ես: Երգւում եմ, ոչ մի խօսքով, ոչ մի շարժումով չեմ վիրաւորիլ ձեր պատիւը:

— Հեռո՛ւ ինձանից, անամօթ, բարկացած գոռաց Հեղինէն:

Խայտառակութիւն դուրս չը գալու համար, Տրունիցիին լաւ համարեց հեռանալ:

— Ձէ, ես հեշտ ու հանգիստ ձեռք չեմ քաշիլ, մտածեց նա, պէտք է ուրիշ միջոց գտնել: Ահ, գտայ, կ'ընկնես իմ թակարդը, ճանկիցս չես ազատուիլ, ասաց ինքն իրան Տրունիցիին, կանգ առնելով փողոցում:

Բայց զեռ մի քանի օր կը սպասեմ, զուգէ կակղի... չի՛ կակղի՝ ես իմ բանը կը տեսնեմ, չարախնդաց կերպով ժպտալով աւելցրեց նա:

Հեղինէն Տրունիցիու անակնկալ այցելութիւնից յետոյ նախազգուշութեան ամեն միջոց ձեռք էր առել նրա դէմ, դռներն ու պատուհանները պինդ կողպում էր և երբեք սենեակում մենակ չէր մնում:

— Հազիւ որ ինձնից ձեռք քաշեց այն անզգամը, մտածեց նա այդ դէպքից հինգ օր յետոյ, նստած երեխայի օրօրոցի մօտ, և համբուրելով նրան վեր կացաւ ու, դառնալով սենեակի անկիւնում կարկառանով պարապած դայեակին, ասաց.

— Գնա, Նանի ջան, քնիր, ամբողջ օրը ոտի վրայ ես:

—Դու էլ որ քնէիր, հոգիս, լաւ կ'անէիր, ասաց պառաւը ակնոցը դնելով պատեանի մէջ ու վեր կացաւ:

Շատ տաք գիշեր էր: Սենեակում սաստիկ տոթ էր: Հեղինէն բաց արեց պատուհանը ու նստելով գրասեղանի առաջ, զգրոցից հանեց Սահառունու Ասունուն գրած վերջին նամակը և սկսեց նորից կարդալ: Կարծես այդ նամակի ամեն մի տողը դիւթական աղդեցութիւն էր գործում նրա վրայ:—Նրա զէմքը հեազհետէ աւելի ու աւելի պայծառանում էր:

Նրկար այդպէս նստած մտածում էր նա իւր սիրելիի մասին: Յետոյ խնամքով դնելով նամակը զգրոցի մէջ, նա սկսեց նամակ դրել նրան:

Թ-սից հեռանալուց յետոյ այդ երկրորդ նամակն էր, որ նա գրում էր Սահառունուն:

Նա քիչ էր գրում նրան, վախենալով որ յանկարծ անգիտակցաբար աջնպիսի բան գրի, որից նա կարողանայ հասկանալ իւր այժմեան դրութիւնը:

Իսկ Տրունիցիին այդ ժամանակ թափառում էր նրա բնակարանի շուրջը: Շատ քաջ գալուց յետոյ նա վերջապէս սիրտ արեց, ոտների ծայրերի վրայ մօտեցաւ պատուհանին և սկսեց զմայլած նայել Հեղինէին: Կայտաւուն բոցը, երերուն շողքեր գցելով պատերին ու առաստաղին, աղօտ լոյսով լուսաւորում էր Հեղինէին և, չը նայելով աղքատիկ կահաւորութեանը, սենեակին հրապուրիչ տեսք էր տալիս:

Հեղինէն յանկարծ ճշաց շորի խըշխըշոց լսելով:

—Նլենա Պաւլովնա, մի խօսք միայն: Ինչո՞ւ էք վախենում, հօ չեմ կարող պատուհանի միջով թռչել ձեզ մօտ: Ներեցէք ինձ, մի մերժէք ինձ, աղաչում եմ:

—Կորէ՛ք: Մինչև երբ պէտք է հալածէք ինձ: Վերջապէս ես ստիպւած կը լինեմ խիստ միջոցներ ձեռք առնել ձեզնից ազատւելու համար, բարկացած գոռաց Հեղինէն, պատուհանը շրջակացնելով յետ դրեց ու վազէվազ գնաց միւս սենեակը:

—Ե, վճռեց. պէտք է նեղը գցել դրան. հէնց վաղանից կը սկսեմ տարածել ամեն տեղ որ նա փախել է մարդուց, կը բացատրեմ պատճառները ամենախալտառակ կերպով, տեսնենք էլի այս-

պէս անմատչելի կը մնայ թէ՞ կը կակղի,—սաստիկ բարկացած ասում էր ինքն իրան Տրունիցիին:

Հեղինէն չը գիտէր, թէ ինչ էր պատրաստում նրա համար Տրունիցիին և ոչ միայն չը գիտէր, այլ մինչև անգամ մտքովն էլ չէր անց կացնում և սաստիկ զարմացաւ, երբ որ մի քանի օրից յետոյ իւր աշակերտուհիներէց որի տունը որ գնաց դաս տալու, ոչ մի տեղ չ'ընդունեցին իրան: Մէկի տանը աղախինը դուրս եկաւ ասաց, որ տնեցիք գնացել են ուրիշ տեղ, միւսի տանը ասացին, թէ աշակերտուհին տանը չէ, իսկ երրորդի տանը ինքը տանտիկինը դուրս եկաւ ու սկսեց նրան նախատել:

—Ես զարմանում եմ, տիկին, որ դուք. ամբողջ աշխարհքի առաջ խաչատուակելուց յետոյ, համարձակում էք օրիորդների դաստիարակ դառնալ: Խնդրեմ, էլ իմ տունս չը գաք: Նրկու նոր դասի տեղ էի արել արդէն ձեզ համար. լաւ է, որ բարեբախտաբար դեռ ոչինչ չեմ ասել, թէ չէ ի՞նչ կ'ասէին երբ որ իմանային ձեր ով լինելը: Այժմ զիտենք թէ ինչ պտուղ էք:

Հեղինէն ուզում էր պատասխանել, բայց մինչև նորա բերան բաց անելը աշակերտուհու մայրը մի քանի բուբլի դրեց նորա ձեռքը ու դուռը պինդ շրջակացնելով կողպեց:

Հեղինէն մնաց ապշած, փողը շարտեց գետին դրան շեմքի մօտ ու հազիւ հազ քայլերը փոխելով մի կերպ հասաւ տուն:

Այդ ամբողջ օրը նա շշմածի պէս ման էր գալիս իւր սենեակում.—ու իմանում էր թէ ինչ անի, ոչ էլ կարողանում էր գլուխ հանել իւր աշակերտուհիների ծնողների տարօրինակ վարմունքից: Վերջապէս, ամեն տեսակ ենթադրութիւններ անելուց յետոյ, նա սկսեց գլխի ընկնել, որ այդ ստոր Տրունիցիու բաներն է. բայց այդ նրան հանգստացնել չէր կարող, նա գիտէր, որ ինչ էլ անէր չէր կարող իրան արդարացնել հասարակական կարծիքի առաջ և դարձեալ նորա սիրտը լցեց թշնամութեամբ ու ողորմելի թւաց նրան այն հասարակութիւնը, որ թոյլ չի տալիս մարդու ազնիւ ճանապարհով հաց վաստակել:

—Ձէ, անկարելի է, որ աշխարհս այդքան զգւելի լինի, հետեւալ առաւօտը աշխատում էր ինքն իրան համոզել Հեղինէին ու այդպէս մտածելով դուրս եկաւ տանից:

Միթէ մարդիկ բոլորն էլ այնքան չարահոգի են, որ թոյլ չեն տալ ինձ խօսել ու արդարացնել ինձ, շարունակում էր նա իւր խորհրդածութիւնները ճանապարհին:

Շուտով նա հասաւ իւր աշակերտուհիներից երկուսի տունը, ուր նա աւելի համակրութիւն էր վայելում քան միւս տներում: Աշակերտուհիները, երկու մատաղահաս օրիորդ, արտասուքը աչքնե-րին, վազեցին դէպի նա:

Նա գրկեց նրանց:

— Կատիւ չ, Ելիդ, չէ՞ք կարող ձեզ կարգին պահել, բարկացաւ նրանց վրայ նրանց մայրը ու չոր-չոր ասաց Հեղինէին:

— Ի՞նչ էք կամենում, տիկին:

— Ես կ'ուզէի իմանալ, ինչո՞ւ չէք կամենում, որ ես այսուհետեւ պա-րապեմ ձեր աղջիկների հետ: Կարծեմ գոհ էիք իմ դաստառութիւնից:

— Ի հարկէ, ի հարկէ: Մայրիկ, մենք ոչ ոքից չենք ուզում դաս առնել բացի Ելինա Պաւլովնայից, ընդհատեցին նորա խօսքը աշակերտուհիները լացակրկնած աչքերով:

— Ձեզ հարցնող չը կայ. դուք կարող էք հեռանալ այստեղից:

Այո, Ելինա Պաւլովնա, էս գոհ էի ձեր դաստառութիւնից, բայց դուք երևի զիտէք, որ բարոյականութիւնը ուսումից բարձր է, խստութեամբ ասաց նա Հեղինէին:

Ես զարմանում եմ ձեր համարձակութեանը: Պէտք է Տրուսից-կուց շնորհակալ լինենք. նա որ չը լինէր, ես չէի իմանալ, որ իմ աղջիկներիս դաստիարակութիւնը այնպիսի կնոջ ձեռքին է գտնւում, որ ոտնատակ է տւել բարոյականութեան ամենասուրբ կանոնները:

— Բարեհաճեցէք, խնդրեմ, լսել ինձ: Դուք ու ձեր Աստուծը, թող ես զրկեմ դասից, այդ ոչինչ, բայց ես չեմ ուզում որ դուք իմ մասին այդպիսի սխալ կարծիք ունենաք, ես կարող եմ ապա-ցուցանել, որ ես արդար եմ...

— Ոչ մի բանով չէք կարող արդարանալ, արհամարաբար ընդ-հատեց նորա խօսքը տանտիկինը:

Դեռ ասում են թէ ձեր հայուհիները սրբութեամբ են վերա-բերւում ընտանեկան կեանքին: Լա՛ւ սրբութիւն է, կեցցէք:

Դրան զանգը ուժով խփեցին: Մի քիչ յետոյ ներս մտաւ Տրու-սիցկին:

Հեղինէն զայրացած դիմեց նրան:

— Ես պահանջում եմ, որ, եթէ խղճմտանքի դռնէ մի նշոյշ մնացել է ձեր սրտում, խոստովանէք Մարիա Տիմոֆէէւնայի առաջ, որ ինձ անւանարկելիս դուք ղեկավարել էք միմիայն ստոր զրգուհիներով: Դուք աշխատում էք խայտառակել ինձ, որովհետեւ չը կարողացաք հասնել ձեր բաղձանքին, որովհետեւ ձեզ չը յաջողւեց հրապուրել ինձ:

— Տիկին, ստացէք ձեզ հասնելիք փողը և հեռացէք այստեղից: Ես չեմ կարող թող տալ, որ իմ տանս վիրաւորեն պատուաւոր մարդկանց:

— Պատուաւոր, արհամարհական ծիծաղով բացականչեց Հեղինէն: Զգուշացէք զրանից, հասած աղջիկներ ունէք:

Այդ ասելիս նա քիչ էր մնում խեղդէր ներքին յուզմունքից: Տրուհիցկին մի րոպէ զգաց, թէ որքան ստոր էր վարել ինքը: Նա ամաչեց իւր արածից և քիչ էր մնում ընկնէր թշուառ Հեղինէի ոտները ու թողութիւն լսնդրէր, բայց նա արդէն սենեակուհի չէր:

Դարձեալ պէտք է թափառեմ ես նզովւածի նման ու փախչեմ կարծեցեալ խայտառակութիւնս ծածկելու համար, մտածում էր Հեղինէն յուսահատ սրտով:

Գիշերը համարեա չը քնեց Հեղինէն: Առաւօտը լուսացաւ: Նորա ննջարանը լուսաւորեցին արեգակի ուրախ ճառագայթները, բայց նրանք իրանց հետ խաղաղութիւն ու մխիթարութիւն չը բերեցին այդ սենեակը:

Տխուր մտածմունքներ պաշարել էին Հեղինէի միտքը, ներկայ միացնակութիւնը ու ապագայի անորոշութիւնը ճնշում էին նորա ուղեղը, սիրտը լցւել էր, — նա լաց եղաւ դռն արտասուքներով: Դասերից, որոնք նորա ապրուստի միակ միջոցներն էին, զրկւեց, ի՞նչ պէտք էր անել, ի՞նչ պէտք է լինէր նորա ճարը: Նա շատ մտածեց ու վերջապէս վճռեց թարգմանութիւններով զբաղուել, — նա շատ լաւ գիտէր ֆրանսերէն ու գերմաներէն:

Նա իսկոյն գրեց Ասունուն, որ իրան մի քիչ փող ուղարկի պարտք և մի քանի այնպիսի ֆրանսերէն կամ գերմաներէն գրքեր, որ յարմար լինէին ուսերէն թարգմանելու համար:

Դժբախտաբար այդ ժամանակը Ասունին պաշտօնական գործով

հեռացել էր Պետտիգորսկից և այդ պատճառով փողը ուշացրեց: Հեղինէի դրութիւնը անտանելի դարձաւ, հացի փող անգամ՝ չունէր, իսկ տանտիրուհին սպառնում էր դուրս անել տանից, եթէ վարձը իսկոյն չը տայ: Ճար չը կար, Հեղինէն ստիպւեց գիմել Ասունու եղբորը: Նա որքան ունէր տւեց: Խեղճը ինքն էլ հարուստ չէր և ահազին ընտանիքի տէր էր:

Տուն վերադառնալով Հեղինէն նկատեց, որ ինչ որ մի զինւորական կանգնած է իւր պատուհանների առաջ: Զինւորականը, կօշիկների խթանները շրխշրիկացնելով, համարձակ մօտեցաւ նրան:

Տիկին, ձեզ պէս ջահէլ ու զեղեցիկ կինը չը պէտք է այսպիսի հաւաքնում ապրի: Դուք կարող էք թաղուհու պէս ապրել շնորհիւ ձեր հրաշալի գեղեցկութեան, իսկ այժմ՝ դռնէդուռն էք ընկնում կոպէկանոց դասեր տալու համար: Միայն մի խօսք ասացէք ինձ և ես ամեն բան կ'անեմ ձեզ համար: Զուր մի ծածկէք ինձանից, ձեր տանտիրուհին ինձ ասաց, որ դուք զնացել էիք փող պարտք վերցնելու:

Հեղինէն զղւանքով նայեց զինւորականին:

— Դուք շատ յանդուգն էք, պարոն:

— Օհօ', շատ թունդն է եղել, սկի մօտ չի թողնում, փրնփրն-թացրեց ինքն իրան զինւորականը ու հեռացաւ:

Աստուած իմ, մտածեց Հեղինէն, աղքատ կանայք քո ստեղծածը չէ՞ն, միթէ մեր աղքատութիւնը իրաւունք է տալիս աղամարդկանց ամենալիրբ կերպով անպատեւ մեզ: Միթէ՞ իմ ճակատիս զրած է, որ ես կեանքումս հանգիստ չը պէտք է ունենամ:

Հեղինէն մտահոգ նստեց պատուհանի մօտ ու դարձեալ լաց եղաւ դառն արտասուքներով: Նա բոլորովին հիասթափւած էր մարդկանցից, ներկայ անօգնական զրութիւնը ճնշում էր նորա սիրտը, իսկ ապազան սարսափեցնում էր նորան իւր անորոշութեամբ: Նա աղատութիւն տւեց արտասուքներին, որ զոնէ այդպիսով թեթեւցնէր իւր վշտահար սիրտը: Յանկարծ դուռը ճըռւաց. նա ցնցւեց:

— Թէջ խմիր, հոգիս, քեզ համար այսօր լաւ խմորեղէն եմ. առել, որ թէջի հետ ուտես, վաղուց է այսպիսի խմորեղէն չէս կերել, ասաց դայեակը ներս մանելով թէջի բաժակն ու խմորեղէնը ձեռքին:

—Շնորհակալ եմ, Նանի, այսօր սիրտս բան ուտել չի ուզում։
Լսում ես, Քեորզը զարթնել է, գնա մօտը, ես տկար եմ։

—Այս րուպէիս կ'երթամ իմ աղանձիկիս մօտ։ Հա՛, քեզ նամակ
կայ։ Ներիր, խելքս բոլորովին կորցրել եմ, նամակը առաւօտն էն
բերել, դրել եմ զրպանս ու մոռացել։ Դու այնպէս տխուր ես, որ
երեսիդ նայելիս երկինքը գլխիս խաւարում է ու ամեն բան մոռա-
նում եմ։

Հեղինէն անհամբերութեամբ առաւ նորա ձեռքից նամակը,
բայց նորա յոյսը չ'արդարացաւ։ Նամակը Ամիրանովիցն էր ու շատ
երկար նամակ։ Դժւար է ասել, ի՞նչ էր նորա բովանդակութիւնը՝
զղջումն ու սէր, թէ՞ սպառնալիք։ Իսկապէս ոչ այն, այլ մի խառ-
նուրդ քնքշութեան ու խստութեան։ Նա շուտ—շուտ փոխում էր
գրածի տոնը, կարծես տատանւելով, չ'իմանալով թէ ինչը աւելի
սաստիկ կ'ազդէր Հեղինէի վրայ։

Նամակը կարդաց Հեղինէն ու դառը—դառը ծիծաղելով շարունց
դէն։ Դայեակը, որ երեսիան դրկին նստած էր նորա մօտ, շարած
նայեց նրան ու ինչ-որ շշնջալով խաշակնքեց երեսը։

XXVII

Սահառունին թէև Թ-ից գնալիս հաստատ համոզւած էր, որ
Հեղինէն իրան սիրում է, բայց հաւատացած լինելով, որ ապահար-
զան ստանալ նորա համար անհնար է, վճռել էր նորա հետ յարա-
բերութիւնը բոլորովին կտրել։ Նա ոչ միայն ինքը նամակագրու-
թիւն չ'ըսկեց, այլ և մինչև անգամ չէր պատասխանում Հեղինէի
գրած նամակներին։ Կարծես նա ուզում էր այդպիսով եթէ ոչ բոլո-
րովին մոռացնել տալ Հեղինէին իւր գոյութիւնը, գոնէ մի քիչ մեղ-
մացնել նորա սիրոյ զգացմունքը։ Փանր էր Սահառունու համար աշ-
խատել զրկել Հեղինէի սէրից, որ նորա կեանքի միակ մխիթարու-
թիւնն էր, բայց նա վճռել էր և հաստատակամութեամբ կատարում
էր իւր վճռածը։ Նա չ'ըզիտէր, որ իւր՝ Ատենուն գրած նամակ-
ները, որոնցից երևում էր, որ նորա ուշ ու միտքը զբաղւած է Հե-
ղինէով, որ նորա սիրտը այրւում է սէրից, բոլորը գլխէղլուխ կար-
դում էր Հեղինէն, և որ այդ նամակները աւելի էին մօտեցնում Հե-
ղինէին նրան։

Սկզբի ամիսները Սահառունին չէր կարողանում լաւ պարապել, — հայրենիքից հետը բերած դառն մտածմունքները զեռ շատ սաստիկ էին ճնշում նորա միտքը: Բայց այդ շատ երկար չը տևեց, նա քիչ քիչ սկսեց ազատուել այդ ճնշումից այնչափ, որ կարողանում էր կանոնաւոր զբաղուել դասախօսութիւններ լսելով, բանել գործարաններում, գործնականապէս ուսումնասիրել գիւղատնտեսութեան զանազան ճիւղերը: Այդ պարապմունքների մէջ էր անց կենում նորա ամբողջ ժամանակը: Նա յաճախ աշխատում էր ֆիզիկական աշխատանքի միջոցով ազատուել իրան ճնշող մտքերից:

Նա սաստիկ անհամբերութեամբ սպասում էր Ասունու նամակներին, որովհետև Ասունու նամակները միշտ նորա վրայ լաւ տրամադրութիւն էին բերում:

Ասունին ամեն կերպ աշխատում էր ծածկել Սահառունուց Հեղինէի ինչ զրութեան մէջ լինելը, բայց վերջին նամակներում անգիտակցաբար այնպիսի խօսքեր էր թռցնում, որ տեղիք էին տալիս Սահառունուն կարծելու, թէ Հեղինէի կեանքում վճռական փոփոխութիւն է կատարուել: Այդ կասկածը աւելի ևս հաստատուեց նորա սրտում, Հեղինէից նամակ ստանալուց յետոյ: Նամակի խրախուսիչ տոնը պարզ ցոյց էր տալիս, որ նա սկսում է իրան ազատ զգալ ինչ որ մի ծանր զգացմունքի երկարատև ճնշումից: Այդ սաստիկ ոգևորեց Սահառունուն և նրան այնպիսի եռանդ ու առջյգութիւն ներշնչեց, որ վաղուց չէր զգացել նա: Նա զարմանում էր նկատելով, որ ինչ որ մի կենդանարար զօրութիւն թափանցեց նորա հոգու խորքը:

Սահառունու Թ-ից Կուրս գալուց մօտ մի տարի էր անցել: Մի օր ընկերների հետ շատ մանգալուց յետոյ նա սաստիկ յոգնած մտաւ առաջին պառտահաճ ճաշարանը: Ծարաւը կոտրելուց յետոյ նա վերցրեց մի լրագիր ու սկսեց կարդալ, բայց շուտ-շուտ դարձնում էր սեղանի միւս ծայրին նստած երիտասարդի վրայ: Այդ երիտասարդը վերջապէս այն աստիճանի գրաւեց նորա ուշքը, որ նա այլ ևս չը կարողացաւ շարունակել լրագիր կարդալը:

Անծանօթ երիտասարդի երեսահարքի հարաւային տիպը, դէմքի թուխ գոյնը, սև զանգուր մազերը և օտարազգի արտասանութիւնը պարզ ցոյց էին տալիս, որ նա այնտեղացի չէր: Բայց ահա նա սկսեց իւր զրացու հետ խօսել հայերէն: Սահառունին ցնցւեց լսելով իւր

մայրենի լեզուի հնչիւնները: Նա աչքերը յառեց իւր հայրենակցի վրայ և կարծես սկսեց աշխատել ինչ որ մի բան մտաբերել: Նա շատ իջառեց յիշողութեանը, որ միտը բերէր թէ որտեղ պէտք է տեսած լինէր այդ երիտասարդին, բայց ոչինչ չեկաւ միտքը. վերջապէս նա յիշեց որ ինքը այդ երիտասարդին իրան չէր տեսել, այլ նորա պատկերը՝ Հեղինէի ալբոմում: Բացի այդ՝ Հեղինէն էլ շատ բան էր պատմել նորա մասին ու նկարագրել էր կերպարանքը:

— Տես թէ հանգամանքների բերմամբ որտեղ եմ պատահում նորա մօրաքրոջ տղային, մտածեց ուրախացած Սահառունին ու մօտենալով նրան՝ սկսեց հետը հացերէն խօսել:

Մայրենի լեզուն, հայրենակիցը, մի խօսքով ամեն բան որ կապ ունի հայրենիքի հետ, մարդուս աւելի քաղցր են թւում օտարութեան մէջ: Շատ հասկանալի է, որ Սահառունին ու Վրթանէսեանը մի քանի ժամում բոլորովին մոտեմացան իրար հետ, մանաւանդ որ նրանց սրտերը միացնում էր Հեղինէի յիշատակը ու բարեկամութիւնը:

Վրթանէսեանը տեսնելով Սահառունու խօսքերից, որ նա իւր կեանքից շատ բան գիտէ, ուրախացաւ և ասաց նրան, որ զարմանում է, թէ որտեղից կարող էր նա իմանալ այդ բոլորը:

— Տիկին Հեղինէն շատ յաճախ էր յիշում ձեզ իւր ծանօթների շրջանում, այնպէս որ նորա բոլոր ծանօթները ճանաչում են ձեզ, պատասխանեց Սահառունին: Ձեր մօրաքրոջ աղջիկը ձեզ վերաբերւում է ամենաանկեղծ երաստադիտութեամբ, իրան ձեզ սաստիկ երաստապարտ համարելով, որովհետեւ, ինչպէս ասում է, դուք էք նորան տղիտութեան խաւարից հանել, դուք էք բաց արել առաջին անգամ նորա աչքերը:

Վրթանէսեանը մի քիչ կարմրեց ու ձեռքով շփեց իւր խիտ մազերը: Հեղինէի քաղցր յիշատակի հետ էին կապւած նորա պատանեկութեան ամենաերջանիկ օրերը. Հեղինէի համար էր բարախել առաջին անգամ նորա սիրտը:

— Հեղինէն սաստիկ սխալւում է, այդքան մեծ նշանակութիւն տալով իմ ազդեցութեանս, ասաց նա մի քիչ լուռ կենալուց յետոյ: Նա շատ համեստ է և այդ պատճառով ինքը չէր զգում, թէ որքան հեշտութեամբ ազատւում էր իւր շուրջը տիրող նախապաշարմունքներից: Կարծես մի տեսակ յայտնութիւն լուսաւորում էր նորա միտքը:

բաց էր անում նորա առաջ կեանքի դադարները, որ մարդիկ առհասարակ կարողանում են հասկանալ միայն երկար փորձառութիւնից յետոյ:

Սահառունին նկատելի հաճոյքով լսում էր երիտասարդի ոգևորւած խօսքերը:

— Բայց չը նայելով դրան, Հեղինէն դժբախտաբար չը կարողացաւ այնպիսի մարդ ընտրել իւր համար, որ իւր սրտովը լինէր, տխուր տխուր աւելացրեց Վրթանէսեանը:

— Միթէ դուք ճանաչում է՞ք Ամիրանովին, զարմացած հարցրեց Սահառունին:

— Ես ծանօթ էի նորա հետ Մոսկւայում շատ ջանքէլ ժամանակս և հէնց այն ժամանակ բնագլումսմբ հակակրութիւն էի զգում դէպի նա: Երբ որ իմացայ որ նա պսակւել է Հեղինէի վրայ, քիչ էր մնում զլսիս մազերը պոկէի: Ինչ արած, ուշ էր: Հեղինէն ինձնից ոչինչ չի ծածկում, նա միշտ անկեղծ է վարւել ինձ հետ. նորա գրած նամակներէիցը տեսնում եմ, որ նա վաղուց հիասթափւել է իւր մարդուց:

Նրանք երկար ու բարակ խօսում էին Հեղինէի մասին: Բաւական ուշ էր երբ որ նրանք բաժանւեցին իրարից: Սահառունին Վրթանէսեանցին մինչև տուն ճանապարհ դրեց ու ինքը սկսեց թափառել փողոցներում: Վաղուց էր, որ նա ինքն իրան այնքան լաւ չէր զգացել, որքան այդ գիշեր:

Հետեւեալ առաւօտ նա սովորականից վաղ վեր կացաւ և ուրախ տրամադրութեամբ դնաց գործարան բանելու: Այդ ժամանակ նա համարեա ամբողջ օրը անց էր կացնում գործարանում, օրուայ մէջ միայն մի քանի ժամով հեռանալով գործարանից դասախօսութիւններ լսելու համար:

Երեկոյեան նա ու Վրթանէսեանը դարձեալ պատահեցին իրար և մի քանի ժամ նստած խօսում էին ու դարեջուր խմում:

— Ի՞նչ էր եղել Կովկասից, Սահառունի. պատմեցէք՝ ի՞նչ փոփոխութիւններ են եղել:

— Իսկապէս ասած՝ ոչինչ, մի քիչ լուռ կենալուց յետոյ պատասխանեց Սահառունին: Ձեմ իմանում ուրիշներին ինչպէս է երեւացել, բայց ես հայրենիք վերադառնալուս օրից մինչև նորից այն-

տեղից հեռանալու օրը ոչ մի բանում փոփոխութիւն չը նկատեցիր քացի արտաքինից:

—Անկարելի՛ բան է: Միթէ՞ եւրոպական կրթութիւն ստացած երիտասարդները հայրենիք վերադառնալով չեն ազդում հասարակութեան վրայ:

Սահառունին ժպտաց ու սկսեց պատմել, թէ ի՞նչ պայմանների մէջ է ապրում Կովկասում հասարակութիւնը, ի՞նչ դեր է վիճակւած այնտեղ երիտասարդութեանը:

—Ոչ, ես ուրիշ յոյսեր եմ փայփայում այսքան տարի մնալով օտարութեան մէջ, բացականչեց Վրթանէսեանը մի քիչ կասկածոտ եղանակով: Մի քանի ամսից յետոյ ես, շատ հաւանական է, գնամ Կովկաս. կը տեսնեմ թէ որքան իրաւացի է ձեր կարծիքը մեր հայրենիքի մասին, աւելացրեց նա ու սկսեց մանրամասն հաղորդել Սահառունուն իւր ապագայ գործունէութեան ծրագիրը՝ տնտեսագիտական ասպարէզում:

Նա շատ ոգևորւած էր խօսում:

Սահառունին հետաքրքրութեամբ լուռ ականջ էր դնում: Նա սկզբում հիացած նայում էր Վրթանէսեանի դէմքին, որ վառվռում էր ոգևորութեան կրակով, լսում էր նորա յափշտակւած խօսքերը, որոնք բղխում էին կենդանի ձգտումներով ու թարմ ոյժերով հարուստ սրտից: Բայց երկար չը տևեց այդ հիացումը, նա ականջ չիշեց իւր երիտասարդական ծրագիրները, վարդազոյն յոյսերը, — կարծես Վրթանէսեանը չէր խօսողը, այլ ինքը՝ միայն թէ մի քանի տարով աւելի երիտասարդ ժամանակը. չիշեց Սահառունին ու նորա մի քիչ առաջ զմայլած դէմքը ծածկւեց տխրութեան սոււէրով. նա համակրութեամբ նայեց իւր թուխ աչքերով Վրթանէսեանի վրայ ու մտածմունքների մէջ ընկաւ:

Սահառունին չը գիտէր ինչ անէր, թողնէ՞ր որ Վրթանէսեանը մնայ այդ խաբուսիկ երազների աշխարհում, թէ՞ բաց անէր նորա առաջ անմխիթար իրականութիւնը, ջախջախէր նորա՝ տարիներով փայփայած քաղցր յնորքները: Նորա սիրտը չէր տալիս հիասթափեցնել ոգևորւած երիտասարդին, բայց նա վճռեց, որ աւելի օգտակար կը լինի եթէ Վրթանէսեանը առաջուց ծանօթանայ կեանքի այն պայմանների հետ, որ նրան սպասում էին Կովկասում:

—Ես չեմ ուզում ձեզ յանդիմանել, Վրթանէսեան, յուզած սկսեց խօսել Սահառունին, այն կասկածոտութեան համար, որով դուք վերաբերեցիք իմ խօսքերին. շատ բնական է, որ դուք չէք ուզում հաւատալ, թէ մեր հայրենիքը այդքան անմխիթար դրութեան մէջ է, բայց...

—Բայց ասացէք, խնդրեմ, տաքացած ընդհատեց նորա խօսքը Վրթանէսեանը, միթէ մարդ չի՞ կարող կրիտիկաբար վերաբերել այն հասարակութեանը, որի մէջ ապրում է, և հաստատ քայլերով դիմել դէպի իւր նպատակը:

—Շա՛տ երիտասարդներ են այդպիսի տրամադրութեամբ վերադարձել Կովկաս, բայց չեն կարողացել կուլել տգիտութեան մէջ թաղւած հասարակութեան դէմ. Հեշտ բան չէ տարիներով և ամեն օր կռիւ մղել հասարակութեան մեծամասնութեան դէմ, և զարմանալի չէ որ մեր երիտասարդները շատ շուտով սովորում են ամեն բանի վրայ նայել մեր հասարակութեան աչքով, արդարութեան, պատւի, պարտականութեան դադափարները համարել պայմանական, տեղին, ժամանակին ու հանդամանքներին նայելով փոփոխուող բան:

—Ձէ, անկարելի է որ այդպէս լինի, սաստիկ տաքացած առարկեց Վրթանէսեանը: Ինչքան էլ զօրեղ լինի մեծամասնութիւնը, չի կարող մեռցնել մարդուս եռանդը, եթէ մարդ զգում է, որ ինքը օգուտ է բերում հասարակութեանը: Հասարակական օգտի գիտակցութիւնը լուրջ կրթութիւն ստացած գործիչին այնպիսի հաստատականութիւն ու ոգևորութիւն կը ներշնչի, որ նորա համար սարսափելի չի կարող լինել ոչ մի կռիւ թէ կուզ ամբողջ աշխարհի դէմ:

—Այդ ամենը շատ լաւ բան է, Վրթանէսեան, թէօրիայում, բայց իրականութեան մէջ դժուար է մի բան անել առանց շրջապատողների օգնութեան, առանց համակրողների: Յաւում եմ, որ ստիպւած եմ ձեզ հիասթափեցնել, բայց պէտք է ասեմ, որ այն աշխարհահայեացքը, որ դուք կազմել էք այստեղ, շատ շուտ կը փոխէք երբ որ գնաք Կովկաս ու ապրէք մեր հասարակութեան մէջ, որի բոլոր կենսական շահերը նեղ են, սահմանափակ են, չնչին են: Ձը պէտք է մոռանաք, որ հայերը դեռ ապրում են նեղ ընտանեկան կեանքով, որ մեղնում դեռ չեն հասել այն գիտակցութեանը, թէ հասարակական շահերը պէտք է բարձր դասել մասնաւորներից:

Սահառունու խօսքերի համոզւած տոնը, ըստ երևոյթին, սկսեց աղղկել Վրթանէսեանի վրայ. նա սկսեց մտահոգ քայլել սենեակում:

Սահառունին կանգնած պատուհանի առաջ լուռ նայում էր դուրս: — Տեսէք, Վրթանէսեան, ինչ գեղեցիկ են լուսաւորւած սարերը: Զը գնա՞նք մի քիչ զբօսնելու. շատ հրաշալի գիշեր է:

— Ի՞նչ. չը լսեցի՞ ինչ ասացիք, մազերը թափ տալով մութա-
մօլոր հարցրեց Վրթանէսեանը:

— Ասում եմ՝ գնանք զբօսնելու: Սքանչելի լուսնեակ գիշեր է:

— Հիանալի միտք է: Բաց օդում մարդ աւելի լաւ է մտածում ու խօսում: — Զիշտ որ՝ ինչ գեղեցիկ են այսօր սարերը. կարծես մեր սարերը լինեն: Ախ, երբ կը լինի մի նորից տեսնեմ Կովկասը. այնտեղ անշուշտ այնքան վատ չէ, որքան դուք էք ասում, աւելցրեց Վրթանէսեանը ծիծաղելով իւր առողջ և ուրախ ծիծաղով և թէն անցնելով Սահառունու թեկին՝ դուրս եկաւ նորա հետ տանից:

Զիշտ որ՝ հրաշալի գիշեր էր: Սղի ախորժելի զովութիւնը աշխտեցութիւն բերեց Սահառունու ու Վրթանէսեանի վրայ: Նրանք կարծես թօթափեցին իրանց վրայից մի քիչ առաջ իրանց տանջող մտածմունքների տխուր տպաւորութիւնը և նորից սկսեցին ոգևորւած խօսել ու չիշել զանազան գէտքեր իրանց առաջին ջահէլութիւնից: Այլպէս տաք-տաք խօսելով նրանք աննկատելի կերպով հասան Սահառունու բնակարանին, որ գտնուում էր քաղաքի ծայրում: Վրթանէսեանը խօսոյն թեք ընկաւ բազմոցի վրայ ու մի հինգ րոպէից յետոյ քնեց խոր քնով:

Սահառունին մի գիրք վերցրեց ու գնաց պառկելու մահճակալի վրայ. ճրագը դրեց սեղանի վրայ ու այն է ուզում էր թեք ընկնել, որ՝ աչքովն ընկաւ սեղանի վրայի ծրարը: Նա հասցէին նայեց ու խօսոյն ճանաչեց Հեղինէի ձեռքը: Մի քանի անգամ կարդաց նա Հեղինէի քաղցր նամակը ու ամեն անգամ նոր-նոր ապացոյցներ էր գտնում, որ նա իրան առաջւայ պէս սիրում է:

— Բայց զարմանալի բան է. իւր մասին ոչինչ չի գրում, թէեւ շատ լաւ գիտի, որ ինձ սաստիկ հետաքրքրում է նորա կեանքի ամենաշնչին հանգամանքը: Զէ, երևում է՝ մի բան կայ. բայց ինչ կարող է լինել, աշխատում էր դուշակել Սահառունին ու հազար մի ենթադրութիւններ էր անում:

Նա նորից սկսեց կարգալ նամակը յուսալով նրանում պատասխան գտնել իւր տարակուսած մտքի հարցին:

—Անգին մտերիմ, որքան յոյսեր ես գնում ինձ վրայ, որքան մեծ ոյժ ես ենթադրում իմ մէջ, Երանի քո սրտովը լինէր: Ես կ'աշխատեմ արդարացնել քո յոյսերը ու արժանի լինել քո վսեմ սրտի սէրին, ասում էր ինքն իրան Սահառունին:

Նորից ծագեցին նորա մտքում առաջւայ հարցն ու կասկածը:

—Երևում է, որ նա չի ուզում ինձ յայտնել թէ ինչպէս է ինքը այժմ ապրում, չը նայելով որ ես միշտ հարցնում եմ նրանից զորա մասին ու խնդրում եմ, որ անպատճառ պատասխանի հարցերիս: Հօ նորա կեանքում փոփոխութիւն չի՞ կատարւել դէպի լաւը: Զէ', այն ժամանակ էլ ինչու պէտք է ծածկէր ինձանից: Զը լինի՞ թէ մի անբախտութիւն է պատահել նրան: Բայց այն ժամանակ ի՞նչպէս պէտք է բացատրել Ասունու նամակների մխիթարական տոնը, տարակուսած՝ մի ենթադրութիւնից միւսն էր անցնում Սահառունին:

Այդ հարցը շատ էր տանջում նրան:

XXVIII

Հեղինէն շատ բան քաշեց Տրունիցկու ձեռքից: Նրան այնքան էր թւում նիւթական անմխիթար դրութիւնը, որքան անգործութիւնն ու հասարակութեան արհամարհանքը: Նա զգում էր, որ օրէցօր աւելի ու աւելի թուլանում էր թէ հոգով, թէ մարմնով: Կեանքը կորցրել էր նորա աչքում իւր քաղցրութիւնը և միայն սիրուն երեխայի քաղցր թոթովանքն էր երբեմն-երբեմն փարատում նորա անզգայութիւնը և զարթեցնում նորա մէջ ապրելու և մինչև վերջին շունչը կուէլու ցանկութիւն:

—Պէ՛տք է, պէտք է ապրեմ, աչքիս լոյսը, ասում էր նա ջղաձգաբար սեղմելով նրան կրծքին, ես պէտք է քո խաթեր ապրեմ:

Այդպէս անցնում էին Հեղինէի օրերը: Նա անհամբերութեամբ սպասում էր Ասունու պատասխանին: Վերջապէս երկու շաբաթից յետոյ ստացաւ նրանից փող ու զրքեր և անմիջապէս սկսեց թարգմանել:

Մինչ այդ՝ իշխան Շակունին հիւսիսային Ռուսաստանից վերադարձաւ Պետրիգորսկ։ Նա դեռ ոչինչ չը գիտէր Հեղինէի ու Ամիրանովի խռովութեան մասին և երբ որ լսեց, այնպէս եղաւ, կարծես դանակ խրեցին սիրտը։ Եթէ նրան ասէին, որ երկու թուկից յետոյ իրան պէտք է կախն, նա այնպէս չէր յուզւիլ ինչպէս այժմ, երբ որ իմացաւ, որ իւր ամենասիրած քրոջ միակ աղջիկը խաչատաակել է ամբողջ աշխարհի տուայ։

Մի քանի օր Շակունու կատաղութիւնը չէր անցկենում. բայց վերջապէս նորա բարկութիւնը մի քիչ նստեց և նա վճռեց՝ ինչ էլ լինի՝ վերադարձնել Հեղինէին Ամիրանովի մօտ։ Անմիջապէսնա ճանապարհ ընկաւ դէպի Գ-կ՝ հաստատ հաւատացած, որ Հեղինէն չի համարձակւիլ նորա կամքին դէմ գնալ։

Հեղինէն սկի տեսած չը կար քեռուն այդպիս բարկութիւնից կատաղած, թէև նա շատ լաւ գիտէր, որ քեռին բարկացած ժամանակ չէր կարողանում տանել որ իւր դէմ խօսեն, այնու ամենայնիւ սխեց տրդարացնել իրան. բայց երբ որ տեսաւ, որ այդ աւելի է գրգռում՝ նորան, վճռեց լսիլ և դատաւարութեամբ նման անխօս կանգնած նորա առաջ՝ համբերութեամբ լսում էր նորա յանդիմանութիւնները։

Մի քանի օր մնաց իշխանը Հեղինէի մօտ և ամեն անգամ երբ Հեղինէն ուզում էր վարւել նորա հետ իբրև քեռու. հետ, նա մերժում էր նորա փաղաքշանքներն ու նորա քաղցր խօսքերին պատասխանում էր գոռալով։

— Ինչպէս կարող է համարձակւել մարդ արձակել այն, որ Ասուած է կռուել։

Այդ մի քանի օրում Շակունին համոզւեց, որ իւր աշխատանքը զուր է, որ ինքը չի կարող Հեղինէին հաշտեցնել Ամիրանովի հետ, և աւելի կատաղեց՝ գոռգոռում էր, ձեռքն ինչ որ ընկնում էր շարտում էր ու սաստիկ հայհոյում նոր սերունդի բռնած ուղղութիւնը։

Վերջապէս չորրորդ օրը նա զնաց, ասելով Հեղինէին, որ մինչև նա խելքը գլուխը չը հաւաքի ու չը հաշուի մարդու հետ, ինքը նորան իւր քրոջ աղջիկը չի համարիլ։

Մի կտիծ էլ աւելացաւ Հեղինէի օրովն. խեղճը սկի չէր կարծում, որ քեռին էլ իւր դէմ կը լինի։

Մի քանի օրից յետոյ նա մի քիչ հանգստացաւ ու սկսեց նորից թարգմանել: Այդ պարագմունքների ժամանակ նորան սիրտ տուողը նորա երեխան էր: Նա շուտ—շուտ աչքը գցում էր նորա վրայ, երկար նայում էր նորան զորովալից ու տխուր հայեացքով մինչև որ նորա դէմքի վրայ երևում էր այն երեխայական ուրախ ժպիտը, որ մարդուս վրդոված սրտին խաղաղութիւն ու անդորրութիւն է բերում: այդ ժպիտը սփռվում էր Հեղինէի այրած սիրտը:

Կարճ ժամանակում նա երկու գրքոյկ թարգմանեց և ուղարկեց Ասունուն և անմիջապէս սկսեց երրորդը թարգմանել, որ աւելի լուրջ բովանդակութիւն ունէր:

Հեղինէի նիւթական գրութիւնը շատ վատ էր. նա անհամբերութեամբ սպասում էր իւր թարգմանութիւնների վարձատրութեանը:

Ասունու եղբայրը գրել էր նրան, թէ ինչ անմխիթար վիճակի մէջ էր գտնւում Հեղինէն: Ասունուն այդ շատ էր անհանգստացնում: Նա գլուխը ջարդում էր մտածելով, թէ ինչ անի Հեղինէի գրութիւնը թեթեւացնելու համար, և ուրիշ ելք չէր գտնում: Բացի այն, որ նա գնաց Սահառունու մօտ: Բայց ի՞նչպէս յաջողեցնել այդ: Երբ որ Ասունին մտածում էր այդ միտքը իրագործելու մասին, հազար ու մի արգելքներ էին կանգնում նորա առաջը:

Մի օր Ասունին սաստիկ զբաղւած էր այդ հարցով ու ընկել էր խոր մտածմունքների մէջ: Յանկարծ դուռը ծեծեցին. ներս մտաւ նամակաբերը. ծրարի յայտարարութիւն (повестка) էր բերել:

Ասունին գնաց ստացաւ ծրարը.—Հեղինէի ուղարկած ձեռագիրներն էին:

—Լա՛ւ շուտ է թարգմանել երկու գրքոյկ,—զարմացաւ Ասունին թերթելով տետրակները:

Այդ գրքոյկներից մէկը չ'ընդունեցին տպելու, որովհետև մի քիչ առաջ արդէն ուրիշը թարգմանել—տպել էր:

—Զէ, Հեղինէն չի կարողանալ մրցել անթիւ թարգմանիչների հետ: մի բան տասը հոգի թարգմանում են, բացի այդ՝ նրանցից շատերը միանում թարգմանչական ընկերութիւններ են կազմում, մտածում էր Ասունին:

Պէտք է յայտնել իրան, որ շատ ցոյս չը դնի թարգմանութիւն-

ների վրայ: Բայց լա՛ւ, ի՞նչ անի խեղճը: Զէ՛, ինչո՞ւ հիասթափեցնեմ, թող յուսաց, այդ էլ մի բան է:

Ես նրան վարձատրութիւն կ'ուղարկեմ՝ նորա բոլոր թարգմանութիւնների համար, — վճռեց նա:

Ասունին առաջ ծիծաղում էր կանանց հարցի վրայ և այս առաջին անգամն էր, որ լուրջ կերպով մտածեց այդ հարցի մասին: Կանանց խնդիրը այդ րոպէին հանդիսացաւ նրան իւր վերին աստիճանի լուրջ նշանակութեամբ ու կենդանի օրինակով, և ոչ թէ այն մուսաժ ձևով, որովնա հանդէս է գալիս պարբերական թերթերի էջերում:

Այդ մտածմունքներից յետոյ Ասունին նստեց նա՛մակ գրեց Հեղինէին յայտնելով որ ուղարկում է նորա երկու թարգմանութիւնների համար ստացւած վարձատրութիւնը, մինչդեռ ոչ միայն մի թարգմանութեան համար ոչինչ չէր ստացել ու չէր էլ ստանալու, այլ և միւս ընդունւած թարգմանութեան վարձատրութիւնն դեռ չէր ստացել:

Այդ փողը ստանալով Հեղինէն տեղ իւր պարտքերից մի քանիսը ու աւելի եռանդով սկսեց պարապել թարգմանութեամբ: Ամսավերջին նա արդէն վերջացնելու վրայ էր երրորդ դրքի թարգմանութիւնը, որ յանկարծ իմացաւ մի յուսուցչից, որ իւր թարգմանած գիրքը արդէն տպւել է ուրիշի թարգմանութեամբ:

— Զո՛ւր կորան իմ աշխատանքը ու անքուն գիշերներս, մտածեց Հեղինէն ու սկսեց օխտուր-օխտուր թերթել իւր թարգմանութիւնը:

Այդ դեռ բաւական չէր, մի նոր դարդ էլ աւելացաւ. նստական պարապմունքից ու շատ գրելուց Հեղինէի աչքերը սկսեցին խառնել, մէջքն ու կուրծքը՝ շուտ-շուտ ցաւել: Այդ բոլորը, իհարկէ, չէին կարող չազդել Հեղինէի վրայ. նորա եռանդը սառեց, նա այլ ևս այնքան սիրով չէր պարապում թարգմանութեամբ և շատ յոյս չէր դնում թարգմանութիւնների վրայ: Բայց դորա հետ միասին նրան ոչ մի րոպէ հանգիստ չէր տալիս մի սարսափելի հարց՝ «Հապա ի՞նչ անեմ, ինչո՞վ պահեմ գլուխս»:

Նա ամեն տեղ դիմում էր՝ աշխատանք խնդրում, բայց կանանց համար յարմար գործ բացի կար ու ձևից ոչինչ չէր գտնում: Խոկ կար ու ձև դժբախտաբար նա չը գիտէր: Սրէցօր նա աւելի ու աւելի էր համոզւում, որ կանանց սովորական գանգատները, թէ՛ աշխա-

տանք չը կայ, թէ՛ հասարակութիւնը անարտութեամբ է վերաբերուում դէպի իրանց անօգնական դրութիւնը, լոկ խօսքեր չեն, այլ հազարաւոր նահատակութիւնների փաստերով հաստատուած ճշմարտութիւն:

—Ախ, Գէորգ ջան, մխիթարում էր երբեմն-երբեմն ինքն իրան Հեղինէն, եթէ քո սէրը չը լինէր, որ միշտ ինձ սիրտ է տալիս կեանքի դառն ու ծանր բոպէներում, եթէ մեր ապագայ բախտաւորութեան յոյսը չը լինէր, մի՞թէ կարող էի ես զիմանալ այն բոլոր տառապանքներին, որ չարաբաստիկ ճակատագիրը թափեց իմ զլխին այս մի տարւայ ընթացքում:

XXIX

Հեղինէի Թ-սից դուրս գալուց յետոյ մօտ մի տարի էր անցել: Զայրացած լինելով առհասարակ մարդկանց դէմ, որ նրանք այնքան անարգար կերպով վերաբերեցին իրան, նա փախչում էր հասարակութիւնից ու ամբողջ օրը տանը նստած լուռ ու մունջ պարապում էր թարգմանութեամբ՝ երբեմն-երբեմն միայն մէկ-երկու խօսք խօսելով պառաւ դայեակի հետ: Նորա առողջութիւնը նկատելի չափով քայքայւել էր և այդ պատճառով նա առաջւայ պէս հեշտ չէր կարողանում աշխատել:

Ծանր էր Հեղինէի վիճակը և դեռ շատ աւելի ծանր կը թւէր նրան իւր դրութիւնը, եթէ նորա վրայ մի տեսակ անզգայութիւն եկած չը լինէր, որի շնորհիւ նա մի քիչ աւելի սառնասրտութեամբ էր վերաբերուում իւր վիճակին:

Մարդիկ այնքան անտանելի էին դարձել նորա համար, նա այնքան սովորել էր միայնակութեան, որ մինչև անգամ վատ էր զգում իրան, երբ հազարից մի անգամ հիւր էր գալիս նորա մօտ Ասունու եղբայրը, չը նայելով որ Ասունին համարեա միակ մարդն էր Գ-կում, որի մօտ մէկ-մէկ դնում էր ինքը:

Մի օր իրիկնասպահին Ասունու եղբօր մօտից վերադառնալով տուն, Հեղինէն իւր պառաւ դայեակին լաց ու կոծի մէջ տեսաւ:

—Ի՞նչ է պատահել, նանի:

—Ախ, երանի գետինը պատուէր ու ինձ ներքև քաշէր: Ինչ

պատասխան պէտք է տամ քեզ: Ո՞ր ջուրն ընկնեմ, ո՞ր քարովը տամ գլուխս: Սե օր ծագեց ինձ համար: Ախ, սիրուն բալէս, ախ, աչքիս լոյսը խաւարէր ու ես էս օրը չը տեսնէի, լալիս էր պառաւը ու գլխին տալիս:

—Ի՞նչ է պատահել, ինչ քար է ընկել գլխիս, շուտ ասա, շուտ արա, Աստու սիրուն, մի տանջիլ, մի սպանիլ ինձ,—հարցրեց Հեղինէն սպրտնած և որոշ պատասխան չը ստանալով իրան գցեց միւս սենեակը ու սկսեց փնտռել երէկային:

—Ո՞րտեղ է Գէորգս, ի՞նչ է եղել. հօ Պէլագէյա Աֆանասիւնայի մօտ չի՞. չը լինի վայր է ընկել, վա՛յ իմ աչքիս լոյսը, վա՛յ իմ կեանք ու արևս,—բացականչում էր խեղճ մայրը ու, ջղաձգաբար բռնելով դայեակի երկու ձեռքից, աղաչում պաղատում էր, որ շուտ պատասխանի:

—Ախ, աղջիկ պարոնս, կորել է մեր աննման Գէորգը, տեսնես որ գրեացն է գիր արել խեղճին, հուքուր-հուքուր լալիս էր սպառաւը գլուխը դրած գետնին: Սամօվար պէտք է զնէի. տեսայ որ ածուխ չը կայ, Պէլագէյա Աֆանասիւնայի մօտ էլ չը կար, բանը թարսել էր. ասացի գնամ խանութ, կարելի է այնտեղ լինի: Գէորգին թողեցի Պէլագէյա Աֆանասիւնայի մօտ: Խանութ գնալս ու գալս մէկ եղաւ. վազէվազ տուն մտայ. ի՞նչ տեսնեմ՝ Գէորգս չը կայ. լեղիս ծաքեց, հարցնում եմ Պէլագէյա Աֆանասիւնայից, ասում է, թէ ֆայտօնով մի գլխից մինչև ոտ սև շորեր հագած կնիկ եկաւ, ասաց թէ ինքը երեխայի հօրաքոյրն է, լաց եղաւ, գուրգուրեց Գէորգին, քաղցրեղէն ուեց ու խնդրեց, որ թողնեմ տանի հետը մի քիչ ֆայտօնով ման ածի: Հէս է երեք ժամ է անց կացել այն ժամանակահանից, բայց Գէորգս չը կայ ու չը կայ: Պէլագէյա Աֆանասիւնայի պատմածից գլխի եմ ընկնում, որ այդ Եվիմիայի բաներն են:

Խեղճ մայրը առանց նորա ասելուն էլ հասկանում էր թէ բանն ինչու՞ն է: Նա յուսահատ՝ երկու ձեռքով բանեց գլուխը ու աղէկտուր հեծեծալով ընկաւ մահճակալի վրայ, յետոյ վեր թռաւ ու մեքենայաբար վազեց փողոցը:

Գժի նման փողոցէ փողոց էր վազում Հեղինէն կսկծահար սլրտով, շաղաժ աչքերով ու աանջանքից ալլանդակաժ դէմքով: Ցե-

տոյ կարծես ուշքի գալով, նա յանկարծ կանգ առաւ. երբեմն նա աչքերը յառում էր անցորդների վրայ, ուշի ուշով նայում էր նրանց դէմքին, կարծես ազաւում էր որ կարեկցեն իւր դարդին, երբեմն էլ՝ աչքերը չաած դիտում էր մօտովը յաւցող կառքերին գտնելու համար այն ֆայտոնը, որով փախցրել էին նորա աչքի լոյսը, նորա կեանքը: Խեղճը քիչ էր մնում ընկնէր ամեն մի անցորդի ոտները ու աղաչէր որ օգնեն իրան, ցոյց տան երեսայի տեղը:

Դայեակը Հեղինէի յետեից դուրս եկաւ տանից, բայց չը կարողանալով հասնել նորա յետեից, յետ էր ընկել ու աչքից կորցրել էր նորան: Խեղճ պառաւր տնքալով հազիւ հասաւ Ասունու եղբօր տունը ու պատմեց նրան իրանց գլխին եկածը:

Արդէն մութը բոլորովին կոխել էր գետինը: Դրուքը օտքը խաղաղել էր, գնացող-եկող համարեա չէր պատահում: Հեղինէն դեռ թափառում էր ամայի՝ փողոցներում:

— Ուր է իմ Գեորգս, տէք ինձ իմ հրեշտակս, շշնջում էին նորա կապուտած շրթունքները:

Հեղինէի երեսահարքը այնքան վախւորած տեսք ունէր, որ անցորդները նորան զփի տեղ էին ընդունում:

Տիկին Հեղինէ, յանկարծ լուեց նորա յետեի կողմից Ասունու եղբօր ծանօթ ձայնը:

Նա արագ շուռ եկաւ դէպի Ասունին ու յառեց նորա վրայ իւր ցնորաւ հայեացքը:

— Հազիւ հազ գտայ ձեզ:

— Հօր, գտա՞ք, ի՞նչ... շուտ արէք ասացէք ո՞րտեղ է:

Ասունին լուռ ու վախւորած նայում էր նրան:

— Խեղճ եկէք ինձ, Նիկոլայ Վասիլիչ, աղէկաւոր ձայնով բացականչեց Հեղինէն ու ուժասպառ ընկաւ գետին:

Ասունին նրան՝ համարեա ուշաթափ գրութեամբ՝ հասցրեց ասուն:

Գիշերը Հեղինէին սաստիկ տենդ բռնեց, նա սկսեց զառանցել, իսկ առաւօտեան բժիշկը յայտնեց, որ ակտուութիւնը չափազանց վտանգաւոր է:

Ասունին, սաստիկ վախեցած, հեռագրեց եղբօրը: Նա ստանալուն պէս իսկոյն գնաց Շախունու մօտ ու ցոյց աւեց հեռագիրը:

Իշխանի վրայ այդ լուրը սաստիկ ապաւորութիւն գործեց, նա

շմեց, դէմքը սաստիկ այլապէս ու մինչև անգամ չի բուխը ձեռիցը վայր ընկաւ:

—Միթէ դուք չէք ներիլ ձեր քրոջ աղջկանը, մինչև անգամ այժմ, երբ նա մերձիմահ հիւանդ է:

Նակունին չափազանց թուլացել էր վրդովմունքից: Նա մի րոպէ լուռ մնաց, յետոյ բռնեց Ասունու ձեռքը և սաստիկ յուզւած ասաց.

—Ոչ մի րոպէ չը պէտք է կորցնել. գնացէք կայարան, պատուիրեցէք իսկոյն ձիերը լծեն. գնում ենք Գ-կ: Տեսէք, ոչինչ չ'առէք կնոջս, այդ լուրը այնքան կը վրդովի նրան, որ կը հիւանդանայ ու ես չեմ կարողանալ այսօր ճանապարհ ընկնել: Նրան կ'ասեմ, որ պաշտօնական դործով եմ գնում:

Ասունին մնաս բարև ասաց ու դուրս եկաւ:

Նակունին իսկոյն հեռագրով իմաց տւեց Ամիրանովին բոլորը, միջնորդեց որ Ասունուն ծառայութիւնից մի շաբաթով արձակուրդ տան, և երկու ժամ չ'անցած նորա տարանտաքը արդէն սլանում էր դէպի Գ-կ:

Հետեւեալ օրը իշխանն ու Ասունին արդէն կանգնած էին հիւանդի գլխավերեւը: Հեղինէն չը ճանաչեց նրանց: Նրանք շարած ու վախով նայում էին իրար երես: Նրանք րոպէ առ րոպէ սպասում էին իրանց հրաւիրած բժշկին, որ պէտք է Պետաղորոսկից գարևոր, չը նայելով նրանց աղաչանքներին, չէր կարողացել նրանց հետ միասին գալ:

—Ալիքսանդր Վասիլիչ, դուք գնացէք այժմ ձեր եղբոր մօտ, հարկաւոր եղած տեղեկութիւնները իմացէք, իսկ ես կը մնամ այստեղ, կը նստեմ հիւանդի կողքին, շնչալով ասաց իշխանը Ասունուն ու նստեց Հեղինէի մահճակալի կողքին:

Դուրսը սաստիկ քամի էր, հնացած պատուհանները քամուց շրջադառնում ու զընդզընգում էին:

Իշխանը Հեղինէի հիւանդութեան մասին մտածմունքների մէջ խորասուզւած ու անհամբեր սպասելով բժշկին, մտքամոլոր ականջ էր դնում քամու ունեցին: Նա տխուր—տխուր նայում էր սենեակի փոքրիկ պատուհաններին, հնացած պատերին: ու առաստաղին, վառարանին ու կահ կարասիքին: Երևում էր, որ նրան շատ զարմաց-

նում էր Հեղինէի բնակարանի աղքատիկ տեսքն ու կահաւորութիւնը:

—Միթէ ես այնքան կորցրել էի ինձ բարկութիւնից առաջին անգամ այստեղ եկած ժամանակս, որ այս բաները չեմ նկատել, ինքն իրան նախատում էր Շակունին ու խղճահարում:

Նա յիշեց, որ ինքը մի քանի անգամ՝ ուղեցել էր Հեղինէին բերել տալ իւր տունը՝ Պատիզօրակ, բայց չէր արել, որովհետեւ կինը համոզել էր նրան, թէ Հեղինէն որքան նեղութիւն քաշի այնքան լաւ է, որովհետեւ այդպիսով աւելի շուտ խելքի կը գայ: Նա սաստիկ զղջում էր, որ ահանջ էր դրել կնոջ խօսքին ու թողել էր Հեղինէին անտէր, անօգնական դառն նեղութեան մէջ:

Մինչ իշխանը այդ մտածմունքներով էր զբաղւած, Ասունին իւր եղբօր հետ քաղաքը ոտնատակ էր տալիս ամեն խորշ ու անկիւն մտնելով ու տեղեկութիւն հաւաքելով Եփեմիայի ու կորած երեխայի մասին: Վերջ ի վերջոյ նրանց յաջողեց գտնել Եփեմիայի հետքը և նրանք, շատ չ'անցած, հասան նորա յետեւից երբ որ նա երեխան հետն առած տարանտառով թռչում էր դէպի Թ-ս:

Ալեքսանդր Ասունին այնպիսի սպառնալից եղանակով պատուիրեց Եփեմիային յետ դառնալ Գ.կ, որ նա չը կարողացաւ հակառակել ու վերադարձաւ:

Ինչ ասել կ'ուզի որ Եփեմիան կատաղել էր բարկութիւնից, բայց Ասունին հանգստացրեց նրան համոզելով, որ շատ չը վրովրութաց ու սպասի տեսնի թէ Ամիրանովը ինչ կը գրի:

—Նթէ որ ձեր եղբայրը գրի ու ձեզ պատուիրի, որ երեխային հետներդ առնէք տանէք, այն ժամանակ ճանապարհը առաջներդ բաց է, վեր առէք գնացէք. ոչ ոք հօրից աւելի իրաւունք չունի երեխայի վրայ, վերջացրեց խօսքը Ասունին:

Ամիրանովը լուր ստանալով, թէ Հեղինէն մերձիմահ հիւանդ է և թէ հիւանդութեան պատճառն եղել է Եփեմիայի՝ երեխային փախցնելը, այնքան սաստիկ վախեցաւ, որ առանց տանտանելու իսկոյն հեռագրեց.

«Երեխային վերադարձրէք մօրը, ես չեմ ուզում և ոչ մի ժամանակ չեմ ուղեցել անջատել նրանց իրարից: Թող իրան համար հանդիստ ապրի: Ինձ զուրկ մի թողնէք տեղեկութիւններից նորա առողջութեան մասին»:

Բժիշկները պատուիրել էին պահպանել հիւանդին խիստ տպաւորութիւններէ, այդ պատճառով Հեղինէին իսկոյն չը հաղորդեցին այդ ուրախալի լուրը, այլ սկսեցին կամաց-կամաց պտտրաստել նրան ալդ նորութիւնը լսելու:

Հեղինէի հիւանդանալու օրից մի շաբաթ էր անցել: Թէև նա դանդաղ էր լաւանում, բայց վտանգը ըստ եւեոյթին անցել էր:

Հեղինէի բախտին բախտ չէր հասնիլ, երբ որ նա նորից տեսաւ իւր գողացւած երեխային, երբ որ առաջին անգամը լսեց նորա ձայնը և դողողջուն ու թոյլ ձեռքով նորից սեղմեց նրան իւր կարօտած սրտին:

Շակունին շատ խանդադատեց այդ տեսարանը տեսնելով:

— Դէ, հանգստացիր, Հեղիկ, էլ ոչ ոք ձեռիցդ չի խլիլ քո Գէորգիկին, զգացւած ասաց իշխանը համբուրելով Հեղինէի ճակատը:

— Քեռի ջան, էլ չէ՞ք բարկանում ինձ վրայ, հազիւ լսելի ձայնով հարցրեց Հեղինէն:

— Հիւանդութիւնդ, Հեղիկ, ինձ հաշտեցրեց քեզ հետ: Փառք Աստուծու, վերջապէս լաւացար: Լա՛ւ վախացրեցիր ինձ հա՛, մեր աղջիկ:

Հեղինէն քաղցրութեամբ նայեց քեռուն: Իշխանը մատով խփեց նորա թշին ու գնաց միւս սենեակը՝ ծխելու:

Երկար նստած էր իշխանը չուբուխը ձեռքին՝ սաստիկ մտահոգ. վերջապէս վճռեց տեսնել Ասունու հետ ու տանից դուրս եկաւ: Երևում էր երբէք իւր կեանքում Շակունին առիթ չէր ունեցել մի որ և է բանի վրայ այնքան կենտրոնացած ու խորը մտածել որքան այդ առաւօտ, — մտածմունքների մէջ ընկղմւած նա աննկատելի կերպով հասաւ Ասունու եղբօր տունը:

— Ի՞նչ էք կարծում, Ալեքսանդր Վասիլիչ, ուղղակի սկսեց իշխանը՝ մտնելով Ալեքսանդրի սենեակը ու նստելով բազկաթոռի վրայ, չը հաշտեցնենք Հեղինէին ու Միքայէլին:

— Անկարելի բան է, իշխան, տիկինը նրան առանց զգանքի չի կարողանում մտաբերել:

— Մարդ իմանայ թէ ի՞նչիցն է ծագել այդ անհասկանալի ատելութիւնը: Առաջին անգամ որ այստեղ եկայ, մի քանի ամիս առաջ, Հեղինէն սկնարկեց էր անում ինչ որ մի սարսափելի դէպքի

վերաբերմամբ, բայց ես այն ժամանակ այնքան զայրացած էի, որ չէի ուզում սկի լսել էլ նորա ասածը:

Ստունին, աչքի առաջ ունենալով Հեղինէի օգուտը, վճռեց յայտնել իշխանին Ամիրանովի բոլոր արածները:

—Խնդրում եմ, իշխան, ամենևին ցոյց չը տաք Հեղինէին թէ մի բանից մի բան էլէ գիտէք այս բոլորից:

—Հը՛մ... Հը՛մ... լա՛ւ, լա՛ւ, փընթփընթացնում էր ինքն իրան իշխանը, սաստիկ ապշած Ստունու պատմածից:

Տես թէ բանն ինչու՞մն է եղել, բացականչեց նա բռունցքով խփելով սեղանին, որ այդպէս է՝ ես քրոջս աղջկանը մեղադրել չեմ կարող: Ձարմանալի բան է, այդ Միխայիլ Պետրովիչը ինձ միշտ մի տեսակ էր երևում. ես սկի չէի կարողանում նրան սիրել այնպէս ինչպէս մարդ սիրում է իւր մօտիկ ազգականներին:

—Ուրիշ ճար չը կայ, իշխան, պէտք է մի հնարք գտնել, ապահարզան ստանալ նրանց համար ու այդպիսով վերջ դնել տիկին Հեղինէի տանջանքներին:

—Ապահարզանի բանը շատ դժւար է, Ալեքսանդր Վասիլիչ, պէտք է մի ուրիշ ճար գտնել:

—Կամ թէ Միխայիլ Պետրովիչին համոզել, որ իրաւունք տայ կնոջը գնալ արտասահման. այնտեղ տիկին Հեղինէն կը հանգստանայ իւր քաշած նեղութիւններից յետոյ, աւելացրեց Ստունին:

—Այդ մէկը խելքիս նստում է, ասաց Շակունին: Բայց այդ հարցի մասին պէտք է լաւ մտածել: Իմ կարծիքով աւելի լաւ կը լինի ես ինքս երթամ Ք-ս ու այնտեղ աշխատեմ այդ բանի համար. դո՛ւք ինչ կարծիքի էք:

Ստունին բոլորովին համոզեց իշխանին, որ անհրաժեշտ է աշխատել ապահարզան ստանալ:

—Քրոջս աղջիկը շատ է պատմել ձեր բարութեան մասին. շատ շնորհակալ եմ ձեզանից, Ալեքսանդր Վասիլիչ, այն բոլոր նեղութիւնների համար, որ դուք քաշել էք նորա խաթեր, զգացած ասաց իշխանը միտս բարեւ անելիս, ու պինդ սեղմեց Ստունու ձեռքը:

Ստունին շատ ուրախացաւ, որ Շակունին գնալու էր Ք-ս: Նա գիտէր որ միմիայն իշխանի նման աղդեցիկ մարդու հովանաւորութեան շնորհիւ Հեղինէն կարող էր օգտուել իւր անտանելի դրու-

Թիւնից: Նա հէնց նոյն երեկոյ մնաս բարե արեց Հեղինէի հետ ու գնաց Պետտիգորսի:

Հէնց որ Հեղինէն այնքան լաւացաւ, որ կարող էր դուրս գալ տանից, քեռին նրան փոխադրեց ուրիշ, լաւ բնակարան ու զգւելով նրան խնդրեց, որ նա իրան ոչ մի բանում չը զրկի:

— Տես, լաւ պահիր քեզ ու երեսայիւ. զուր բաներից սիրող մի պղտորիլ. Թէ չէ որ ձեզ էլի մի բան պատահել է, ես էլ չեմ գիմանալ, շատ եմ ծերացել, դարդիցս կը հիւանդանամ:

Երկու օրից յետոյ իշխանը գնաց Թ-ս: Հեղինէն ճանապարհ գցեց նրան քաղցր յոյսերով լի սրտով: Բախտը սկսում էր ժպտալ Հեղինէին:

Ամիրանովը սաստիկ տոգոհ էր Եփեմիայից, որ նա այնքան խիստ միջոցների էր դիմել, և տոգոհ էր զլիաւորապէս այն պատճառով, որ այդ միջոցները շատ անախորժ հետեւանք էին ունեցել:

Հէնց որ քոյրը ճանապարհից եկաւ, Ամիրանովը զայրացած սկսեց նախատել նրան:

— Այդ ինչե՞ր ես արել, ով էր քեզ իրաւունք տւել այդպիսի բաներ անելու: Կլուխս տարար ամեն օր կրկնելով՝ «Թող ես իմ գիտեցածովը վարւեմ, խօսք եմ տալիս կնոջդ վերադարձնեմ»։ Ես էլ ախմախարած հաւատացի քեզ:

Ամիրանովը կծու հեղնութեամբ բարձրաձայն ծիծաղեց:

Ապրես, ա'պրես, լաւ վերադարձրեցիր. խեղճին մահւան դուռը հասցրեցիր. քիչ էր մնում մարդասպան դառնայինք: Ինձ էլ հէնց այդ էր պակաս: Այդ էր քո ուզածդ, հա՞: Շա՛տ շնորհակալ եմ, սիրելի քոյրիկս, շա՛տ շնորհակալ, լաւ քոյրութիւն արեցիր, ա'պրես:

Եփեմիան կծկեց, կուչ եկաւ, ոտները հազիւ հազ քաշ տալով հասաւ իւր սենեակը:

Չէ', բռունցքով պինդ խփելով սեղանին ասաց Ամիրանովը, այս էլ հերիք էր ինձ: Պէտք է բոլորովին ձեռք քաշել նորա հետ նորից միասին ապրելու յոյսից: Մի բան որ խռովել ինձնից հեռացել է, որ չը պէտք է լինէր. բաց լինելուց յետոյ՝ էլ նոր ինչ միտք ունի իմ հալածանքս:

Մի քիչ յոյս կար իշխան Նախունու վրայ, բայց այժմ նա էլ անցել է Հեղինէի կողմը: Ասենք շատ էլ աշխատեմ, շատ էլ հալածեմ, ի՛նչ արդիւնք կ'ունենայ իմ աշխատանքը, ո՛չինչ՝ բացի խաչստառակութիւնից:

Ամիրանովը օրէցօր աւելի ու աւելի էր համոզուում, որ չ'արժի գլուխ դնել կնոջ հետ: Քանի հեազհետէ նորա ու կնոջ մասին պտտող ասէկոսէները հանդարաւում էին, նորա սիրտն էլ հանգստանում էր: Նա վերջ ի վերջոյ դուրս եկաւ առաջւայ մեծ բնակարանից, աւելի փոքրը փորձեց, սկսեց ապրել ազատ մարդու նման ու բոլորովին տրւեց իւր պաշտօնական պարապմունքներին, որ վերջին ժամանակները մի քիչ աչքաթող էր արել:

Մի քիչ ժամանակից յետոյ նա մինչև անգամ սկսեց պտոյտ գալ մի դեղեցիկ ու հարուստ աջրի կնոջ չորս կողմը և այդպիսով սփոփել իւր վիշաը: Այրիի փոխադարձ համակրութիւնը աւելի էր օգնում նրան սովորել իւր վիճակին:

Եփեմիան ուրախանում էր տեսնելով այդ և ձեռքիցը եկած ամեն միջոց գործ էր դնում նրանց աւելի սերտ կերպով մոտեմացնելու համար:

XXX

Սահառունին, նստած իւր փոքրիկ ու չորրորդ չարկում զանեղ անեակում մոքի հետ էր ընկել: Նա մտածում էր անցեալի մասին, ապագային վերաբերեալ ծրագիրների մասին և Հեղինէի մասին:

— Նա սաստիկ փափագում է, որ ես հասնեմ իմ կեանքիս բոլոր նպատակներին և անհամբեր սրտով սպասում է իմ պարապմունքների վերջանալուն. բայց արդեօք ապագան կ'արդարացնի նորա յոյսերը, հարցնում էր ինքն իրան Սահառունին:

Այսպիսի մտածմունքներով էր պաշարւած նորա միտքը, որ ջանկարծ սանդուղների կողմից լսեց ինչ-որ մի օպերետային ուրախ եղանակու, մի բոպէ անցած, ալմուկ հանելով ներս վազեց սենեակը Վրթանէսեանը:

— Շնորհաւորիր ինձ, Գէորգ. դիտերտացիաս վերջացրեցի, շուտով կ'երթամ Դորպատ քննութիւն տալու, այնտեղից էլ Կովկաս:

—Շնորհաւորում եմ, շնորհաւորում եմ:

Վրթանէսեանը նորից սկսեց երգել ուրախ օպերետային եղանակը:

—Գնանք քէֆ անենք, Գէորգ. ուսումն աւարտելը տօնենք, փող էլ Ասուած հասցրել է. երէկ ստացայ: Մի քիչ կոնծենք, միտներս բերենք մեր Վախէթի գինին:

—Ձէ, չ'արժի տանից դուրս գալ, այստեղ էլ լաւ կարող ենք կոնծել: Այս րոպէիս կ'ուղարկեմ գինու:

Մի քանի րոպէից յետոյ նրանց առաջ սեղանի վրայ արդէն դրւած էին գինու շիշն ու զանազան ուտելիղէններ:

Նրանք խմեցին Վովկասի յառաջագիմութեան ու ծաղկման համար: Վրթանէսեանը ոգևորւած խօսում էր իւր ապագայ պարապմունքների մասին, իսկ Սահառունին լուռ լսում էր:

—Շուտով չորս ամիս կը լինի, Գէորգ, ինչ մենք ծանօթացել ենք և մինչև այսօր դու ո'րինչ չես պատմել քո անցեալից, յանկարծ ասաց Վրթանէսեանը:

Սահառունին մի քիչ շփոթւեց: Նա առհասարակ չէր սիրում իւր մասին խօսել, բայց այն աստիճան համակրութիւն էր զգում դէպի Վրթանէսեանը, որ չը կարողացաւ մերժել նորա խնդիրքը և սիրտը բաց արեց նորա առաջը, բացի ի հարկէ այն բոլորից, որ վերաբերում էր իւր ու Հեղինէի յարաբերութիւններին:

—Այս բոլորից յետոյ քիչ հասկանալի կը լինի, որ ես կամ պէտք է ապրեմ Թ-սում ու կուեմ ներկայ պայմանների դէմ, կամ թէ, աչքի առաջ ունենալով այդ կուէի ապարդիւնութիւնը, քաշեմ մի գիւղ ու զործունէութիւն կետրօնացնեմ սակաւաթիւ մարդկանց սահմանափակ շրջանում, ուր զոնէ ստիպւած չեմ լինիլ Դոն-Քիշոտի գեր կատարել:

—Վրթանէսեանը զարմացած նայում էր Սահառունուն:

—Ձեմ կարողանում հաւատալ, որ հասարակութեանը օգուտ բերել ցանկացող ու եռանդուն մարդը կամաւոր կերպով յանձն առնի վանականի կեանք վարել:

—Լաւ չը հասկացար ինձ, Վրթանէսեան: Ես ամենևին չեմ ուզում ձգնաւորի նման միայնակութեան մէջ անցկացնել կեանքս. ես ուզում եմ գիւղում ապրել ու աշխատել գիւղացիների հետ, թէև այդ էլ գուցէ քեզ միայնակեացի դրութիւն թւի:

—Երևի գործարանական արդիւնաբերութիւնն էլ տեղ է բռնում քո ծրագրած գործունէութեան մէջ:

—Ի հարկէ, ապագայի նկատմամբ իմ յոյսս գլխաւորապէս գործարանական արդիւնաբերութեան վրայ է: Առ այժմ՝ պէտք է աշխատել կարգի բերել իմ կալաճը: Արդէն երէկ ուղարկեցի այնտեղ զանազան կատարելագործւած զիւղատնտեսական գործիքներ: Իմ բախտիցս՝ փեսաս մեծ դրամատէր է և ինձ կ'օգնի:

Վրթանէսեանի աչքերից սլարդ երևում էր, որ այդ նրան զուր չէր գալիս: Սահառունին այդ նկատեց:

—Ի հարկէ, շարունակեց նա, հեշտ բան չէ կրթւած մարդկանց հասարակութիւնից հրաժարւելը, բայց ինչ արած որ նրանց շրջանում ես ինձ համապատասխան գործ չը կարողացայ գտնել: Բաւական էր ինչքան գրաւեցի քաղցր յոյսերով ու ճռճոյն խօսքերով, էլ միմիայն դրանով բաւականանալ չեմ կարող. երիտասարդութիւնս անց է կենում. պէտք է մի գործի կաշուել: Գիտեմ, կ'ասես թէ առանց կուլի ոչինչ անել չի կարելի, բայց մի մոռանալ, որ կուլը միայն այն ժամանակն է մարդուս աւելի եռանդ ու ոյժ տալիս, երբ որ մարդ տեսնում է որ իւր աշխատանքը զուր չի կորչում, իսկ երբ որ ոչինչ արդիւնք չի տեսնում, կուլը միայն զայրացնում է մարդուս թէ իւր դէմ և թէ ուրիշների դէմ:

—Ճիշդ է՝ մշտական ու սաստիկ զայրոյթը թունաւորում է մարդուս սիրտը, հազցնում է նորա մէջ կրակի վերջին կացձը, իսկ առանց այդ կրակի ինչի՞ է պէտք մարդս:

—Գուցէ և ես սխալւում եմ, Վրթանէսեան, գուցէ ես անպատրաստ էի կատարելու այն, ինչ որ սպասում է մեզից հասարակութիւնը: Ո՞վ գիտէ, գուցէ այժմ էլ, չը նայելով որ սաստիկ ցանկանում եմ գործով պարապել, կիսաճանապարհին կանգ առնեմ, բայց ի բոլոր սրտէ ցանկանում եմ, որ դու կեանքում ինձնից աւելի բախտաւոր լինես:

Սահառունու սրտաբուղիս խօսքերը ազդեցին Վրթանէսեանի վրայ. նա պինդ սեղմեց Սահառունու ձեռքը ու զգացւած ասաց.

—Ես այժմ հասկացայ քեզ և համոզւեցի, որ դու իրաւունք ունիս գերադասել չարքաշ աշխատաւորի համեստ դերը այն անբովանդակ, թէև փայլուն զիրքից, որ կարող ես ձեռք բերել հասարակութեան մէջ:

Այո, Գէորգ, քո գործունէութիւնը օրինակ կը դառնայ ուրիշներին համար. քո օրինակին սկզբում կը հետեւեն քո կալածքի շրջակայքում ապրողները, իսկ յետոյ և հեռաւոր տեղերի բնակիչները. կը սկսեն դղրդալ քո շուրջը շոգեմեքենաներ, իրար յետևից կը հիմնեն գործարաններ ու ուսումնարաններ, մի խօսքով կեանքը կը սկսի եռ. գալ ամեն տեղ: Իսկ այդ եռանդուն գործունէութեան հետևանքը կը լինի ժողովրդի բարօրութիւնը, ժողովուրդը դուրս կը գայ իւր թմրած դրութիւնից, բաց կ'անի աչքերը իւր դարաւոր քնից, և կեանքը անհրաժեշտաբար յառաջադիմական ընթացք կը ստանայ:

Սահառունին տեսաւ, որ Վրթանէսեանը շատ է չափշտակում՝ նորա ասպագայ գործունէութիւնը այդպիսի չափազանց մեծ զիրքով երևակայելով, ժպտաց ու, ձեռով խփելով նորա ուսին, ասաց.

—Շատ լաւ բաներ ես ասում, բայց ափսոս որ մենք այդ չենք տեսնիլ. այդ միայն մեր սերունդները կ'արժանանալ տեսնելու, իսկ ես ու դու, եղբայր, այնքանն էլ պէտք է բաւական համարենք, որ պատրաստ ենք նպաստել այն փառաւոր շէնքի հիմքը դնելուն, որ նոր նկարագրեցիր: Եթէ մենք այժմ կարողանանք այդ շէնքի հիմնաքարերը դնել, այն էլ մեծ բան է. հեռաւոր ասպագայում միայն կը յաջողւի այդ հիմքի վրայ կանգնեցնել բուն շէնքը:

—Շատ դժուար է, Գէորգ, զրկել հազար ու մի յարմարութիւններից և ապրել ու գործել հասարակ ժողովրդի մէջ գրգռած այդպիսի հեռաւոր նպատակից:

—Բայց ինչ արած, եթէ այդ է օգտակար գործունէութեան միակ ասպարէզը:

Իմ անձնական փորձառութիւնից ես հետևեալ եզրակացութեան եմ եկել.—հասարակութեանը օգուտ բերել ցանկացող ու եռանդոտ ուսումնաւարտ երիտասարդը չը պէտք է իւր գործունէութիւնը Թ-սում սկսի, եթէ որ չի ուզում կորցնել իւր ոյժերի վրայ ունեցած վստահութիւնը: Աւելի պարզ ասեմ, իւր գործունէութիւնը նոր սկսող երիտասարդը Թ-սում անպատճառ բոլորովին կախած կը լինի այնտեղի հասարակութիւնից և այդ հասարակութիւնը նրան վստահութեամբ չի վերաբերւիլ ու կամ նրան իւր ազդեցութեան տակ կը դցի կամ թէ չէ՝ կը հալածի նրան ու այդպիսով կեանքից

զգւած, բոլորի դէմ զայրացած անհատ կը դարձնի նրան: Իսկ եթէ եթէ նոյն երիտասարդը առաջ զաւառում գործի և այնտեղ նիւթապէս իրան ապահովացնելուց ու օգտակար գործիչի անուն ձեռք բերելուց յետոյ գնայ Թ-ս, այն ժամանակ նրան նոյն հասարակութիւնը վստահութեամբ կը վերաբերուի և նա կը կարողանայ ազդեցութիւն ձեռք բերել հասարակական գործերի վրայ:

— Զէ', Դէորդ, ես հաւատացած եմ, ոգևորւած ասաց Վրթանէսեանը, որ դու կանգ չես առնիլ կիսաճանապարհին:

Այդ ժամանակ ներս մտան մի քանի հոգի նրանց ընկերներէից ու խօսակցութիւնը փոխուեց:

Մի քանի օր անցած մի տօն^{որ} Սահառունին շրջում էր քաղաքի շրջակայ այգիներն ու դաշտերը, ինչպէս սովորութիւն ունէր անել առհասարակ տօն օրերին, հարկաւոր գիւղատնտեսական տեղեկութիւններ հաւաքելով և ամեն բան ուշադրութեամբ դիտելով:

Կէս օրից անց էր, երբ որ նա յոգնած վերադարձաւ քաղաք ու մտաւ Վրթանէսեանի մօտ: Նրանք էլի խօսակցութեան բռնուեցին գլխաւորապէս Թ-սի կանանց վերաբերմամբ, որոնց մասին Վրթանէսեանը յափշտակած էր խօսում, չը նայելով որ համարեա չէր ճանաչում նրանց: Սահառունին չէր հերքում նորա ասածները:

— Ինչու հիմիկուց հիասթափեցնեմ, մտածում էր նա, թող իրան համար միսիթարւի երեակայական պակտներով: Կերթաց Կովկաս, ինքն իւր աչքովը կը տեսնի, թէ^ք ինչ արարածներ են իւր ազգասէր կարծած օրիորդներն ու տիկիները: Թող մի քանի անգամ այնտեղ պատահի այնպիսի կանանց, որոնք հազիւ են կարողանում ստորագրել անունները իրանց մայրենի լեզուով և ամօթ են համարում իրանց համար հայ անուն կրելը, էլ այնուհետեւ այնպէս խուսնի չի ծխիլ հայուհիներին:

Այդպիսի մտքեր էին պտտում Սահառունու գլխում, երբ որ ներս մտաւ տանտիկիներ՝ ձեռքին մի նամակ Վրթանէսեանի հասցեով:

— Հաղի՛ւ հազ. ինչքա՛ն ժամանակ էր տեղեկութիւն չունէի նրանից, ուրախ-ուրախ բացականչեց Վրթանէսեանը:

Սահառունին հեռաքրքրութեամբ նայեց ծրարի վրայ գրած

Հասցէին: Նորա դէմքը ալալսեց: Նա երեսը շուռ տուեց դէպի պատուհանը ու սկսեց մատներով դափահարել պատուհանի ապակին:

— Երևակայիր, Գէորգ. նամակը երեք ամիս է որ գրած է, իսկ ես նոր եմ ստանում: Ասենք՝ ես եմ մեղաւորը, իմաց չեմ տուել Հեղինէին որ Հէյդէլբէրգից հեռացել եմ:

Վրթանէսեանը կարդում էր նամակը: Նորա դէմքը հեռո՛հեռո՛ւ աւելի ու աւելի սաստիկ զարմացած արտայայտութիւն էր ստանում: Սահառունին մտահոգ նայում էր փողոցը: Սենեակում տիրում էր խորին լռութիւն: Վերջապէս Սահառունին շուռ տուեց երեսը և յառեց Վրթանէսեանի վրայ իւր հայեացքը, որ կարծես ուղում էր թափանցել նորա հոգու խորքը ու տեսնել թէ ինչ է կատարւում այնտեղ:

Այժմ Վրթանէսեանի դէմքը միայն զարմանք չէր արտայայտում, ապշութիւն, երկիւղ, անհանգստութիւն ու ուրախութիւն փոխէփոխ երևում էին նորա երեսին ու անհետանում տեղի տալով միմեանց, այնպէս որ դժար էր որոշել թէ այդ զգացմունքներից որն էր իսկապէս իշխող դեր կատարում նորա տրամադրութեան մէջ:

— Մի՛թէ ձիշդ է այս բոլորը: Ուի՛նչ, ուի՛նչ տեղեկութիւն չունէի ես մինչև այժմ զորա մասին: Խեղճի՛կ Հեղինէ, ո՛րքան դարդ է քաշել, ո՛րքան տանջւել է: Զի կարելի թոյլ տալ, որ այսուհետև էլ այդպէս շարունակուի, պէտք է վերջ տալ զրան: Դու էլ լաւ մարդ ես եղել, Գէորգ. մի՛թէ չէիր կարող... իսկ Հեղինէն որքան մեծ կարծիք ունի քո սցեռի մասին... Ինչո՞ւ էիր ծածկում ինձանից:

Դժար էր որոշել թէ ինչ էր արտայայտում այդ կցկտուր խօսքերի տոնը՝ յանդիմանութիւն թէ ցաւ:

Սահառունին այնքանը միայն կարողացաւ հասկանալ, որ Հեղինէն յայտնել է իրանց գաղտնիքը Վրթանէսեանին:

— Մի՛թէ՞ Հեղին... տիկին Հեղինէն քեզ զորա մասին բան է գրել, հարցրեց նա կարմրատակած ու յուզւած:

— Կ'ուզես կարդա, շատ հետաքրքրական նամակ է, բայց չէ՛, չի կարելի, մի գաղտնիք կայ քեզինից:

— Շուտ արա տուր նամակը, ես ու նա իրարից գաղտնիք չենք պահում, անհամբերութեամբ ընդհատեց նորա խօսքը Սահառունին ու առանց սպասելու նորա տալուն ձեռիցը խլեց նամակը:

Նա սաստիկ ուշադրութեամբ կարդում էր նամակը: Նորա դէմքը մէկ սպրտնում էր՝ մէկ կարմրում, շրթունքները ջղաձգւում ու զոզոտնում էին: Նամակի վերջին չը հասած, նա էլ չը կարողացաւ իրան զսպել ու սաստիկ յուզւած ընկաւ բազմոցի վրայ: Մի քիչ յետոյ նա վեր կացաւ ու ջղաձգաբար բռնեց ձեռներով իւր գլուխը:

— Մի տարի է արդէն, որ նա հեռացել է մարդուց, հալածւել է նախապաշարած հասարակութիւնից, հազար ու մի ստորութիւնների է ենթարկւել, ամեն տեսակ զրկանք ու աղքատութիւն է քաշել, իսկ ես, թշուա, ինձ համար այստեղ հանգիստ ապրում եմ. ոչնչից ոչինչ չ'իմանալով: Ինչո՞ւ էր նա այսքան ժամանակ ինձնից ծածկում այդ բոլորը, ինչո՞ւ ինձ իմաց չէր տալիս:

Սահառունու ձայնը դողում էր, դէմքի վրայ երևում էր սաստիկ տանջանքի արտայայտութիւն:

Վրթանէսեանը ձեռք գցեց Սահառունու մէջքովը և սկսեց մխիթարել նրան:

— Ինչո՞ւ ես քեզ տանջում, Գէորգ: Ոչ մէկդ էլ մեղաւոր չէք՝ ոչ դու ոչ Հեղինէն: Պարզ չէ մի՞թէ քեզ համար, որ Հեղինէն, ծածկելով քեզանից իւր ինչ դրութեան մէջ լինելը, առաջնորդւել է ամենաազնիւ զրդումներով. նա միայն քո հանգստութիւնն է աչքի առաջ ունեցել:

— Ախ, ինչե՛ր է քաշել խեղճը, իսկ ես յիմարի նման մխիթարւում էի նորա նամակներով, չը հասկանալով որ նա ինձ հանգստացնելու համար էր միայն այնպիսի յուսալիր ու ուրախ նամակներ գրում: Կեանքս էլ որ տամ բաւական չի լինիլ, որ վարձատրեմ՝ նորա բոլոր զոհաբերութիւնները:

— Գէորգ, այդպիսի հերոս կնոջ սրտին իշխողը սարեր կարող է տեղից շարժել:

Վրթանէսեանը աւելի լաւ համարեց մնալ թողնել Սահառունուն: Նա մի պատրւակ գտաւ ու դուրս դնաց ասելով, որ շուտով կը վերադառնայ:

Մնալ մնալով Սահառունին նորից սկսեց կարդալ Հեղինէի նամակը: Հեղինէի անմխիթար դրութիւնը կենդանի կերպով պատկերացաւ նորա առաջ: Ախ, երանի թուշունի նման թւեր ունենար. նա իսկոյն կը թուէր կ'երթար իւր աննման Հեղինէի մօտ, կ'ազատէր նրան այդ անտանելի դրութիւնից:

Սկզբում՝ յուզմունքը, Հեղինէին տեսնելու սաստիկ փափագը չէին թողնում, որ Սահառունին քննէր թէ ինչ պէտք է անէր ինքը: Մի քիչ հանգստանալուց յետոյ նա սկսեց մտածել այդ հարցի մասին և չէր կարողանում վճռել, թէ ո՞րը լաւ կը լինի, ի՞նքը դնայ Հեղինէին բերելու թէ՞ գրի՝ Ասունին բերի: Յանկարծ նա չի- շեց Ամիրանովին, երեսպային և սաստիկ տխրեց. իսկ եթէ Ամիրանովը խլէ՞ր երեսպային Հեղինէի ձեռից:

— Զէ՛, արգելքներ շատ կան: Բայց այսպէս թէ այնպէս ես մի քանի օրով կ'երթամ Հեղինէի մօտ: Սիրտս չի հանգստանալ մինչև որ իմ աչքովս չը տեսնեմ թէ ինչ դրութեան մէջ է նա... Բայց յանկարծ իմ գնալովը չը փնասեմ նրան... Զէ՛, տւելի լաւ է սպասեմ նորա նամակին: Այժմ էլ ինձնից ծածկելու կարելորութիւն չունի, թող մանրամասն գրի, նկարագրի իւր դրութիւնը. երեք ամսում շատ բան կարող է փոխւած լինել: Երբ որ նամակը ստա- րամ, ամեն բան ճիշտն իմանամ, ձեռիցս եկած բոլոր միջոցները գործ կը դնեմ նրան բախտաւորեցնելու համար:

Ախ, Հեղինէ, լաւ բան արեցիր, լսելի ձայնով արտասանեց Սահառունին ու դառը ժպտաց. դու ծածկելով ինձնից քո դրութիւնը, իմ օգուտս ես աչքի առաջ ունեցել, բայց չես կարողացել նախա- տեսել, թէ ինչ անտանելի հարւած կը լինի ինձ համար երբ որ ես յանկարծ իմանամ ճշմարտութիւնը: Միթէ՞ չէիր իմանում, որ քո հանգստութեան խաթեր անհանգիստ լինելը ինձ համար զւարճու- թիւն է, բախտաւորութիւն է:

Այդպիսի մտածմունքներով պաշարւած Սահառունին դուրս եկաւ Վրթանէսեանի սենեակից, չը սպասելով նորա վերադառնալուն, և գնաց իւր բնակարանը:

Ամբողջ այդ երեկոն և միւս օրը նա այն աստիճան վրդովւած դրութեան մէջ էր, որ չէր իմանում թէ ինչ անի: Վերջապէս նա վճռեց նամակ գրել Հեղինէին: Նամակում նա խնդրում, աղաչում էր Հեղինէին, որ իրանից ոչինչ չը թաքցնի:

Նամակը նամակարկղը գցելիս նա պատահեց Վրթանէսեանին: Վրթանէսեանը ուրախացաւ, նկատելով նորա գէմքից որ հանգստա- ել է, և քաշեց տարաւ նրան ձաշարան:

— Զես կարող երեւակայել, Գէորգ, թէ որքան ուրախ եմ, որ

Հեղինէն բաժանել է մարդուց, ուրախ-ուրախ ասաց նա Սահառունուն գարեջուր խմելիս:

— Երէկ չէ մէկ էլ որ դէմքիցդ այդ չէր երևում, ծիծաղելով պատասխանեց Սահառունին:

— ձիշտ է, ես այն ժամանակ այն աստիճան ապշել էի այդ լուրից, որ ինքս էլ չէի հասկանում Նուրախանում թէ՞ տխրեմ: Իսկ այժմ ես բոլորովին համոզւած եմ, որ Հեղինէն երբեք Ամիրանովի հետ բախտաւոր լինել չէր կարող: Խմում եմ քո ու Հեղինէի կենացը, հասարակութիւնը իրաւունք ունի շատ բան սպասել ձեզանից:

Նրանք բաժակները չըխկացրեցին:

Բախտաւորաւորութիւնը շատ մօտ էր երևում Սահառունուն, արդար էր զգում նա իրան, բայց էլի երբեմն երբեմն խիղճը տանջում էր նրան: Խիղճը ասում էր նրան, որ նա մեծ դեր է խաղացել Ամիրանովի կեանքում, որ նա, թէև ակամայ, շատ տանջանքներ է պատճառել Ամիրանովին:

Մի օր, երբ սաստիկ տանջւում էր այդպիսի մտածմունքներից, նա յայտնեց իւր մտատանջութեան պատճառը Վրթանէսեանին:

— Զուր տեղը սիրտդ մի պղտորիլ, ասաց Վրթանէսեանը. ոչ ոք մեղաւոր չէ, որ Հեղինէին բախտը այնպիսի մարդու է պատահեցրել, որ անընդունակ է գնահատել իւր կնոջ բարձր բարոյական արժանութիւնները:

Այդ խօսքերը չը հանգստացրեցին Սահառունու վրդովւած սիրտը. տխուր մտածմունքները չ'էին հեռանում նորա գլխից: Նա ուզում էր շատ աշխատելով հանգստացնել իւր խռովւած հոգին, բայց զուր, — պարապել չ'էր կարողանում, նրան չ'էր յաջողում կետրոնացնել ուշադրութիւնը մի օր և է բանի վրայ:

Երբեմն նորա երևակայութեան առաջ բացւում էր Հեղինէի անցեալ ու ներկայ կեանքի մուսլ պատկերը, երբեմն՝ նա վերանում էր մտքով և նկարում էր նորա առաջ բախտաւոր ապագայի պատկերը, բայց այդ ուրախ պատկերը իսկոյն ծածկւում էր մի տեսակ անթափանցելի քողով, և նա ընկնում էր խոր մտածմունքների մէջ:

Սահառունին վաղուց էր պարզել իւր համար ամուսնութեան, սէրի և դրանց հետ կապ ունեցող ուրիշ շատ յարաբերութիւնների վերաբերող հարցերը, որոնք անհամեմատ աւելի հեշտ են.

վճռում թէօրիայում քան դորձական կեանքում, բայց չ'էր կարողանում ճշտութեամբ որոշել, թէ ապագայում ինչ բնաւորութիւն պէտք է ունենային իւր և Հեղինէի յարաբերութիւնները: Դեռ երբէք մինչև այդ ժամանակ նա իրան այդ աստիճան անվճական և դժար դրութեան մէջ չ'էր զգացել: Նրան թւում էր, թէ ինքը կարծես խռովել էր իւր խղճից, առաջին անգամը իւր կեանքում, և խտաբար հաշիւ էր պահանջում նրանից:

Զարմանալի էր. վերջապէս կատարելու վրայ էր Սահառունու սրտի նւիրական փափագը, որ այնքան ժամանակ փայփայել էր նա, բայց ինչ-որ մի անբացատրելի զգացմունք ճնշում էր նորա սիրտը, և նա չը գիտէր ուրախանա՞ր թէ՞ տխրէր, որ Հեղինէն բաժանուել էր մարդուց:

— Միայն ցնորւած մարդը կարող է ինձ պէս ենթադրել, թէ Ամիրանովը արգելքէի դառնայ ու կը թողնի որ մենք միասին ապրենք: Ո՛չ, նա ամեն հնարք գործ կը դնի մեզ իրարից հեռու պահելու համար.... բայց... բայց այն ժասանակ....

Նա ցնցուեց:

Նրան թւում էր, թէ նա կորցրել է ազնիւն ու արդարը անազնից ու անարդարից որոշելու ընդունակութիւնը, և նա չ'էր կարողանում վճռել թէ ինչ անէր: Շարունակ նորա միտքը պաշարւած էր նոյն դժարալոյծ հարցերով և տարուբերում էր երկու հակառական վճիռների մէջ, երբեմն դէպի այն վճիռը, որ նորա համար նպաստաւոր էր, երբեմն՝ դէպի աննպաստը:

Նոր հասկացաւ Սահառունին, թէ, որքան էլ մարդ ազատ համարի իրան զանազան աւանդական սկզբունքներից ու հայեացքներից, այնուամենայնիւ չը պէտք է կարծի, թէ նրանք ոչ մի հետք չ'են թողել իւր հոգում. ո՛չ, աւանդական հայեացքները շատ խոր արմատներ են գցում մարդու հոգու մէջ և բոլորովին արմատախիլ չ'են լինում առողջ դատողութեան ու կրթութեան ազդեցութիւնից, այլ մնում են ծածկւած այնտեղ խորքերում և իրանց ոյժը ցոյց են տալիս միայն այն ժամանակ, երբ որ մարդ ինքը ստիպւած է լինում նրանց հակառակ վարելու: Այժմ Սահառունին զգում էր այն աւանդական սկզբունքների ճնշումը, որոնցով խմորել էին նորա հոգին երեսայ ժամանակից:

—Այսպէս թէ այնպէս, ես պէտք է անպատճառ տեսնեմ Հեղինէի հետ թէկուզ ամենակարճ ժամանակով, վճռում էր նա առհասարակ իւր խորհրդածութիւններից յետոյ և անհամբեր սրտով սպասում էր Հեղինէի պատասխանին իւր գրած վերջին նամակին:

XXXI

Մարտ ամիսն էր: Մի երեկոյ Հեղինէն նստած իւր փոքրիկ սենեակի պատուհանի մօտ խոր մտածմունքների մէջ էր: Նորա դիմացը՝ վառարանում ճռնում էր վառուղ ցախը, իսկ նորա ոտների մօտ փոքրիկ զորգի վրայ թաւալգլոր էր լինում ու ուրախ թոթուում էր առոյգ ու գեղեցիկ Քէորգիկը:

Դժուար է ասել, ի՞նչ էր արտայայտում այդ ժամանակ Հեղինէի դէմքը՝ ուրախութիւն թէ՞ ահ: Նորա վերացած հայեացքը կանգ էր առնում մէկ՝ վառարանի բոցավառ կրակի վրայ, մէկ՝ նորա գոգին դրած նամակի վրայ, որ մի քանի օր առաջ նա ստացել էր իշխան Շակունուց: Երևում էր, որ նորա միտքը սաստիկ զբաղւած էր նամակի բովանդակութեամբ և վերացել գնացել էր հեռու, շատ հեռու տեղեր: Ի՞նչ էր մտածում Հեղինէն, նա ինքն էլ չէր կարող որոշել,—հազար ու մի իրարից տարբեր մտածմունքներ էին խոնում նորա գլխում:

Շատ երկար այդպէս նստած կը մնար Հեղինէն, բայց յանկարծ մի կառք զորդալով եկաւ ու կանգնեց նորա բնակարանի դրան առաջ,—նա սթափւեց մտախոհութիւնից, դուրս նայեց պատուհանից և ուրախացաւ այնպէս, ինչպէս կարող են ուրախանալ միայն օտարութիւն քաշող մարդիկ մտերիմ բարեկամներ տեսնելիս:

—Օհ, Ալեքսանդր Վասիլիչ, Տիգրան Աւետիչ, ամենեին չէի սպասում, շատ ուրախ եմ, շատ ուրախ, որ մեզ միտներդ էք գցել, բացականչեց Հեղինէն դուրս վազելով հիւրերին ընդունելու:

Շուտ արէք զնանք վերև, երևի մրսած կը լինէք ճանապարհին, ձեռաց ձեզ թէյ կը տամ, սամովարը պատրաստ է:

Սովորական ողջոյններից յետոյ նրանք երեքով նստեցին թէյի կլոր սեղանի շուրջը:

Պետրոսեանցը հետաքրքրութեամբ նայում էր Հեղինէին: Ի՞նչ

էր եղել առաջւայ առողջ ու գեղեցիկ Հեղինէն, թշերը փոս էին ընկել, երեսի կաշին սաստիկ գունաթափւել՝ թափանցիկ էր դարձել, աչքերի փայլը խաւարել էր, հայեացքը թէև պահպանել էր իւր քաղցրութիւնը, բայց էլ առաջւայ պէս վառվռուն չէր, շրթունքների վրայ ու բերնի ջհակներում թէև հազիւ նշմարելի կերպով, գազազած արտայայտութիւն, կուրծքը փոս էր ընկել, շարժումները դանդաղացել էին:

Ինչքան փոխւել է, ինչքան գեշացել է: Ո՞վ կը հաւատայ, որ ոչ միայն երեսուն տարեկան չը կայ, այլ և երեսունից շատ ջահել է: Ո՞րքան դառնութիւն է քաշել խեղճ կինը, — մտածում էր Պետրոսեանցը նայելով Հեղինէին:

Հեղինէն թէյ տւեց նրան և կարծես գուշակելով նորա մտքովը անցածը, հարցրեց:

— Ինչո՞ւ էք ուշի ուշով նայում ինձ: Շատ եմ պառաւել չէ՞: Պետրոսեանցը շփոթւեց ու ոչինչ չը պատասխանեց:

— Այդ հիւանդութեան հետքն է, դատարկ բան է, շուտով կանցնի և դուք կը կանաչէք ու կը ծաղկէք: առաջւայ պէս, սիրտ տւեց Ասունին:

Հեղինէի շրթունքների վրայ երևաց հազիւ նշմարելի տխուր ժպտ:

— Փառք Աստուծոյ, տիկին Հեղինէ, որ լաւացել էք: Ձեր բոլոր բարեկամները Թ-սում, որ լսեցին ձեր հիւանդանալու լուրը, սաստիկ անհանգիստ եղան, ասաց Պետրոսեանցը մի քիչ ճիգ գործ դնելով իւր վրայ և ջերմ փարեկցութեամբ նայեց Հեղինէին:

Այդ րոպէին նա նկատեց Հեղինէի աչքերում հոգեկան այն աստիճան խորութեան ու անկեղծութեան արտայայտութիւն և նորա դէմքի վրայ այն աստիճան լուրջ մտքի ու զօրեղ բնաւորութեան կնիք, որ ակամայ մի տեսակ երկիւղածութիւն սկսեց զգալ դէպի նա: Հեղինէի երեսահարքում ինչ որ մի նոր բան կար, որ ապշեցրեց Պետրոսեանցին: Պետրոսեանցին թւում էր թէ ինքը առաջ չէր կարողացել ճանաչել և գնահատել նորան:

Միթէ ինձ դեռ չիշո՞ւմ են Թ-սում, ժպտալով հարցրեց Հեղինէն:

Պետրոսեանցը զլիսով դրական պատասխան տւեց և ծիծաղեց իւր բարեսիրտ ծիծաղով,

— Դէ, հիմա, պատմեցէք, պ. Պետրոսեանց, թղ ո՞ր խաչիցն է, որ մեր կողմերն էք եկել:

— Մի շաբաթ կը լինի, որ մեր կողմերումն է, Պետրոսեանցի զեղ պատասխանեց Ասունին: Մասնաւոր գործեր ունի այստեղ: Երբ որ պատահեցինք Պետրոսեանցի ու իմացաւ, որ զօներն ուղղում եմ անց կացնել Գ—կում, շատ ուրախացաւ ու սկսեց երեխայի պէս խնդրել, աղաչել, որ հետս բերեմ. ես էլ բերեցի:

— Շատ ու շատ շնորհակալ եմ, ասաց Հեղինէն:

Պետրոսեանցը լուռ յոնքերը կիսել էր:

Հեղինէն երկուսի ձեռք էլ սեղմեց ի նշան երախտագիտութեան:

Ինչո՞ւ ոչինչ չէք պատմում ձեր բարեկամների մասին, պ. Պետրոսեանց, վաղուց է ոչ մի դեղեկութիւն չունէմ Աննա Գորգէնիանի մասին: Ես սաստիկ մեղաւոր եմ նորա առաջ. նա ինձ զկեքներում մի քանի նամակ գրեց, ես ոչ մէկին էլ չը պատասխանեցի: Ինչպէս եղաւ նորա ու Թօմասի բանը, զլուջ եկա՞ւ թէ՞ Թօմասը դու Պետրոսեանցին է:

Պետրոսեանցի աչքերը, այդ հարցը լսելիս, սաստիկ կենդանացան, ձեռները, ոտները և ամբողջ իրանը սկսեցին այնպէս շարժւել, որ նա քիչ էր մնում աթոռի վրայից վայր ընկնէր:

— Զէ, ինչ Պետրոսեանց... նրանք արդէն... մի քանի այնպիսի կցկուրտ խոսքեր արտասանելուց յետոյ Պետրոսեանցը արդէն սկսում էր բացատրել իւր միտքը, բայց Ասունին կտրեց նորա խօսքը:

— Այդ հարցի մասին մի խօսէք տիկին Հեղինէ, Տիգրանի ասածներից բան չէք հասկանալ. նա քիչ է մնում գժուի որ իւր սրտի ամենաքաղցր փափաղը կատարուել է:

— Ուրեմն Աննան պատկւել է Թօմասի հետ: Այնքան ուրախ եմ, որ ասել չեմ կարող: Ինձ շատ է հետաքրքրում նորանց պսակը, խնդրեմ մանաւանդ պատմէք, թէ ինչպէս է եղեց այդ:

Պետրոսեանցը իւր սեւ, խիտ մորուքը մի քանի րոպէ անխնայ կերպով ձգձգելուց յետոյ, սկսեց պատմել:

— Ամենից առաջ պէտք է ասեմ ձեզ, տիկին Հեղինէ, որ Աննա Գորգէնեանը բացի Դաւթից ոչ ոքով լուրջ կերպով չի գրավւել: Ճիշդ է, նա մի ժամանակ, յիշո՞ւմ էք այն ամառը, մի քիչ տեղիք տւեց կործելու որ մոռացել է Դաւթին ու գրաւել է ուրիշով, բայց,

ինչպէս և պէտք էր սպասել, դուրս եկաւ, որ այդ զգացմունքը շատ թեթեւ, վաղանցուկ զգացմունք էր և ոչինչ հետեւանք չէր սարող ունենալ: Բայց Դաւիթը այդպէս չէր նայում նորա այն ժամանակէն զգացմունքի վերայ և հաւատացած էր, որ նա դաւաճանել է իրան, որ էլ չի սիրում իրան: Դժուար է խօսքով նկարագրել թէ ինչ դժոխային տանջանքներ էր պատճառում Քոմսէին այդ համոզմունքը: Ինչպէս գիտէք խեղճի համար այն աստիճան անտանելի էր դարձել Ք-սում ապրելը, որ զլուխը վեր առաւ, գնաց Պետերբուրգ, ուշադրութիւն չը դարձնելով իմ խորհրդին: «Տիգրան, լա՛ւ չիշիր, ասաց նա ինձ մնաս բարւի ժամանակ, բաւական է մի խօսք և ես այտոեղ կը լինեմ: Նս գիտէի, թէ ինչ է ուզում ասել Քոմսէն և անհամբերութեամբ սպասում էի այդ խօսքին: Խիղճս սատարիկ դալիս էր Դաւթի վրայ: Նա այն տեսակ մարդկանցից է, որ դժարութեամբ են զրաււում, բայց որ զրաւեցին հոգով սրտով գերի կը դառնան իրանց սէրին: Նա քիչ բարեկամներ ունի, բայց այդ սակաւաթիւ բարեկամները կարող են վստահ լինել նորա վրայ: Ինչպէս ապառաժ ժայռի վրայ: Ճիշտ է նա անտարբեր է երևում, բայց իսկապէս անտարբեր մարդ չէ, այլ այդպէս երևում է իւր տարօրինակ հայեացքների շնորհիւ: Նա չի սիրում արտայայտել իւր մտքերն ու զգացմունքները, մինչև որ նրանք մարմին ու արիւն չը դառնան իւր համար:»

— Է, բարեկամ, ինչ որ պատմելու ես պատմիր, ինչ ես մեզ նոր ծանօթացնում Քոմսէի հետ, մենք նրան առանց քեզ էլ ճանաչում ենք, ծիծաղելով ընդհատեց Պետրոսեանցի խօսքը Ասունին:

Պետրոսեանցին այդ բոպէին այնքան զւարճութիւն էր պատճառում իւր մտերիմ բարեկամների մասին խօսելը, որ Ասունու նկատողութիւնը սրտին մի քիչ դիպաւ:

Հեղինէն այդ նկատեց:

— Նրան մի լսէք, Տիգրան Աւետիչ, շարունակեցէք, ասաց նա քաղցրութեամբ:

Պետրոսեանցը մէկ-երկու անգամ վեր թռաւ նստած տեղիցը ու նորից նստեց, մի քանի անգամ հազաց, ջանքերը կիտեց, կարծես թէ ծանր էր նորա համար պատմել սկսելը, վերջապէս հանգստացաւ ու շարունակեց.

—Զեր Թ-սից հեռանալուց յետոյ շատ չ'անցած Միհրանովան նորից սկսեց մօտ-մօտ անել օրիորդ Աննային, սէր ցոյց տալ, և մինչև անգամ հրաւիրեց իւր մօտ ամարանոց, բայց այս անգամ օրիորդը չը դրաւ եց նորա քաղցր խօսքերից: Յետոյ ուրիշները, մեծ մասամբ ի հարկէ փեսացու երիտասարդների մայրեր, սկսեցին ծանօթանալ, հրաւիրել իրանց տները, շողոքորթել աշխատելով իրանց թոռը գցել նրան: Դիտէք էլի թէ մեզնում ինչպէս են վերաբերում մեծ ժառանգութիւն ստացած հարսնացուներին:

—Աննան ի հարկէ նրանց լարած թախարհը չ'ընկաւ:

—Ի՛նչ խօսք: Ել առաջւայ պէս անփորձ չէր որ քաղցր խօսքերից խաբւէր: Այժմ նա աւելի լուրջ էր նայում ամեն բանի վրայ: Կը հաւատա՞ք մի օր չէր լինում որ չը յիշէր Թոմասին: Ուշ ու միտքը նորա հետ էր. էլ ուրիշ ոչ ոք աչքովը չէր գալիս: Մի օր միասին նստած պատշգամբում թէյ էինք խմում: յանկարծ նորա ձեռից վայր ընկաւ թէյի գաւաթը. նա յուսահատ ձայնով բացականչեց, «Ախ, գաւաթս կոտրւեց»: Այդ ինձ շատ զարմացրեց: «Մի՞թէ, հարցրեցի ես, գաւաթի կոտրւելը այդքան ցաւ է պատճառում ձեզ»: «Ձէք իմանում ինչ գաւաթ է, Դաւիթ Աբրամիչի առաջին ընծան է», պատասխանեց նա հազիւ պահելով արտասուքը և փախաւ սենեակը: Այնտեղ նա երկար ժամանակ կանգնած թերթում էր պատուհանում դրած նոտաները, վերջապէս կանգ առաւ՝ չեմ յիշում որ պիէսի վրայ ու ասաց. «Այս Դաւիթի սիրած պիէսն է», յետոյ մօտեցաւ դաշնամուրին ու սկսեց ածել չափազանց ողևորութեամբ: «Նո շատ յաճախ եմ նրան մտաբերում, իսկ նա անշուշտ վաղուց մոռացել է ինձ», աննկարագրելի թախծալից ձայնով արտասանեց նա պիէսի կէսին: Խեղճի աչքերը արտասուակալեցին, երևում էր որ սիրտը սաստիկ կսկծում էր: Նա այն աստիճան յուզւած էր, որ էլ չը կարողացաւ շարունակել և ձեռքերը կրծքին խաչած երկար ժամանակ մնաց նստած դաշնամուրի առաջ: Իմ ուրախութեանս չափ չը կար: Նո նրանից պակաս չէի յուզւել և երկար ժամանակ աչքերս յառած նորա վրայ ոչ մի խօսք չէի կարողանում արտասանել: Կեանքումս չեմ մոռանալ այդ հանդիսաւոր բուպէները: «Աննա, Արտեմիւհնա, վերջապէս սիրտ արեցի ու ասացի, Դաւիթը ձեզ ամենևին չի մոռացել: Նա սպասում է միայն ձեր հաւանութեանը. բա-

ւական է ձեր կողմից լոկ մի ակնարկ և նա անմիջապէս կը լինի»։ «Մի՞թէ», բացականչեց օրիորդ Աննան սաստիկ ուրախացած և մի քանի օրից յետոյ նամակ գրեց Թոմասին։ Նա իսկոյն եկաւ և մենք, գալուն պէս, սրանից մի ամիս առաջ, փառաւորապէս հարսանիք կատարեցինք։

Պետրոսեանցը ծանր շունչ քաշեց։

Ինչ ուզում են՝ ասեն, տաք-տաք աւելցրեց նա, առաջին սէրը երբէք չի սառիլ։

— Մինչև անգամ այն ժամանակ երբ որ սիրածը հողի տակին է, վրայ բերեց Ասունին։ Երևակայեցէք, տիկին Հեղինէ, Տիգրանը այնքան սաստիկ էր սիրում օրիորդ Աննայի մօրը, որ մինչև այժմ էլ սէրը չի սառել և նորա մասին այնպէս է խօսում, կարծես կենդանի լինի այժմ։

Պետրոսեանցը կարմրեց և տհաճ հայեացք գցեց ընկերոջ վրայ։

— Դուք ձեր սէրն ու հոգատարութիւնը այժմ գցել էք նորա աղջկայ վրայ, զգացած նկատեց Հեղինէն։ Դուք հաւատարիմ էք մնացել ձեր սիրած կնոջ յիշատակին, որովհետև ձեր կեանքի նպատակը դրել էք նորա աղջկանը բախտաւորացնելը։

— Տիկին Հեղինէ, ես միայն իմ պարտականութիւնս եմ կատարել, շիտթւած ու կարմրելով պատասխանեց Պետրոսեանցը։

— Սակայն շատ քիչերն են այդքան բարեխեղճ կերպով վերաբերում իրանց պարտականութիւններին։

— Այդ բոլորը շատ զովելի բան է, մէջ մտաւ Ասունին, բայց ինչու պէտք է դու նորա մայից յետոյ ուշադրութիւն չը դարձնես ոչ մի կնոջ վրայ, այդ չեմ հասկանում։ Տեսած կա՞ք, տիկին Հեղինէ, այդ աստիճան հաստատամտութիւն։

Հեղինէն ժպտաց։

Ինչ ես գլխիցդ դուրս տալիս, բարկացած ասաց Պետրոսեանցը։ Դու այսօր շատ ես ազատութիւն տալիս լեզուիդ։

— Լաւ, լաւ, մի տաքանալ, էլ չեմ ասիլ։ Ճիշտ որ քո Վերան շատ գեղեցիկ և հիանալի կին էր։

Պետրոսեանցը ոչինչ չասաց ու դիրկն առնելով Գէորգիկին, որ չօչ անելով մօտեցել էր նրան, դնաց միւս սենեակը նորա հետ խաղ անելու։

Հեղինէն աւելի մօտիկ նստեց Ասունուց ու հանեց գրպանից փետուց ստացած նամակը:

Ալեքսանդր Վասիլիչ, կարդացէք թէ ինչ է գրում փետաս, հաւատալս չի գալիս որ ճիշտ լինի:

—Բոլորովին ճիշտ է, ես գիտեմ թէ ինչ է գրում:

—Միթէ:

—Ես ուղղակի Թ-սիցն եմ դալիս: Այնուհեղ ես մի շաբաթի չափ մնացի ու տեմեւեցի Միխայիլ Պետրովիչի հետ: Այդ զեռ ոչինչ որ նա համաձայնութիւն է տւել ձեր արտասահման ղնալուն, ինձ թւում ի թէ իշխան Շախունին շատ չանցած նրան համաձայնեցնել կը տայ, որ աշխատի ապահարգանի իրաւունք ստանալ:

—Ինչ էք ասում, ճիշտ:

Հեղինէն սաստիկ շփոթւել էր ու կարմրել ուրախութիւնից:

—Շատ շնորհակալ եմ, Ալեքսանդր Վասիլիչ, ասաց նա մի քիչ լուռ կենալուց յետոյ ու զգացւած սեղմեց Ասունու ձեռքը:

—Ինձնից ինչու էք շնորհակալ լինում, տիկին Հեղինէ, գործը գլուխ է եկել շնորհիւ ձեր փետու, պատասխանեց Ասունին և ուզում էր աւելցնել, — և մանաւանդ այն գեղեցիկ աչքի վրայ սաստիկ ուզում է պսակել Միխայիլ Պետրովիչը, — բայց իրան զսպեց ու շատաց:

—Բայց միթէ նա կը համաձայնի բոլորովին ձեռք քաշել որդուց:

—Դժուար թէ, բայց իշխան Շախունին նրանից խօսք է առել, որ ձեզ ու երեխային շանջատի իրարից մինչև նորա չափահաս դառնալը:

—Է, այն ժամանակը էլ ոչնչից չեմ վախենալ. ուր էլ ընկնի, ինչ էլ դայ գլխովը, մօրը չի մոռանալ: Բացի այդ այն ժամանակ նա էլ հոգատարութեան կարօտ չի լինիլ ինչպէս այժմ: Բայց բանը նրանում է թէ ի՞նչ գրաւական կայ, որ նա իւր խոստումը կը պահի:

—Ապահով կացէք, մենք ամեն բան օրէնքի պահանջով ու օրինական ձևով կանենք, թէև այդ աւելորդ է, որովհետև Միխայիլ Պետրովիչը ինչքան էլ լինի անսիրտ դագան չէ, չի ուզենալ երեխան ձեր ձեռք լսելով ձեզ էլի մահւան դուռը հասցնել: Շատ ծանր է ինձ համար, ասում էր նա ինձ ու իշխանին, բայց ինչ արած, պէտք է հպատակեմ ցաւալի անհրաժեշտութեանը ու

բաժանւեմ որդուցս: Ես ինչքան էլ լինի տղամարդ եմ, կը դիմանամ, իսկ մօրը հարազատ զաւակից անջատել կը նշանակի կեանքից զրկել:

—Նա իմ կարծածիցս աւելի մեծահոգի է, չը գիտեմ ինչպէս յայտնեմ նրան իմ երախտադիտութիւնս այդ մեծահոգի վճռի համար, զգացած ասաց Հեղինէն և ընկաւ մոտամունքների մէջ:

Գէորգիցը վաղուց է տեղեկութիւն չը կայ, ինչ պէտք է պատահած լինի, բաւական ժամանակ լուռ կենալուց յետոյ հարցրեց նա մոտահոգ:

—Իմ կարծիքով, տիկին Հեղինէ, այժմ կարելի է ամեն բան յայտնել նրան:

—Այս քանի օրս ես էլ շատ եմ մտածել այդ հարցի մասին. չեմ իմանում ինչ անեմ:

Այդ րոպէին լսեց Գէորգիկի ճիչը:

Վաղը առաւօտ, Ալեքսանդր Վասիլիչ, դուրս մասին մանրամասն կը խօսենք, իսկ այժմ գնանք Պետրոսեանցին ազատենք դայեակի դեր կատարելուց, ուրախ-ուրախ ասաց նա ու վերկացաւ տեղիցը:

Դրան շեմքին երևեց Պետրոսեանցը երեսան ձեռին:

—Ինչ տէք Գէորգիկին, սկսում է գազազել, ձեր գլուխը կը ցաւացնի:

Երեխային քուն դնելուց յետոյ Հեղինէն վերադարձաւ հիւրերի մօտ:

—Պ. Պետրոսեանց, էլի նոր բաներ պատմեցէք Թ-սից:

—Խաչը, ոչինչ հետաքրքրական բան չեմ իմանում:

—Ի՞նչպէս են մեր արւեստադիտական դպրոցի բաները, ո՞վ է այժմ կառավարում:

—Մինչև այժմ Սոֆիա Միհրանովան էր կառավարում, իսկ այժմ Աննա Արտեմեան, որ ժառանգութիւն ստանալուց յետոյ մեծ գումար նւիրեց դպրոցին: Նա, պէտք է ասել, առհասարակ շատ նւիրատուութիւններ է անում:

—Իսկ այն գիտէք, տիկին Հեղինէ, որ Սոֆիա Միհրանովան ու հինգ ուրիշ Թ-սեցի օրիորդներ գնում են Յիւրիխ բժշկութիւն սովորելու:

—Իսկ ծնողները ինչպէս են վերաբերւում այդ բանին:

—Կամայ ահամայ համաձայնել են, որովհետև աղջիկները սպառնացել են, որ եթէ թոյլ չը տան, կը փախչեն տանից ու ծածուկ կ'երթան:

—Իսկ Նա՞գեա Միհրանովան, երեւի վաղուց մարդու է գնացել:

—Նա յուսահատութիւնից քիչ էր մնում Քուռն ընկնէր: Տրուհիցկին, որ պաշտօնապէս յայտնի էր իբրեւ նորա նշանածը, մի ժամանակ գլուխ առաւ կորաւ, բոլորովին անհետացաւ, իսկ յետոյ լսեցինք, որ Մոսկայում պսակւել է մի շատ հարուստ վաճառականի միակ ժառանգ աղջկայ վրայ:

—Տեղն է, շատ տեղն է մեր օրիորդներին, թող խրատեն մի քիչ, չարախնդաց ժպիտով վրայ բերեց Պետրոսեանցը:

—Ելիզաւետա Բօգդանովնան ի հարկէ ձեռները ծալած չը նշտեց. ձեռաց աղջկայ սիրտը մխիթարեց, մի հարուստ ու դիրքունեցող փեսացու ճարեց:

—Մէկ-երկուսն էլ թող այդպէս սառուեցին քաշեն մեր օրիորդներին ու նրանց մայրերին, այն ժամանակ էլ զանազան Տրուհիցկիների այնպէս դրկաբաց չեն ընդունել մեր ընտանիքներում՝ ինչպէս այժմ, շարունակում էր Պետրոսեանցը առանց ականջ դնելու Ասունուն:

—Նոր բան, Տիգրան. ի՞մ լաւ ծանօթներից մէկից լսել եմ, որ Տրուհիցկին հարսանիքից մի քանի շաբաթ յետոյ թողել է ջահէլ կնոջը՝ հեռացել, տանելով հետը բաւական փող, և այժմ՝ իւր համար ճանապարհորդում է ու արկածախնդրութեան մէջ աւելի կատարելագործւում:

Հեղինէի դէմքը այլալուեց:

Ասունին նկատեց այդ և սաստիկ զղջաց, որ թեթեւմտաբար նրան տհաճութիւն պատճառեց, յիշեցնելով Տրուհիցկու արկածախնդրութիւնը: Նա իսկոյն խօսքը փոխեց ու սկսեց զանազան նորութիւններ հաղորդել Ք-սի կեանքից:

—Ձարմանում եմ, Ալեքսանդր, որդեգիր ես կարողացել այդքան բան իմանալ. ես շարունակ Ք—սունն եմ եղել, իսկ դու մի շաբաթ էլ սկի չը մնացիր այնտեղ և ինձնից շատ բան գիտես այնտեղի կեանքից:

—Ամէն բանում հունար է պէտք, բարեկամ:

Նրանք բուռական նստեցին Հեղինէի մօտ: Վերջերքը Հեղինէն

անսուշադրութեամբ էր լսում նրանց խօսակցութիւնը, երեւում էր որ ուշքը ուրիշ բանով էր զբաղւած:

Միւս առաւօտը վաղ Հեղինէն ուղարկեց կանչեց Ասունուն: Նրա հետ երկար խորհրդակցելուց յետոյ, նա նամակ գրեց Սահառունուն:

Երեք օր անցած Ասունին, որ նոյն օրը գնալու էր Գ—կից, Հեղինէին մի նամակ բերել:

—Ախ, Գէորգիցն է, տեսնենք ինչ է պատասխանում:

—Մի մոռանաք տիկին Հեղինէ, որ այդ նամակը գրելիս նա ձեր վերջին նամակը չէր կարող զեռ ստացած լինել:

—Ախ, ճիշտ որ, ինչ մոռացկոտն եմ դարձել, ասաց նա խփելով իւր ճակատին և սկսեց անհամբերութեամբ կարդալ նամակը:

Ահա ինչ էր գրում Սահառունին.

Աւստրիա Մ. Քաղաք:

Ս ի Ր Ե Լ Ի Հ Ե Ղ Ի Ն Է,

Աւելորդ եմ համարում գրել քեզ թէ ինչպէս տանջւում եմ քո անմխիթար դրութիւնդ իմանալուց յետոյ. չեմ ուզում նոյնպէս յանդիմանել քեզ, որ անկեղծ չես եղել իմ վերաբերմամբ և այսօր քան ժամանակ ծածկելես ինձնից քո դրութիւնդ. ես այժմ միայն ինչդրում, աղաչում եմ քեզ, որ ներես ինձ այն բոլոր վշտերի ու տանջանքների համար, որ ես ակամայ պատճառել եմ քեզ:

Բայց բաւական է խօսել մեր սրտերի խոցերի մասին, անցեալը անցել է. աւելի լաւ է խօսենք ապագայի մասին: Շատ մութն է թւում այդ ապագան, բայց այնուամենայնիւ ես հաւատացած եմ, որ վերջիվերջոյ բախտը կը ժպտայ մեզ: Այն աստիճան հաստատ է իմ մէջ այդ հաւատը, ուշ ու միտքս այնքան զբաղւած է մեր ապագայ բախտաւոր կեանքի պատկերով, որ այդ ապագայի հետ կապ չունեցող ոչ մի բան ինձ չի հետաքրքրում այլ ևս:

Միայն մի բան է վրդովում, սիրելի Հեղինէ, այն զուարճութիւնը որ ես զգում եմ մեր ապագայ երջանիկ կեանքը երեւակայելիս, — իսկ ի՞նչ, անցնում է մտքովս, չը կարողանամ արդարացնել այն յոյսերը, որ դու գնում ես եսն՝ վրայ: Այդ միտքը ինձ

սարսափեցնում է: Յոյս, միակ յոյս քո վրայ է, Հեղինէ. քո սէրը ինձ ընդունակ կը դարձնի անելու այն բոլորը, որ դու ապաստում ես ինձնից, քո սէրը ինձ ոյժ կը տայ, եռանդ կը ներշնչի:

Որքան կարելի է շուտով ու մանրամասն գրիր, թէ այժմ ինչ դրութեան մէջ ես: Շնորհակալ եմ Ասունուց այն հոգատարութեան համար, որով նա վերաբերել է քեզ. դրանից մեծ լաւութիւն նա չէր կարող անել ինձ իբրեւ բարեկամ:

Չեմ ուզում խորհուրդներ տալ քեզ, որովհետեւ չը գիտեմ մանրամասնօրէն այն պայմանները, որոնց մէջ դու գտնւում ես, այնպէս որ զանազան ենթադրութիւնների վրայ հիմնած խորհուրդներովս փոխանակ քեզ օգնելու՝ գուցէ խանգարեմ:

Եթէ իմ այլտեղ գալս քեզ չի վնասիլ, իմաց տուր իսկոյն կը թռչեմ կը գամ: Որ իմանաս թէ ինչպէս եմ կարօտել քեզ, սիրտս ինչպէս է ուզում քո մօտ լինել, հետդ խօսել:

Սիրտդ պինդ պահիր, ամօթ կը լինի վհատել այժմ, երբ որ մեր այսքան ժամանակ փաշտպած փափազի իրագործումը միայն ժամանակի և այն էլ մօտիկ ապագայի հարց է: Գլխաւոր և ամենաուժար քայլը արդէն արել ես. մենացածը հեշտ է:

Նիկողայոսը բարեւոմէ քեզ. ես նորան հարազատ եղբորս նման սիրում եմ: Նա ճիշտ որ արժանի է այն բոլոր գովասանքներին, որ դու գրել ես նամակումդ: Չը նեղանաս նորանից. զօռով խլեցի ձեռիցը քո նամակը:

Քո Գէորգ Սահառունի:

Յ. Գ.-Եթէ պատասխանը ուշացնես, էլ ես մեղաւոր չեմ. վեր կը կենամ կը գամ քո մօտ թէկուզ մի քանի ժամով հէնց գոնէ նորա համար, որ աչքովս տեսնեմ թէ ինչպէս ես ապրումս էլ սպասել չեմ կարող, սիրտս չի համբերումս:

— Տեսնենք ինչ կ'ասէք, Ալեքսանդր Վասիլիչ, սաստիկ յուզւած ասաց Հեղինէն: Նամակը դնելով նորա առաջը:

Ասունին չապաով աչքի անցրեց նամակը:

— Շատ հիանալի է եղել:

Հեղինէն ոչինչ չը պատասխանեց և ընկաւ խոր մտածութեան մէջ:

—Գիտէք ինչ, Ալեքսանդր Վասիլիչ, ասանց նա յանկարծ, լաւ կը լինի հեռագրենք Գէորգին՝ չը գայ: Ինչ բան ունի նա այստեղ:

—Ես էլ եմ այդպէս կարծում:

—Ես ինքս կ'երթամ արտասահման: Ուզում եմ հեռանալ այստեղից, մի քիչ հանգստանալ հոգով:

—Շատ հիանալի բան կ'անէք: Կ'ուզէք՝ հէնց հիմա հեռագրենք:

—Անպատճառ:

Հեղինէն վեր թռաւ նստած տեղիցը և թանաք ու թուղթ բերեց դրեց Ասունու առաջը:

Ասունին խմբագրում էր հեռագիրը, իսկ Հեղինէն կանգնած նորա աթոռի յետևը մտածում էր:

—Ես կ'ապրեմ երեխայիս հետ Գէորգից շատ մօտիկ, մենք շուտ-շուտ կը տեսնենք, բայց արդեօք կ'անցնենք մեր առաջուց յարաբերութիւնների սահմանից... Ո՛չ, ո՛չ և ո՛չ, ես առանց պսակելու նորա հետ չեմ ապրիլ: Գէորգը պարապմունքները վերջացնելուց յետոյ կերթայ Կովկաս, իսկ ես կը մնամ այնտեղ, այստեղաբէնք ապրել ես չեմ կարող: Իսկ եթէ մարդս պաշտօնապէս ադա-հարզան տայ ինձ, այն ժամանակ ուրիշ բան է... այն ժամանակ մենք կը պսակենք և կը միանանք յաւիտեանս յաւիտենից:

Հեղինէն կարմրեց, երեսը սկսեց կրակի նման վառւել և նա սաստիկ յուզւած սկսեց քայլել սենեակում:

Երկու-երեք շաբաթ անցած Հեղինէն ճանապարհ ընկաւ երեխայի ու դայեակի հետ: Ասունին ուղեկցում էր նրանց, նա մի ամսով արձակուրդ էր ստացել: Իշխան Շակունին, որ ճանապարհորդութեան համար ամեն անհրաժեշտ բան դրել էր Հեղինէի հետ ու տւել էր նրան արտասահմանում միջակ ապրելու համար բաւական փող, ճանապարհ գցեց նրանց մի քանի կայարան: Մնասբարեի ժամանակ նա արտասուքը չը կարողացաւ պահել, և լալով խնդրում էր Հեղինէին, նորա հանգուցեալ մօր անունով, այնուհետեւ էլ ազնիւ ու անարատ մնալ, ինչպէս մինչև այն ժամանակն էր եղել: Հեղինէն հասկանում էր քեռու միտքը. նա հանգստացրեց

նորան: Ասունին սաստիկ զգացւեց՝ կռիւներում կեանքը անցրած գեներալի աչքերում արաստունք տեսնելով: Որքա՛ն քնքուշութիւն կար այդ ըստ երևոյթին կոպիտ մարդու սրտում:

Մեր ճանապարհորդները ոչ մի տեղ կանգ չէին առնում. նրանք շտապում էին օր առաջ հասնել իրանց նշանակած տեղին: Հեղինէի ուշ ու միտքը արդէն այն տեղ էր, նա ամենևին ուշադրութիւն չէր դարձնում ոչ բնութեան տեսարաններին, ոչ ճանապարհին պատահած անձանօթ գիւղ ու քաղաքներին, նոր-նոր մարդկանց ու զանազան արկածներին:

Սահառունին ու Վրթանէսեանը Ասունուց հեռադիր սաանալով, որ Ռոստովից դուրս էին եկել, անհամբեր սրտով սպասում էին նրանց: Բայց տեսնելով, որ ճանապարհորդները ժամանակին չեկան և երկու օր էլ սաստիկ մտատանջութեան մէջ անց կացնելուց յետոյ, նրանք չափազանց անհանգիստ եղան և էլ չը կարողանալով համբերել՝ վճռեցին գնալ Օդեսսա ճանապարհորդներին դիմաւորելու:

Իսկ այդ ժամանակ մեր արտասահման գնացողները դեռ սև ծովումն էին: Չորս օր էր որ նրանք ճանապարհ էին գնում: Ասունին ու Հեղինէն, որոնք երբէք ծով չէին տեսել, ապշեցին երբ որ տեսան զրանց աչքի առաջ փռւած ջրի անսահման տարածութիւնը: Սկզբում Հեղինէն բոլորովին գրաւել էր վեհ ու փառահեղ բնութեան թովիչ տպաւորութեամբ, բայց այդ երկար չը տևեց, շուտով զանազան մտածմունքներ սկսեցին պաշարել նորա միտքը:

— Ինչու էք տխրել, տիկին Հեղինէ, երկու երեք օր է մնում որ տեղ հասնենք, կարեկցաբար ասաց Ասունին:

Հեղինէն տրտում ու լուռ նայեց նորան:

Մինչև այժմ նա կարօտած փափագում էր ժամ առաջ տեսնել Սահառունուն, իսկ այժմ երբ շատ շուտով պէտք է իրազործէր նորա սրտի փափագը, նորա վրայ մի տեսակ զգացմունք եկաւ, որ աւելի վախի էր նման քան ուրախութեան: Մտածմունքներ փոշխալաճ յարաբերութիւնների անորոշութիւնը ու դրութեան նորութեան մասին, անյայտ ապագայի անորոշ պատկերը, մարդու հալածանքների ահը, սիրած անձնաւորութեան տանջանքներ պատճառելու երկիւղը պաշարել էին Հեղինէի հոգին: Նա յանկարծ յիշեց երեխայի գողացւելը, ցնցւեց ու հազիւ լսելի ձայնով արտասանեց:

—Ո՞ւր է դայեակը:

—Մուացե՞լ էք, որ նրան թողեցիք Վախառում քնած երեխայի մօտ, հանգստացրեց նրան Ասունին: Բայց ահա նրանք գալիս են:

Տեսնելով այն հայեացքը, որ Հեղինէն գցեց երեխայի վրայ, Ասունին հասկացաւ թէ ինչ էր կատարուում նորա հոգու մէջ, ինչ յիշողութիւններ էին տանջում նրան: Հեղինէն չը կարողացաւ իրան զսպել. բուգը կարծես խեղդուում էր. աչքերիցը մի քանի կաթիլ արտասուք թափւեց:

—Ինչեր էք անում, տիկին Հեղինէ. բախտաւորութիւնը այնքան մօտիկ է, իսկ դուք տխուր մտքերով էք պղտորում ձեր սիրտը: Գլուխս կը կտրեմ, թէ որ ձեր կասկածներից մէկնումէկը հաստատուի, աշխատում էր հանգստացնել Ասունին և նորա սիրտը բաց անելու համար սկսեց իւր հին սովորութեամբ զանազան կատակներ անել:

Տեսէք քաղաքն արդէն երևում է, մի ժամից յետոյ մենք այնտեղ կը լինէնք: Եթէ փոթորիկը մեզ պահած չը լինէր Վերչում, հիմա վաղուց հասած կը լինէինք, ասաց նա կատակախօսութիւններից յետոյ լորնէտ նայելով հեռում երևացող Օդեսսային:

Բայց զուր էր աշխատում Ասունին ուրախացնել Հեղինէին: Հեղինէն չէր կարողանում ազատել իրան տանջող հարցերից ու մնում էր խորատուգլած տխուր մտածմունքների մէջ: Նա այնքան զբաղւած էր այդ մտքերով, որ բոլորովին վերացել էր, ոչինչ չէր նկատում իւր շուրջը և սաստիկ ցնցւեց, երբ որ լսեց նաւի կապիտանի բացականչութիւնը—stop.

Մի րոպէ անցած շոգենաւը կանգ առաւ:

Ընդհանուր իրարանցումն ու աղմուկը սթափեցրին Հեղինէին և նա նայեց իւր շուրջը: Քաղաքը առաջիններին էր. ծովի ջուրը արևի ճառագայթներից ափսպէս շողշողում էր, կարծես ծածկւած լինէր միլլիոնաւոր փայլուն աստղերով: Շոգենաւերի արանքին անդադար չիտ ու առաջ էին սլանում բազմաթիւ նաւեր ու նաւակներ զանազան գոյնի ու մեծութեան: Աեանքը եռ էր գալիս. աղմուկը մարդու ականջ էր խլացնում: Մինչդեռ Ասունին զբաղւած էր նաւակ ընտրելով, որ շոգենաւից ավել գնան, Հեղինէն մտքամոլոր աչք էր ածում չորս բոլորքը. յանկարծ նորա հայեացքը շփոթւած ու անշարժ կանգ առաւ շոգենաւին մօտեցող նաւակներից մէկի վրայ:

նաւակի մէջ նստած մարդիկ կարծես ծանօթ լինէին նրան... Հեղինէն չէր հաւատում իւր աչքերին և մեխածի նման մնաց կանգնած տեղումը, կարծես վախենալով որ աչքից կորցնի իւր մտերիմ բարեկամների քաղցր դէմքերը: Բայց ահա բոլորովին մոտեցաւ նաւակը. Հեղինէի սիրտը թնդաց, դէմքը պայծառացաւ, աչքերը փայլեցին և նորա կրծքից ուրախութեան ճիւղուրս թռաւ, — նաւակով եկողները Սահառունին ու Վրթանէսեանն էին: Նրանք թափ էին տալիս թաշկինակները, Հեղինէն պատասխանեց նրանց նոյնպէս թափ տալով իւր թաշկինակը:

Ահա վերջապէս նաւակը կանգ առաւ: Հեղինէի ծնկները թուլացան, գլուխը սկսեց պտոյտ գալ: Տենդային սպասման րոպէները նրան ժամեր թւացին: Չ'ուզենալով իւր ու իւր սիրած մարդու հանդիպումը հետաքրքրական տեսարանի բան դարձնել կողմնակի մարդկանց համար, նա արագ-արագ վազեց ներքև դէպի տախտակամածը համարեա զուով քաշ տալով յետևիցը դայեակին: Վրթանէսեանը մի ակնթարթում թռաւ եկաւ նորա մօտ ու գրկեց նրան: Ասունին ու Սահառունին դեռ ուշքի չէին եկել ուրախութիւնից, որ նա Հեղինէին նստացրեց նաւակը ու երեսուային դայեակի ձեռիցն առաւ տեց նրան:

Վրթանէսեանն, Ասունին ու դայեակը նստեցին մի նաւակ ու առաջ ընկան: Հեղինէն՝ երեսան գրկին՝ ու Սահառունին յետևի նաւակումն էին: Նրանք կարծես չէին հաւատում, որ երևակայական չէ իրանց բախտաւորութիւնը, և շփոթւած սեղմում էին իրար ձեռք: Նրանք ուզում էին խօսել, բայց բերանները ոչ մի խօսք չէր գալիս... Սահառունին ջերմ համբոյր դրոշմեց Հեղինէի ձեռին և ոչ մի րոպէ անսահման սիրով լի հայեացքը չէր հեռացնում նորա երեսից: Հեղինէի ուրախութեանը չափ չը կար. նա կարծես քաղցր երազի մէջ էր գտնւում, կուրծքը ոյժով բարձրանում իջնում էր, դէմքը սաստիկ կենդանութիւն էր ստացել և նա կարծես ամբողջապէս լուսաւորւել էր ինչ որ պայծառ ճառագայթով ու ջահելացել էր մի քանի տարով:

— Վերջապէս կատարեց մեր սուրբ փափազը. մենք միասին ենք. այսուհետեւ էլ ոչ մի ոյժ աշխարհումս մեզ իրարուց չի կարողանալ անջատել: Ես ամեն զանազան կանեմ, ամեն ջանք գործ կը

դնեմ, սիրելիս, քո կեանքդ բախտաւորացնելու համար, յուզած արտասանեց Սահառունին ու մի ձեռով գրկեց նորան: Հեղինէն լուռ էր, բայց նորա ծով աչքերից սէր էր թափում: Այդ հանդիսաւոր թոպէին մուլ մտածմունքներ տեղ չէին գտնում նրանց մտքներում: Նրանք հոգով սրտով յափշտակել էին սուրբ սէրի զգացմունքով և նրանց թւում էր, թէ իրանց առաջ բացուում է մի նոր, մինչև այն ժամանակ անյայտ, աշխարհ, որի մէջ պէտք է անցնի այնուհետև նրանց կեանքը:

—Այս էլ ավեր, Հեղինէ, ուրախ-ուրախ ասաց Սահառունին, երբ որ նաւակը մօտեցաւ ծովեզրին, և ակամայ աչքերը յսռեց Հեղինէի մազերի մէջ երկացող մի սպիտակած գանգուրի վրայ: Ինչպէս տեսնում եմ, սիրելիս, շատ նեղութիւն պէտք է քաշած լինիս այս քանի ժամանակը, աւելացրեց նա:

—Սիրտդ հանգիստ պահիր, Գէորգ, քեզ հետ անց կացրած մի քանի երջանիկ թոպէները բաւական են մի քանի ամսւայ տանջանքներ վարձատրելու համար:

Վ Ե Ր Ջ:

ՄՄԲԱՏ ՇԱՅԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՀՐԱՊԱՐԱԿԱՒՈՍ

ԵՂԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆԻ

(շարունակութիւն 1)

III

Լեոնը ռուսահայոց ինտելիգենցիայի ներկայացուցիչն է։ Նորա վիշտը վաթսուոսկան թւականների մտածող և արդարամիտ հայ երիտասարդութեան վիշտն է, որ սկիզբ է առնում ազգային թշուառութեան տխուր զիտակցութիւնից։ Լեոնն այն սուտ իդէալիստներից չէ, որոնք բարձրագոյն դպրոցից դուրս գալուց չետոյ անմիջապէս խմորւում են եսամոլ ձգտումներով, փակւում են անձնական ինտերէսների նեղ շրջանում և իրանց քթից դէն ոչինչ չեն ուզում տեսնել։ Նա արհամարհում է այդ դատարկաշրջիկ «անգործ պճնասէրներին», որոնք կեանքները մաշում են մեծաշխարհային անմիտ զւարճութիւնների մէջ, սալոններում՝ հոմանիսների առաջ, ինչպէս երեւի և իրանց մեծաւորների առաջ, ստորաքարշ սպասաւորների պէս երեքտակ ձկնելով... Լեոնը զարշում է և այն կարծեցեալ ազգասէրներից, որոնց համար «ազգասիրութիւնը» լոկ մի պատրւակ է միամիտներին հարստահարելու. վերջապէս նա ծաղրում է և այն հայրենասէր «խեղազարներին» որոնք ուղիղ աչքով չեն կարողանում նայել ազգի պակասութիւնների վրայ և իրանց խանգարւած երեւա-

1) Տե՛ս «Մուրճ» № 3, 6 և 7-8.

կայութեան մէջ օրեղէն ամրոցներ են կառուցանում հայութեան համար: Լեռնը կատարեալ անկեղծութեամբ է սիրում իւր հայրենիքը: Նա լաւ է տեսնում այն մռայլ անդունդը, որ բաժանում է հայ աշխարհը լուսաւոր Եւրոպայից, և իւր հայրենակիցներին դէպի լոյս առաջնորդելու համար է որ նա գալիս է իւր ծննդավայրը: Բայց շատ տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ նա թողել է հայրական օջաղը: Մանուկ հասակում այդտեղ տեսածների ու լսածների միմաստ նա արդէն մոռացել է պանդխտութեան մէջ: Բնացած յիշողութիւններն էլ աղօտ են և չեն կարող տալ ճշգրիտ գաղափար հայ կեանքի մասին: Միակ աղբիւրը, որից Լեռնն օգտւում է իւր հայրենագիտութեան թերին լրացնելու համար, գրականութիւնն է ու պարբերական մամուլը: Յայտնի է որ Լեռնի ժամանակ այդ աղբիւրը ամփռան ցամաք էր, որ հազիւ թէ բուսարութիւն տար լուրջ հարցասիրութեան: Բայց և այնպէս, անուրանալի է, որ մեր կեանքի ընդհանուր պատկերը որոշակի է ցուանում նաև այդ ժամանակեայ մատենագրութեան մէջ:

Խնչ գիտակցութեան պիտի հասնէր Լեռնն այդ աղբիւրների հիման վրայ իւր հայրենակիցների վիճակը՝ եւրոպացոց համեմատութեամբ ուսումնասիրելուց յետոյ: Պարզ է որ

Հայոց ազգը տխուր անաստոյ,
Անբոյժ նետերով խոցած վիրաւոր,
Խաւար, նիւթապաշտ, երկչոտ և վհատ,
Սիրող չարութիւն և փառք անցաւոր:

Խնքն ըստ ինքեան խնդիր է ծագում, ի՞նչպէս պէտք է շէնցնել այդ անաստորը, ի՞նչպէս պէտք է բժշկել այդ վիրաւորին, ինչպէս պէտք է փարատել խաւարը կամ վերացնել նիւթապաշտութիւնը, երկչոտութիւնը, վհատութիւնը, չարութիւնը, անափառութիւնը... Գիտութեամբ լուսաւորւած Լեռնը այդ հարցին պատասխանում է. լուսով և գիտութեամբ: Բայց լուսոյ և գիտութեան ճանապարհները զանազան են, որովհետև տարբեր զարգացման և աշխարհայեցողութեան տէր մարդիկ միատեսակ չեն ըմբռնում լոյսն ու խաւարը, և շատ անգամ պատահում է, որ այն՝ ինչ մէկի համար լոյս է, միւսի համար խաւար է... Լեռնի ըմբռնումը

այդ մասին ամենից աւելի մօտ է Նազարեանցի տեսութեանը, հետեւաբար և հայկական կեանքը բարեոքելու նպատակով նորա առաջարկած հնարները չեն կարող խիստ տարբերել և իրօք, ինչպէս առիթ ունեցանք համոզւելու, գրեթէ չեն էլ տարբերում Նազարեանցի առաջարկած հնարներից: Բայց թէև մտքի շրջանում Լեոնը «Հիւսիսափայլ»-ի խմբագրի աշակերտն է, նորա գործողութեան եղանակը հասկէս որոշւում է Նազարեանցի ընտրած եղանակից: Բանն այն է որ Նազարեանցը գործում է գրով, այն ինչ Լեոնն ազդում է կենդանի խօսքով. մէկի զէնքը գրիչն է, միւսինը՝ լեզուն: Մէկը հրապարակագիր է, միւսը՝ պրոպագանդիստ: Երկուսի գործունէութեան եղանակների այդ տարբերութիւնից առաջանում է և երկուսի գործունէութեան ենթակայ միութիւնների տեսակի, քանակի ու որակի տարբերութիւնը. մէկը ուղղակի գործ ունի անորոշ միութեան՝ հասարակութեան հետ, այն էլ հասարակութեան մի փոքրիկ շրջանի՝ քիչ թէ շատ քաղաքակիրթ դասի հետ. միւսը իւր գործունէութեան ընթացքում շփւում է մասնաւոր անհատների, յաճախ՝ ոգէտ ամբոխի մոլեռանդ ներկայացուցիչների հետ: Վերջապէս տարբեր են նաև երկուսին շրջապատող աշխարհագրական, ազգագրական և կուլտուրական պայմանները, մէկը գործում է հայրենիքից հեռու՝ Ռուսաստանի սրտում, թէև հայերի համար, — միւսը միւսնոյն նպատակով Ռուսաստանից գալիս է հայրենիք: Տեսականապէս դատելով՝ Լեոնն աւելի զիւրութիւն ունի իւր ազգին գործնական օգուտ բերելու, քան Նազարեանցը. նախ՝ որովհետև բերանացի խօսակցութիւնը աւելի ազդու է՝ քան զրաւորը և երկրորդ՝ որ տեղն ու տեղը աւելի հեշտ է ծանօթանալ ժողովրդի ցաւերին ու կարիքներին, ապա ուրեմն և դարմանել նրանց, — քան հեռուից: Սակայն ունի՞ Լեոնը այդ ցաւերն ու կարիքները դարմանելու բաւականաչափ զօրութիւն և փրկարար միջոցներ՝ ահա խնդիրը: Մենք կը տեսնենք, որ ո՛չ, Լեոնը չի կանգնած իւր կոչման բարձրութեան վրայ. և եթէ Նազարեանցը, որպէս հրապարակախօս, իւր մեծ արժանաւորութիւններով հանդերձ՝ զերծ չը մնաց մի քանի խոշոր թերութիւններից ու մոլորութիւններից, ուսուցչի այդ թերութիւններն ու մոլորութիւններն են հէնց, որ ամենից առաջ աչքի են ընկնում աշակերտի գործունէութեան մէջ:

Ձերմ հայրենասէր սիրտ, նախապաշարութիւններից ազատ՝ պաշ-
տառ և լուսաւոր միտք, մաքուր և անյողողող հաւատ զէպի գի-
տութիւնը և մարդկային վսեմ իղէալները, կորովի և անկաշառ լե-
զու, որ միշտ պատրաստ է հարեածել շարը, կեղծն ու անիրաւա-
ցին, — այս բոլորը, միացած մի երկաթի կամքի հետ՝ մի յեղափո-
խականի վայել խիզախ, աներկիւղ ոգու մէջ՝ կազմում են Ստեփան-
նոս Նազարեանցի անկապտելի գրական արժանաւորութիւնները: Իւր
տաղանդի և բնութարարութեան այդ հիմնական յատկութիւնների միջո-
ցով Նազարեանցը արթնացրեց դարաւոր քնից մի խաւար՝ ասիացի
ժողովուրդ, բաց արաւ նորա աչքերը անցեալի ու ներկայի վրայ,
սկսեց սովորեցնել նրան զիտել ու քննել շրջակայ երեւոյթները,
պարզեց նրան իւր կոշումն ու նշանակութիւնը մարդկութեան ընդ-
հանուր յաւաստագիտութեան ասպարիզում և այսպիսով պատրաստեց
հող հայի կատարեալ ինքնաճանաչութեան և նորա բնածին հա-
րուստ ընդունակութիւնների ինքնուրոյն զարգացման համար:

Բայց Նազարեանցի միւլնոյն արժանաւորութիւնների մէջ թագն-
ւած է գուցէ և նորա պակասութիւնների աղբիւրը: Լուսատու
ատողի պէս փայլելով հայութեան մուսլ մտաւոր հորիզոնի վրայ,
այն էլ գիտնական պրոֆէսորի տիպոսով և բարեւեական լեզւադիտու-
թեան դոկտորի՝ աստիճանով՝ Նազարեանցը չափազանց բարձր կար-
ծիք ունէր իւր մասին և չափազանց ստոր կարծիք՝ այն շրջանի
մասին, որին կոչւած էր առաջնորդ: Իրան համարելով ազգի լու-
սաւորիչ ու գաստիարակ ¹⁾, Նազարեանցը սակայն ոչ մանրամասն
տեղեկութիւններ ունէր ազգի կեանքից, ոչ էլ բաւականաչափ հրա-

¹⁾ «Հրապարակախօս Չաչնի» մէջ Շահադիզեանը ի միջի ալլոց հե-
տեւալ անցքն է պատմում Նազարեանցի ուսանողութեան ժամանակից:
Մի անգամ հասարակաց կրթութեան մինիստր՝ Կոմս Ուվարովը, որ հետա-
քըքրում էր երիտասարդ հալ ուսանողի վիճակով և 850 թ. Նիւթական
նպաստ էր ուղարկել նրան, — գալով Դորպատ՝ հարցնում է համալսարանի
րէկտորից. «А гдѣ были черноглазый Назарьянцъ, о которомъ вы пи-
сали?» և ապա տեսնելով սեպեալ երիտասարդին, բացականչում է. «Мой
другъ, ты долженъ быть про свѣтителей Востока». Ո՞ւր գիտէ, դու ցէ
հէնց այդ հանդիսաւոր բոպէին Նազարեանցը ուխտեց իւր անձը ներկել
իւր ազգի լուսաւորութեան գործին:

պարակախօսական տաքտ: Նա զիտէր որ իւր «ասիացի եղբայրակիցները» տգէտ էին և անզարգացած, և այսու սովենայիւ, շատ անգամ առանց կշռելու նրանց զարգացման չափը, առաջարկում էր նրանց ընթերցանութեան համար ծանր, դժւարամարս նիւթեր: Այնտեղ, որտեղ պէտք էր դեռ ուսումնասիրել, Նազարեանցը երբեմն շտապում էր ուսուցանել. որտեղ պէտք էր քննադատել, ստէպ նա չէր կարողանում իրան զսպել, որ չը հայհոյէ. որտեղ պէտք էր լրջօրէն խորհրդածել, ստէպ նա բաւականանում էր ուրախութեան կամ յուսահատութեան ազդականերով, լիբիկական կամ ճարտասանական զեղումներով: Նազարեանցը լաւ չէր տեղեակ ժողովրդի հոգեբանութեանը. դարերի ընթացքում զարգացած հակումները, կազմւած, կարծրացած սովորութիւններն ու գաղափարները նա երազում էր արմատախիլ անել մի անդամից. անընդհատ յարձակելով զանազան դասակարգերի ու հաստատութիւնների վրայ, իսկ երբեմն առանց խղճահարեւելու՝ մերկացնելով նոյն իսկ մասնաւոր անհատների ներքին կեանքը...: Նազարեանցը չը զիտէր հաւասարակշռութիւն պահպանել մոքի և զգացմունքի մէջ. նրան պակաս էր փիլիսոփայական զարգացում. այստեղից բղիւնց նորա գործունէութեան հիմնական սխալը՝ այն է հասարակական ախտի այս կամ այն նշանը բուն ախտի տեղ ընդունելը...

Տիրապետող տգիտութեան շնորհիւ Նազարեանցի իսկական թերութիւններից շատերը աննկատելի անցան ժամանակակիցների համար. բայց զրա փոխարէն, դոյն տգիտութեան շնորհիւ՝ Նազարեանցի դէմ կազմւեց մի հզօր ընդդիմադրութիւն այն մարդկանց ջանքերով, որոնք իրանց անձի կամ իրանց դասակարգի վրայ էին փորձել «Հիւսիսափայլի» հարւածների ոյժը: Մտքերի այդ հակառակ հոսանքի դէմ՝ Նազարեանցը չը կարողացաւ ամուր պատուար դնել. այդ բանին արգելք էր լինում գործունէութեան համար ընտրած կենտրոնի առանձնացած դրութիւնը՝ հայութեան նկատմամբ, թարմ և անկախ գործիչների պակասութիւնը և գուցէ՝ խմբագրի վարչական անընդունակութիւնը, միացած նրա անսահման ինքնահաւանութեան հետ... Այսպիսով, «Հիւսիսասփայլը» ոչ զօրեղ կուսակցութիւն ստեղծեց, ոչ էլ բաւական թւով աշխատակիցներ գրաւեց: Գործի ահագին ծանրութիւնը ընկնելով խմբագրի վրայ՝ «ընդհանուր ազգային

լուսաւորութեան և դաստիարակութեան օրագիրը՝ վաղ թէ ուշ պիտի դառնար անգոյն, պատահական յօլաճների ժողովածու: Այդպէս էլ եղաւ իրօք. 1864 թւին՝ իւր նախնական ծրագիրը դեռ չ'իրագործած՝ «Հիւսիսափայլը» դադարեցրեց գոյութիւնը աշխատակիցների և մանաւանդ բաժանորդների սակաւութեան պատճառով:

Համանման պատճառները առաջ են բերում համանման հետեւանքներ. ինչպէս յաջողութիւն չ'ունեցաւ նադարեանցը, այդպէս էլ չէր կարող յաջողութիւն ունենալ Աւոնը: Անկարելի է կասկածանքի ենթարկել Աւոնի գաղափարների մաքրութիւնը, նրա ուղղամտութիւնը, նրա ձգտումների ազնւութիւնը. բայց չի կարելի համակրութեամբ վերաբերել և նրա մեծամիտ ոճին, նրա վարդապետելու անպատկառ յաւակնութեանը, անվայել մանէրներին... Մեծամտութիւնն և յանձնապատասխանութիւնը, լծորդած հիմնաւոր գիտութեան և անձնւիրութեան հետ, շատ անգամ բնականաբար՝ արժանաւորութեան տեղ էլ են անցկենում: Բայց երբ չը կայ այդ գիտութիւնը, երբ չը կայ այդ անձնւիրութիւնը, մեծամտութեամբ վարդապետողը երեւան է հանում միայն իւր մտքի անբովանդակութիւնը և իւր բարոյական ոչնչութիւնը. նա ջուր ծեծող է, նա Ֆրագեօր է, որ խօսում է ոչ թէ գործին ձշմարիտ օգուտ բերելու, այլ իւր արտիստիկական աշխնդով, իւր դիպկեկտիկական ընդունակութիւններով փայլելու: Համար: Անկեղծութիւնը պահանջում է խոստովանել, որ Աւոնը հէնց այդ տեսակ Ֆրագեօրի տպաւորութիւն է անում, թէ և նրա խօսքերի նպատակը անկասկած բարի է: Եւ իրաւի, շրջել քաղաքից քաղաք, ման գալ տնէ տուն, փողոցէ փողոց, խօսել ամեն տեղ բարձր հասարակական շահերից և միմիայն խօսել— համաձայնեցէք որ դա մի գործ է, որի համար ոչ մեծ խելք և գիտութիւն է պահանջում, ոչ էլ անձնական զոհողութիւն... Տեսնենք սակայն որքան խելացի են և նպատակադարմար՝ Աւոնի խօսքերը, որքան բարեկիրթ նրա մանէրները:

Իւր ուսուցչի նման Աւոնը սիրում է առանց ցաւի արմատը որոնելու, սրան և նրան նախատել ու պարսաւել, դատաւիտել ու մեղադրել, անտես անելով համեստութեան և քաղաքավարութեան կանոնները: Ինչո՞ւ հայ օրիորդները հայ ոգով չ'են դաստիարակւած, ինչո՞ւ նրանք չը գիտեն իրանց մայրենի լեզուն, ինչո՞ւ հինդերորդ

դարու հայ կանանց պէս չեն ոգևորում նրանք հայրենիքի սիրով։ «Վա՛յ անարժան թողներին օրին, որքան ցած ենք մենք, հողը մեր գլխին»... Հայրենասէր Լևոնի յանդիմանութեանը հայ օրիորդները պատասխանում են, որ մեզը իրանց ծնողներինն է, որ այդպէս են կրթել ու մեծացրել նրանց, և ահա մեր հերոսը մի անակնկալ և քստմենքի գիւտ արածի պէս՝ փրփուրը բերնին՝ բացականչում է.

Ուրեմն ծնողներ՛ր, ուրեմն հայր, մայր,
Պատճառ են այսչափ ազգասպանութեան.
Բայց ո՞ւր է ամօթ։—Ո՛վ անատակ դար,
Ո՛վ անջնջելի խայտառակութիւն։

Ի՞նչ պիտի ասէր Լևոնը, եթէ դիմէր օրիորդների-ծնողներին ու նրանք էլ մեզը իրանց ծնողների վրայ ձգէին... «Ուրեմն պապեր, ուրեմն տատեր?!...» Եւ այդպէս վայրիվերոյ է լինում մարդուս դատողութիւնը, երբ իրական յարաբերութիւնները լուրջ, հիմնաւոր և բազմակողմանի ուսումնասիրելու փոխարէն, նա վստահանում է իւր կարճ տեսողութեան կամ վառ երևակայութեան վրայ։ Բայց որքան էլ անտաքտ են Լևոնի յարձակումները մեր գեղեցիկ սեռի ներկայացուցիչների դէմ, նրանց հետ խօսելիս նա զոնէ յարգում է պատշաճի պահանջները։ Շատ աւելի անտաքտ և նոյն իսկ տմարդի է Լևոնի վարւողութիւնը հայ վաճառականների հետ։ Նթէ ոտով ու գլխով մանր հաշիւների մէջ թաղւած ազէս մեծատանը ներելի է կարծել թէ չգուտ ոսկին է իշխան աշխարհի—մի՞թէ ներելի է հրապարակախօսին, հասարակութեան մտաւոր և բարոյական այս առաջնորդին, այսպիսի լուտաքներով ջրել այդ թիւր կարծիքը։

Ո՛վ դուք հայ մարդիկ, ո՞ւր ազնւութիւն,
Քանի՞ դիզել էք ասականութիւն,
Զըկամիք սակաւ սթափւել քնից,
Թափել ցեցերը, զարթնել դադադից։

Վերին Պատուհաս ձեզ վրէժխնդիր.
Երկինք է հասել բողոքն աղքատի։
ՂԺ՛խք ընդդէմ ձեր, անէծք մահակիր. —
Ուռչո՛ւմ էք գանձով, բայց ո՞ր խեղճերի։

Նզովում եմ ես այդ պիղծ ճանապարհ,
 Որով հասել էք այդ կարողութեան,
 Որքան Աստուծոյ կանգնած է աշխարհ,
 Յեխով լցնելու են ձեր գերեզմանո

Դիցուք, մէկը, ջատագովէ Վեռնին, առարկելով, որ հայ վաճառականութեան բարոյականութիւնը վաղուց է որ ամենուրեք կասկածելի հռչակ է վայելում: Դիցուք, մեզ յիշեցնեն որ հայերիս մասին օտարների մէջ տարածւած անպատուաբեր կարծիքները, ծաղրական անեկդոտները իրանց ծագումը պարտական են գլխաւորապէս մեր վաճառական դասի արատներին: Դիցուք այդ այդպէս է, և Վեռնն այդ կէտում արդարադատ: Բայց կարո՞ղ ենք հօ պահանջել, որ հայ հոգեւորականութիւնը, որպէս կրօնական համայնք, արժանանայ մի քիչ աւելի մեղմ ձևերի մէջ ամփոփւած մեղադրութիւնների, [Եկուզ այդ մեղադրութիւնները բանաւոր հիմք ունենան: Դժբախտաբար մեր հերոսը այստեղ էլ ձևերի կատարեալ անընդունելութիւն է ցոյց տալիս. ազգադրած, կղերիկոսի սաղմոսերգութիւնը քսութեան կանչիւնի փողարկող իմաստակ, ընչասէր, անկրօն — ահա ինչ մարգարտաշար ածականներ է ընծայում Վեռնը հայ հոգեւորականութեանը՝ այդ հոգեւորականութեան մի նախնի մեծանուն ներկայացուցչի բերանով: Եւ միամիտ Վեռնը շարունակում է իրան համարել «ճշմարտութեան պարկէշտ առաքեալ, համեստ քարոզիչ»... խոստովանենք, որ այլտեղ պարկէշտութեան և համեստութեան սուրեն անգամ չը կայ, խոստովանենք, որ ամենաօգտակար գաղափարն անգամ, Վեռնեան ձևերով արտայայտւած, սպասածներիս հակառակ պատճեններ կարող է տալ, այդ սովորեցնում է մեզ պատմութիւնը, այդ ստում է մեզ մեր առողջ գատողութիւնը, այդ հաստատում է մեզ մեր ամենօրեայ փորձը: Մենք ուզում ենք որ լսեն մեզ, յարգեն մեզ, ընդունեն մեր առաջարկութիւնները, իրազօրծեն մեր աստուածաշունչ նախագծերը. ո՞վ լսէ մեզ, ո՞վ յարգէ մեզ, երբ մենք ինքներս ոչոքի չենք լսում, ոչոքի չենք յարգում. ո՞վ ընդունէ մեր առաջարկութիւնները կամ իրազօրծէ մեր գաղափարները, երբ մեր հրէշաւոր յանձնապատանութեամբ, մեր անգուսպ, անդուսն, ուսնձարձակ բերանով զրգում ենք ժողովրդի կրքերը, շարժում ենք նրա մէջ զայլովթ ու ատելութիւն մեզ դէմ և բնականաբար և մեր մոքերի դէմ... Եթէ

Վեոնին հարցնենք, հայերի մէջ իրան արժանի մարդ չը կայ, ամենքը նիւթապաշտ, ամենքն անհոգի, ամենքը լուսաւորութեան ղիւերիմ թշնամի... Մի հարցնող լինի, ապա Վեոնն ինքը զոյն խաւար, փշացած հասարակութեան ծնունդը չէ, կամ մի՞թէ նա միակն է իւր տեսակի մէջ, մի՞թէ Շանշեանը, Ռոստոմեանը Վեոնի ժամանակակիցները չէին. ո՞վ էր Վեոնի ձեռից բռնում, որ նա չը միացաւ այդպիսի ազնիւ, լուսաւոր անհատների հետ... Զէ', Վեոնը չէ ուզում տեսնել, կամ չէ ուզում խոստովանել որ հայերի մէջ կան իրան հաւասար, իրան հասկացող կամ հասկանալու ընդունակ մարդիկ, որոնց հետ պէտք է և կարելի է ձեռք ձեռքի տաւծ համերաշխութեամբ առաջ տանել ընդհանուր գործը, և երբ իւր անտաքտութիւններով նա կանգնեցում է իւր դէմ ամբողջ հասարակութիւնը և ինքը մնում է մենակ, ինչպէս Մարգարէն անապատում, էլի երևակայում է թէ իւր ամբողջ մեղը այն էր միայն, որ «չառ խօսեց, քիչ գործեց»... Իսկապէս, նա ոչինչ չը գործեց և չէր էլ կարող գործել, որովհետև հասարակական գործունէութեան համար բաւական չէ ազնիւ լինել ու տեսական զարգացում ունենալ, այլ անհրաժեշտ է բացի գրանից և ձեռնարկու ոգի, և անդրդւելի կամք, և հաստատուն հաւատ դէպի իդէալները, և լաջն ընկերական բնաւորութիւն և լարւած ուշադրութիւն դէպի հասարակաց կեանքի շնչերակի իւրաքանչիւր զարկը, և նուրբ ըմբռնումն ընդհանուր տրամադրութեան և այդ տրամադրութիւնից օգտուելու շնորհք, այսինքն այն ամենը ինչից որ գրեթէ զուրկ է Վեոնը. ի՞նչ զարմանք ուրեմն որ նրա վերանորոգութեան քարոզը արձագանք չը գտաւ ժամանակակիցների սրտերում:

Այնուամենայնիւ, սխալ կը լինէր Վեոնի անյաջողութեան պատճառը որոնել միմիայն նրա անձի մէջ. աւելի ուժեղ, աւելի տոկուն և գործունեաց բնաւորութիւնն էլ չէր կարող գործնական յաղթութեամբ դուրս գալ այն բազմաթիւ ցանցերի և որոգայթների միջից, որ դնում էր իւրաքանչիւր հասարակական գործիչի ոտի տակ մեր կեանքը մի երեք—չորս տասնամեակ մեղանից առաջ: Այդ այն ժամանակն էր, երբ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը խարխաւում էր դեռ միջնադարեան խաւարում, և հասարակութեան մի աննշան մասն էր միայն սկսել անել իւր կեանքի վրայ եւրոպական

քաղաքակրթութեան պատուաստման առաջին թույլ և երկչոտ փորձերը: Այդ այն ժամանակն էր, երբ նոյն իսկ ճշմարիտ լուսաւորւած հայերից շատերը շատ շուտ և շատ հեշտ էին խրուում այն բարոյական տղմի մէջ, որտեղից դուրս էին եկել իրանք. իսկ այդ լուսաւորւածներից ոմանք էլ իրանց ազնւութեամբն հանդերձ կատարեալ անտարբերութիւն էին ցոյց տալիս դէպի հայ հասարակութեան կենսական շահերը: Հայրենիքի պատուական, անձնէր որդիք, որոնց մատնիքի վրայ կարելի էր հաշուել, իրար դեռ շատ քիչ էին ճանաչում և թէ իրանց աշխարհագրական դրութեան և թէ իրանց մտաւոր զարգացման տարբերութեան պատճառով՝ գործում էին բաժան-բաժան կամ մանր խմբակներով: Իրերի այսպիսի վիճակի մէջ՝ նոր գաղափարները հասարակական յարաբերութիւնների և հաստատութիւնների մէջ մարմնացնելը հսկայական ջանքեր էր պահանջում: Նա մի սերնդի գործ էր. հարկաւոր էր զոնէ երկու յաջորդական սերունդների տաժանելի աշխատանք. մէկը այդ սերունդներից՝ պիտի յանձն առնէր ժողովրդականացնել նոր գաղափարները, մոցնել նրանց հասարակաց գիտակցութեան մէջ. միւսը պիտի յանձն առնէր իրագործել այդ գաղափարները կեանքի մէջ: Յիսնական և վաթսնական թւականների հայ ինտելիգենցիային վիճակեց լուծել առաջին խնդիրը, բայց նա չը կարողացաւ վերջնականապէս լուծել նրան: Նրա սխաժ գործը շարունակեց և աւարտեց երթանասնական թւականների հայ ինտելիգենցիան, որին միւսնոյն ժամանակ պատկանում է և երկրորդ խնդրի լուծման սկզբնաւորութիւնը: Յիսնական թւականների մարդիկ աւելի խօսքի մարդիկ էին. եօթանասնական թւականների մարդիկ թէ խօսքի մարդիկ էին և թէ գործի: Սակայն սրանց գործունէութեան մէջ էլ խօսքն էր գերակշիռ դեր կատարում, և անհրաժեշտ էր մի նոր սերունդ, որ հաւասարակշռութիւն ստեղծէր հասարակական գործունէութեան այդ երկու գլխաւոր տարրերի մէջ. այդ հաւասարակշռութիւնն ստեղծել արդեօք ութսնական թւականների ինտելիգենտ հայ երիտասարդութեանը չէ վիճակւած... Ինչ և իցէ, բայց այս սերունդներից իւրաքանչիւրը ունի իւր յատուկ նշանակութիւնը մեր հասարակական և մտաւոր կեանքի զարգացման մէջ: Վարելի է վիճել, ում գործն էր աւելի դժւար, բայց անվիճելի է, որ ինչպէս ամեն տեղ, այդպէս էլ մեզա-

նուժ առաջին շրջանի գործիչների համար գայթակղութիւնների աւելի լստարի թէր ներկայացնում, քան վերջինների համար: Յիսնական և վաթնական թւականներում գործող ինտելիգենտ հային աւելի մեծ բարոյական ոյժ էր հարկաւոր անհաւասար կուռում չ'ընկնելու համար, աւելի վեհ սիրտ, աւելի արի հոգի, աւելի կենդանի հաւատ էր հարկաւոր՝ իդէալներից չը հրաժարւելու, կէս ճանապարհից չը վերադառնալու համար, վերջապէս աւելի մեծ շրջահայեցողութիւն էր հարկաւոր ծայրայեղութիւնների մէջ չ'ընկնելու, կատաղի մաքառման մէջ՝ գլուխը չը կորցնելու համար: Եւ շատե՛րն ընկճւեցին, շատերը հրաժարւեցին իդէալներից, շատե՛րը կորցրին գլխները... Այդ գլուխ-կորցրածներից մէկն է և Շահաղիզեանի հերոսը. նա վաթսունական թւականների այն գործիչների տիպն է, որոնք հին դադափարների և աւանդութիւնների դէմ կուռելով՝ չ'իմացան իրանց եռանդի մէջ չափ ու սահման պահել: Հանդէս գալով հասարակական կեանքի մի այնպիսի բուլէում, երբ ճշմարտութեան ձայնը, իրաւ որ, դժւար էր խաղաղութեամբ լսելի անել թմրած հասարակութեան ականջին, այդ գործիչները երեւակայեցին, որ այդ հասարակութիւնը սթափեցնելու ամենաազդու և միակ-նպատակայարմար միջոցը հասարակական վերքերը մի առ մի՝ դահճի խտտասրտութեամբ բանալն է ու այդ վերքերի իսկական անուները տալը... Նրանք մոռացան կամ չ'իմացան, որ ինչպէս լաւ մանկավարժ չէ նա, որ տարին-տասներկու ամիս իւր սաներին նախատեղով է պարապում. ինչպէս լաւ բժիշկ չէ նա, որ հիւանդին միայն թոցներով է դարմանում կամ առանց ալլեալութեան յայտնում է նրան իւր վտանգաւոր հիւանդութեան անունը, — այդպէս էլ լաւ հասարակական գործիչ չէ նա, որ աջ ու ձախ հայհոյելը սիստեմ է դարձնում ու երեւակայում է թէ կրթում է հասարակաց միտքը, վեհացնում, ազնւացնում է նորա ոգին...

(Վերջը միւս համարում)

ՍՈՌԱՑԻԱԾ ԽՕՍՔԵՐ

(ԿՈՄՍ Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ՄՏՔԵՐԸ)

Ե. ՂԱԶԱՐԵԱՆՅԻ

I

Մեր ժամանակի ամենամեծ ռուս գրողը, որի նշանաւոր Крейцера Соната վէպը աչնքան աղմուկ և խօսակցութիւն բարձրացրեց թէ ռուսաց մամուլի և թէ հասարակութեան մէջ, վերջին անգամ հրատարակեց էլի մի նշանաւոր չօղւած, որ զարձեալ շատ խօսակցութեան և մտածողութեան նիւթ տւեց մամուլին։ Իմ խօսքը՝ Լ. Տոլստոյի „Для чего люди одурманиваются“?։ վերնագրով փիլիսոփայական գրածքի մասին է։ Ռուսաց ազատամիտ մամուլը՝ երկար ժամանակ բողոքելով Տոլստոյի բռնած «վարդապետական» ուղղութեան դէմ, վերջ ի վերջոյ եկաւ այն եզրակացութեանը, որ ինչքան էլ միակողմանի և տարօրինակ մտքեր չափոնէ հանձարեղ արւեստագէտ-միլիտանը, ինչքան էլ սխալ լինին նորա կարծիքները՝ գիտութեան և աշխարհայայտութեան մասին, զարձեալ նորա հրապարակախօսական դործունէութիւնը մեծ օգուտ է տալիս ռուս հասարակութեանը և մամուլին՝ թէկուզ միակ այն բանով, որ Տոլստոյ «զարթեցնում» և քննութեան առարկայ է դարձնում շատ խորը բարոյական և փիլիսոփայական հարցեր... Տոլստոյի նման մի ալ ականաւոր տաղանդ— Շչէգրին, իւր մահաւնից առաջ՝ չիչեցրեց ռուս հասարակութեանը մի քանի «մոռացւած խօսքեր» (забытые слова), որոնք են՝ ճշմարտութիւն, սէր, առաքինութիւն, հալոյնաւորութիւն և այլն։ Ի հարկէ Շչէգրին բուլտովին ալ կերպ էր նշում այդ բարոյական հասկացողութիւնները վերայ, քան թէ Տոլստոյ, բայց հետաքրքիրը այն է, որ այդ երկու ռուս հոկաներն էլ՝ հաւասարաչափ ուժով և տաղանդով՝ հարկաւոր են համարում՝ միևնույն ժամանակի և միևնույն պայմանների մէջ, չիչեցնել մարդկութեանը, որ աշխարհիս երեսին սէր կալ, ճշմարտութիւն կալ, խիղճ

կալ, մարդասիրութիւն, հպրեհասիրութիւն և ալ բարձր գաղափարներ կան, որոնք մոռացած են ալժամ, որոնք առ ոչինչ են համարուամ՝ ալժամեան գրական և հաշւագէտ դարում: Այս հանգամանքը ամենից հետաքրքիր և բնաորոշ է թէ մեր ժամանակի և թէ ալդ երկու մեծ մարդոց վերաբերութեամբ: Եւ ճշմարիտ. ինչ է նշանակում այս, որ մարդկութեան ամենաընտիր զաւակները, զանազան հանգամանքներից օլուտ քաղելով՝ սնդադար աշխատում են բարձրաձայն քարոզել՝ ճշմարտութիւն, սէր, խիղճ, աղնութիւն, առաքինութիւն... Ինչ է նշանակում այս: Միթէ ալդ մտքերը վաղուց քարոզւած, վերջացած չեն մարդկութեան համար, միթէ ալժամեան քաղաքակրթւած կուլտուրական Նւրոպան կարօ՞ւ է ալդ տեսակ քարոզութիւնների,—ալն Նւրոպան, որի գիտութեան և տեխնիկայի զարգացումը հրաշքներ է կատարում մարդոց առաջ: Ալն ինչ Տոլստոյ՝ դարձեալ շարունակում է իւր քարոզութիւնները, դարձեալ և դարձեալ աշխատում է վիշեցնել մարդկութեանը և իւր հպրեհակիցներին, որ ալդ զիտութիւնը, ալդ տեխնիկան, ալդ աշխարհահանդէսները և աշտարակները (Էլիֆէլեան) ոչինչ են, ոչինչ՝ համեմատելով ալն մեծ չարիքի հետ, որ տիրում է կեանքի մէջ, և ալդ չարիքը ալն է, որ չը կալ սէր, չը կալ մարդասիրութիւն, չը կալ խիղճ, որոնք աղնացնում, բարձրացնում և իսկական գեղեցկութիւն են տալիս մարդոց կեանքին:

Տոլստոյի, Շչէզրինի և ման խոշոր անձնաւորութիւնները, որոնց վիշտը և ուրախութիւնը, մտքերը և տանջանքները՝ բոլորովին գուրս են իրանց անձնական, նեղ աշխարհի սահմանից, որոնք իրանց մէջ ամփոփում են միլիոնաւոր մարդոց պիտոջքները և հոգսերը,—ալդ տեսակ ընդհանուրի կեանքով ապրող մարդիկ՝ մի մի կատարեալ ծանրաշափ կարող են համարել՝ մարդկային ազգի բարեւաւութեան և երջանկութեան աստիճանը չափելու համար: Նրանց բողոքը հաւասար է միլիոնաւոր ամբոխի բողոքին, նրանց ուրախութիւնը, վիշտը, ցանկութիւնները և չոցսերը, արտայայտում են նոյն միլիոնաւոր բազմութեան պահանջները, կարիքը, վիշտը...

Եւ ինչպէս որ ծանրաշափի բարձրանալով, կամ իջնելով, գուշակւում է ապագալ եղանակը, ալնպէս էլ՝ ալդ մեծ մարդոց զգացուն սիրտը գուշակում, նախատեսում է մարդկութեան ապագան, վաղօրոք տանջւում, կամ ուրախանում է ալդ ապագայի տեսարանով: Ահա ալն է պատճառը, որ չը նաւելով Լ. Տոլստոյի քարոզութեան ակներև մոլորութիւններին, չը նաւելով ալն բաղմաթիւ հերքումներին և ընդդիմախօսութիւններին, որ ամեն կողմից թափւում են Տոլստոյի վերալ թէ Ռուսաստանի և թէ նոյն իսկ արտասահմանեան զրողների կողմից՝—դարձեալ նոյն իսկ վիճողները, նոյն իսկ նորա մտքերի և գաղափարների դէմ սատարիկ բողոքողները՝ չեն կարողանում արտասանել Տոլստոյի տնունը՝ առանց խորը, ներքին երկիւղածութեան և պատկառանքի:

Տոլստոյի հանճարը, նորա բարոյական խոր զգացմունքները և մտքերը,

նորա հոգեկան տանջանքները, որ առաջ են գալիս ժողովրդի, ամբոխի ցուերը մօտիկ դիտելուց և հասկանալուց — աչս ամենը ներշնչում են մարդու՝ ակամալ պատկառանք «ակամալ սէր և երկրպագութիւն» դէպի նա... Կարելի է չը համաձայնել Տոլստոյի հետ, կարելի է վիճել, բողոքել նորա մտքերի դէմ՝ բաց չի կարելի անտարբեր մնալ դէպի նա, չի կարելի հոգեպէս չհենթարկել նորա բարոյական ուժի ազդեցութեանը։ Եւ այդ բարոյական ուժը ոչ ալ ինչ է, եթէ ոչ նորա ընդունակութիւնը՝ հասկանալ ամբոխի ցուերը, զգալ իւր ամբողջ հոգու զօրութեամբ՝ միլիօնաւոր բազմութեան առօրեայ պիտութիւնները և թշառութիւնը։ Եւ եթէ Տոլստոյ իւր այդ բոլոր հոգեկան և բարոյական ուժերով հանդերձ՝ չի դադարում «սէր», «եղբայրութիւն», «խիղճ» քարոզել, եթէ նորա չուսահատութիւնը այն աստիճան է հասնում, որ նա, չանուն բարձր քրիստոնէական սկզբունքների՝ սկսում է հերքել ալժմեան գիտութեան և քաղաքակրթութեան տւած պտուղները («плоды просвѣщенія») — այդ նշանակում է, որ իրաւ, մեր ժամանակի մարդիկ չափազանց մոռացել են իրանց խիղճը, չափազանց ոտնակոխ են անում իրանց եղբայրսիրական և մարդասիրական պարտականութիւնները։ Այդ միեւնոյնը վկայեց և Շչէդրին, վիչեցնելով մարդոց՝ իւր նշանաւոր «Утопающая совесть...» «Правороваались людшки, остатки совѣсти потеряли» — ահա թէ ինչ էր գրում Շչէդրին՝ իւր կիանքի վերջին տարիներում։ Ընկնելով «խղճի» ետեւից, ամեն կերպ աշխատելով մարդոց մէջ խիղճ վարթեցնել՝ Տոլստոյ վերջապէս տեսնում է, որ միայն քարոզութիւնով չի կարելի վարթեցնել մարդոց խիղճը, — և նա սկսում է մտածել այն բնական պատճառների վրայ, որոնք խլացրել, համարեա ոչնչացրել են մարդոց մէջ՝ խղճի ատուածալին ձայնը...

Նա մտածում, մտածում և վերջապէս գալիս է այն եզրակացութեանը որ մարդկային խղճի ամենամեծ թշնամիները, այն առօրեայ, տարածւած սովորութիւններն են, որ մենք անւանում ենք՝ ծխել և հարբել, կամ խմել։ Ոգեորւած իւր այս նոր մտքով՝ թէ նա գտել է խղճի մեռցնող, խլացնող պատճառները՝ Տոլստոյ սկսում է գրել այդ իւր միտքը, սկսում է ապացուցանել, որ ծխախոտը, գինին, արաղը, զարեջուրը, խաշխաշը, օպիումը, եթերը, մօրֆիումը և ալ քնեցնող, թմրեցնող, կամ թէ զրգուղ նիւթերը, միակ և գլխաւոր պատճառներն են, որ քնացնում, թմրեցնում և մարդոց խիղճը... Իւր այս միտքը Տոլստոյ ամփոփեց մի չօղւածի մէջ, որի վերնագիրն է. «Для чего люди одурманиваются?»: Եւ կաշխատեմ ծանօթացնել հալ ընթերցողին այդ գրւածքի գլխաւոր կէտերի հետ։

II

Պէտք է ամենից առաջ նկատել, որ Տոլստոյի բոլոր վարդապետական-փիլիսոփայական գրւածքները չունին գլխաւոր բնաւորութիւն, թէև

ինքը չատ անգամ ալդ «տոնով» է գրում. նորա բոլոր մտքերը և եղբայրացութիւնները հիմնւած են՝ իւր սեփական փորձերի և դիտողութիւնների վրայ, բոլորովին անկախ որ և է ուրիշ գիտնական, կամ փիլիսոփայական ուղղութիւնից: Նոյն եղանակով և նոյն ուղղութիւնով գրած է նաև մեղ հետաքրքրող շարադրութիւնը: Որովհետև ամբողջ չօղւածը գրած է խղճի մասին, խղճի արթուն լինելու, կամ խլանալու, մեռնելու մասին, ուստի Տոլստոյ նախ մի հոգեբանական որոշում է տալիս թէ՛ ինչ բան է խիղճը: «Գիտակցական կեանքի ժամանակ»—ասում է նա—«մարդ կարող է երկու տարբեր էակներ նշմարել իւր մէջ. մէկը—կոյր, զգալական, միւսը—տեսնող, դիտող, հոգեկան: Կոյր, կենդանական էակը՝ ուսում, խմում, հանգստանում, քնում, բազմանում և շարժւում է, ճիշտ ալնպէս, ինչպէս որ շարժւում է՝ լարւած մեքենան: Տեսնող, հոգեկան էակը, որ կապւած է կենդանականի հետ, ինքը ոչինչ չի անում, այլ միայն գնահատում, քննում է կենդանական էակի գործունէութիւնը, ներդաշնակում, միանում է նորա հետ, երբ հասնում է նորա գործունէութեանը,—բաժանւում, դատւում է նրանից՝ երբ չի հաւանում նորա գործունէութեանը»: Ահա ալդ տեսնող, դիտող հոգեկան էակին՝ Տոլստոյ անւանում է խիղճ: Սա նման է մի կողմ-նացոյցի, որի սլաքը մի ծայրով ցոյց է տալիս դէպի բարին, միւս ծայրով՝ դէպի չարը: Երբ մարդու մէջ կենդանական, կոյր գործողութիւնները հաւանութիւն են գտնում խղճի կողմից՝ աչն ժամանակ խղճի սլաքը ուղիղ և անվրդով կանգնած է լինում. ալդ նշանակում է, որ մարդու խիղճը և գործերը ներդաշնակ են, համաձայն են իրար հետ: Իսկ երբ կենդանական էակի գործունէութեան ընթացքը դուրս է գալիս խղճի ցոյց տւած ճանապարհից, աչն ժամանակ խղճի սլաքը սկսում է վրդովւել, դուրս է գալիս իւր խաղաղ դրութիւնից, բաժանւում, դատւում է աչն ճանապարհից, որով սկսել է գնալ կոյր, անասնական էակը,—և ալստեղ սկսում է մարդու մէջ աչն սոսկալի գործողութիւնը, որ կոչւում է խղճի խալթոց, խղճի տանջանք... Այս դրութիւնը անտանելի է մարդու համար. մարդը չի կարող աչս հոգեկան երկպառակութեանը երկար դիմանալ և, ալդ պատճառով, անդադար աշխատում է՝ համաձայնութիւն կապեցնել խղճի և անասնական էակի գործունէութեան մէջ: Երկու միջոցով մարդ կարող է խղճի տանջանքից ազատւել, 1) իւր ներքին, անասնական գործողութիւնները և ձգտումները համաձայնեցնելով խղճի պահանջմունք—ների հետ (սրան Տոլստոյ անւանում է нравственное просвѣщение) և 2) պահելով, թաքցնելով իրանից՝ խղճի տանջանքները,—ապրելու, կեանքը շարունակելու նպատակով: Մարդոց ամբողջ կեանքը ալդ երկու գործողութիւններից է բաղկացած. ոմանք աշխատում են իրանց կեանքը և գործերը համաձայնեցնել խղճի հետ, աշխատում են միշտ հետևել խղճի ձայնին. իսկ ոմանք էլ, ընդհակառակ՝ խղճի տանջանքներից ազատւելու համար աշխատում են մոռանալ խիղճը, աշխատում են իրանք իրանց հաւատաց-

նեւ, որ իրանց կատարած գործերը բոլորովին արդար և համաձայն են խղճի պահանջներին, կամ թէ չէ՝ ուղղակի աշխատում են խլացնել, մեռցնել իրանց մէջ խղճի ձայնը... Ահա այս վերջին տեսակի մարդիկ որոնց մէջ խղճի գործունէութիւնը սաստիկ ուժեղ է, որոնք չեն կարողանում հասարակ միջոցներով դադարեցնել իրանց խղճի խալթը, ահա այս տեսակ մարդիկ Վ. Տոլստոյի կարծիքով՝ գիմում են հարեցողութեան, ալսինքն, արհեստական միջոցով թունաւորում են խղճի գործարանի,—ուղեղը, որպէս զի չը զգան նորա տանջանքները, որպէս զի կարողանան, ալ մոռացութեան մէջ՝ շարունակել իրանց կեանքը։ Սակայն ընթերցողը չը կարծէ թէ՛ Վ. Տոլստոյ ալստեղ խօսում է «արեցողների» մասին, ինչպէս որ ընդունւած է հասկանալ այդ խօսքը.—ոչ, оцурманиваться—նշանակում է՝ ենթարկել որ և է խմիչքի, կամ ծխախոտի թամբաքուրի ազդեցութեանը։ Օրինակ՝ ծխախոտի գործածութեան նպատակը՝ իւր տեսակէտից՝ բացատրելու համար, Տոլստոյ երկար օրինակներ է բերում կեանքից՝ թէ առօրեայ սովորութիւնների և թէ բացառիկ դէպքերի վերաբերեալ։ Նա ուղում է ապացուցանել, որ մարդիկ՝ ծխախոտին գիմում են այն ժամանակ, երբ զգում են որ և իցէ ներքին, հոգեկան տանջանք, ներքին անհամաձայնութիւն,—երբ ուղում են խլացնել իրանց խղճի ձայնը, որ բողբում է նրանց վատ արարքների դէմ։ Նորա „Крейцера Собака“ վէպի մէջ՝ հերոսը—Պողոնիշով՝ իւր կնոջը սպանելուց լետո՛ց գնում է իւր առանձնասենեակը և... ծխում է։ Գինու, օղիի և ալ խմիչքների գործածութեան մասին նույնպէս շատ հետաքրքիր օրինակներ է բերում Տոլստոյ։ Նա պատմում է թէ՛ ինչպէս մի խոհարար, որ ուղեցել է սպանել իւր տիրուհուն, չի կարողացել ալ գործը կատարել, մինչև որ խմել է երկու բաժակ օղի. օղիի ազդեցութեան տակ՝ խոհարարը սպանել է իւր տիրուհուն։ „Трезвому совѣстно“!—լսել է մի անգամ Տոլստոյ ժողովրդի բերանից և ալդ խօսքերի մէջ գտնում է այն զլխաւոր պատճառը, որ մարդիկ գիմում են արեցուցիչ միջոցների։ Պատեհազմի ժամանակ,—ասում է Տոլստոյ,—երբ գինւորները սրերով պիտի կուեն, միշտ նրանց հարեցնում են. Սկաստապուրի պատեհազմին՝ Փրանսիացոյ զինւորները բոլորը հարած էին։ Գինու, օղիի և ծխախոտի գործածութիւնը շատ նպաստում է կանանց բարոյապէս ընկնելուն։ Նրեխաները, համարիս միշտ՝ ծխել սկսում են այն ժամանակ՝ երբ նրանք կորցնում են երեխաւական անմեղութիւնը։ Այս տեսակ բաղմամթիւ օրինակներով՝ Տոլստոյ աշխատում է ապացուցանել իւր միաբը, ուղում է ցոյց տալ, որ գինին, արաղը, ծխախոտը և ալլն՝ այն տեսակ միջոցներ են, որոնցով մարդիկ կարողանում են թմրեցնել, խլացնել իրանց խիղճը, որպէս զի նա չբողբէ մարդկային թերութիւնների և անիրաւ գործերի դէմ...

III

Ամենից շատ նշանակութիւն է տալիս Տոլստոյ գինու, արաղի և, մանաւանդ, ծխախոտի առօրեայ, չափաւոր գործածութեանը, որ սաստիկ տարածւած է ալժմեան հասարակութեան մէջ՝ իբրև մի սովորութիւն, իբրև մի հասարակ և անմիաս պիտոյք։ Նւ որովհետեւ՝ թէ խմելը և թէ ծխելը՝ մեռցնում, խլացնում են մարդու մէջ խիղճը,—ուրեմն, ինչ սարսափելի հետեանքներ կարող է ունենալ այդ,—հարցնում է Տոլստոյ։ Նւ մանաւանդ՝ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ չափաւոր խմելու և ծխելու սովորութիւնը մեծ մասամբ տարածւած է կրթւած, ինտելիգէնտ կոչւած դասակարգի մէջ, ալն դասակարգի, որ առաջնորդող է հասարակական կեացքի բոլոր ասպարէզներում։ Ուրեմն դուրս է գալիս, որ հասարակական բոլոր գործերի ղեկավարները, մեծ մասամբ՝ դաժանում են խմիչքի, կամ թամբաքւի քնեցնող, հարբեցնող, թմրեցնող ազդեցութեան տակ,—թէ քաղաքական, թէ պաշտօնական, թէ գիտնական և թէ գրական ասպարէզներում՝ Տոլստոյի ասելով՝ գործում են անառողջ, թմրած, հարբած մարդիկ... Իւր չօղւածի վերջը հասնեալ խորհրդածութիւնն է անում Տոլստոյ։

«Ահա ամբողջ տասնեակ տարիներ է, որ Ներոպալի բոլոր ազգերը զբաղւած են նրանով, թէ ինչպէս մարդասպանութեան ամենալաւ միջոցներ հնարել և ինչպէս բոլոր հասակն առած երիտասարդներին՝ մարդասպանութիւն սովորեցնել։ Ամենքը գիտեն, որ բարբարոսների չարձակումը երբէք չի կարող տեղի ունենալ, որ այդ՝ եւրոպական քաղաքակիրթ և քրիստոնեայ ազգութիւնների բոլոր սպանութեան պատրաստութիւնները՝ միմեանց դէմ են ուղղւած։ Ամենքը գիտեն, որ այդ ծանր է, ցաւալի է, անչարմար է, աւերիչ է, անբարոյականութիւն է, անաստածութիւն է, չմարութիւն է,—և ամենքը պատրաստում են միմեանց սպանելու, ոմանք զանազան քաղաքական կոմբինացիաներ են անում՝ թէ ովքեր միասին պիտի միանան և ում սպանեն, ոմանք առաջնորդում են սպանութեան պատրաստողներին, միւսներն էլ՝ հակառակ իրանց կամքի, հակառակ խղճի, հակառակ առողջ դատողութեան՝ ենթարկւում են այդ սպանութեան պատրաստութիւններին։ Միթէ լուրջ, առողջ դատողութեան տէր մարդիկ՝ կանգնին այդ բանը։ Միայն հարբած և հարբածութիւնից երբէք աչք չը բացած մարդիկ ընդունակ են այդ բանը անելու, միայն նրանք ընդունակ են ապրելու՝ կեանքի և խղճի այդ զարհուրելի հակասութիւնների մէջ, ինչպէս որ ապրում են միւս ամեն կողմով էլ՝ մեր աշխարհի մարդիկ»։

Սառնասիրտ ընթերցողը գուցէ ժպտալ այս բոլորը կարգալուց ցետու... Ի հարկէ՝ Տոլստոյի այդ միակողմանի չափազանցութիւնները կարող են շատերի դէմքին ժպիտ բարուցանել։ Այո՛, Բաց միւս կողմից՝ ճոքան խորը, զրամասնիկական տարր կալ նորա հանճարեղ մոլորութիւնների

մէջ, ի՞նչ է որոնում և ի՞նչ է ուզում Տոլստոյ: Ինչի՞ նա՝ թողած մի կողմ իւր ահագին գեղարւեստական տաղանդը, թողած աշխարհի բոլոր վազելքները, բոլոր շլացուցիչ փառքը և պատիւը՝ հովւական զաւազանը ձեռքին՝ քարոզի պաշտօն է կատարում ժողովրդի մէջ: Ի՞նչն է նրան ստիպողը՝ խորասուզել զուտ բարոյական խնդիրները մէջ, մոլորուել, խճճւել, հակասութիւններ անել...

Այդ բոլորի պատճառը՝ նորա խորը, զգացուն և մարդասէր սիրտն է: Այդ սիրտն է, որ ստիպում է նրան զգալ կեանքի սարսափելի չարիքը, այդ սիրտն է, որ դրդում է նրան բողոքել՝ մարդոց անարդարութեան, անխղճութեան դէմ, այդ սիրտն է, որ հանգիստ չի թողնում նրան, որ անգաղար նրան դրվում է՝ որոնել, փնտրել մարդոց թշւառութեան պատճառները: Տոլստոյի բարոյական ուղղութիւնը, նորա քարոզութիւնները՝— խղճի, մարդասիրութեան, եղբայրասիրութեան մասին՝ միւս կողմից ապացուցանում են թէ՛ սրբան մոռացւած են այժմեան հասարակութեան մէջ աչն նշանաւոր «խօսքերը»— խիղճ, ազնւութիւն, եղբայրասիրութիւն, հաւրենասիրութիւն և այլն, — որոնք, իբրև կտակ՝ աւանդեց իւր հայրենակիցներին Շչէդրին երգիծաբանը:

ՄԵՐ ԳՐԵՐԻ ԹԻԻԸ ԻՆՉՈՒ ԷՐ 36

Դ. ԱՂԱՅԵԱՆՅԻ

Պակաս գրեր ունենալը և, իբրև այդ պակասութեան հետեանք, մէկ գրին մի քանի հնչիւն չափակեցնելը մի բնական երևութ է գրերի նոր հնարած ժամանակ, որովհետև ոչ մի գիւտ ծնունդ չի առնում իւր հասուն և կատարեալ վիճակի մէջ, կատարելութիւնը մի անհրաժեշտ է ժամանակի ընթացքում, թէև, զժբախտաբար, շատ անգամ էլ եղած անկատար գիւտը քարանում, մնում է անշարժ հանճարաւոր չափնագործողի իսաւարամիտ փոնորդների շնորհիւ: Վիւտը մի մտաւոր ծնունդ է և ունի իւր չղութիւնը: Վիւտ անողը առաջ չղանում է անելի գիւտով և չեաօլ չափնագործում, ծնում: Ամուշ մտքերը ոչ միայն գիւտ անել կարող չեն, այլ և ոչ իսկ ըմբռնել կարող են եղածի նշանակութիւնը: Վտնել կարող է միայն սրտնողը, եթէ միայն գտնելի է որոնածը, իսկ եթէ ոչ՝ նա կարող է և ցնորամիտ լինել: Ուղիղ ճանապարհով դէպի գտնելի առարկան գիմելը, զրանելու շափ արմէք ունի, որովհետև դարձնով կիսով չափ կը հարթէ ապագայ որոնողի դործը: Աւտէս մէկը ցոյց կը տալ ուղին, միւսը կը դանէ, երրորդը կը կատարեւագործէ: Բայց թողնենք այս միջանկեալ դատողութիւնը, և դառնանք մեր գլխաւոր առարկային:

Ասացինք, որ բազմահնչիւն գրեր ունենալու պատճառն ալն է, որ ալբուբենի մէջ չեն լինում ալնքան գրեր, որքան որ լեզւի մէջ հնչիւն կալ, բայց թնչ բանի պէտք է վերագրենք մի հնչիւնի համար երկու, երեք և աւելի ևս գիր ունենալը, թնչ հարկից են ստիպւած լինում ալն բանն անելու: Ինչո՞ւ համար, օրինակ՝ վրացոց գրերի մէջ կան երեք հօ և երկու խէ իրարից անտարբեր հնչիւն ունեցող, ինչո՞ւ մենք մէկ ւը հնչիւնի համար գործ ենք ածում երկու գիր և և Վ (Նոյնահնչիւնների կան և սլաւոնական գրերի մէջ: Մեր խօսքն ալտեղ ալն գրերի մասին չէ, որոնք ժամանակի ընթացքում կորցնում են իրանց նախնական ձալը և նոյնանում մի ալն հնչիւնի հետ, և ոչ էլ ալն գրերի, որոնք մէջ են բերւում օտար

բառեր պրեզու համար, և որոնք նույնպէս կորցնում են իրանց ձախը և նույնանում մի ալ գրի հետ)։

Վրացիք իրանց նույնահնչիւն գրերի ծագումը գրերի թւագրութեան պաշտօնի ազդեցութեան են վերագրում, և ալս պատճառով էլ նրանք իրանց աւելորդ գրերն արտաքսել են նոր գրականութիւնից, ապացուցանելով, որ դրանք աւելորդ են եղել նոյն իսկ զրոյ լեզւումը, խուցերէնում։ Այս բանը հաստատում է և պոետֆէստոր Չուբինովը իւր բառարանում, ասելով՝ թէ հնումը արաբական սխտեմի թւագրութիւն չկար, ալս պաշտօնը աւել էին գրերին աչնպիսի սխտեմով, որի համար պէտք էին 37 գիր, և որովհետեւ լեզւի մէջ աչգրան հնչիւն չի եղել, ակամպիցս աղ թիւը լրացրել են միենոյն հնչիւնի համար մի քանի գիր հնարելով։

Թէ գրերի թւագրութեան պաշտօնը մեծ ազդեցութիւն է ունեցած գրերի թւի վրայ, ալս նոր բան չէ, միայն սուսնձին ուսումնասիրութեան նիւթ չի դարձած, ալս հանգամանքի վրայ ոչ ոք չեղած չէ։ Այս իսկ բռնաբան, երբ ալս նիւթը հետազօտելու վրայ եմ, Բուսլալուի պատմական քերականութեան մէջ տեսնում եմ աւսած, որ սլաւոնական ղէլօ գիրը միայն թւագրութեան համար է դործ ածուել և բառագրութեան մէջ չի մտել մինչև տասնհինգերորդ դարը։ Այս միենոյնը կարելի է ասել և վրացոց հօյ գրի մասին, նա ևս ոչ մի բառագրութեան մէջ մտած չէ, եթէ ոչ միայն սխալմամբ գուցէ, ալ վարեւել է իբրեւ տասը հազար նշանակող մի թւանշան ¹⁾։

Այս հանգամանքից երևում է, որ բառագրութիւն և թւագրութիւն միաժամանակ չեն հնարում, նախ բառագրութիւնն է և ապա թւագրութիւնը։ Բառագրութիւն և թւագրութիւն ջոկ ջոկ պահանջներ ունին։ Բառագրութեան մէջ մէկ գիր կարող է մի քանի հնչիւնի պաշտօն վարել, օրինակ մէկ գիր կարող է վարել «, ա, օ, ու» ձայների պաշտօնը, մի ալ գիր՝ է, է, է, յ ձայների, բաց մէկ գիր կարող չէր, ընդունած սխտեմով, մի քանի թւի պաշտօն վարել։ Եթէ մտքներումը զրել են վերջին գրի թւական արժէքը մինչև իննը հազարի հասցեն, ապա ուրեմն եթէ բառագրութեան համար գործածուող գրերի թիւը զրանից պակաս լինէր, պէտք է կամայ ակամայ նրանց թիւը մինչև 36-ի հասցնէին, թէկուզ դորա համար պէտք լինէր նույնահնչիւն գրեր հնարել։ Եւ ալսպէս էլ արել են վրացիք, իսկ հայերը...

Մեր և վրացոց գրերը միաժամանակ գտնուելով և միասին կատարելագործուելով մինչև նրանց բաժանելը մեր եկեղեցուց, փոխադարձաբար պիտի ազդէին միմեանց վրայ թէ բառագրութեան և թէ թւագրութեան

¹⁾ Եթէ պ. Սարգիս Սարգսեանին տալ հանգամանքը յայտնի լինէր, նա չէր ասիլ մեզ աւած պատասխանում, թէ մէկ հնչիւնի համար երկու գիր հնարելու կարիք չի եղել։

կողմանէ: Ճշմարտ է, մենք չունինք տասը հազար նշանակող գիր. մեր վերջին գիրը, որ է 4էն, իննը հազար է, բայց այս չնչին տարբերութիւնը կարող չէ հերքումն լինել վրացոյց և մեր գրերի սերտ չարաբերութեան: Աւելի հաւանական է, որ նորանց վերջին հօջ գերը շատ փոքր լինին ներս բերած և հէնց գուցէ այս է եղել պատճառը, որ բառագրութեան մէջ մուտք չի գտել: Արացիք կարող էին գրել իրանց քն և քն գրերը, և դա կը լինէր տասը հազար, ինչպէս հալք գրել են ծ և ւ: Տասը հազարի համար մերոնք գործ են ածել և քեւք բառը, բայց սա աւելի շատութիւն ցոյց տուող մի անորոշ թիւ էր, և ասուում ու գրում էր բնւր և ոչ բււր, որի պարսկերէնն է նոյնպէս բնւր, իսկ վրացերէն բէւրի, որ նշանակում է բազում, շատ:

Մեր գրերի 36 թիւը և վերջին գրի իննը հազարի արժէք ունենալը մի զուգադիպութիւն չէ, այլ գիտակցաբար եղած: 36 թիւն հասնելը և նորա վրաց կանգ առնելը երևում է սկսած գործի կիսակատար լինելուց: Եթէ 36 թիւը մի տեսակ սահման և կէտ նպատակի չը համարէին, աչն էլ թւագրութեան շնորհիւ, գրերը կամ կաճէին աստիճանաբար և կամ նոյն թիւն չը հասած՝ կը քարանձալին մի սոոր աստիճանի վրայ: Եթէ մենք իմանանք թէ արդեօք ո՞ր դարում են մեր գրերին թւագրութեան պաշտօն տուել, նոյն դարուց առաջ մեր գրերի թիւը 36-ից պակաս կը գտնենք, և պակաս կը լինին է, է, յ և Վ գրերը, որովհետև նշաններ կան, որ այդ գրերը չնդած, արդէն կաղմակերպւած գրականութիւն է եղել, պառջին երեք գրի տեղը բռնած է եղել եջը, իսկ վերջինի տեղը՝ Վիւնը:

Հակադեան բառարանի ասելով՝ Թրակացու քերականութեան թարգմանիչները դուրս են մղել Վ գիրը, նոյնահնչիւն համարելով Վիւն գրին, բայց թէ ինչից ստիպւած կրկին ներս են բերում, այս մասին լուում է բառարանը: Մեզ անչափ լինելով բառարանի ունեցած աղբիւրը, չիմանալով նաև, թէ ստուգ Երբ է թարգմանել Թրակացին, քանի որ ապացուցւած չէ, որ Դսուիթը լինի եղած նրա թարգմանողը կամ նրա ընկերներ. ից մէկը, մենք այսու ամենաչնչ կարող ենք վճռաբար ասել, որ եթէ վեր բոլորովին դուրս մղէին, պէտք է մի ալ գիր հնարէին, որ գրերի թիւը 36-ից չը պակասէր: Ուրեմն եթէ դուրս չեն մղել, պատճառը նրա թւագրութեան արժէքն է եղել: Այս էլ պէտք է ասել, որ դուրս մղելու չափ սահմանափակել են վիւ գործածութիւնը նշտանըչորս տեղից միայն մէկ տեղ չատկացնելով նրան:

Քիչ առաջ տեսանք, որ թւագրութեան համար հնարւած նոյնահնչիւն գրերը բառագրութեան մէջ չեն մտնում կամ չափ ուշ են մտնում: Այս միևնույն վիճակին ենթարկուում են և աչն վերջնամուտ գրերը, որոնք իրանց նոյնահնչիւնը չեն ունենում, ալ ներս են բերում բաղմահնչիւն գրերի գործը թեթեւացնելու համար: Սրա պատճառն աչն է, որ երբ դրանք հնարւում են, այդ ժամանակ արդէն լաւ թէ վատ, սխալ թէ ուղիղ, գոյու-

թիւն ունեցող բառակազմութիւն է լինում, հեղինակութիւններ և թարգմանութիւններ են լինում, և որ առաւելն է՝ կատարւած է լինում արդէն Սուրբ Գրքի թարգմանութիւնը, որից ոչ մի տառ և ոչ մի կէտ փոխել ալ ևս կարելի չի լինում։ Հին գրերը սուրբ են համարւում, նորերը՝ ոչ։ Բնականապէս ալ գրերը դեռ մի առ ժամանակ պէտք է միայն թւագրութեան պաշտօն կատարեն, մինչև հնութեամբ սրբանան, մարդիկ մոռանան նրանց նորութիւնը։ Մուտք գտնելուց չետոյ էլ ալ գրերը չեն գրաւում բոլոր իրանց սեփական տեղերը, ալ շատ բառ մնում է նախնական ձևի մէջ կամ մի ալ կերպարանափոխութիւն է ստանում։ Նրա տեսնում ենք, որ այս կամ այն գիրը այս վիճակն է ենթարկւած, առանց կասկածելու կարող ենք ասել, որ նույն գիրը վերջնամուտ է։ Ասածիս համար մօտիկ ժամանակից մի օրինակ բերենք։ Մեր օ գիրը ներս բերին, որ աշունհետև փոխանակ ա երկտառ գրելու, գրեն մի պարզ օ, բայց դրա գէմ օ գիրն սկսեց մրցել, որովհետև ալ գիրը արեմուտքումը, լուծաց բաժնում և չետոյ Տաճկաստան դառել էր օ. չէին ասում մեզ պէս որո, որդի, ոսկի և ալն, ալ օրբ, օրդի, օսկի և ալն։ Աշունհետև փոխանակ ալ վերջաւորութիւնը չինելու օղ, գրեցին ալ Ինչից գիտենք արդեօք, որ ի սկզբանէ անտի մեր հին ուղղագրութիւնը հալոց մէջ ամենալն տեղ միակերպ է պառլ գնացել, ինչից գիտենք, որ լուծաց բաժնում լուծական ուղղագրութեան աղղեցութեան տակ չէր գտնւիլ և պարսից բաժնում՝ պարսից։ Կարելի է հեշտութեամբ ենթադրել, որ հնումը միաժամանակ գրւած երկու մատենագրութեան մէջ մէկում ալ ուղղագրութիւն լինի, և միւսում՝ ալ. օրինակ մէկում է լինի, միւսում՝ եչ, մէկում Վ լինի, միւսում ա, մէկում յ լինի, միւսում՝ ոչ, ևսլն։ Ուզում եմ ենթադրել, որ գրերը կարող էին 36 լինել երկու տեղն էլ, և Յունաց և Պարսից բաժնում, բայց Պարսից բաժնում վերջնամուտ գրերը գործ չածէին բառագրութեան մէջ, իսկ Յունաց բաժնում գործ ածէին, մէկ տեղ գրէին՝ էի, էիր, էր, միւս տեղ եի եիրեր։ Ահա այս տարբերութիւնը, որ հիմա էլ նկատում ենք, 4րդն ալ, ինչպէս սովորութիւն են ունեցել մեկնելու մեր քերականները և իրանց խելքով ուղղելու, ալ վերջնամուտ գրերի չփոխութիւն։

Նրբ նկատում ենք, որ մի գիր իւր հնչիւնը միայն բառասկզբումն է գործ դնում, իսկ բառամէջում և բառավերջում՝ ոչ. մի ալ գիր՝ բառամէջում և բառավերջումն է գործ դնում, իսկ սկզբումը՝ ոչ. դարձեալ մի ուրիշ գիր բառասկզբում և մէջում գործ է դնում, միայն վերջումը՝ ոչ. սրանից առանց սխալւելու դալիս ենք ալն հզրակացութեան, որ նրանցից մէկը վերջնամուտ է, և նա է վերջնամուտ, որի բաժինը սակաւ է, ալսինքն գրաւած տեղը քիչ է։ Այսպէս վերջնամուտը կըլ չէ, ալ կն, ոչ լիւնը՝ ալ վլը։ Գրում ենք վան, իսկ հակադարձը՝ նաւ, և ոչ նալ. սորա հակառակ գրում ենք նաւ, բայց ոչ ւան, ալ վան, հաւ և վաճ, հով և ոչ վոճ. Բառասկզբում ալ գրում է, բայց Վ՝ ոչ, և մենք չունինք ոչ մի բառ, որի

սկիզբը լինի զո: Թող հէնց ալս հանդամանքից տեսնեն աշխարհ, որ մեր
 « գիրը ի հնուց անտի բառակցում եղել է աւ և ոչ օ ¹⁾»: Վերջնամուտ և
 նորոհանջիւն գրերի պատճառով մեր հին բառագրութիւնը բնականից շեղ-
 ւելով՝ արեւոտականի է փոխել: Արեւոտական է, օրինակ՝ գրել՝ աւ, ինչ-
 պէս առաւօտ և չը գրել հակադարձը՝ օւ. կարելի է գրել աւ, ինչպէս
 արեւ, բայց ոչ ու, պարիճքն ուր: Գրում էին տունջեան և կարդում տուն-
 ջեան, գրում էին սունու, և կարդում սունվու, գրում էին դունաւ և կար-
 դում դունվաւ, ալսպէս էլ նուէր=նուլէր, նուտղ=նուլաղ, և այլն: Այսպիսի
 օրինակներ մեծք կարող ենք շատ և շատ բերել, ապացուցանելու համար,
 որ վերջնամուտ գրերը բառագրութեան մէջ չնչին տեղ են զբաղել բայց և
 ուղղագրութեան մէջ լաւաջ են բերել մի տեսակ արեւոտականութիւն:

Հնումը ինչ եղել՝ եղել է, հինը ոչ չտկել կարող ենք, և ոչ նորոգել,
 սակայն գիտենալ պէտք է, թէ ի՞նչ է եղել և ինչո՞ւ համար, որպէս զի աղբ
 հանդամանքից օգուտ քաղենք մեր նոր գրականութեան, նոր լեզու ուղ-
 ղագրութեան համար: Ահլ հարկաւոր է մի պատմական բարեխիղճ ուսում-
 նասիրութիւն մեր հին լեզուի ուղղագրութեան, սկսած հինգերորդ դարուց
 մինչև մեր օրերը: Այս բանը կարելի է անել միամտամանակ երեք կենտրոնում,
 Էջմիածին, Վենետիկ և Վիեննա: Ի հարկէ հետազօտութիւնը պէտք է լինի
 ամեն բարեխիղճութեամբ, ազատ որ և է տենդէնցիալից:

1) Այս հանդամանքի գրաւ դարձնում ենք համեմատական լեզուագիտութեան
 մագիստրոս պարոն Տամոնի բարեհաճ ուղղութիւնը:

ՍԻՐՈՑ ՊԱՏՐԱՆՔ

(«Լեւելինա», հոգեբանական էտիկա, ճեղ. Գ. Արծրունու)

ԵՐՈՒԱՆԴ ԳԱՋԱՐԵԱՆՑԻ

Նրբ մեր վիպական կամ թատերական գրածքների մէջ պատահում ենք անաջող սիրուղ գէպերի մենք այդ շատ բնական ենք գտնում և բոլորովին հասկանում ենք թէ ինչ է նշանակում այդ։ Նրբ Սունդակեանցի Անանին («Լէլի մէկ զոն») երկար սիրալին տանջանքներից չնստո՞ւ ոտիպւած է լինում հրաժարել իւր սիրած տղամարդուց՝ իւր ծնողների կամքը կատարելու համար, երբ այդ հաջ օրիորդը կամաւոր դո՞ւ է դառնում ընտանեկան բռնութեանը՝—այդ ամենը շատ հասկանալի և բնական է մեզ՝ հայերիս համար։—չէ՞ որ կլինի ստորակ է մեր մէջ, չէ՞ որ նա «իրաւունք չունի» իւր կամքով տմ ուղենալ՝ սիրէ, ում ուղենալ՝ ատէ... Այսպիսով՝ հաջ վիպասանը, կամ թատերագիրը բոլորովին իրաւացի է, երբ նա իւր գրածքների մէջ գուրու է բերում ալնալիսի հաջ օրիորդներ, որոնք կարծես սիրա չունին բոլորովին, կարծես նրանց մէջ սիրուղ զգացմունքը առնուառի, հաշտապիտութեան մի նիւթէ է, կամ, աւելի ճիշդ ասած՝ որոնց սէրը ալնքան թուլ, ալնքան մերկնալական է, ամեն րոպէ պատրաստ է ենթարկւելու ծնողական կամքի, ծնողական հաշլւների ազդեցութեանը։ Մեր մէջ սովորական բան է, եթէ մի երիտասարդ «չանդգնութիւն» է ունենում սիրալին բացաւրութիւն անել մի օրիորդի հետ և նրանից փոխադարձը պահանջել՝—«ծնողներիս հարցրէք» կը լսէ օրիորդի բերանից։ Այդ նշանաւոր «ծնողներիս հարցրէք» խօսքերով՝ հաջ օրիորդը ցոյց է տալիս իւր բարոյական ոչնչութիւնը, ցոյց է տալիս, որ ինքը՝ լինելով ծնողների զաւակ, պարտաւոր է՝ աւելի հնազանդուել իւր ծնողների կամքին, քան թէ հետեւի որ և է ներքին հոգեկան ուժով և մարդալայել ձգտման։ Հաջ օրիորդը, հաջ կլինը մտածել անգամ չի կարող այդ «բարձր բաների» մասին, նա շատ լաւ ճանաչում է միայն իւր պարտաւորութիւնները, շատ լաւ գիտէ, որ օրիորդը պիտի հնազանդ լինի իւր ծնողներին,

կինը—տղամարդուն, ուրիշ ոչինչ: Այդ հնազանդելու գաղափարը և զղացմունքը կազմում են մեր հալ ընտանիքի գլխատուր: Հիմաքարը, հնազանդելու կոչը, սարկական ոգին թափանցում է մեր ընտանիքի բոլոր չարամբություններին մէջ՝ սկսեալ ամենաչնչին առօրեալ բաներից, մինչև անհասանելի հոգեկան խնդիրները: Ահա, աչտ է մեր հալ ընտանիքի բարոյական միջնորդը, և աչգալտի խեղդող, վարչահոտ միազմեհրով լի միջնորդը չի կարող խոր մէջ մտնանել և փափազել սիրալ քնքու: Ենդելի պտուղը: Այդ պտուղը դեռ ևս բուրբուրի կանաչ և խակ՝ սկսում է թափամել, ցամաքել և վաղը թափուել, կեանքը կորցնում է խոր բոլոր գեղեցիկութիւնը՝ խորասուզելով առօրեալ հոգսերի և զուտ անասնական վաղիքների, գցացմունքների մէջ: Այս անասնական խեղդող, ճնշող և ամեն մարդկային բարձր զգացմունք ոչնչացնող հանգամանքների մէջ ապրելիս, մենք հաւերս և, մանաւանդ՝ հալ կինը, հալ օրիորդը՝ սատարիկ փափաղում ենք գոնէ լսել, գոնէ կարդալ թէ՛ ինչպէս են ապրում ուրիշ, աւելի լուսաւոր և կրթանիկ երկրներում, մարդիկ ինչպէս են սիրում, ինչպէս են սերտաւորում, տխրում, ինչու՞մն է կազանում նրանց կրթանիկութիւնը, նրանց վիշտը, նրանց հոգեկան բարոյական պահանջմունքները: Այդ ամենը սատարիկ հետաքրքիր է մեզ համար, որովհետեւ մենք մեր տանը ոչինչ չունինք, ոչինչ չենք տեսնում՝ բացէ թանձր և լուռ իրաւարի թագաւորութիւնից: Իսկ աչտեղ, մեղմից հեռու, հեռու Եւրոպայում՝ լուս կալ, արեղակ կալ, ջերմութիւն կալ, որ տաքացնում, լուսաւորում է կրթանիկներին: Տեսնենք՝ ինչպէս են ապրում աչտեղ, տեսնենք:— Այն ահա մենք տեսնում ենք...

II

Առաջին անգամը չէ, որ պ. Գ. Արծրունին փորձ է անում ծանօթացնել մեզ եւրոպական կեանքի հետ: Նորա «Մի տարի Շւէյցարիալում» վերնագրով ճանապարհորդական գեղեցիկ գրեածքը գեռ. ամենքիս վիշտ-զուլթեան մէջ է: Ես չիշում եմ, թէ որպիսի չափաւորութեամբ կարգացում էին «Մշակ»-ի համարները, որպիսի բարձր ոգևորութեամբ լցում էր ընթերցողի սիրտը՝ կարդալով Շւէյցարիալի կեանքի, Նիստ ու կաղի, հասարակական, ընտանեկան չարաքերութեան գեղեցիկ նկարագրութիւնները: Իսկ աչտմ հասարակութիւնը, համարեա նոյն չափաւորութեամբ կարգաց պ. Գ. Արծրունու «Լէլինա» վէպը, որ վերջրած է դարձեալ եւրոպական կեանքից: Ահա այդ պատմութեան բովանդակութիւնը: Մի հալ ուսանող՝ (որի ազգանունը չալտնի չէ), կոստանտինապոլսեցի, որ սկարութեան պատճառով ապրում է Ֆրանսիալի ծովկորեալ Նիցցա քաղաքում, պատահամբ աչտեղ ծանօթանում է մի ֆրանսիացի օրիւրդի հետ, Լէլինա անունով՝ և սիրահարւում է նորա վերալ: «Լէլինան գեղեցիկուհի էր՝ աչլ ըստ ի բուն նշանակութեամբ, գէմքի շատ նուրբ գծադրութիւն-

Ներքին ու երեսին մարթիի սպիտակ գոյնի հետ, նա իւր սև լոնքերի տակ ունէր Միջերկրական ծովի ջրի պէս կապուած, արտադարձ աչքեր, չքեղ չաղանակադպն մաշկը, փոքր ինչ հաստ, բայց հրապուրիչ չրթուեքներ, դորա հետ միասին և վերին աստիճանի շնորհալի կաղմածք ու քաղլւածք... Նորա դէմքի գծագրութիւնը փոքր ինչ հրէական էր... Սրիորդը երաժշտուէր էր և ածում էր զաշնամուրի վրայ: Ան ածում էր սրանչիւ կերպով. մատներն ամենման էր, փոքրիկ ձեռքերն ուժը անբեկակալելի էր...»

Ահա այս տեսակ ոգևորիչ խօսքերով նկարագրում է հալ ուսանողը այն օրիորդին, որը հէնց առաջին անգամից կախարդել, դերի է դարձրել խեղճ երիտասարդին: Սակայն որքան էլ նա կախարդւած լինէր Լւէլի-նալի կապուած աչքերով, դարձեալ ստիպւած էր հետանալ Նիցցայից և գնալ Շւէյարիա՝ ուսումը շարունակելու: Մանաւանդ որ օրիորդը իւր կողմից ոչ մի սիրալին ակնարկ չէր արել ուսանողին, բացի այն, որ մնաս թարովի ժամանակ, իւր կապուած, հրաշալի աչքերով, խորը տխրութեան արտադրութեամբ, նայել էր նորա աչքերի մէջ... Այն ժամ ընդունենք, որ կանաչ իրանց սէրը աչքերի հայեացքով ևն արտադրուած, եթէ ընդունենք, որ կինը իւր սիրած աղամարդուն բոլորովին ուրիշ կերպ է նախում, քան թէ այլ մարդոց, — և այդ սիրալին նաչւածքը չի կարող կեղծ լինել կանանց մէջ՝ — այն ժամանակ ուսանողի արած ենթադրութիւնը թէ՛ Լւէլինան ճշմարիտ անտարբեր չէր դէպի նա, հաւանօրէն ձիւղ կը լինէր: Հալ երիտասարդը մտնում է Յիւրիսի համալսարանը, ամբողջովին կլանւում է գիտութեան բարձր գաղափարներով, բայց Լւէլինայի այդ վերջին հայեացքը դարձեալ չի դուրս գալիս նորա երեակապութիւնից, նա շատ անգամ ծածուկ սոսցնէր էր հանում այդ աչքերի համար: Բայց այդ ամենը ի հարկէ կ'անցնէր, եթէ ինքը Լւէլինան նորից տեղիք չը տար ուսանողի սիրալին զգացմունքներին, եթէ օրիորդը չգար ուսանողի ետեւից Շւէյարիա և Նրան, մի կախարդական նամակով՝ իմաց չը տար իւր գալու մասին: Այս ասում եմ «կախարդական» նամակ, որովհետեւ այդ նամակը գրւած էր վարդազոյն թղթի վրայ և նրանից անուշ հոտ էր գալիս... Կարելի է երեակապել թէ Բենչպէս կաղզէին այդ ֆանտաստիկական գոյնը և հասը սիրահարւած երիտասարդի վաւեր երեակապութեան վրայ: Գորա հետեանքը այն է լինում, որ ուսանողի ցարաբերութիւնը Լւէլինայի հետ՝ նորից վերակազմում է, առաւել բուռն և ջղալին ցնցումներով լի զգացմունքներով համդերձ: Երիտասարդը այն աստիճան կլանւում է Լւէլինայի սիրով, որ առանց նրան, առանց նորա ներկայութեան չի կարողանում կտրոնաւոր և լուրջ պարագել, նա կարողում է և չի հասկանում Պրուդոնի շարադրութեան միտքը, իսկ գնալով օրիորդի մօտ, լսելով նորա դաշնամուրի հնչիւնները, այդ զիւթական հնչիւնների աղղկութեան տակ բացւում են նորա մտաւոր աչքերը և նա սկսում է հասկանալ Պրուդոնի կար-

ծիրքը՝ Աստուծոյ դադաւարի մասին... Եւ կարծեմ՝ սրանից էլ աւել չի կարող լինել սիրոյ ազդեցութիւնը՝ մարդու վրայ: Եւ մանաւանդ որ այդ սէրը շրջապատւած էր բոլոր էսթէտիկական չարմարութիւններով, Շէշ-ցարիայում, ուսանողական անհոգ կեանք, դաշնամուրի մեղմ հնչիւններ, կապուտ օրիորդական աչքեր, քնքոյշ, ստեղծագործող արւեստադիտական կանացի ձեռքեր—և, որ ամենազլխաւորն է՝ մի հալ երիտասարդ, հարուստ հնոգների զաւակ՝ բնութիւնից օժտւած առատ հոգեկան ձիրքերով, իդէալիստ, շուտ ողորուող, արեւելեան տաք բնաւորութիւն:

Այս ամենը շատ նպաստում էին հալ երիտասարդի սիրային զգացմունքները վառելուն և նա անհամբեր մտածում էր թէ՛ երբ պիտի վերջացնէ իւր ուսումը, որ ամբողջ հոգով անձնատուր լինի սիրած էակին: Բայց նորա «սիրած էակը», զժբազտաբար, ալն դուրս չեկաւ, ինչ որ նա կարծում էր... Լւէլինան, կրկին վերադառնալով Նիցցա, պարապում է իւր արւեստով, ընդունում է ամեն կողմից հրաւերներ՝ մասնակցելու դաշնադան երաժշտական ներկայացումներին, դասեր է գտնում մասնաւոր տնւորում և, այդ բոլոր աշխարհային հոգսերի ու զբաղմունքների մէջ՝ նա աւնքան է լողնում, աւնքան է զլւում՝ իւր աշխատանքով ապրելու կեանքից, որ հալւում է դէպի մի հարուստ խաղանացի վաճառական նկարչի, որը խոստանում է օրիորդին հանգիստ խաղաղ կեանք, ազատ ամեն տեսակ հոգսերից ու զբաղմունքներից: Այսպիսով Լւէլինան հրաժարւում է իւր հալ իդէալիստ երկրպագուից, հրաժարւում է ալն բոլոր հոգեկան վալեւքներից, որ խոստանում էր նրան երիտասարդ ուսանողը և դորա տեղ ուղւում է ստանալ հաստատ ապագայով, անհոգ և խաղաղ կեանք: Մէկ խօսքով՝ Լւէլինան ուղւում է ալն տեսակ կեանքով ապրել, որին ուսանելը անւանում են — „Мѣщанское житье“: Իսկ այդ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, և ահա թէ ինչու:

III

Բանը նրանումն է, որ Լւէլինան՝ իւր բոլոր արտաքին զեցեցկութիւնների ու շնորհքների հետ միասին՝ չունի ալն ներքին հոգեկան ուժը, որ կոչւում է մարդասիրական զգացմունք, այդ խօսքերի ընդարձակ նշանակութեամբ: Պ. Արծրունու պատմութեան հերոսը ասում է, որ «օրիորդը ջոկւում էր միւս ֆրանսիուհիների մեծ մասից՝ իւր քաղմակողմանի դարգացմամբ»: Բայց ամբողջ պատմութեան մէջ, բացի երաժշտական հմտութիւնից՝ ուրիշ մի առանձին բան չենք նշմարում Լւէլինայի մէջ, որով գաղափար կազմէինք նորա քաղմակողմանի դարգացման մասին: Եւ եթէ ուղիղը խոստովանելու լինենք՝ օրիորդի զեղեցիկ աչքերից ու փորրիկ, ստեղծագործող ձեռքերից լսող՝ հէնց այդ երաժշտական հմտութիւնն էր, որ ամենից շատ դուր էր զալիս նորա երկրպագու հալ ուսանողին:

ձյամարիտ՝ Լէւէլինան իացի Փրանսերէնից, կատարելապէս տիրապետում էր անգլիերէն և գերմաներէն լեզուներին, ծանօթ էր ալլ երկու ազգերի գրականութեան հետ, սակաւն չափնի չէ թէ՛ ալլ երկու մեծ գրականութեան մէջ ինչ բանն էր գրաւում Լէւէլինալին, արդեօք օրիորդը ունէր մի որոշ գաղափարական ձգտում, որոշ սկզբունք, ինչով կարողանար ստաջնորդել եւրոպական ազգերի գրականական սկիւանոսի մէջ։ Բայց որովհետեւ ալլ ամենը չափնի չէ ուսանողի պատմածներից, ուստի մեզ մնում է, աչքի առաջ ունենալով Լէւէլինալի կեանքը, նորա հասարակական դիրքը, նորա պարտաւունքը և ծանօթութիւնները՝ եղբակացութիւն անել օրիորդի հոգեկան ուժերի, նորա մտաւոր և բարոյական պաշարի վերաբերութեամբ։ Ի՞նչ կարող է հետաքրքրել՝ եւրոպական գրականութեան մէջ՝ մի օրիորդի, որ իւր ամբողջ կեանքը անց է կացրել երամշտական ստպարիդում, որի բոլոր ընդունակութիւնները և ուժերը կենդրոնացած են եղել ալլ խնդրի վրայ թէ՛ ինչպէս կատարելագործել երաժշտութիւնը, որ նորա միջոցով քանի կարելի է չափ փող աշխատել, չափ նիւթական վարձատրութիւն գտնել, սրպէս զի ալլ փողերով թէ ինքը ապրի և թէ սպորուստ հալթհալթէ, իւր ծերունի, անպատաւած հօրը և խորթ մօրը։ Ի հարկէ չափ գովելի բան է օրիորդի կողմից, որ նա իւր աշխատանքով համ ինքն է ապրում, համ էլ իւր ծնողներին է պահում։ Բայց ալլ տեսակ տուօրեալ, սովորական առաքինութեան համար՝ պէտք չեն ոչ մի առանձին հոգեկան մեծ ձիրք, ոչ էլ բաղմակողմանի զարգացում։ Ալլ տեսակ ընտանեկան, նեղ բարոյագիտութիւնը մատչելի է ամեն հասարակ մահկանացուն։ Եւ օրիորդ Լէւէլինան, իրաւ որ՝ մի հասարակ մահկանացու է ալլպէս, ինչպէս որ հասկացում է մեր ալլմեան ընդունւած, գործնական աշխարհում։ Նորա մէջ չկալ ոչ մի բարձր գաղափարական ձգտում, ոչ մի հասարակական ընդարձակ բնազդում, որով կարողանար նա ոգևորել, կարողանար համակրութիւն և մարդասիրական զգացմունք ցարուցանել ուրիշների մէջ։ Այս տեսակ օրիորդը ինչով կարող է հետաքրքրել գրականութեան մէջ,—հեշտ է գուշակելը։ Նորա հասկացողութիւնները, նորա ձրդտունները,—նորա ամբողջ հոգեկան աշխարհը պտուղ է դալիս երաժշտութեան, նկարչութեան և փողի, հարստութեան չուրջը։ Նորա կեանքի տիրող իդէալն է՝ դեղեցիկ, էստէթիկական չարմարութիւններով զարդարւած մի հանդիստ բնակարան, մի շԿՈՒՆԻՅԻ ՄԵՂՈՒՅԵՆ, որի մէջ նա կարողանար պահել իւր սքանչելի մարմինը, հեռու կեանքի փոթորիկներից, հեռու ամեն տեսակ կենտական հոգսերից և մտածմունքներից։ Եւ օրիորդի ունեցած բաղմակողմանի «զարգացումը» պէտք է հասկանալ զարձեւալ ալլ սալոնական մտքով, համեմատ նորա կեանքի ընդհանուր իդէալին։ Ես դարմանում եմ թէ՛ ինչով կարող էր Լէւէլինան ջոկել միւս փրանսուհիներից, ինչով նա բարձր է իւր նման բաղմակիւ երաժշտուհի օրիորդներից և տիկիններից,—ինչպէս որ ալլ ուղում է մեզ հաւատացնել

պ. ուսանողը: Բայց նա սիրահարւած է, և ալդ պատճառով կարելի է ներել նորա չափազանցութիւնները. Զ'ուճենալով ոչ մի հասարակական բարձր ձգտում, ոչ մի ընդհանուր մարդկային իդէալ՝ օր. Լէւէլինան դորա փոխարէն՝ ունի գեղեցիկ աչքեր և ձեռներ, գեղեցիկ չափանկատոյն մազեր, ունի երաժշտական ձիրք, գիտէ աշխատել, գիտէ վաւերել կեանքի բարիքները: Բայց որովհետեւ նորա գեղեցիկ մարմինը չափազանց փափուկ և նուրբ է, որովհետեւ ալդ մարմինը «պահելու» համար չափ հոգս և խնամք է հարկաւոր, ուստի նա շարունակ մտածում է ալդ մասին, շարունակ տանջւում է այն մտքով թէ՛ երբ պիտի գտնի մի գեղեցիկ ֆուտկար, որ ամեն բանով համապատասխան լինի իւր մարմնի գեղեցկութեանը: Եւ նա ալդ զարդարուն հիանալի ֆուտկարը՝ ուղում է գտնել իտպանացի վաշխառու—նկարչի տան մէջ: Միթէ աշտեստակ «խելացի» օրվորդը կարող էր խաբւել և ամուսնանալ մի հայ երիտասարդի հետ, որ չը գիտես թէ ինչ օգուտին բաներով է ոգևորւում, որ մտածում է զրականական հրապարակախօսական ասպարէզի մէջ որոնել իւր կեանքի նոյստակը: Ո՛չ, պարոն ուսանող, ձեր սիրած, պաշտած Լէւէլինան ձեր ընկերացու չէ և երջանիկ էք դուք, որ նա ձեզանից խելացի վարւեց ալդ դէպքում, երջանիկ էք, որ զրկւեցաք ալդ հրեշտակից, ալդ գեղեցիկ, փալլուն, բայց փառագաւոր հրեշտակից:

Լէւէլինայի նման օրիորդները ընդունակ չեն սիրելու, որովհետեւ սէրը զո՛ւ է պահանջում, իսկ նրանց համար՝ իրանց հսը, իրանց մարմնի պիտոյքները, իրանց համար «սիրուն, կօկիկ, համեստ, մշտական բուժը» ամեն բանից բարձր է կեանքի մէջ: Նրանք չը գիտեն սիրել, չը գիտեն ոգևորւել, բարձրանալ ալդ սիրով, չը գիտեն ամեն բան մոռանալ չտունն ալդ սիրոյ: Սթէ իմ ասածները ուղիղ չը լինէին, եթէ Լէւէլինան. բացի կենսական վաշխքներից և շահերից՝ ուրիշ աւելի բարձր, աւելի վսեմ հոգեկան պահանջներ ունենար,—ալնժամանակ նա երբէք չէր կարող մտածել իտպանացի նկարիչ Անդրէի մասին, այն Անդրէի, որ փողի, հարստութեան համար՝ տաղանդ վաճառելը սկզբունք էր դարձրել: Եւ ինչո՞վ է բարձր Լէւէլինան ալդ գործնական նկարչից, ինչո՞վ նա զանազանւում է իւր ընտրածից:

IV

Լսելով Լէւէլինայի տւած սառը և գործնական բացատրութիւնները՝ իրանց ամուսնանալու արգելքների մասին՝ սիրահարւած հայ ուսանողը բոլորովին զարմանում, կորցնում է ինքն իրան. նա երբէք չէր սպասում ալդ տեսակ «անկարծական» փոփոխութիւն օրիորդի մէջ, նա ալդ բոլորովին անկարելի էր համարում: Արիւնս զլիսիս էր զարկել, ևս չը գիտէի ինչ ասեմ... ևս պարզ տեսնում էի ալժամ, որ վերջին ժամանակներում իմ

առաջնադ իդէալիստ (?) Լւէլինան բաւական մեծ աջողութեամբ օգտուել էր շրջապատողներէ: գործնական դասերից»... Իդէալիստ... բազմ օրոնք էին օրիորդի իդէալները՝ ալդ չի ասում մեզ նորա երկրպագուն: Իսկ Լւէլինայի ամբողջ բնաւորութիւնը, նորա բոլոր ձգտումները և իղձերը ամենեւին ուրիշ բան են ասում մեզ: Եւ մեղք չէ՞ ճշմարտութեան դէմ մեղանշել, մեղք չէ՞ չոսել իդէալիստ խօսքը աջ մարդու համար, որ իւր կեանքում՝ փող աշխատելուց դատ՝ ուրիշ բանի վրայ չի մտածել, որ իւր երաժշտութեան արեւտը միշտ իւր ապրուստի միջոց է դարձրել: Եթէ Լւէլինան վերջին ժամանակները ընդունակ է եղել բաւական մեծ աջողութեամբ օգտուել շրջապատողների գործնական դասերից», ինչո՞ւ չ'ենթադրել, որ նա առաջ էլ կարող էր օգտուել նոյն դասերից, ինչո՞ւ չ'ենթադրել, որ հէնց ալդ գործնական դասերով էլ կրթել ու մեծացել է օրիորդը: Միթէ գործնից առաջ՝ օրիորդը էլի միևնոյն մարդուց, միևնոյն գեղարեւոտագէտների, նկարիչների և երաժիշտների հասարակութեան մէջ չէր: Եւ վերջապէս՝ միթէ խաղանացի նկարիչ Անդրէի, ալդ վերին աստիճանի գործնական, վաշխառու մարդը՝ էլի նոյն շրջանից չէր, էլի նոյն արեւոտագէտների և նկարիչների դասին չէր պատկանում: Ի հարկէ, նոյն դասին պատկանում էր և ռուս նկարիչ՝ Իւմասովը, ալդ խոկական համակրելի, պաշտելի անձնաւորութիւնը: Բայց ինչո՞ւ Լւէլինան չը հակեց դէպի Իւմասովը՝ թէ՛ ալդ մարդու խիստ բարոյագիտական համոզմունքները մարդոց թշուառութեան, տանջանքների ու ցաւերի մասին՝ չէին տալում օր. Լւէլինայի նուրբ գեղարեւոտական զգացմունքներին...

Ես ալսքան երկար կանգնեցի Լւէլինայի բնաւորութեան վրայ՝ երկու պատճառով. առաջին, որ Լւէլինան կաղմում է ամբողջ պատմութեան հիմքը, և նորա վրայ կառուցւած են շինութեան միւս բոլոր մասերը, և երկրորդ որ ալդ օրիորդը, որպէս մի օտարազգի՝ առաջին անգամ մուտք է գործում մեր մէջ, ապա ուրեմն և մեր պարտականութիւնն է լաւ ճանաչել նորան, ու գորա համեմատ էլ՝ որոշել նորա արժանաւորութիւնը:

Սիրահարւած ուսանողի պատմածներին նայելով՝ Լւէլինան մինչև վերջն էլ սիրում էր նորան, բայց որ մտածում էր Անդրէի կիւնը դառնալ՝ ալդ մի մոլորութիւն էր օրիորդի կողմից, մի մեծ ճակատագրական սխալ էր, որի հաւար վերջը շատ պիտի դժբախտ օրիորդը: Բացի դորանից՝ ալս զէպքում, ուսանողի տեսակետից նայելով Լւէլինայի վրայ՝ դուրս է դալիս, որ ալդ խեղճ աղջիկը մի տեսակ զոհ է դառնում իրան շրջապատող հանգամանքներին, որ նորան խաբել, զրաւել է նկարիչ խաղանացին՝ իւր հարստութիւնով, իւր խոստացած խաղաղ և անհոգ կեանքով: Սակայն ալս տեսակետը խախտւում և անհիմն է, որովհետև սիրահարւած կնոջը, — խոկապէս սիրահարւած՝ — երբէք, ոչինչ խոստումներով ու հրապուրներով չի կարելի զրաւել, խաբել, նա մանաւանդ Լւէլինային, որ 22 տարեկան օրիորդ է, որ, ուսանողի ասածով՝ «իւր մէջ միացնում էր՝ Փրանսուհու

հաճելի, դուրեկտն ընաւորութիւնը՝ դերմանուհու լուրջ բարք ու վարքի հետ: Այս առիթով «լուրջ» ընաւորութեան տէր, հասակն առած օրիորդին՝ չէր կարող գրաւել վաշխառու-նկարիչը իւր հարստութիւնով, եթէ Լւէլինան լինէր խսկապէս մի իղէալիստ աղջիկ, եթէ նա իրաւ սիրէր ուսանողին և սիրող մէջ գտնէր իւր կեանքի գլխաւոր երջանկութիւնը: Բայց Լւէլինան ոչ իղէալիստ է, և ոչ էլ սիրում է հաշ երիտասարդին, այլ միայն սիրախաղութիւն է անում նորա հետ և զարճանում է, տեսնելով թէ՛ ինչ հոգեբանական էֆեկտներ է առաջացնում սաքարիւն արեւելցու մէջ աչք սիրախաղութիւնը... Այո, ևս սիրախաղութիւն ևս անւանում Լւէլինայի աչք վարմունքը որ նա, վարդազոյն թղթի վրա՝ անուշահոտ նամակներ է գրում ուսանողին, որ նա երկաթուղու կապարանում՝ բաժանելով ուսանողի հետ, առաջին անգամ նորան «դու» է ասում և հեռանում է նորանից... Բայց զարմանալին այն է թէ, ինչպէս աչք միջոցներով օրիորդը կարողանում է գրաւել, կաշկանդել մեր զարգացած, իղէալիստ հաշ ուսանողին, միանգամայն արգարացնելով Պօլ Բուրժէի աչք կարծիքը թէ՛ «տղամարդիկ առհասարակ սիրում են այն կանանց, որոնք նրանց անխիղճ կերպով խաբում են»: Եւ ո՞վ կարող է կասկածել, որ հաշ ուսանողը սաստիկ սիրում է Լւէլինային, այն աստիճան կուրացած է սիրում, որ չի նկատում նորա մէջ ոչ մի պակասութիւն, և ընդհակառակը, վերագրում է նրան այնպիսի սուաքինութիւններ, որոնց հոտն անգամ չէ առել Լւէլինան,—բազմակողմանի զարգացած, իղէալիստ, ուսղանդաւոր... մի խօսքով այն բոլոր չափութիւնները, ինչով որ ինքն է ոգևորւում, ինչ որ գոյութիւն ունի միայն նորա երեակալութեան մէջ: Եւ աչք հանգամանքը մեծ թիւրիմացութիւն է առաջացնում Լւէլինայի մասին՝ ուսանողի բոլոր պատմածների մէջ, Դուրս է գալիս կատարեալ հակասութիւն նորա խօսքերի և Լւէլինայի կատարած գործքերի մէջ, կատարեալ հակապակեր: Նորա ասելով Լւէլինան տաղանդաւոր է՝ և հակում է զէպի մի նկարիչ, որ տաղանդը վաճառելով է պարապում. իղէալիստ է՝—և միշտ «կոկիկ, սիրուն, համեստ բունի» վրա է մտածում, բազմակողմանի զարգացած է՝—և բաց վարդազոյն, անուշահոտ թղթի վրա՝ կախարդական նամակներ է գրում հաշ ուսանողին, մի տարի առաջ մի քանի ժամ նորա հետ խօսելու առիթ ունենալուց չեստ: Եւ այս բոլոր հակասութիւնների պատճառը այն սէրն է, որ զարթեցրել է ուսանողի մէջ Լւէլինան՝ միակ իւր աչքերի, ձեռների և, մասամբ էլ պիանօի դիւթական հնչիւնների զօրութեամբ:

V

Այս սէրը մոլորեցնում է մարդու, սէրը խլացնում է նորա գաւորութեան ընդունակութիւնը և ստիպում է միայն զգացմունքով, երեակալութիւնով ապրել: Արքան ըստ երեւթիւն անհաճելի երեւթ է մարդու հոգեկան

ալդ զրութիւնը, բալց միևնոջն ժամանակ, ալդ մի ամենազօրեղ միջոց է, որով կարելի է բաց անել մարդու հոգին և կարգալ նորա խոկական, ներքին աշխարհի պատմութիւնը, կարելի է ճանաչել մարդուն աշխատէս, ինչպէս որ նա է, ինչպէս որ ներկայանում է նա իւր սեպական խղճի, իւր սեպական զգացմունքների առաջ: Այս է պատճառը, որ սիրալին տարրը աշխատէ չաճախ մենք նկատում ենք վէպերի և դրամաների մէջ, այս է պատճառը, որ երբ մի գրող ուզում է ցոյց տալ հասարակութեանը իւր հերոսի հոգին, նա ստիպում է նրան սիրահարել: Շատ քիչ գեղարուեստական գրածքներ կարելի է հաշուել, որոնց մէջ չը լինէր ալդ սիրալին տարրը, ալ մարդկային հոգու ուրիշ մոտիւններով պայմանաւորէր գրածքի դրաման: Միայն Շէքսպիրի անմահ գրածքները ունին ալդ չափութիւնը, միայն անգլիական մեծ բանաստեղծի համար միաջափ հասկանալի և մատչելի են մարդու հոգեկան բոլոր զրդումները և կրքերը՝ անկախ սիրուց, անկախ մարդկային երկու սեռի փոխադարձ ձգտման զգացմունքից: Իսկ սովորական՝ Շէքսպիրի համեմատ՝ միւս «հասարակ մահկանացուները» սիրալին զգացմունքի վրայ նայում են, որպէս մի ամենալաւ մոգական ուժի, որ կարող է երևան հանել մարդկային միւս բարոյական հակումները, իրանց բոլոր մերկութեամբ: Տեսէք թէ՛ ի՞նչ ազդեցութիւն է անում սիրու զգացմունքը հալ ուսանողի վերաջ՝ «Էլէլինա» գրածքի մէջ: Հալ երկտասարդը սիրահարւում է Փրանսիացի աղջկայ վրայ: սիրահարւում է, որովհետև օրիորդի աչքերը, ձեռները, դէմքը, շարժմունքները, ձայնը դուր են գալիս նրան—մի խօսքով՝ սիրահարւում է աշխատէս, ինչպէս որ սիրահարւում են ամենքը: Օրիորդը ոչ մի առանձին, աչքի ընկնող ընդունակութիւն չունի. նա մի համեստ և շատ սովորական աղջիկ է, որ բաղդաւոր հանգամանքների բերմամբ սովորել է երաժշտութիւն, դաշնամուրի վրայ է ածում, կոնցերտներ է տալիս և դուրանով էլ ապրում է: Բալց տեսէք թէ՛ ուսանողի համար ի՞նչ է ալդ համեստ արարածը: Խնքը, ուսանողը իւր մէջ կրում է շատ հոգեկան դանձեր, շատ համակրելի, վսեմ զգացմունքներ և իղձեր: Բալց որովհետև սիրահարւած է օրիորդի վրայ՝ նա իւր բոլոր ընդունակութիւնները վերագրում է օրիորդին, և համոզւում է, որ ալդ նորա շնորհիւն է որ ինքը ազնիւ է, իղէալիստ է, նորա շնորհիւն է որ կարողանում է բարձրանալ մտքով, հասկանալ վերացական, առուածալին գաղափարներ: Ուսանողի վառ արեւելեան երեակալութիւնը չըջապատում է օրիորդին ամեն տեսակ հոգեկան պարզենքով, գեղեցկացնում, զարդարում է օրիորդի հոգեկան աշխարհը ամենահամակրելի առաքինութիւններով, աշխատէս, ինչպէս որ գեղեցիկ է, զարդարւած է նորա արտաքինը, ինչպէս որ կախարդական է օրիորդի մարմնի բոլոր կազմութիւնը,—ի, իւր երեակալած, ալդ Փանտաստիկական Էլէլինայի առաջ՝ երկրպագութիւն է տալիս իւր ամբողջ հոգու անկեղծութեամբ: Ուսանողի սիրած, պաշտած Էլէլինան իսկ այն իսկական Էլէլինան է, որ գիտէ իւր «առօրեալ հաշիւները», ալ

մի ուրիշ, ֆանտաստիկական Լւէլինա, որ արտաքուստ բոլորովին նման է Ֆրանսիացի գեղեցկուհուն, իսկ ներքուստ՝ իւր մէջ ամփոփում է հաւ երիտասարդի բոլոր իղէալները: Եւ ահա, երիտասարդին թւում է, թէ Լւէլինան,—այն իսկական Լւէլինան, որին նա սիրում է, մի աաղանդաւոր, մի իղէալատ, մի բազմակիզմանի զարգացած օրիորդ է, որ ընդունակ է հասկանալ երիտասարդ հայրենասէրին, որ կարող է ոգևորել նորա բարձր, մարդասիրական գաղափարներով, ընդունակ է, իւր հետ միասին, ծառայել նորա ապագայ գործին,—նորա հայրենիքը զիտուլթեան լոյսով բուսաւորելու ծանր գործին... Նրան թւում է, թէ Լւէլինան սիրում է նրան անսահման սիրով, թէ չաճուհ աչք սիրու՝ օրիորդը պատրաստ է տանել կեանքի ամեն տեսակ անչարմարտութիւնները և հոգսերը, թէ նորա սիրուց՝ օրիորդը պատրաստ է մոռանալ ամեն, ամեն բան... Աչք բոլորը նրան թւում է, որովհետեւ նա սիրահարւած է, որովհետեւ ինքը ուսանողը աղպէս է հասկանում սէրը, աչք գաղափարներով, համոզմունքներով և իղէալներով է ապրում, չնչում, ուրեւում:

Երիտասարդ ուսանողի և բնականաւոր Լւէլինան ոչինչ կտալ չունի այն իսկական Լւէլինայի հետ, որ դուրս է բերւած պ. Արծրունու հոգեբանական էթիկի մէջ, բացի արտաքին գեղեցկութիւնից: Եւ աչք է պատճառը, որ երբ իսկական, կենդանի Լւէլինան՝ հետեւելով իւր սեպհական պահանջմունքներին և միտումներին՝ թողնում, հրաժարւում է իւր հաւ երկրպագուից՝ կամենալով գտնել իւր համար մի հաստատ ապաստան,—հաւ ուսանողը դարձեալ չի մոռանում իւր կարծեցեալ, երեսկալական Լւէլինալին և դարձեալ շարունակում է պաշտել, երկրպագել նրան: Բայց նորա պաշտած Լւէլինան գոլութիւն չունի աշխարհիս երեսին,—աչք նորա ֆանտազիայի ծնունդն է, նորա իղէալն է, որ մարմնացնում է նա՝ իւր երեսկալութեան ուժով՝ մի հասարակ ֆրանսուհու գեղեցիկ կերպարանքի մէջ:

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒԹ Ի Ի Ն

ՇՁԵԴԻՆՆ՝ 1) Մուացկոտ ոչխար } Թարգմ. Մկրտ. Ղազարեանց.
2) Զատկի գիշեր } Հրատ. Թիֆլ. Հրատ. Կնկ. Թիֆլ.,
3) Ազատամիտ } տպ. Վարդ., 40 էրիս. գինն է 10 կ.:

«Մուացկոտ ոչխարը» մի փոխա-
բերութիւն, ալիգորիա է:

Բովանդակութիւնը հետեւեալն է.

Ամենահին ժամանակներից ոչ-
խարները մարդու ձեռքի տակ են
եղած: «Մարդը տեղծում է ոչխար-
ների առանձին տեսակներ... Ոմանց
պահում են մսի համար, ոմանց՝ ճար-
պի, մի քանիսին տաք մուշտակների
համար: Իրանք բնատանի ոչխարները
ամենից քիչ են լինում իրանց ազատ
նախահօրը և խնայական խելօք ան-
ւանում է միայն աչն ոչխարը, որ
ոչինչ չի լինում և չի գիտակցում
բացի կանաչից, խոտից և դարմա-
նից: Բայց մի անգամ խոյի մէկը
քնեց և երազ տեսաւ. երազում տե-
սածը միայն դարման չէր, որովհետեւ
երբ զարթնեց, լուղւած էր: Նա աչ-
խատեց միտը քերեւ, ինչ որ պատա-
հեց. բայց ոչինչ չը կարողացաւ լի-
ջել: Մի ինչ որ հեռաւոր տարածու-
թիւն արծաթի նման փալւում էր,
ուրիշ ոչինչ»: Խոյը տանջւում է, աչ-

խատելով հասկանալ այդ երազը. այդ
նոր զգացմունքին, իրան տանջող հար-
ցերին բաւականութիւն տալու հա-
մար՝ նա դիմում է մաքիներին:

«Բայց մաքիները համակրութեան
նշան անգամ չէին ցույց տալիս նորա
անհանգստութիւններին և մինչև ան-
գամ կծու հեղնութեամբ անւանում
էին նրան խելքին զուտ տուղ, փի-
լիտփաշ, որ ինչպէս չաղտնի է ոչ-
խարական լեղւով աւելի վատ նշա-
նակութիւն ունի, քան «անպիտան»
խօսքը»:

Հովիւ Նիկիտան հասկանում էր
խոյի զրութիւնը, «բայց նա ոչխար-
ների համար միայն մի պարտապիւր
ակիսումն էր ճանաչում— եթէ ծնւել
ես ոչխարների դատակարարի մէջ,—
ասում էր նա լրջօրէն, նորա մէջ էլ
կը նշանակէ, պէտք և ապրիս ու
մեռնես: Բայց հէնց այդ բանը խոյը
չէր կարող տանել: Հէնց «դատա-
կարգն» էր որ նորան տանջում էր,
նչ թէ աչն պատճառով, որ վատ էր

ապրում, ալլ ալն պատճառով, որ քանի սկսել էր երազներ տեսնել, նորա մտքին պալիս էր չարունակ մի ինչ որ ուրիշ գաղափարով: Խոլին անհանդուարացնող մտքերը ու պայտմունքները հալ ու մաշ են անում նրան, նա չի կարողանում տանել և մեռնում է:

Խոլի մահը հովիւ Նիկիտան բացատրում է նրանով, որ նա երազում «ազատ ոչխար» էր տեսնում: Խոլի մահաւան տախիթով տէրը ալսպիտի խորհրդածութիւններ է անում. «մի ուրիշ տեղ կարելի է ալս ոչխարից ալս դուրս գար, խոլ մեղանում ալս պէս է օրէնքը: Եթէ դու ոչխար ես ուրեմն ոչխար էլ պէտք է մնաս, առանց գլխիդ դու առաւ, սիրածդ էլ լաւ կը լինի, քեզ էլ լաւ կը լինի, տէրութեանն էլ հաճելի կը լինի»:

Ահնք աւերան մանրամասն պատմելիք բովանդակութիւնը ցոյց տալու համար, թէ ինչ է ներկայացնում ալս փոխարեութիւնը, թէ ուստի հասարակութեան որ շրջանի նկարագրութիւն է սա: Ինչպէս երեւում է բովանդակութիւնից, ալստեղ դուրս է քերած սուս հասարակութիւնը ալն շրջանում, երբ ամբողջ 20—25 միլիոն ժողովուրդ ոչխարի դեր էր կատարում փոքրամասնութեան համար. ալսպիտով գրեթէ գլխաւորապէս պատմական նշանակութիւն ունի. ասում ենք գլխաւորապէս, որովհետեւ մարդկային շարաքերութիւնները, հասարակները ալնքան շուտ չեն փոխւում և գրեթէ մի որոշ չափով ներկայացնում է մասնականից հասարակութիւնը:

Աւելի մասնականից նշանակու-

թիւն ունի «Ազատամտութիւն»: Բովանդակութիւնը հետեւեալն է. «մի երկրում ապրում էր մի ազատամտութիւն: Երեք գործօններ—առում էր նա,—պէտք է լինին ասին մի հասարակութիւն կեանքի հիմքը—ազատութիւն, ապահովութիւն, ինքնագործունէութիւն: Այս դեռ քիչ է. ազատամտութիւն ոչ միայն ալնիւ էր մտածում, ալ և ջանք էր անում բարիք գործելու, Բալց նա կարծում էր որ «իդէալը հանրամտալիլի դարձնելու համար, անհրաժեշտ է նորան մանր կտորների վերածել և ալս ձեռք գործ դնել մարդկութիւնը տանջող հասարակութիւնը բռնկելու համար» Այսպիսով նա ոչ մի անհնարին բան չէր պահանջում, ալ միշտ միայն «որքան հնարաւոր էր», մի խօսք, որը երկու ընդհարուր կողմերից մէկին տալով է լաւատնի չափով դուրս գալ սահմանափակութիւնից, խոլ միւսին նշանաւոր չափով սահմանափակել իւր պահանջները»:

Ահա ալս իդէալներով, գործելու ալս եղանակով նա սկսում է իւր գործունէութիւնը: Հասարակութեան ամենալաւ ներկայացուցիչները՝ գիտնականները հաւանում են ալսառամտի գործելու ալս եղանակը: Ազատամտութիւնը «ալստեղ կրճատում է, ալն տեղ պակսեցնում, խոլ մի ուրիշ տեղ բոլորովին թաղւում է»:

«Ատիպէս քանի որ ազատամտութիւնը իրագործւում էին, որքան հնարաւոր էր, գիտուն մարդիկ հասկանում են որ նոյն խոլ ալս ձեռք էլ նորա իդէալներից լաւ հոս չի փչում: մի կողմից չափից դուրս լալն են ծրագրած, միւ-

կողմից աջնքան հասուն չեն, դեռ պատրաստ չեն ընդունել—» նրանք ասում էին եթէ հնարաւոր եղածին չափ չի կարելի, ուրեմն բաւականացիր նրանով որ «գոնէ էլի մի բան» կանես, ախր «գոնէ մի բան» էլ բան է: Չվճռմանը լինում են զիջումների չետեից, իդէալները իրաւործելու համար նա սկսում է «չարմարել ստորութեան, կեղտոտութեան հետ» և ազդպէս դործել: Բանը վերջանում է ի հարկէ բարոյական կատարելաւ սնանկութեամբ: Նոյն իսկ երբ իդէալների վերջին փշրանքն է մնում, նա այս գէպրումն էլ արժանանում է մէկի թուփին, որը ստորութեան հետ չարմարելով, անկիւնից է թքում:

Գրառքի միտքն է ցոյց տալ թէ ուր է տանում իդէալների աստիճանաբար զիջելը, թէ ինչ ստորափելի ընդդիմադրութիւն է ցոյց տալիս այդ հրկրի հասարակութիւնը մի ալեպիսի դործի չի, որը շատ սահմանափակ պահանջներով և որ զլիսաւորն է՝ «որքան հնարաւոր է» պրինցիպով է մտնում կեանքը: Աւելաւորապէս ու սև գոյներով ներկած պատկերը աջնքան էլ հեռու չէ օրիգինալից:

«Ջատկի գիշերում» հեղինակը պատմում է մի աւանդութիւն, թէ ինչպէս այդ գիշերը աշխարհ է գալիս Քրիստոս: Որհնելով բնութիւնը, նա դիմում է մարդկանց: «Ամենից առաջ դէմ ելան արտասուող աշխատանքի լծի տակ կորացած, կարիքներով ծանրաբեռնած մարդիկ» (Քրիստոս օրհնում է նրանց, խոտանում է մոտալուտ փրկութիւն և վախճան կրած տանջանքներին: Յետոյ նա դիմեց վաշխառուներին, խոտախրտ լշտանաւորներին, աւաղակներին, կեղծաւորներին, կեղծ բարեպաշտներին և անարդար գատաւորներին: չանդիմանեց նրանց չարութիւնը, բայց և նրանց նա խոտաղաւ փրկութիւն, եթէ փոխեն իրանց կեանքի ընթացքը: Միակը որին չկարողացաւ ներել նորա բարի սիրաւ, դա Յուդան էր, մատնիչը:

Ահա երեք գրառքի բովանդակութիւնը, երեքն էլ կարդացում են հետաքրքրութեամբ: Ինչ վերաբերում է թարմանական լեզուն, լեզուն բուսականի լաւ է, չը նաչելով այն դժարութիւններին, որ ներկայացնում է Շչեդրինի թարգմանութիւնը:

B.

ՕՍՏՐՈՒԴՈՐՍԿԻ, Վիկտոր. — Օրէանի կոյսը (ըստ Շիլլերի) թարգմ. Յ. Խ. — Հրատարակութիւն Թիֆլիսի ընկ. հայ. գրք. հրատ. տպ. Նարաձէի. 1891 թ., 98 եր. գինն է 25 կոպ.:

Աւելորդ ենք համարում բերել վերցրած է Շիլլերի նոյնանուն գրքի գրքի բովանդակութիւնը. գրքի նիւթը տաճարից և շատ անգ Նոյն իսկ Շիլ-

լերի խօսքերով է պատմւած. տեղ տեղ ուրիշ է նիւթի պատաւորութիւնը, որը չարմարեցրած է պատմողական գրածքների համար: Հարց կարող է լինել, թէ ինչ հարկ կար տալ նիւթերի «Օրլէանի կոյս»-ի պատմութիւնը, քանի որ ունենք բնագրի թարգմանութիւնը: Մեզ թւում է, որ աչազիրքը անկարող լինելով փոխարինել բնագրի թարգմանութիւնը, աշխատանքային ունի իւր նշանակութիւնը: Բնագրի թարգմանութեան գրամատիքական ձևը, ոտանաւորով

գրւած լինելը, թանկ գինը կարող են արդելի նորա տարածման արդիւններում, ուր ազատ կարող է մուտք գործել Վ. Ստրոգուրովու պատմածքը:

Գիրքը կարգացւում է հետաքրութեամբ. մի պակասութիւն, որ չատու է թէ լակական «Օրլէանի կոյս» ինչ թէ աչա պատմածքին, դա աչն է, որ հերոսուհուն արւած է, գերբնական բնաւորութիւն:

B.

ԿՈՒՆԻՎԵՐՍԱ. — «Շնիկ» Ս. Պետերբուրգի Ֆրեօբելեան Ընկերութեան հրատարակութիւն. թարգմ. օր. Աննա Սահակեանց, հրատ. Թիֆլ. Լնկ. հայ. գրք. հրատարակութեան № 40, տպ. «Արօթ», 28 եր. զինն է 5 կոպէկ:

Մենք ունենք բաւականի մասնակիան գրքեր, բայց շատ քիչ աչն պիտիներից, որ չարմար լինեն 8—10 տարեկան մանուկների համար: Աչս վերջին տեսակիցն է Լուկիովայի «Շնիկը», որը արժանացած է Պետերբ. Ֆրեօբելեան ընկ. մրցանակին:

Հաւերներ ճիշդ թարգմանութիւն է սուսերէնից, փոփոխւած են միաչն անունները: Գրքուկի բովանդակութիւնը հետեւեալն է. ամարանոցում ապրում է Ականդարեանը իւր ընտանիքով. Ականդարեանը ունի մի փոքրիկ տղայ, Լեոն անունով. Լեոնը ամբողջ օրը վաղվղում է, խաղում է, ձուկ է որսում, նա ունի նեա ու տղեղ և ուրիշ խաղալիքներ. բայց նա չի բաւականանում աչդ լուրջով.

մի օր նա տեսնում է իրանց լացարարի աղջկաչ, փոքրիկ Անթառամի ձեռին մի փոքրիկ շուն. շնիկը գուր է գալիս Լեոնին. Լեոնը պահանջում է. Անթառամը չի համաձայնում. Լեոնը իւր դաշեակի միջոցով առնում է Անթառամի մօրից շնիկը և փոխարէնը տալիս 20 կոպէկ: Միւս օրը Լեոնի հայրը պատահում է Անթառամին իրանց տան մօտ, երբ նա եկել էր տեսնելու շնիկին, իմանում է Անթառամի վիշտը, գալիս է առն, վերցնում է Լեոնի նեա ու աղեղը, փողով լի արկղիկը և դուրս փոխարէն տալիս է նրան մի 20 կ. դրամ և պատրաստում է աչդ բոլորը ընծայել իրանց բարեկամի երեխաներին:

Լևոնը վրդովւած է. նա տեսնում է որ չի ուզում ծախել իւր խաղալիքները: «Դու հօ գնեցիր աղքատ աղջկանից քսան կոպէկով նորա ամենասիրելի շունը»: Լևոնը համաձայնւում է վերագարձնել շունը:

Թէ ինչ հետաքրքրութեամբ է կարդացւում գրքովը և որքան նա հասկանալի է մանուկներին, ալդ վկայում է «Что читать народу»? գիրքը. «Մենք կարդայինք այս պատմութիւնը գիւղական ուսումնարանի մի խումբ մանուկների. նրանք լսում էին մեծ հետաքրքրութեամբ և հարցերին պատասխանում էին աչսպէս.

— Ի՞նչով էին դատուում երեսխանները:

Այս հարցին մանուկները մանրամասն պատմում էին կարթի, աղեղի, շնիկի մասին:

— Բաւականանում էր Կոստիան (հալերէն թարգմանութեան մէջ

Լևոնը) իւր ուրախութիւններով:

— Ո՛չ, պատասխանեց մանուկներից մէկը. իրանը քիչ էր թւում, նա ուրիշներ ցանկացաւ:

— Ի՞նչպէս հալը պատժեց Կոստիային նորա ցանդուգն վարմունքի համար:

Հալը նորա հետ վարեց աչսպէս, ինչպէս նա վարել էր աղջկայ հետ: Ինձ ամենից շատ ալդ պարոնը դուր եկաւ, աւելացրեց զդացւած մանուկներից մէկը: (Հատ. I. երես 124):

Թարգմանութիւնը ընդհանրապէս լսու է կատարւած. գիրքը զարդարւած է սուեիւրաւոր պատկերներով, որոնցից վերջին երկուսը աչն երեսներում չեն, որտեղ պատկերների բովանդակութիւնն է: Այս օրինակ հրատարակութիւնների թուղթը ոչէաք է աւելի հաստ լինի:

B.

1) «ԳՐԱՅՈՒՅԱԿ» Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան ղրդարանի Շուշի քաղաքում: Շուշի, տպ. Հայոց հոգևոր տեսչութ. 1891:

2) «ՀԱՇԻԻ ՍԱՆԿՏՊԵՏԵՐԲՈՐԳԻ հայոց եկեղեցական ստացւածքների կառավարութեան 1890 թւականին:

3) «ՎԷՃԱՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց վիճակայն Տփլիսաց, Երևանաց, Աստրախանաց, Արցախաց և Շամախուաց, լընթաց 1889—90 ուսումնական ամի»: Վաղարշապատ, ի տպարանի Արթուր Կաթուղիէ Լյովիածի, ՌՅԽ—1891: Գինն է 1 ռ.

4) ԲՆԳՎԱՆՈՐ ՅՈՒՅԱԿ անձանց շրջոց ընտրեսցի ուսուցիչք և ուսուցչուհիք վասն եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց: Ի Վաղարշապատ, ի տպար. Արթ. Կաթուղ. Լյովիածենի, ՌՅԽ—1890 թ.:

5) ՊԱՐՈՆԵԱՆ, Յակար.—«Աղղալին ջոջեր»: Հրատ. Թիֆլիսի հրատարակչ. բնկերութեան: Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1891 թ. գինն է 1 ռ.

6) ՏԱՇԵԱՆ, հայր Յակովբոս, Մխիթ. ուխտէն.—«Յուցակ հայերէն ձեռագրաց կալսերական մատենադարանին ի Վիեննա (Catalog der K. K. Hofbibliothek zu Wien): Վիեննա, Մխիթ. տպ., 1891 թ.:

7) ՕՆԷ, Ժորժ.—«Գործոր Ռամօ. դուրսիւ կռիւներ»: Ֆրանսերէնից թարգմանեց Մ. Խանդավիրեան: Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի, 1891 թւին:

8) ՉՈՊԱՆԵԱՆ, Արշակ.—«Արշալուսի ձալներ»: Տաղեր, քմածին զրւածներ, պատկերներ, արձակ բանաստեղծութիւններ, զննադատութիւններ: Պոլլա, տպ. Կանազճեան, 1891 թ.:

9) ՅՍՏՐՈԳՈՐԾԿԻ, Վիկտոր.—«Օրէանի կոլսը» (Ըստ Շիլլերի), թարգմ. Յ. Խ.—Հրատ. Թիֆլ. հրատարակչ. ընկեր., Թիֆլիս, տպար. Շարաձէի, 1891 թ., գինն է 25 կոպէկ:

10) ԿՈՒԼԻԿՈՎԱ.—«Շնիկ»: Ա. Պետերբուրգի Ֆրեօրեկան ընկեր. հրատարակութիւնից. թարգմ. օր. Աննա Սահակեան, հրատար. Թիֆլիսի հրատարակչ. ընկ. տպ. Արթուր, գինն է 5 կոպէկ:

11) ԳՈՒԷ, Ալֆոնս.—«Լոպտի» (L'Obstacle), Կատակերգութիւն չորս արարածով, թարգմ. Մ. Նաւասարդեան: Հրատ. № 55. «Աղբ.Տար.» հանդէսների: Թիֆլիս, տպ. Արթուր, 1891 թ., գինն է 50 կոպէկ:

12) ՉՄԵԿԵԱՆ, Մակար.—«Ծոցի օրացոյց 1862 թ., տպար. Ռուսի-նեանցի, գինն է 15 կոպէկ:

13) ՆՈՅՆԷ.—«Պատի օրացոյց» 1892 թ., գինն է 60 կոպէկ:

14) ԳՈՒԷ, Ալֆոնս.—«Տարսակունցի Տարտաբէնը», թարգմ. Ֆրանսերէնից թմ. Թ. Ջաքարեան: Հրատ. Թիֆլ. Հրատ. Ընկ. Թիֆլիս, տպ. Արթուր Տ. Նաղարեանի, 1891 թ., գինն է 40 կոպէկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ի ՇԽԱՆ ՈՒ ՀԻ

Դրամա չորս գործողութեամբ, հեղինակութիւն Շիրաւնդանդէի:

Ամսիս 12 ին հալ թատրոնական կանոնաւոր խումբը ներկայացրեց պ. Շիրաւնդանդէի «Իշխանուհի» դրաման: Միանգամայն բնական է ալն հետաքրքրութիւնը որ կապւած է ինքնուրոյն պիւսնների առաջին ներկայացման հետ, և հասարակութիւնը, չքցնելով թատրոնը, առատօրէն տւեց ալն հարկը, որ նա պարտական է զգում ամեն մի շատ թէ քիչ աչքի ընկնող հեղինակի նոր ստեղծագործութեանը:

Ճիշդ սահմաններից չանցնելու համար հարկաւոր է սակալն ասել որ «Իշխանուհի» համար ալն մեծ հետաքրքրութիւնը չը կար, ինչ որ երկու տարի առաջ ես վկայել էի պ. Սունդուկեանի «Ամուսինների» համար: Վերջինիս համար ցանկութիւնը ներկայացմանը ներկայ գտնւելու՝ բուռն էր և անհամապատասխան թատրոնի դահլիճի մեծութեանը. «Իշխանուհի» համար հետաքրքրութիւնը ճիշդ ալնքան էր, որքան բաւական էր մի »première« չարգանքով ողջունելու համար:

Պր. Շիրաւնդանդէ մինչ ալմ չալոնի էր որպէս հալիական հասարակական ումանի ներկայացուցիչներից մէկը: Իշխանուհի դրամալով նա ոտ է կոխում դրամատիքական ասպարէզը: Կարելի է ուրեմն եզրակացնել թէ ինչը առանձնապէս կարող էր գրաւել հալ գրական հասարակութիւնը գէպի թատրոնը «Իշխանուհին» տեսնելու համար: Ոչ թէ ալն թէ ինչպէս պէտք է լուծել ալս կամ ալն խնդիրը, ալ ալն թէ ինչ չաջողութիւն կարող է ունենալ պ. Շիրաւնդանդէ որպէս դրամատուրգ, — ահա թէ ինչն էր գրադիցնում գրական դասակարգը: Սունդուկեանցի «Ամուսիններ» դրամալում հասարակութիւնը ամենից առաջ հետաքրքիր էր տեսնել հեղինակի գիրքը գէպի — ամուսնական խնդիրները, պ. Շիրաւնդանդէի «Իշ»

խանութիւնը դրամադուր հասարակութիւնը հետաքրքիր էր ծանօթանալ հեղինակի ընդունակութեան հետ դրամատուրգի ասպարէզում:

Գործը սակայն շատ պահասաւոր էր, ասէքան պակասաւոր, որ ես իմ միտքը պարզ չալանած չեմ լինիլ, ասելով միայն թէ նա «թող էր»: Ոչ միայն իշխանութիւն թող դուածք էր, այլ նորա առիթով կարող է հարց դնել թէ ինչպէս պ. Շիրաւնդադէի մէջ կարող էր միտք զղանալ՝ ալդալսի մի գրւածք թատրոնական կոմիտետին չանձնելու:

Մի գրւածք, մանաւանդ թատրոնական գրւածք միայն ասն ժամանակ արժէ քննադատել ըստ բովանդակութեան և զաղափարի, երբ մարդ ստիպւած է ի լինում շարունակ և անընդհատաբար տեսնել տեխնիկայի անասելի բացակայութիւնը:

Շիրաւնդադէն իշխանութեան մէջ ամենից առաջ զարմացնում է հանդիսատէսին հոգեբանական կեանքի աղքատութիւնով: Մենք տեսնում ենք իշխանութեան մէջ որոշ անձնաւորութիւններ, թողնենք առաջիմ թէ նոքա ուրբան տիպիական են ասն շրջանների համար, որոնց ներկայացուցիչներն են կամ գոնէ պէտք է լինին նոքա: Բայց մենք չենք տեսնում ասն կեսանքը, որ պէտք է ստեղծեն ալդ որոշ անձնաւորութիւնները բնութիւնը: Ալդ կեանքը կարելի է ստեղծել միմիայն նրանով, որ բնութիւնը երեան գան նոր շարաբերութիւններ և ներկայացնեն ասն տեսարանները, որոնք բոլորում են ալդ նոր զարգացող շարաբերութիւններից: Բայց մենք ինչ ենք տեսնում պ. Շիրաւնդադէի «Իշխանութեան» մէջ: Այն, որ ալդտեղ գրեթէ բոլորովին չեն զարգանում նոր շարաբերութիւններ, չը կալ ոչ մի շարաբերութեան դարգացումն: Ամեն ինչ տրւած է հէնց սկզբից: Աչքի անցնենք մի քանի իրողութիւններ ալդ պարզելու համար:

Պիեսի մէջ դեր է խաղում հասարակ ծագումից բալց հարստացած ընտանիքից կրթւած և սիրող սիրտ ունեցող երիտասարդ իշխանութիւնը Զեդինէն: Նա հէնց սկզբից դուրս է բերւած դժբաղդ՝ իւր սամուսին իշխան Միքայէլ Բէգմուրեանի անհաւատարմութեան պատճառով: Նորա տոբաղդութեան աստիճանը սուաջին և չորրորդ տ. վերջին դարձողութեան մէջ շատ չնչին չափով է տարբերւում:

Պիեսի մէջ մեծ դեր է կատարում իշխանութիւնը Զեդինէի խոշոր օժիտը և նորա սպառնելը իշխան Միքայէլի (Զեդինէի մարդու) շաղաղութիւնների պատճառով: ալդ դերը կալանում է նրանում, որ օժիտի գոյութիւնը դեռ մի որոշ չափով սանձահարւած է պահում իշխան Միքայէլին: Բայց պ. Շիրաւնդադէն մեղ ներկայացնում է հէնց գործողութեան սկզբում ալդ օժիտը գրեթէ սպառնած-վերջացած, ասնպէս որ սուաջին և չորրորդ գործողութիւնների ընթացքում միայն մի անգամ իշխան Միքայէլը օգտուում է կնոջ փողերից՝ օժիտը մինչ վերջին կոպէկը սպառելու համար:

Իշխան Միքայէլը, Զեդինէի մարդը, դուրս է բերւած իւր իրան շաղաղութիւնների անձնատուր արած մի մարդ, որը իւր կնոջ վերաջ նա-

լում է միայն որպէս փողի ստացակի վերայ: Ուրեմն նորա ամբողջ կեանքը գրտումն է. արդ ակզ զրոյի կեանքի մասին մենք տեղեկանում ենք միայն մի քանի խօսքերից և ինչ որ մի անստորագիր նամակից, որ կարդում է Հեղինէն ըսմի վերայ: Ուրեմն ինչ է չինում իշխան Միքաէլը ըսմի վերայ չորս երկար ու ձիգ գործողութիւններում? Նա հէնց չարունակ կրկնում է իւր անփողութեան մասին և ալն որ իւր կնոջը չի սիրում, բայց որ իւր աչք կնոջը պէտք է չուէ քանի որ օժիտը դեռ բոլորովին չի վերջացել: Այդ խօսքերից դուրս, որոնք տաղտկալի և հոգեսպան միաձուլութեամբ կրկնում են ամեն անգամ, երբ Միքաէլը ըսմի վերայ է, հազիւ հազ Միքաէլը մի մի խօսակցութիւն է ունենում իւր կնոջ Հեղինէի եղբայր բարձրագոյն ուսումը նոր աւարտած Գարեգին հետ, ուր աչք երկտասարդը փորձում է պաշապանել իւր քրոջը:

Որ և է փոխութիւն Միքաէլի և Հեղինէի չարաբերութիւնների մէջ ամբողջ երեք գործողութիւններում չը կալ բնական, աւելցրէք որ երկուսի էլ արտասանած խօսքերը տաղտկալի միաձուլութեամբ կրկնում են մինչ երրորդ գործողութեան վերջը: Միակ խոշոր փոխութիւնը կատարւում է, երբ Միքաէլը, երրորդ գործողութեան վերջում, իրանից արդէն հեռացած կնոջը սիրում է մեղադրել (զրպարտել) անհատատարմութեան մէջ, իրը թէ չարաբերութիւն ունի Սուլիկեանի հետ:

Այդ Սուլիկեանը, որ իսկապէս սիրում է իշխանուհի Հեղինէին, առանց փոխադարձութիւն ստանալու վերջինիս կողմից, դուրս է բերած շատ թուլ կերպով, գործողութիւնների աղքատութեան պատճառով, բայց գոնէ Սուլիկեանը մի տեղ դեր է կատարում: Պարբերելովում նա կատարում է տանտիրոջ դեր և իշխանուհի Հեղինէին օգնողի դեր, որով վատ կարծիք է կազմւում Հեղինէի հաւատարմութեան մասին: Այդ բանը մէկն է ալն քիչ բաներից, որ նոր է զարգանում պիեսի մէջ, հակառակ գրեթէ բոլոր միւս չարաբերութիւններին, որոնք հէնց սկզբից տրւած են ներկայացրած:

Իշխանուհի Հեղինէի եղբայր Գարեգին, մի կողմ թողնելով նորա արտասանած ֆրազները արիստոկրատների դէմ, ամենաշատը ինչ կարողանում է առաջացնել, ալն է, որ նրան չաջողում է համոզցնել իւր քրոջը բաժանել իւր մարդուց՝ երրորդ գործողութեան վերջում: Հեղինէին իրօք հեռացնում է մարդուց: Նքեք ամբողջ գործողութիւններում նա միայն աչք դերն է կատարում—միշտ կրկնելով միևնույնը, չոսելովով միաժամանակ շատ ուրիշ խօսքեր, առանց նոցա իրապարծելու: Որով դուրս է գալիս մեծ ֆրազիօր:

Պիեսի մէջ դուրս են բերած՝ իշխան Միքաէլի մայրը—որի միակ դերը՝ Հեղինէին արհամարհական խօսքեր չարտելն է, առանց գործողութիւն չառաջացնելու, Միքաէլի քույրը՝ Սլլա, որի միակ դերը Հեղինէին զրպարտելն է, Հեղինէի մայրը, որը միայն հառաչում է և լալիս, Հեղինէի մօր հեռաւոր աղգականը Զարրաբով—որը հարստահարում է Հեղինէի

դժբախտութիւնը, առանց մի որ և է նոր դրութիւն ստեղծելու: Իբրև տիպ—Ջարբարեանը ամենապաշտօնական է, բայց նա պիտի մէջ աւելորդ մարդու դեր է կատարում միայն:

Ժամանակակից կրթւած երիտասարդի տիպ է դուրս բերւած չանձին Հեղինէի եղբոր Գարեգինի: Ես այս բոլորին քննում եմ խնդիրը միայն բնական տեսակէտից և ոչ ըստ էութեան և գտնում եմ որ նաև Գարեգինը միայն չորրորդ դոգմողութեան մէջ կարոնում է մի երկու գործողութիւնների տեղի տալ: Գարեգինի բռնած զիրքի շնորհիւ զէպի խնդիրը, չորրորդ գործողութեան մէջ հանդէս են գալիս Մի քաղէլի ծառան, Մի քաղէլի կաթն եղբայրը, մայրը և ապա նաև Միքայէլը ինքը: Բայց նորա գլխաւոր ծառայութիւնը կապւում է նորա մէջ, որ Հեղինէին հեռացնել է տալիս իշխ: Միքայէլից: Բոլոր գործող անձերի մէջ ուրեմն Գարեգինը նա է, որը բնական ամենաշատ ծառայութիւնն է մատուցանում հեղինակին. և, չը նայած գորան, նա էլ տոգոյն է դուրս բերւած:

Ամբողջութեամբ ասածներս «Իշխանուհու» իբր բնական գրւածքի մասին, ես կրկնում եմ, որ նա աւելի քան անաջող է, չը կալ չարաբերութիւնների աստիճանական զարգացում, չը կան ուրեմն և այն անհրաժեշտ գործողութիւնները, որոնք պէտք է հանդիսականների առաջ պատկերացնէին գործող անձերի աստիճանաբար զարգացող չարաբերութիւնները: Եւ բոլորովին բնական է, որ «Իշխանուհին» չունեցաւ չաջողութիւն: Իբր բնական գրւածք, «Իշխանուհին» ոչ միայն ստոր է այս երեք տարիներում բեմ դրած պ. Ստեղծեկեանցի «Ամուսիններ» և պ. Գէորգ Չմշկեանի «Վարժուհի» նոր պիեսներից, այլ և այդ կողմից համեմատութիւն անդամ անել կարելի չէ գոցա հետ: «Իշխանուհու» բնական թերութիւնները աջակէս վերաւորում էին հանդիսատեսի սէքը, որ չափազանցութիւն չը պէտք է համարելի եթէ ասեմ որ մեծ համբերութիւն էր պահանջւում սառնասրբատելիամբ նայելու համար:

Այժմ անցնենք «Իշխանուհու» քննութեանը ոչ որպէս զուտ բնական գրւածքի, այլ առհասարակ որպէս գրամատիքական գրւածքի: Կան գրամատիքական գրւածքներ, որոնք բնական արժանաւորութիւնների չունին, բայց ունին գրական մեծ նշանակութիւն, շնորհիւ հոգեբանական ճիշդ անալիզների և դուրս բերւած կատարեալ տիպերի: Գուրս բերւած տիպերի քննութիւնից «Իշխանուհու» առիթով ես պէտք է հրաժարեմ, որովհետև այդպիսի մի քննութիւն ես աւելի պատշաճ եմ համարում կատարել չափ թէ քիչ կրկնական վերցնող գրւածքի առիթով: Ես կանգ կ'առնեմ ուրեմն գրւածքի հոգեբանական կողմի վերալ: Անկախ տիպերի ճշդութիւնից մի գրամատիքական գրւածքից ամենից առաջ պահանջւում է հոգեբանական ճշդութիւն: Բնական թերութիւնները նե-

րեւի եւն նոր սկսող դրամատուրգին, որովհետեւ դա տեխնիկական կատարելագործութեան գործ է, որը ժամանակով կարող է ձեռք բերել: Հեշտութեամբ կարելի է բեմական տեսակէտից թերի մի գրւածք աւելի բեմական դարձնել, աչս կամ աչն տեսարանը աւելցնելով կամ աւելորդը դուրս գցելով: մինչեւ անգամ եթէ տիպերն էլ թող են՝ կարելի է նոցա դօրեղացնել: Բայց մի գրւածք չի կարող նոր մշակումով ուղղւել, երբ նորա հիմքում դրւած հոգեբանական խնդիրը հիմնովին սխալ է: Նթէ «Իշխանահոռ» միջից հանենք այն բոլորը, ինչ կատարւում է չանուն Հեղինէի տաժած սիրուն զէպի Միքայէլը, էլ նորա մէջ ոչինչ չի մնալ: Ուրեմն պէտք է, որ Հեղինէի այդ սէրը հասկանալի լինի, որպէս զի գրւածքը հոգեբանական և գրական արժէք ունենալ: Վնենք ուրեմն այդ խնդիրը, պատմելով նախ պիեսի բովանդակութիւնը:

Սրկուս ու կէս տարի է որ հասարակ մի ընտանիքի և հարստացած ու շատ վատ անուն թողած մի կալատողի աղջիկ, միջակ ուսում ստացած և հարուստ օժիտ բերած Հեղինէին իշխան Միքայէլ Բէգմուրեանի կիճն է: Հեղինէն շատ դժբախտ է. նորան չեն չարդում իւր մարդու տանը. սկեսուրը չարունակ նախատում է Հեղինէին և չարունակ էլ վերինից նալում նորա վերաջ՝ իւր բարերարւածի վերաջ, որը հասարակ տանից մի իշխանական տուն է եկել: Ինչու է այդքան նախատում—չի հասկացում պիեսից. չափնի է միայն որ Հեղինէն հարուստ էր, իսկ Բէգմուրեանները աղքատ, այնպէս որ այդ իշխանական տունը միայն Հեղինէի փողերով է ապրում: Այդ հանգամանքներում պէտք էր կարծել որ եթէ սկեսուրը չէր սիրում Հեղինէին, գոնէ չը պէտք է այդքան թշնամանար նորա հետ, քանի որ Հեղինէն էլ ոչ մի ատիթ չէր տալիս այդպիսի տոգոհութիւնների, նա, որ իւր փողը չէր խնայում ընտանիքի համար և որը շատ սիրում էր Միքայէլին:

Բայց Հեղինէն տոբախտ է գլխաւորապէս նորա համար, որ իւր մարդը, Միքայէլը, իրան չի սիրում. նա չարունակ ուրիշ տեղերում է անցկացնում ժամանակը, չառ անգամ նոյն իսկ զիջերները դուրսն է անցկացնում: Չը նալելով դորան, Միքայէլը, որը ինքը մի կոպէկ փող չունի և ոչ էլ որ և է պարապմունք ունի, չարունակ խարում է կնոջը, որպէս զի սորանից միշտ փող դուրս կորդի: Միքայէլը անդործ է, թուղթ խաղացող և անառակ կանանց հետ: Չի երևում թէ որ և իցէ արժանաւորութեան տէր լինի. ուրեմն ինչու է նորան անքան սիրում Հեղինէն: Պիեսից երեւում է որ դորա պատճառը միմիայն այն է, որ Հեղինէն հաչ կ'իճն է. ուրիշ որ և է պատճառ չի բերւում: Բայց այդ մասին դեռ խօսք կը լինի ներքեւ, ուստի չարունակենք պատմութիւնը:

Բէգմուրեանների տունը չաճախում է Միքայէլի բնկեր և հասակակից Սուլիկեանը, որը սկզբում բնդունւում էր իւր փեսացու Միքայէլի քուր Ուղայի համար: Բայց Սուլիկեանը աւում է Ուղային և սիրահարւած է իւր բնկեր Միքայէլի կնոջ դժբախտ Հեղինէի վերաջ: Հեղինէն սոյդ նա-

խաղաղում է, բայց աշխատում է Սուլիկեանին տեղիք չը տալ փոխադարձութեան վերաջ լուսիւր դնելու. ուստի միշտ խուսափում է նորա հետ միաջնակ մնալուց ամեն անգամ, երբ Սուլիկեանը Բէզմուրեաններէ տունն է գալիս: Սուլիկեանը սակայն վերջապէս չարմար առիթ է գտնում իւր սէրը խոտտովանելու: Նրորորդ դործողութեան մէջ, ուր ներկայացնում է մի պարերեկութ Բէզմուրեաններէ տանը, Միքայէլը գրադւած լինելով թխտախաղով, խնդրում է իւր ընկեր Սուլիկեանին տան տիրոջ տեղը բռնել հիւրերի մօտ և Հեղինէի հետ լինել. չար դիտաւորութեամբ արդեօք որ հիւրերը տեսնեն Սուլիկեանի ԿՅԱՅԻՅԱՅԻԵ-ն Հեղինէի հետ, ալի չի պարզում. միայն թէ Սուլիկեանը ալի հանդամանքից օգտւում է իւր սէրը չալտնելու Հեղինէին: Հեղինէն պատասխանում է մերժումով, թող տալով որ Սուլիկեանը չարունակի իրանց տունը լաճախել որպէս բարեկամ:

Ալի բացատրութիւնները գաղաւթի կերպով, դուան լետեկից թաք կացած, լսում է օրիորդ Օլգան: Նթէ Օլգան լաւ լսած լինէր, պէտք է խմանար, որ Հեղինէն մերժել է Սուլիկեանին. բայց պ. Շիրաւնդաղէն ուղեցել է որ Օլգան ալն խօսակցութիւնը լաւ չը լինէր լսած: Աւ ահա Օլգան սկսում է տարածել թէ իւր ինքը վկայ է Հեղինէի ահաւատարմութեան: Ուրեմն թիւրիմացութիւն:

Ալի անցքերից առաջ (երկրորդ դործողութիւնից), համալտարանը նոր աւարտած հասնում է Ռիֆլիս Հեղինէի բժիշկ եղբայր Գարեգինը, որը տեղեկանալով հանգամանքներին, սկսում է համոզել իւր քուր Հեղինէին՝ բաժանել իւր մարդուց: Հեղինէն, սակայն, ուզում է հաւատարիմ մնալ հալ կնոջ սկզբունքին՝ չը բաժանել իւր մարդուց, բայց երբ քաղաքում սկսում են զրպարտել նորան և իւր մարդը, լենւելով Օլգայի վկայութեան վերաջ, մեղադրում է նորան ահաւատարմութեան մէջ, ալն ժամանակ միայն Հեղինէն համաձայնում է հօրէնց տունը քաշւել վերցնելով իւր հետ իւր փոքրիկ երեխային:

Բայց երեխային պահանջում է հայրը, Միքայէլը. երեխի հայրը, մի քանի անաջող փորձերից չետու, ինքն է պալիս Հեղինէի հօրէնց տունը երեխային տանելու. ալի տանը հանդիպում է Սուլիկեանին, որը եկել էր ներողութիւն խնդրելու Հեղինէից: Հեղինէն երեխին լաճնում է, բայց ինքն էլ թողն է ընդունում և մեռնում: Միքայէլը ալտուղ զղչում է:

Աւ բոլորովին չը հասկացալ թէ ինչու Հեղինէն իրան սպանեց. իւր հօրէնց տանը՝ իւր և իւր եղբօր կողմից նա սիրւած է, պաշտպանւած, չարգաւ և իբր լաւ կին է ճանաչւած. միւս կողմից Սուլիկեանը եկել էր ներողութիւն խնդրելու իւր ունեցած գալթակղեցուցիչ դիտաւորութիւնների համար: Հեղինէի պատիւը ուրեմն աղատւած է և պաշտպանւած: Մի կնոջ համար իւր տանը գտած ալիպիսի պաշտպանութիւնը ալնքան թանկագին է, որ դա մեծ միսթարութիւն պիտի համարւէր ժա-

մանակաւորապէս զրպարաւած մի կնոջ համար: Մնում է կարել թէ միակ պատճառը Հեղինէի ինքնասպանութեան՝ իւր երկխօյց բաժանելն էր: Ինքնասպանութեան համար, սակայն, դա թուել պատճառ է. աշխատիւր հեղինակը կարծես թոյն է ընդունել տալիս Հեղինէին միմիայն գրամալին մի կերպ վերջ տալու համար:

Մի տեղ հեղինակը ցոյց է տալիս Հեղինէին իւր հաշիւին ոջ սկզբունքին հաւատարիմ մի կին, որը չի բազում հեռանալ իւր մարդոց ամենածալրահող գէպերում անգամ. բայց միւս կողմից մենք տեսնում ենք նոյն աչք Հեղինէն թոյն է ընդունում, աչքինքն ալն է անում, ինչ հին հաւատով հաշիւներ չէր անիլ, կամ գոնէ աչքովս վարելը լատուել չէ նորա աշխարհացոյցութեանը: Ինչպէս հաշտեցնենք աչք հակասութիւնները: Գուցէ առարկեն ինձ, թէ ինքնասպանութեան գէպեր մեղանում էլ են պատահում զմեզիս ամուսինների կողմից: Ընդունում եմ, բայց ալն ժամանակ Հեղինէի աչքան մեծ հաւատարմութիւնը իւր անառակ և փայցած, խաբեւալ և չնչին մարդուն միք վալ ու բացատրիլ լոկ նրանով, որ հա հաշիւին է, որը զոհ է իւր առաք ինտութեան, ինչպէս մեծ պաթոսով աչք չադարարում է Հեղինէի եղբայր բժիշկ Գարեգինը: Միթէ մի կին, որին ամենածալրահող հանգամանքներն անգամ հաղիւ կարողանում են համոզել որ բաժանի իւր մարդոց, մի աչքալիսի կին աչքան հեշտութեամբ վերջ կը տալ իւր կեանքին:

Բոլորովին անհասկանալի մի տիպ է Հեղինէն. մարդ չի կարողանում հասկանալ նորա սէրը գէպի իւր ըստ ամենալնի չնչին մարդը, Միքայէլը: Բրովհետեւ աչք իշխան Միքայէլը ոչ միայն անառակ է և վատ, ալ և չնչին, աչք խօսքի բուն նշանակութեամբ. աչքինքն իւր բնաւորութեան մէջ զրականապէս չը կաշ մի հատիկ դնահատիկի գիծ, որ և է հրապարիչ լատկութիւն, որի համար մի կին կարողանար սիրել նորան: Եւ ես կարծում եմ որ «Իշխանուհին», ոչ միայն որպէս զբամառիքական պիես, ալ առհասարակ որպէս զբաժք, զուրս է եկել շատ անաջող հէնց զլիսաւորապէս աչք պատճառով, որ աչք սէրը, որը լարող ուժն է բոլոր գործողութիւնների, պատճառը ամբողջ զբամալի, ալն սէրը, ստում եմ ես, չի ըմբռնած հեղինակի կողմից:

Ես գիտեմ, որ ինձ կ'առարկեն թէ սէրը անհաշիւ բան է և չի կարելի ասել թէ ինչու էր Հեղինէն սիրում Միքայէլին, ալ իւր թէ փատ է որ Հեղինէն սիրում էր Միքայէլին, թէկուզ սա լինէր աշխարհիս ամենաչնչին արարածը: Ես հասկանում եմ աչք առարկութիւնը, բայց աչք ժամանակ դուք պէտք է զուրս զցէք զբամալից աչք բոլորը, ինչ հասարակական բնաւորութիւն է կրում: Աչք ժամանակ դուք միք պահանջիլ հասարակութեան կողմից հակակրութեան զգացմունք գէպի Միքայէլը և համակրութիւն գէպի Հեղինէն. աչք ժամանակ դուք էլ միք պահանջիլ հասարակական դատաստան Միքայէլի և Հեղինէի մէջ, հասարակութիւնը

Իւր համակրութիւնը և հակակրութիւնը որոշում է նապած թէ ոչ ոք ինչո՞ւ է պաշտօնաւորւած. Աջնաղ ուր մոտիւ չը կալ, չի կարող լինել և բարոյախօսութիւն, չի կարող լինել հասարակաց դատաստան, և կրթողիկայի վիճաբանութիւնն էլ դառնում է աւելորդ: Եւ տեսնում եմ մոտիւ երբ Հեղինէն չի ուզում բաժանալու իւր մարդուց, ալդ մոտիւ շատ պարզ է՝ հալ կնոջ աւանդական դաստիարակութիւնը, հասարակաց կարծիքը և ալն կարող էին մեծ ոգով ազդել Հեղինէի վերայ և թեկադրել նրան՝ մնալ մարդու տանը ինչ էլ որ լինի: Ահա ձեզ մի մոտիւ չը բաժանուելու Բալց Հեղինէն սիրում է Միքայէլին, սիրում է նորան սկզբում, երբ դեռ լաւ չէր ճանաչում իւր մարդուն, նոր պատկած ժամանակ. սիրում էր նորան սորա փշաղածութիւնը տեսնելուց չետու, սիրում է նորան նաև ալն ժամանակ երբ աներկբայի էր մարդու ատելութիւնը, սիրում էր նորան՝ նաև բաժանելուց չետու: Պէտք է ենթադրել ուրեմն որ Միքայէլը իւր որ և է բարձր չափով իրան պատճառով մաղնիսական ուժ էր բանեցնում Հեղինէի վերայ: Ընդհակառակը՝ Միքայէլը զուրս է բերած որպէս կատարեալ ոչնչութիւն: Եւ ալն էլ ալնպիսի մի ոչնչութիւն, որը ալս խօսքից դուրս, թէ իրան փող է հարկաւոր, ուրեմն դեռ պէտք է խաբէ կնոջ—ուրիշ էլ ոչինչ չունի ասելու:

Պր. Շիրաւնդադէի «Իշխանուհու» իբրև գրականական մի գործը, ամենահիմնական պակասութիւնը ես դորա մէջն եմ տեսնում: Նոյն իսկ և թէ «Իշխանուհին» աւելի բեմական արժանաւորութիւններ ունենար (որոնցից նա գրականապէս զուրկ է), այնու ամենայնիւ նա կը ներկայացնէր մի հոգեբանական թիրախացութիւն:

ՅԵՏ ԳՐՈՒԹԱՆ, Յօդածս վաղուց գրած էր, երբ աչժմ կարդում եմ պ. Շիրաւնդադէի մի գրածքը «Արձաղանք»-ում (№ 52) խորագրած՝ Իմ կրիտիկոսներին: Գրածքի տռաջին տողերից ես ալս տպաւորութիւնը ստացալ թէ «Իշխանուհու» հեղինակը ամենևին տրամադիր չէ որ և է աննպաստ կարծիք իւր պիեսի մասին ընդունել որպէս անաչառ քննադատութեան գործ: «Եւ գիտէի, ասում է նա, որ մեր մէջ չը կալ անկողմնապաշտ քննադատութիւն, քանի որ նախանձի և փոխադարձ ատելութեան զգացմունքը մեր մամուլի ծառայողների մէջ հասել է ծաղրահեղութեան»:

Եթէ ալդ կարծիքը մեր մամուլի ամբողջութեան մասին ալսպէս պէտք է հասկանալ, թէ իւր պ. Շիրաւնդադէն լաւ բան էլ գրելու լինի՝ ամենքը պէտք է աշխատեն նորան պախարակել տանակոխ անել,—դա կը լինի մի սխալ, որից ևս նախազդուչացնում եմ երիտասարդ հեղինակին, թէ չափապէս նորա և թէ ընդհանրապէս մեր գրականութեան օգտի համար:

Պարոն Շիրաւնդադէն իւր ալդ գրածքում պնդում է թէ Հեղինէն»

չէր սիրում իշխան Միքայէլին: Եթէ դա ճիշդ լինէր, չօղաձիւ մէջ արած նկատողութիւնները արժէք չը պիտի ունենան: Բայց հեղինակը միակ դատաւորը չէ իւր գրւածքի. ես պնդում եմ որ պիտի մէջ Հեղինէն աչնայէս է դուրս բերւած, ինչպէս ես եմ հասկացել: Իսկ եթէ թիւր լմացութիւն կալ ալստեղ, հեղինակը ինքն է մեղաւոր, քանի որ նա ոչ մի տեղ չի չեչաում թէ Հեղինէն չի սիրում Միքայէլին:

Բայց ենթադրենք մի բոլորէ թէ Հեղինէն ոչ թէ սիրում է Միքայէլին, ալ միայն «ցաւում է իւր կորցրած ցնորքի մասին», վշտանում է իւր երեակալած և վերջը խորտակւած երջանկութեան մասին»։ Արդ, եթէ մէջ տեղ սէր չը կալ, և Հեղինէի ցնորքը ընտանեկան խաղաղ կեանքն է, իսկ միւս կողմից քանի որ Հեղինէն չատլաւ գիտէ, որ Բէգմուրեանները ամբողջ ընտանիքը պահպանում է միայն և միմիայն իւր օժիտով, և որ ալ օժիտը վերջանալուց չեղաւ իրանց միայն թշաւութիւն և սնանկութիւն է սպասում, ալ չեղան Հեղինէն միթէ ալ քան թեթև սրտով Միքայէլին կը տար իւր ունեցած չունեցածը մինչ ամենավերջին բոլորէ, չը մտածելով չեղան իսկ իւր սիրած երեխայի ապագայի մասին? Գոնէ ալ հանգամանքը վտարիկներ չէր չարուցանիլ իրար չը սիրող ամուսինները մէջ, մանաւանդ որ Հեղինէն սկզբում չէր էլ թուլ տալիս մարդուց բաժանելու հնարաւորութիւնն անգամ: Գործնական կեանքին անսովոր որ կինը իւր չը սիրած մարդուն կը զոհի բոլոր ունեցածը անտրտունջ կերպով իւր և իւր սիրած երեխային թշաւութեան մէջ տեսնելու մօտաւոր պերսպեկտիւով... Դա ինչ հոգեբանութիւն է և ինչ իրականութիւն:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի

ՕՐԷ 30Ի

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1891 թ. Նոյեմբերի 23.

— Ո՞րն է ամենալուսաւոր քաղաքը, հարցրեց ինձ աչօր «Մուրճ»-ի խմբագիրը:

— Նիշդ թւեր չունիմ պատասխանելու համար:

— Մեր Բաքուն է. ամառ թէ ձմեռ կերտինի առատութիւնից՝ 3—4 ժամով առաջ են լուսաւորում քաղաքը քան ուր և է:

